ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

# 1918 թ. ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2003

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

**В. Г. ВИРАБЯН**

# ГРУЗИНО - АРМЯНСКАЯ ВОЙНА 1918 г.
# ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ПРАВИТЕЛЬСТВА РА И ПАРТИИ

**ЕРЕВАН - 2003**

Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

# 1918 թ. ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ - 2003

**Գիրքը հրատարակվում է ՀՊՃՀ Հայոց քաղաքական պատմության ամբիոնի որոշմամբ**

*Գրախոսներ՝* **պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Գ. Թունյան**
**պ. գ. թ. Գ. Ա. Հովակիմյան**

Վ. Հ. Վիրաբյան:
1918 թ. վրաց - հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները: Եր.: Աստղիկ, 2003, 251 էջ:

Մենագրությունը նվիրված է չափազանց արդիական և անբավարար ուսումնասիրված թեմայի՝ 1918 թ. վրաց - հայկական դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմին, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությանը այդ ծանր օրերին և քաղաքական կուսակցությունների դիրքորոշման բացահայտմանը պատերազմի հետ կապված այս կամ այն հարցի որոշման առումով: Մենագրությունում հանրագումարի են բերված պատերազմի ռազմաքաղաքական արդյունքները, դրանց ազդեցությունը ընդհանուր աշխարհաքաղաքական իրադրության վրա Անդրկովկասում և, մասնավորապես Հայաստանի շուրջ:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, և առհասարակ, ընթերցող լայն հասարակայնության համար:

© *«Աստղիկ» հրատարակչություն, 2003 թ.*
© *Վանիկ Վիրաբյան*

*Նվիրում եմ եղբորս՝ **Հայկի** անմոռաց հիշատակին*

# ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին աշխարհամարտի ավարտը արմատական հեղաբեկումներ մտցրեց Անդրկովկասյան տարածաշրջանում: Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությամբ առաջացած ցընցումները տևական բնույթ ունեին և իրենց ոլորտի մեջ առան նաև Հայաստանը: Հայկական հարցի լուծման բոլոր հնարավոր տարբերակները մեկը մյուսի ետևից փլուզվում էին, նախկին պայմանավորվածությունները կորցնում էին իրենց երբեմնի ուժը և փոքրր ժողովուրդներին կանգնեցնում ցավագին երկընտրանքների առաջ: Հայ քաղաքական միտքը չէր համապատասխանում դարամակարդակ պահանջներին և չուներ ճկունություն, անհրաժեշտ կռահողականություն ընկալելու նոր գործընթացները, դըրանց խորքային աշխարհաքաղաքական միտումները, արդյունքում՝ փակուղի կամ հեռանկար չունեցող ընտրություններ: Ասենք, որ ստեղծված իրավիճակում կողմնորոշվելու համար անհրաժեշտ էր ունենալ քաղաքական մտքի մեծ ճկունություն և հեռանկարի զգացողություն: Եվ ոչ միայն: Այդ իսկ պատճառով էլ տեղի ունեցող իրադարձությունները երբեմն ցայտնոտի մեջ էին գցում կամ նորաստեղծ հանրապետությանը կանգնեցնում ծանր փորձությունների առաջ: Այդ փորձություններից էր հենց վրաց - հայկական պատերազմը 1918 թ. դեկտեմբերին, թեմա, որ դեռ իր ուսումնասիրողներին է սպասում:

1918 թ. դեկտեմբերին բռնկված վրաց - հայկական պատերազմին վերաբերող հարցերը տարբեր առումներով քննարկվել են մի շարք հեղինակների կողմից, սակայն դրանով այն լիովին չի ամբողջացել, մնացել են հարցեր, որոնք դեռ իրենց լուսաբանման կարիքն ունեն:

Սույն աշխատության մեջ նպատակ է դրվել համակողմանիորեն ուսումնասիրել և լիարժեքորեն ներկայացնել Առաջին

Հանրապետության առաջին իսկ լուրջ պատերազմի պատմությունը, հայկական ձևավորվող բանակի մասնակցությունը ռազմական գործողություններին.

1. Հեղինակի խնդիրն է եղել օգտագործելով արխիվային նորահայտ նյութերը՝ ներկայացնել ՀՀ կառավարության գործունեությունը այդ բարդ և խճճված ժամանակահատվածում, հայվրացական հարաբերությունների ողջ բարդույթը և համալիր պրոբլեմները.
2. Բացահայտել կուսակցությունների դիրքորոշումը այդ առճակատման ընթացքում՝ Հայկական Ախալքալաքի և Բորչալուի համար.
3. Բացահայտել Հայկական բանակի դերը հայ ժողովրդի համար չափազանց լարված աշխարհաքաղաքական իրավիճակում մղվող պատերազմում, դրա արդյունքները:

Ուսումնասիրությունը գլխավորապես հիմնված է արխիվային վավերագրերի վրա: Աղբյուրագիտական հիմքը կազմում են Հայաստանի Հանրապետության Պետական Կենտրոնական Պատմական Արխիվի (ՀՀ ՊԿՊԱ) փաստաթղթերը:

Բացի արխիվային նյութերից և փաստաթղթերից, աշխատանքի համար կարևոր հիմք են հանդիսացել նաև ժամանակի պարբերական մամուլում հրապարակված փաստերը, կուսակցական - պետական, հասարակական - քաղաքական, ռազմական գործիչների աշխատությունները[1]:

Ժամանակաշրջանի ընդհանուր նկարագիրը, Հայաստանի սոցիալ - տնտեսական և քաղաքական վիճակը անկախության նախօրյակին և սկզբին հանգամանալից բացահայտված են ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի արժեքավոր «Հայկական հարցը 1918 թվականին» մեծածավալ աշխատությունում[2]:

---

1. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն. Եր.: Հայաստան, 1993, էջ 214 - 251: Տես՝ նույնի. Կյանքի ուղիներով. Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ. Հատոր Ե. տպարան «Համազգային», Բէյրութ, 1966, էջ 41 - 43; Տես նաև՝ Հովհ. Քաջազնունի. Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ ևս. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923; Ռուբեն. Հայ Յեղափոխականի մը յիշատակները. Է. Հատոր. գ. հրատարակութիին, Թեհրան, 1982: Ալ. Խատիսեան. Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բ. տպագրութիւն, 1968, Բէյրութ, տպարան «Համազգային», և այլն:
2. Տես՝ Հրանտ Ավետիսյան. Հայկական հարցը 1918 թվականին. Եր., Բարձրագույն դպրոց, 1997 (436 էջ):

Վրաց-հայկական պատերազմի առանձին հարցերի պարզաբանումը տեղ է գտել Մուրադ Կարապետյանի աշխատանքում՝ նվիրված Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի ստեղծմանն ու գործունեությանը[3]:

Անդրկովկասում և Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների ըմբռնման, ազգամիջյան փոխհարաբերությունների, անդրկովկասյան հանրապետությունների միջև տարածքային վեճերի նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշման բացահայտման տեսանկյունից, անկասկած, կարևոր է Գալուստ Գալոյանի նոր մեծածավալ աշխատանքը՝ «Հայաստանը և մեծ տերությունները»[4]:

Ուսումնասիրվող հիմնահարցի որոշ կողմեր լուսաբանվել են Աշոտ Մելքոնյանի փաստական տվյալներով հարուստ «Ջավախք» աշխատության մեջ: Սույն արժեքավոր գրքում Ա. Մելքոնյանը առաջին անգամ համապարփակ ձևով ներկայացնում է հինավուրց Ջավախքի պատմական նկարագիրը, հմտորեն վերհանելով կարևոր պրոբլեմի էական որոշ «մանրամասներ», արդարացիորեն կարևորելով դրանք այժմեականության տեսանկյունից: Վերջապես չի կարելի չնշել վերջերս լույս տեսած և հեղինակի՝ Աշոտ Մելքոնյանի երկարատև ստեղծագործական պրպտումների արգասիքը հանդիսացող «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» մեծածավալ աշխատության մասին, որում ոչ միայն ներկայացվել է հնամենի երկրամասի ամբողջական ու լիարժեք պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի 20-ական թվականները, այլև արվել են հարցադրումներ, որոնք գիտական լուրջ արժեք են ներկայացնում: Ա. Մելքոնյանի սույն գրքում զետեղված են արժանահիշատակ փաստեր, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում մեր կողմից հետազոտված պրոբլեմի ամբողջական ու լիարժեք վերհանման տեսանկյունից[5]:

---

3. Տես՝ Կարապետյան Մուրադ. Հայաստանի Հանրապետության բանակը(1918 - 1920թթ). Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 83 - 91:
4. Տես՝ Գալոյան Գ. Ա. Հայաստանը և մեծ տերությունները 1917 - 1923 թթ.:- Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999 (539 էջ):
5. Տես՝ Մելքոնյան Ա. Ա. Ջավախք: Պատմության ուրվագծեր. Երևան. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999 (103 էջ): Տես նաև՝ Մելքոնյան Աշոտ. Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին. - Եր., «Զանգակ - 97», 2003 (544 էջ):

Հարկ է նաև նշել, որ հետազոտված հարցի մի շարք տեսանկյուններ իրենց որոշակի արտացոլումն են գտել Սփյուռքի և առհասարակ արտերկրի որոշ հեղինակների կողմից հրապարակված մի շարք գործերում: Չնայած վերջիններիս կողմից արծարծված հարցերի տենդենցիոզությանը, դրանք ևս որոշակի հետաքրքրություն են ներկայացնում[6]:

Հարկ է նաև նշել Համլետ Գևորգյանի «Դրո» աշխատանքի մասին, որում բարձր գեղարվեստականությամբ և պատմական անփոփոխ մակարդակով բացահայտված է Դրոյի (Դրաստամատ Կանայան) դերը վրաց - հայկական 1918 թ. պատերազմում, հայոց բանակի հերոսականությունն ու ավանդն այդ իրադարձություններում[7]:

Անշուշտ, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Կտրիճ Սարդարյանի «Հայ - վրացական հարաբերությունները 1918 - 1921 թթ.» գիրքը, որում կան ուշադրության արժանի մոտեցումներ և նրբություններ, որոնք հարկ է հաշվի առնել նշված պրոբլեմը քննարկելու տեսանկյունից[8]:

Սույն աշխատանքում նպատակ է դրվել մի ամբողջի մեջ ներգրավել ուսումնասիրվող պրոբլեմի հնարավորին չափով բոլոր տեսանկյունները, բացահայտելով վրաց-հայկական ռազմաքաղաքական հարաբերությունների ողջ բարդույթը 1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմի նախօրեին և հետո:

---

6. Տես՝ Ագապի Նասիպեան. Բրիտանիա եւ Հայկական հարցը.1915 - 1923. հրատ. Հ. Բ. Ը. Միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի, Պէյրութ, 1994 (343 էջ); Stephen F. Jones. Georgian - Armenian Relations in 1918 - 20 and 1991 - 94: A Comparison.- Armenian review. vol. 46. no 1 - 4 (181 - 184), pp. 57 - 77: Vernon V. Aspaturian. Armenia in the World Arena, 1914 - 1921. - Armenian Review. spring - winter, 1993, volume 46, number 1 - 4 (181 - 184), pp. 119 - 142:
7. Տես՝ Գևորգյան Համլետ. Դրո.- Եր.: Զանգակ - 97, 1999 (558 էջ):
8. Տես՝ Սարդարյան Կտրիճ. Հայ - վրացական հարաբերությունները 1918 - 1921 թթ.- Եր.: Նաիրի, 2002 (224 էջ):

## Գլուխ Առաջին

# ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ: ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ: ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայաստանի Առաջին Հանրապետության կազմավորումը և զարգացումը ընթանում էր դժվարին պայմաններում: Ժամանակաշրջանը շատ ցայտուն է երևում Սիմոն Վրացյանի հետևյալ խոսքերից. «*Անկախության համար անժամանակ ծնունդ էր Հայաստանի Հանրապետութիւնը: Ոչ առարկայական պայմաններով, ոչ ենթակայական գիտակցութեամբ նախապատրաստուած… Հայաստանի Հանրապետութիւնը ծնունդ էր առնում Արարատեան դաշտում, ռուսների տիրապետութեան ներքեւ գտնուող հողի վրա եւ այն էլ անհնարին պայմաններում: Զարմանալի չէր, որ հայ միտքը շփոթի մատնուեց եւ դժուարանում էր ըմբռնել կացութիւնը եւ քաղաքական նոր դիրքաւորում որդեգրել… Ճանապարհները արտաքին աշխարհի հետ կտրուած էին: Տնտեսական կեանքը քայքայուած: Պաշտօնեութիւնը, որ մեծմասամբ բաղկացած էր ռուսներից կամ վրացիներից, ծգել փախել էր*»[1]:

Առավել ամբողջական ժամանակաշրջանի բնութագիրը երևում է Հովի. Քաջազնունու «Հայաստանի Հանրապետություն» հուշագրից, որ 1919 թ. հոկտեմբերին ներկայացվել է ամերիկյան կառավարությանը, և քննարկվել է Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի հայկական գործերի գծով ենթակոմիտեի նիստի կողմից: Դրանում մասնավորապես ասվում էր. «*Երբ Երեւանում հաստատուեց եւ գործի անցաւ Հայկական կառավարութիւնը, երկրի դրութիւնը պատկերանում էր այսպէս. թիւրքական բանակը գրաւել էր Անդրկովկասեան Հայաստանի մեծ մասը, թիւրքական արագածիգ քնդանօթները դրուած էին մայրաքաղաք Երեւանից 7 կիլոմետր հեռաւորութեամբ:*

*Ազրբեյջան (Անդրկովկասեան Թաթարստանը), յենուելով թիւրք բանակի ներկայութեան վրայ, նեղում էր Հայաստանի արե-*

[1] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

*ւելեան (մասամբ էլ հիւսիսային) սահմանները ու սպառնում է սրի քաշել այդ կողմերի հայ ազգաբնակութիւնը:*

*Վրաստանը գտել էր Գերմանիայի հովանաւորութիւնը, հիւրընկալել էր իր երկրում գերմանական զօրքերը եւ նրանց բարեհաճութեամբ գրաւել էր Հայաստանի հիւսիս-արեւմտեան սահմաններում երկու զուտ հայկական գաւառներ. Ախալքալաք եւ Լոռի: Հայաստանը մնացել էր մենակ, չորս կողմից շրջապատուած թշնամի կամ անբարեացակամ ուժերով, առանց որեւէ արտաքին նեցուկի եւ օգնութեան:*

*Երկրի ներսում դրութիւնը յուսահատական էր: Ազգաբնակութեան կիսից աւելին կազմում էին փախստականներ եւ գաղթականներ, անտուն, մերկ ու քաղցած:*

*Գիւղերը քանդուած ու աւերուած,դաշտային աշխատանքները դադարեցրած:*

*Հացի բացակայութեան եւ միւս կենսամթերքների սակաւութեան պատճառով գիւղացիք կերել էին արդէն իրանց սերմնացանը եւ սկսել էին ուտել լծկան անասունները:*

*Տիրում էր սով, այդ բառի ամբողջ իմաստով:*

*Սովի հետեւանքով, առաջ էին եկել տարափոխիկ հիւանդութիւններ, մասնաւորապէս՝ բծաւոր տիֆ, իսկ դեղերը սպառած էին արդէն, դեղատները՝ դատարկ:*

*Հաղորդակցութիւնը արտաքին աշխարհի հետ կտրուած էին միանգամայն, որովհետեւ միակ երկաթուղային գիծը բռնել էին թիւրքական զօրքերը, ապրանքների ներմուծումը դադարած էր, որովհետեւ կտրուած էին կապերը թէ Ռուսաստանի, թէ Պարսկաստանի եւ թէ Եւրոպայի հետ, իսկ հարեւան երկրները՝ Վրաստան, Ազրբեյջան, եւ Թիւրքիա իրանք չունեին արտահանելու ապրանք:*

*Այս պատճառով տիրում էր սուր պակասութիւն ամենաանհրաժեշտ ապրանքների: Ոչ մանուֆակտուրա, ոչ երկաթեղէն, ոչ քիմիական պրոդուկտներ, ոչ դեղ: Պակասում էր նոյնիսկ քարիւղ՝ տները լուսավորելու համար եւ դժարութեամբ էր ճարւում թուղթ պետական գործավարութեան համար:*

*Ռուսական տիրապետութիւնից ժառանգած պետական մեքանիզմը քայքայուած էր միանգամայն, վարչական բոլոր օրգանները խանգարուած: Տիրում էր կատարեալ քաոս եւ անիշխանութիւն: Ամէն բան պետք էր վերսկսել սկզբից, աւերակների վրայ կառուցանել նոր պետական շէնք»*[2]:

Անհրաժեշտ էր կարճատև ժամանակամիջոցում ստեղծել պետական-քաղաքական կառույցներ (բանակ, ոստիկանություն, հատուկ ծառայություններ և այլն) ֆինանսա-տնտեսական համակարգ,լուծել պարենային և գաղթականների խնդիրները, հանդարտեցնել ազգային խմբերին, հաղթահարել ներքին հակասությունները, մի խոսքով, դուրս գալ քաոսի ու անիշխանության ճիրաններից:

Ռազմաքաղաքական բնույթի մի տեղեկագրում արձանագրվում է, որ երբ 1918 թ. դեկտեմբերի 13-ին սկսվեց վրաց-հայկական պատերազմը, այն արգելակեց հաղորդակցությունը մինչև 1919 թ. մարտը, ընդ որում այդ կոնֆլիկտի ընթացքում Թիֆլիսում գտնվող Հայաստանի ռազմական ունեցվածքի մեծ մասը բռնագրավվեց վրացիների կողմից:Վրացական կառավարության կողմից արգելվեց Վրաստանի սահմաններից դուրս բերել ամեն տեսակի պարենամթերք և մանուֆակտուրա, իսկ եթե հաջողվում էր թույլտվություն ստանալ, ապա հաճախ ծագում էին ֆինանսական դժվարություններ[3]:

Ավելին:Ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը անդրադառնալով 1918 - 1920 թթ. իշխող վրաց - հայկական հարաբերությունների ողջ կոմպլեքսի վերհանմանը, դիպուկ նկատում է, որ Վրաստանի սոցիալ - դեմոկրատական կառավարությունը, գաղափարապես թշնամական դիրքորոշում ունենալով մեծ բիզնեսի նկատմամբ, տարածում էր վրացական նացիոնալիստական կասկածամտություն, որի համաձայն մայրաքաղաքի բնակչության մեծամասնությունը կազմող կես միլիոն հայերը, ովքեր տիրապետում էին մայրաքաղաքում, իսկում էին ռազմավարական նշանակություն ունեցող սահմանակից տարածքների և տնտեսության մեծ մասի նկատմամբ, և ի սկզբանե լոյալ էին տրամադրված դեպի Հայաստանի նոր հանրապետությունը: Ստ. Ջոնսը եզրակացնում էր, որ հենց դա հանգեցրեց Վրաստանի իշխանությունների պաշտոնական չարաշահումներին՝ հայկական սեփականության բռնագրավումներին և ոստիկանության կողմից կոպիտ, բռի վերաբերմունքին, որը զրկում էր հայերին իրենց նախորդ տնտեսական և քաղաքական առավելություններից Թիֆլիսում, գրգռելով հայ-վրացական հարաբերությունները անկախության հաստատման շրջանում[4]:

Այդպիսի անհնարին հուսահատական պայմաններում էլ Հայաստանի կառավարությունը և ժողովուրդը ձեռնամուխ էին ե-ղել զանազան պետական - տնտեսական կառույցների, բանկի և մարտունակ բանակի ստեղծմանը: Այդ նույն ճանապարհին էին նաև մեր հարևանները՝ վրացիները և ադրբեջանցիները, որոնք խոչընդոտներ էին հարուցում Հայաստանում ընթացող գործըն-թացների անարգել զարգացման առաջ: Առավել նախընտրելի վիճակում, անշուշտ, գտնվում էին վրացիները՝ Կովկասյան տան առավել հավակնոտ ներկայացուցիչները: «*Վրացիները շատ վարպետօրեն (ավելացնեմ՝ նաեւ ցինիկաբար) օգտվում էին հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հակասություններից՝ իրենց արտօնյալ դիրքը ամրապնդելու համար*», - գրում է Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին[5]:

Այս առումով շատ դիպուկ է նկատում նաև Ռուբեն Տեր - Մինասյանը. «*Զույգ ժողովուրդներին սպառնացող վտանգի ժա-մուն, վրացիները օգտուեցին մեր ինկած վիճակից եւ շահագոր-ծեցին այդքան խիստ կերպով իրենց աշխարհագրական դիրքը՝ մեր ժողովրդեան թէ՛ արժանապատուութիւնը եւ թէ՛ կենսական արդար իրաւունքները ոտնահարելով*»[6]:

Ինչպես 1918 թվականին, երբ սկսել էր կազմավորվել Հա-յաստանի Առաջին Հանրապետությունը, դժվարին ջանքեր գոր-ծադրելով ստեղծելու պետաքաղաքական և ռազմական անհը-րաժեշտ կառույցները, դուրս գալու սովի ճիրաններից, 1919 թ. կեսերին, չնայած ընդհանուր ոգևորիչ որոշ տրամադրություննե-րին, Հայաստանի Հանրապետության իրական վիճակը մնում էր տագնապալից, սպասելիքները՝ պայմանական: Այդ է վկայում կառավարության նախագահ Ալ. Խատիսյանի դիմումն ուղղված Թիֆլիսում հայկական ներկայացուցչության ղեկավար Լ. Եվան-գուլյանին (Եվանգուլով). «*Բոլոր շոգեքարշերը և վագոնները ու-ղարկված են Վրաստան: Ամբողջ շարժումը կանգնած է: Հաղոր-դեցեք Գրինին և Բրաֆին: Սարսափելի սով է: Ամեն օր հեռագրեք ինձ՝ ինչքան ալյուրով բեռնված վագոն է դուրս գալիս Թիֆլիսից: Անհապաղ հեռագրեք Բեկզադյանին՝ շտապ ուղարկի մազութ և բենզին, ոչ մի կաթիլ չկա… հակառակ դեպքում ամեն ինչ կմեռ-նի*»[7]:

Հարկ է ընդգծել, որ հայաստանյան պայմանների «անհեթեթությունը» հրաշալի ըմբռնում էին նաև ուրիշ հայ հասարակական - քաղաքական, մտավորական գործիչներ:

«*Երկրի վիճակը շարունակում է մնալ ծանր, հացը պակաս է, եւ սովն առատ հունձ է անում: Կտրված ենք արտաքին աշխարհից, Վրաստանը շարունակում է մեր ճամփան փակել, կարող եք երեւակայել՝ ինչպիսի անհանդուրժելի կացություն է ստեղծվել մեզ համար: Ամերիկայից ուղարկվող ալիւրը շատ անկանոն է մեզ հասնում, առաջին հասած նավից մոտ 80.000 փութ տրվեց Բաքումի ազգաբնակչութիւանը,փոխանակ սովից կոտորվող Հայաստանին ուղարկելու: Առհասարակ Անգլիայի քաղաքականությունը դեպի մեզ մինչեւ վերջերս եղել է տմարդորեն դաժան եւ քիչ բարյացակամ*»[8], - գրում է Ս. Վրացյանը 1919 թ. մայիսի 18-ին Հ. Յ. Դ. Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեին:

Ինչպես իրավացիորեն նշում է վերը հիշատակված Ստ. Ջոնսը՝ «*Հայաստանի կախվածությունը մթերքներ եւ էներգակիրներ մատակարարող Վրաստանի ճանապարհներից հանդիսացավ ապագա կոնֆլիկտի աղբյուրներից, եւ արդեն 1918 թ. մայիսին որպես վերապրելու ուղի նկատվեց ավելի շատ հեռացումը, քան համագործակցությունը*»[9]:

Հենց դա նկատի ուներ Ս. Վրացյանը, երբ գրում է. «*վրացիները առանձնապես դժվարություններ էին հանում արտասահմանից Հայաստան ուղարկվող մթերքի դեմ: Բաքումից գնացքներ չէին գալիս: Զանազան պատրվակներով յափշտակում էին Հայաստանին պատկանող ցորենը: Հայաստանում մարդիկ մեռնում էին սովից, եւ Հայաստանի ալյուրը պահվում էր Բաքումի պահեստներում: Երեւանից ուղարկված բողոքները մնում էին անլսելի: Հասարակական խիղճը վրդովված էր*»[10]: Հարկ է ընդգծել նաև այն մասին, որ չնչին փոփոխություններով հանդերձ, Ս. Վրացյանի մատնանշած այս սցենարը կրկնվեց Հայաստանի համար բախտորոշ 1988 - 1994 թթ., և 2001 թ. գարնան - ամռան ամիսներին՝ դարձյալ Ախալքալաքյան իրադարձությունների կապակցությամբ, երբ վրացական շովինիզմը վերելք էր ապրում: Հայ - վրացական հարաբերությունների հենց այդ բարդույթից հետաքրքիր մի միջադեպի մասին է պատմում նույն Ս. Վրացյանը իր հիշողությունների «Կյանքի ուղիներով» ուշագրավ գրքաշարի Ե. հատորում. «*Ես, ինքնաբերաբար մի խիստ հեռագիր ուղար-*

*կեցի Թիֆլիսի մեզ համակիր ռուսական «Зак.Слово» թերթի խըմբագրութեան՝ ներկայացնելով վրաց կառավարութեան ու գործիչների հակահայ արարքները, բողոքելով նրանց անարդար քաղաքականութեան դեմ՝ Հայաստանի հանդեպ: Իմ հեռագիրը զուգադիպվեց Քլեմանսոյի խիստ ազդարարութեան՝ ուղղված վրացի ղեկավարներին՝ արգելք չհանդիսանալու Հայաստանի մատակարարման գործին: Փոքրիկ պայթեց վրաց մամուլի եւ կառավարական շրջանների մեջ: Աջ թե ձախ ամենքը մեղադրում էին ինձ, որ շինծու եւ զրպարտիչ տեղեկություններ եմ հաղորդել... վրաց կառավարությունը նույնիսկ հրապարակային հայտարարություն արավ՝ մեղադրելով հայերին, որ Հայաստանի երկաթուղային վարչությունը չի վերադարձնում վրացական վագոնները, այդ պատճառով Վրաստանի երկաթուղին չի կարողանում Բաթում հասնող հայկական ապրանքները փոխադրել Երեւան: Ծիծաղելի էր այս ինքնարդարացումը»*[11]:

1919 թ. վերջին 6-7 ամիսների ընթացքում մեծագույն դըժվարություններով հաջողվում է Հայաստան մտցնել 1 մլն 250 հազար փութ ցորեն, 125 հազար փութ լոբի, 20 հազար փութ կորեկ, 950 հազար տուփ կաթ, 12 հազար փութ կակաո, 44 հազար փութ շաքար, 1500 փութ թեյ, 5000 փութ ճարպ (ճրագու), 50 հազար փութ բրինձ,6 հազար փութ եգիպտացորեն և այլն[12], ինչպես նաև մինչև 500 հազար փութ մազութ և հում նավթ, մինչև 140 հազար փութ կերոսին, 25 հազար փութ բենզին, 45 հազար փութ փայտածուխ, 40 հազար փութ մանր կաղին, 25 հազար փութ ծովատառեխ, 60 հազար փութ զանազան մրգեղեն և այլն[13]:

1920 թ. ամռանը «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության կողմից բանակի օգտին ԱՄՆ-ում կազմակերպված հանգանակությունից հավաքվում է ավելի քան կես միլիոն ամերիկյան դոլլար,Երևան է հասցվում մեծ քանակությամբ պաքսիմատ և պահածո[14]:

Ստեղծված բարդ իրավիճակը Հայաստանում խիստ բացասաբար էր անդրադառնում կառավարության ռազմաքաղաքական և տնտեսական գործունեության վրա, հնարավորություն չէր տալիս վերջինիս իր ձեռքում կենտրոնացնելու զգալի դրամական և նյութական ռեսուրսներ, լուծելու զանազան ռազմական խնդիրներ:

Հարկ է ընդգծել, որ հենց այդ դժվար կացության մեջ ըստեղծվում ու զարգանում էր Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Զախողման վտանգի տակ էին այն քաղաքական և տնտեսական ձեռնարկումները, որոնք հույս կար իրականացնել Հայաստանում: Շատ շուտով ակնհայտ դարձավ, որ հայ ձեռներեցները, որոնք կարող էին քիչ թե շատ օգտակար լինել տնտեսության և առհասարակ հարազատ երկրի զարգացմանը, պարզապես չէին ցանկանում գալ Հայաստան՝ որպես շարքային աշխատողներ. մեծամասամբ ձգտում էին հեղինակավոր բարձր պաշտոնների, ինչի մասին մենք շատ գունեղ վկայակոչության ենք հանդիպում Ս. Վրացյանի գրառումներում: Այսպես, վերջինս 1919 թվականին գրում է Արմեն Գարոյին. «*Մեր մտավորականությունը դրսից է ուզում վայելել անկախ Հայաստանը: Միքայելին խնդրեցինք,որ գայ: Պատասխանեց, որ իր ներկայությունը անհրաժեշտ է Հռոմում: Անցնող օրը Խատիսյանը ասում էր, թե Ավետիքը իրեն գրել է, որ խաղաղության դաշնագրի ստորագրությունից հետո ինքը ցանկանում է դեսպան մնալ Փարիզում: Չնեղանաս, բայց դու էլ գերադասեցիր Վաշինգտոնը Երևանից: Եվ մեզ նման «խուրտաներին» մնաց Հայաստանի պետության կազմակերպելն ու վայելելը: Համաձայն եմ, որ այս մոմենտում դրսի աշխատանքը շատ կարևոր է, անհրաժեշտ է խաղաղության դաշնագիր կնքել իր բոլոր հետևանքներով, անհրաժեշտ է նյութական օժանդակության աղբյուրներ գտնել - համաձայն եմ, բայց այդ բոլորը շենքի վերին հարկերն են, եթե պատվանդանը ամուր չլինի, ձեր այդ միջազգային նվաճումները հինգ կոպեկի արժեք չեն ունենայ: Հիմքը պետությունն է և կառավարությունը*»[15]:Փայլուն է ասված: Հստակորեն կարևորն ու պակաս կարևորն իրարից զատվել են:

Անշուշտ, այստեղ կարևոր էր նաև այն հանգամանքը, որ արտերկրի հայ արտադրական մտավորականության ներկայացուցիչները բացասական «լիցքեր» էին տեսնում Հայաստանում կառավարող դաշնակցական բյուրո-կառավարության գործունեության մեջ: Նրանք տնտեսական ձեռնարկումների ողջ հնարավորությունը տեսնում էին քաղաքական կայունության ապահովման մեջ՝ այն, ինչ Հայաստանում իրապես չկար:

Դա դեռ 1920 թ. լավ էր նկատել նույնիսկ Անդրկովկասում, այնուհետև Հայաստանում ամերիկյան գերագույն կոմիսար Հասկելը:Ինչպես հաղորդում է Թիֆլիսում հայկական դիվանագիտա-

կան ներկայացուցիչը 1920 թ. փետրվարի 14-ի իր հաղորդման մեջ՝ ուղարկված արտաքին գործոց նախարարին. «*մի անգամ գնդապետ Հասկելը, տեղեկանալով, որ Հայաստանի կառավարության յուրաքանչյուր բաժանմունք իր ներկայացուցիչն ունի Թիֆլիսում, ասել է, թե այդպիսի շքեղություն իրեն թույլ չի տալիս նույնիսկ Ամերիկան, որ մի քանի անգամ Հայաստանից հարուստ է*»[16]: Միանգամայն օրինաչափորեն ուժեղ, տնտեսական պետական և ղեկավար կազմ ձևավորել 1918 - 20 թթ. չհաջողվեց, ձախողվեցին գործունյա պետական կազմակերպության ձևավորման բոլոր քիչ թե շատ լուրջ ջանքերը: Անշուշտ, այս առումով ճշմարտություն կա վերոհիշյալ գնդապետ Հասկելի՝ 1919 թ. աշնանը Լ. Եվանգուլյանի հետ ունեցած զրույցի ընթացքում ասված այն խոսքերում, թե այդ կառավարությունը «*բաղկացած է նախկին դասատուներից և կուսակցության աջակցությունից օգտվող ամեն կարգի մարդկանցից՝ քաղաքականապես ոչ հասուն և ոչ հեռատես*»[17]:

Եվ առհասարակ Հայաստանում շատ անմխիթար էր կադրային վիճակը: Այդ հանգամանքը հասկանում էին նաև կառավարության, պետության և զանազան կուսակցությունների առավել խելացի ներկայացուցիչները, որոնք երբեմն - երբեմն վեհերոտ փորձեր էին կատարում շտկումներ մտցնելու այդ բնագավառում, սակայն ապարդյուն: Ոչ ոք չէր ցանկանում մեկնել անկայուն, թշնամիներով շրջապատված Հայաստան, ուր ցուրտ էր, սով, խոլերա և տագնապով լի իրավիճակ:

Վրդովվելով ազգասիրության պակասից, հաճախակի ցուցաբերվող եսականության դրսևորումներից, Ս. Վրացյանը բողոքում է նաև մեկ այլ փաստի դեմ: Վկայակոչելով, որ Հայաստան եկողները քիչ չեն, նա միևնույն ժամանակ նշում է, որ «*մեծ մասը գալիս է նախարար կամ խորհրդարանի անդամ և կամ դուրսը դեսպան նշանակվելու ակնկալիքով և հույսով*»[18]: Ավելին, զայրանալով, որ շատերն էլ Հայաստան են գալիս չարչիական-առևտրական նպատակներով, իբր թե հայրենի երկրին տնտեսապես օժանդակելու համար, Ս. Վրացյանը փաստագրում է, որ դա վերջին հաշվով ավարտվում էր նրանով, որ դրանցից շատերը զբաղվում էին էժան գներով գորգեր և թանկագին քարեր գնելու եկամտաբեր առուծախով՝ առանց փոխարենը Հայաստանում որևէ բան ներդնելու: Իսկ կառավարության արգելքի դեպքում էլ վեր-

ջիններս աղմուկ էին բարձրացնում, թե դաշնակցական սոցիալիստական կառավարությունը մեռցնում է <u>ազատ առևտուրը</u>[19]:

Հարկ է սակայն ընդգծել, որ հայկական ոչ բոլոր քաղաքական շրջանակներում էր իշխում ոգևորիչ (էյֆորիկ) հիացմունքը Եվրոպայից սպասվող ակնկալիքների նկատմամբ: Այլընտրանքի հնարավորությունները այնքան էլ մեծ չէին, մնում էր հավատալ, հույսեր տածել. սակայն ոչ բոլորն էին հավատում: Հետաքրքրական է այս առումով Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանի 1919 թ. դեկտեմբերի 9-ի արտաքին գործերի մինիստրին ներկայացված զեկուցագիրը. «*Ես այլևս չեմ հավատում արտաքին ուժին ու նրա՝ դեպի մեզ բարելավ վերաբերմունքին. սպասելով անցյալ տարի Անգլիային, որպես մեր դաշնակցի,այս տարի՝ Ամերիկային,որպես մեր հովանավորի, Ֆրանսիային նրա սիմպատիաներով դեպի մեզ, մենք սխալվել ենք մեր հաշիվներում: Ֆրանսիան գրավել է Կիլիկիան, Ամերիկան տատանվում է մեզ վրա մանդատ ստանձնել,Անգլիան մահմեդական տարրի մեծ տերություն է, Ռուսաստանը հեռու է, Իտալիային թույլ չի տվել Անդրկովկաս մտնել Անգլիան, իսկ հունական զորքերի Անդրկովկաս գալուն համաձայն չեն երևի դաշնակիցները: Այսպիսով, մեր ժողովուրդը մնացել է մեն ու մենակ առանց կողմնակի օգնության, շարունակվում է կոտորվել սովից, ցրտից, հիվանդություններից ու Տաճկաստանի մշտական սպառնալիքից*»[20]: Այս առումով ուշագրավ է նաև նշել, որ վերը հիշված հայ դիվանագետը շատ նրբին ձևով մի այլ միտք է արտահայտում՝ կապված օրիենտացիաների խնդրի հետ: Ըստ երևույթին լավ ըմբռնելով աշխարհաքաղաքական իրավիճակում կատարված փոփոխությունները արդեն 1919 թ. վերջերին, որոնք էական նշանակություն ունեին Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի համար, Լ. Եվանգուլյանը խորաթափանցորեն նկատում է. «*սակայն, որքան վատ լինեն կամավորական Ռուսաստանի գործերը, մենք չպետք է, իմ կարծիքով այժմ ձեռնարկենք որևէ քայլեր, որոնք ունեն բացարձակ ագրեսիվ բնույթ Ռուսաստանի նըկատմամբ: Ես կարծում եմ, որ չպետք է մոռանալ, որ բոլոր մեր արտաքին օրիենտացիաներից, <u>մենք չենք հուսահատվել միայն ռուսական օրիենտացիայից</u>:*

*Օրիենտացիան Անգլիայի և Ամերիկայի, մանավանդ առաջինի վրա դրական արդյունք չեն տվել մեզ, Անգլիան համա-*

*կրանքով է վերաբերվում դեպի մահմեդական տարրը, մասնավորապես դեպի Ազրբեյջանը: Ամերիկան Անգլիայի կամ հյուրասեր ու հարուստ Բագու քաղաքի ու նրա ոչ պակաս հարուստ տերերի ազդեցության տակ պատրաստ է իր սիմպատիաները նվիրել Ադրբեջանին*»[21]:

Այդ նույն միտքն է շեշտում նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ընդհանուր քարտուղար Հ. Տեր-Հակոբյանը 1919 թ. սեպտեմբերի 16-ին(№ 3741) Թիֆլիսում հայկական դիվանագիտական հավատարմատարին ուղղված ուղերձում.«*Փարիզի մեր պատվիրակության գրություններից պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ և վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղաքականություն. թե Տոմսոնի և թե մյուս գեներալների (անգամ մեզ մոտ հայասեր համարված Բիչի) զեկուցումները, մասնավորապես Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերող խնդիրներում միշտ եղել են ի վնաս մեզ*»[22]:

Մի կարևոր հավելում ևս: Դեպի Անդրկովկաս ձգվում էին ոչ միայն անգլիացիները, այլև ԱՄՆ-ի իմպերիական քաղաքականության իրականացնողները: Հարստանալով Առաջին աշխարհամարտում, նրանք մշակում էին համաշխարհային տիրապետության լայնածավալ պլաններ, որոնցում ինչպես և այսօր կարևորագույն տեղ էր հատկացվում Անդրկովկասին, և մասնավորապես Հայաստանին՝«Marlboro»-ի «սքանչելի» բուրմունքը տարածելու համար: Եվ դա արվում էր Հայաստանի նկատմամբ մանդատ ստանալու և «բարեկամի» քողածածկույթի տակ, ինչպես դա արվում է այսօր՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման փաստի շուրջ ծավալված քաշքշուկի ընթացքում: Այս առումով շատ հատկանշական է ազդեցիկ ամերիկյան «New York Times» թերթից հետևյալ մեջբերումը (1919 թ. հուլիսի 6). «*Մենք պետք է շահագրգռված լինենք Հայաստանով, Բալկաններով՝ մեծ տերությունների սահմանների հարցում... Հայաստանը հանդիսանում է մեծ ճանապարհ, որ կապում է Եվրոպան Ասիայի հետ և գրավում է հրամանատարական դիրք Սև և Միջերկրական ծովերի նկատմամբ: Եթե մենք ընդունենք Հայաստանի նկատմամբ մանդատը, Հայաստանը կդառնա ամերիկյան ֆորպոստը Արևելքում... Հայաստանի սահմաններից 500 մղոն ռադիուսով (շա-*

*ռավղով) ապրում են 100 միլիոն մարդ, որոնց հարկավոր է են-թարկել ամերիկյան գաղափարախոսությանը և քաղաքականու-թյանը: Իսկ եթե մենք հրաժարվենք մանդատից, ապա Հայաս-տանը դուրս կգա անգլոսաքսոնական քաղաքակրթության ազ-դեցությունից և, այդպիսով, մենք կկորցնենք անգլոսաքսոնական քաղաքակրթության պրոպագանդայի հնարավորությունը Մեր-ձավոր Արևելքի նկատմամբ»*[23]: Շատ պերճախոս է ասված, ոչինչ հարկավոր չէ ավելացնել և իմաստ էլ չունի:

Հայաստանի անկախության ընդունման փաստը մեծ ոգե-վորություն առաջ բերեց Հայաստանում:Սակայն ինչպես վկայում են փաստերը, դա էլ բավարար զորեղ գործոն չէր, որ գործերը Հայաստանում դեպի լավը գնային, որ դրանից ոգևորվեին արտ-երկրի հայ գործարարները: Դա հատկապես ցայտուն դրսևորվեց 1919թ. սեպտեմբերի 28-ին, Թիֆլիսում Հայաստանի դիվանագի-տական ներկայացուցչության խորհրդական իշխան Մ. Թուման-յանի կողմից հրավիրված հայ արդյունաբերողների և բանկերի ներկայացուցիչների ժողովում, որին ներկա էր նաև գեներալ Հարբորդը: Ժողովի նախագահը հրավիրվածներին տեղեկաց-նում է գեներալին հետաքրքրող երկու հարցի մասին. 1) Հայաս-տանի անկախությունը ճանաչելու դեպքում արդյունաբերության և բանկերի հայ ներկայացուցիչները կկամենա՞ն արդյոք իրենց գործունեությունը տեղափոխել Հայաստան և 2) ինչ պայմաններ են հարկավոր, որպեսզի արդյունաբերությունը Հայաստանում բարգավաճի[24]: Հարկ է նշել, որ Հարբորդը այդ նույն հարցերը տվել էր նաև Կ. Պոլսի հայ արդյունաբերողներին, որոնք պատ-րաստակամություն էին հայտնել կարգ ու կանոն հաստատվելուց հետո միայն տեղափոխվել Հայաստան: Այս առումով հատկանը-շական են Թիֆլիսի որոշ հայ մեծահարուստների ելույթները վե-րոհիշյալ ժողովում: Գործնական խոսքով հանդես է գալիս Եղյա Ղազարյան-Մայիլյանը: Շեշտելով, որ հայերը ոչ միայն առևտրա-կան կարող են լինել, այլև լավ արդյունաբերողներ, նա այնուա-մենայնիվ պնդում է, որ բոլորն էլ իրենց գործերը Հայաստան կտեղափոխեն միայն այն դեպքում, եթե այնտեղ հաստատվի կարգ ու կանոն, և վերանան քաղաքական աննպաստ պայման-ները: Գտնելով, որ ժամանակակից Հայաստանի արդյունաբերու-թյան զարգացման խոչընդոտները բազմաթիվ են, Ղազարյան-Մայիլյանը անդրադառնում է երկու կարևոր արգելքների. «*Նախ*

*այն, որ Հայաստանը կտրված է արտաքին աշխարհից: Այս դրու-թյան հետ հայ արդյունաբերողը հաշտվել չի կարող: Առանց Վրաստանի հետ համաձայնության գալու Հայաստանը գոյություն ունենալ չի կարող. Վրաստանի տրամադրությունից է կախված Հայաստանի լինել - չլինելը: Այս կախումը Վրաստանից Հայաստանին դնում է ամենածանր վիճակում: Այժմյան Հայաստանում արդյունաբերության ոչ մի ճյուղ զարգանալ չի կարող, որովհետև դրա համար պահանջվում են արտադրական գործիքներ, որոնք Հայաստան մտցնելու համար հարկավոր է ստանալ Վրաստանի համաձայնությունը, այն Վրաստանը, որը մինչև իսկ տրանզիտի պայմանագիր չի կամենում կնքել, կապելով վերջինս տարածքային խնդիրների հետ, այսպիսով տալով այդ պայմանագրին քաղաքական բնավորություն...*»[25]:

Ի դեպ այս հանգամանքին անդրադառնում է նաև Հայաստանի վերջին վարչապետ Ս. Վրացյանը 1919թ. հունվարի 8-ի իր՝ Յ. Յոբոյանին հասցեագրված նամակում.«*Վրացիները,օգտվելով իրենց աշխարհագրական դիրքից, փակել էին Հայաստանի ճամփան դրսի աշխարհի հետ՝ դատապարտելով հայերին սովամահութեան, ինչպես և ուզում էին գրավել անվիճելի հայկական գավառները՝ Ախալքալակը և Լոռին*»[26]: Ուրեմն, այս առումով տարբեր հեղինակներ, տարբեր դիրքորոշումների երկու մարդ,ինչպես տեսնում ենք, միակարծիք են:

Սակայն երկրորդ խոչընդոտը, որին անդրադառնում է հեղինակը, ներքին բնույթի էր,և ըստ իս՝ շատ ավելի կարևոր, որովհետև դա արդեն կախված էր «հայ» կոչված գործոնից: Հայ արդյունաբերող Ղազարյան - Մայիլյանը հենց այդ երկրորդ խոչընդոտը, որին հանդիպում էր արդյունաբերությունը Հայաստանում, համարում էր իրավակարգի, գույքի և անձի ապահովության բացակայություն, ինչը զգալի չափով վերաբերում է նաև Հայաստանի Երրորդ՝ ներկայիս հանրապետությանը: Վերոհիշյալ հեղինակը այդ համարում էր հետևանք այն բանի, որ կառավարությունը չէր արտահայտում ժողովրդի կամքը, որ ժողովուրդը ըստ ստեղծված իրավիճակի այնպիսի վիճակում էր, որ միայն իր ֆիզիկական գոյության փրկությամբ էր զբաղված, ուստի և հնարավորություն չուներ աչալուրջ վերաբերմունք ցույց տալու դեպի այս կամ այն ներքին քաղաքական խնդիրը[27]: Տեղին է ասել, որ նմանատիպ իրավիճակի հետ բախվեց հայ ժողովուրդը նաև

1990-ական թվականներին, որն էլ շատ բացասական ազդեցություն ունեցավ նրա քաղաքական և հասարակական ակտիվության, ինչպես նաև կենսամակարդակի վրա: Տնտեսական համակարգը փլուզվեց, և նույնիսկ հնարավոր չեղավ 2000-ական թվականների մատույցներին ապահովել նախորդ դարի 80-ական թըվականների մակարդակ բոլոր առումներով՝ տնտեսական, սոցիալական, հատկապես՝ ռազմաքաղաքական: Երկիրը կանգնեց բացարձակ աղքատության եզրին, փոխարենը՝ քաղաքական լիդերները և կուսակցությունները սկսեցին ժողովրդին «հաջողությամբ» կերակրել Ղարաբաղյան հիմնահարցով, ընկղմվելով «Ղարաբաղամոլության մեջ» և անհիմն շահարկելով Ղարաբաղ-Արցախի պրոբլեմը: Դրան ավելացրած՝ երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում՝ Ազգային ժողովում անպայմանորեն ընտրըված լինելու առանձին «ժողովրդական» հավակնոտ «լիդերների» և այսպես կոչված եվրոպական ստանդարտներին բավարարող և համապատասխանող «ազգային», «դեմոկրատական» և այլ բնույթի կուսակցությունների հիվանդագին մարմաջը և ձըգտումը՝ դեպուտատացավը, որը ժողովրդին բերում է նոր տառապանքներ և հարկային սպասելիքներ ու հավելումներ, որոնք հավանաբար չեն եղել ինչպես Արաբական խալիֆայության,այնպես էլ նույնիսկ Օսմանյան կայսրության օրոք, իսկ պետությանը՝ անհիմն լարվածություն և խճճված իրավիճակում կողմնորոշվելու նորանոր բարդացումներ ու դժվարություններ: Արդյունքում նաև՝ ժողովրդական զանգվածների ու հասարակական խավերի քաղաքական ակտիվության բովանդակության նորանոր և «որակական» ձևախեղումներ:

Եվ վերջապես, ամփոփելով իր միտքը, վերոհիշյալ հեղինակը գալիս է այն ճշմարիտ եզրահանգմանը, որ Հայաստանին հարկավոր է ոչ թե «*կուսակցական կառավարություն, որ կուսակցական շարժառիթները նկատի ունենալով է այս կամ այն բնակավայրի վարչակազմը լրացնում, այլ զուտ «գործարար» կաբինետ: Հայաստանը մտավոր կարող ուժերի կարիք ունի, որոնց հարկավոր է ներքաշել հասարակական և պետական շինարարության ասպարեզ, մինչդեռ իրականությունը գալիս է ասելու, որ մեր կառավարությունը զուտ կուսակցական մասշտաբներով է մոտենում այս կամ այն հարցին կամ պաշտոնին*»[28]:

Խիստ այժմեական և իրատեսական հարցադրումներ, որոնց հետ չհամաձայնվել չի կարելի: Շարունակելով իր միտքը՝

վերոհիշյալ հեղինակը պնդում է, որ «*դաշնակցական լինելը մեր կառավարության համար առաջին պայման է այս կամ այն պաշտոն ստանձնելու համար: Այսպիսի պայմաններում ոչ մի արդյունաբերություն չի կարող զարգանալ Հայաստանում: Հայաստանին հարկավոր է չափավորական կառավարություն, որի մեջ պիտի մտնեն նաև արդյունաբերության ներկայացուցիչներ*»[29]: Իսկ մի այլ արդյունաբերող, շարունակելով վերոհիշյալ հեղինակի տեսակետը, գալիս է այն հետևության, որ «*հայ արդյունաբերողները և մասնագետները իրենք չեն, որ փախչում են, այլ նրանց մեր կառավարությունն է փախցնում իր նեղ կուսակցական գործելակերպով*»[30]:

Հետաքրքիր է, որ այս փաստն արձանագրում է նաև գընդապետ Հասկելը, որը թվում է, թե Հայաստանի ներքին կյանքից չպետք է լավ գլուխ հաներ: 1919 թ. վերջին (նոյեմբեր - դեկտեմբեր) Լ. Եվանգուլյանի հետ ունեցած զրույցի ժամանակ նա շեշտում է, որ չնայած «*կառավարության ղեկավարը* (խոսքը վերաբերվում է Ալ. Խատիսյանին) *ավելի խելացի է և բարձր է մնացած բոլորից, սակայն ամբողջությամբ գտնվում է կուսակցության ձեռքին և հարկադրված է իրագործել պառլամենտի և կուսակցության կողմից իրեն թելադրվող հրամանները*»[31]:

Սա փաստ է, որն անտեսելն անիմաստ է, ընդհակառակը, որպես պատմական փաստ այն հարկավոր է մանրազնին ուսումնասիրել ու հաշվի առնել ներկա հասարակական - քաղաքական նորագույն օր - օրի բարդացող գործընթացներում:

Ի վերջո Հայաստանում մնացին նրանք, ովքեր ցանկանում էին, և արեցին այն, ինչ իրենք ի վիճակի էին: Հայաստանում աշխատել ցանկացողների թիվը քիչ էր, զգալի մասը պարզապես չէր ցանկանում աշխատել Հայաստանում, այլ ձգտում էր իր համար ապահովել «օազիսային» պայմաններ: Հայաստանում առաջացել էր կադրային դատարկություն. շատերը ձգտում էին մնալ արտասահմանում և չաշխատել Հայաստանի դժվարին պայմաններում, բայց փոխարենը մնացած տեղական իշխանավորներից պահանջում էին կայուն, հզոր պետություն՝ հզոր բանակով, գերազանց սպայական - հրամանատարական կազմով,«արհեստավարժ» նախարարների կաբինետով՝ փոխարենը ոչինչ չառաջարկելով: Հայաստանում մնաց մարդկային այն նյութը, որը ցանկանում էր գեթ ինչ - որ բան տալ իր երկրին ու ժողովրդին:

## Գլուխ Առաջին
## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Տես՝ Ս. Վրացյան. Կյանքի ուղիներով. Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ. Ե. հատոր, տպարան «Համազգային», Բէյրութ, 1966, էջ 11:
2. Յովհաննես Քաջազնունի. Հայաստանի Հանրապետութիին. Երեւան, «Մ. Վարանդեան» հրատարակչութիին, 1993, էջ 24-25:
3. Տես՝ Հայաստանի Հանրապետության Պետական Կենտրոնական Պատմական Արխիվ(այսուհետ՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 276, ց.1, գ. 79, թ. 46:
4. Տես՝ Stephen F. Jones. Georgian - Armenian Relations in 1918 - 20 and 1991 - 94: A Comparison. - Armenian Review, vol. 46, № 1 - 4 (181-184), 1993, p. 64:
5. Յովհ. Քաջազնունի. Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923, էջ 17:
6. Ռուբէն. Հայ Յեղափոխականի մը յիշատակները. Է. հատոր. Արտասահման, Սասուն եւ Հայաստանի Հանրապետութիին. Գ. հրատարակութիին, Թեհրան, 1982, էջ 243:
7. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 79, թ. 13:
8. Տես Ս. Վրացյան. Հին թղթեր նոր պատմության համար. Բեյրութ, 1962, էջ 287-288:
9. Տես՝ Stephen F. Jones, p. 64-65:
10. Տես՝ Ս. Վրացյան. Կյանքի ուղիներով. Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ. Ե. հատոր, տպարան «Համազգային», Բէյրութ,1966, էջ 98:
11. Տես՝ նույն տեղում:
12. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 79, թ. 145:
13. Տես՝ նույն տեղում, թ. 43:
14. Տես՝ Վրացյան Սիմոն. Հայաստանի Հանրապետություն. Եր.: Հայաստան, 1993, էջ 450-451:
15. Տես՝ Ս. Վրացյան. Հին թղթեր նոր պատմության համար, էջ 301:
16. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 212, թ. 23:
17. Տես՝ նույն տեղում, գ. 183, թ. 146:
18. Տես՝ Ս. Վրացյան. Հին թղթեր նոր պատմության համար, էջ 301:
19. Տես՝ նույն տեղում, էջ 302:
20. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 116, թ. 125:
21. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 71, թ. 4:
22. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 62, թ.45; ֆ. 276, ց.1, գ. 97, թ. 126:
23. Տես՝ **В. И. Адамия. Из истории английской интервенции в Грузии (1918-1921 гг.). Сухуми, Абгосиздат, 1961, стр. 13-14:**
24. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 119, թ. 167:
25. Տես՝ նույն տեղում:
26. Տես՝ Ս. Վրացյան. Հին թղթեր նոր պատմության համար, էջ 275:

27. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 119, թ. 167:
28. Տես՝ նույն տեղում, թ. 168:
29. Տես՝ նույն տեղում:
30. Տես՝ նույն տեղում:
31. Տես՝ նույն տեղում, գ. 183, թ. 146:

## Գլուխ Երկրորդ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԻՆ: ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

1918 թվականի դեկտեմբերի 13-ին բռնկվում է վրաց-հայկական պատերազմը, որը նորաստեղծ Հայաստանի Հանրապետության համար ծանր փորձություն է դառնում: Անդրկովկասում վարչատարածքային հարցը դարձել էր ազգամիջյան փոխհարաբերություններում լարվածության պահպանման գլխավոր գործոն և կռվան: Անդրկովկասյան ժողովուրդների՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների (թաթարներ, ազերիներ) միջև գոյություն ունեցող հողային-տարածքային սահմանավեճերն ու կռիվները գլխավորապես առնչվում էին Հայաստանի պատմական գավառների՝ Արցախի, Զանգեզուրի, Ախալքալաքի և Բորչալուի, ինչպես նաև Լոռի - Փամբակի տարածքների պատկանելիության վիճարկման հետ: «...*վիճելի կը մնային Ղարաբաղն ու Զանգեզուրը, որոնց վրայ յաւակնութիւն ունէր Ազրբեյջանը, Լոռին, Ախալքալաքը, եւ Կարսի շրջանի որոշ մասերը, որոնք կը պահանջուէին Վրաստանի կողմէ, եւ վերջապէս Օլթին ու Նախիջեւանը, որոնք թուրքերու աշխարհակալութեան առարկա էին»*[1],- գրում է Հայաստանի Առաջին Հանրապետության երկրորդ վարչապետ Ալ. Խատիսյանը: Վերջինս նաև ավելացնում է նաև, որ որոշ փորձեր արվեցին հարթելու վեճերի պատճառով առաջ եկած դժվարությունները: «*Այդ վէճերու առթիւ գումարուեցան շարք մը խորհրդաժողովներ*,- շարունակում է իր միտքը Ալ. Խատիսյանը,- *որոնք համաձայնութեան չյանգեցան եւ որոնց կը հետեւէին նոր ապստամբութիւններ եւ պատերազմական գործողութիւններ, երբ կը պարզուէր, որ ապստամբներու ետեւը կանգնած էին համապատասխան կառավարութիւնները»*[2]:

Դրա հետ մեկտեղ հայտնի էր, որ Արցախ - Զանգեզուրի գավառները Ռուսաստանյան կայսրության ժամանակաշրջանում մտցված էին հիմնականում մուսուլմանական բնակչություն ունեցող Ելիզավետպոլի, իսկ Ախալքալաքի ու Բորչալուի գավառները՝ Թիֆլիսի նահանգի կազմում:

Անդրկովկասի վերը նշված տարածքներում հայերը որոշակի կայուն տեսակարար կշիռ ունեին: Ժողովրդագրական նույնիսկ աննպաստ իրավիճակներում հայերը զգալի տոկոս էին կազմում և՛ Արցախում, և՛ Ախալքալաքի ու Բորչալուի գավառներում: Ա. Շահաթունյանի տվյալներով, դեռ 1897 թ. հայերը Ախալքալաքի գավառում կազմում էին մեծամասնություն, 72703 հոգուց հայեր էին 50208-ը, իսկ արդեն 1916 թ. տվյալներով 108500 բնակիչներից հայեր էին 84275-ը կամ 77,6 %-ը, ընդ որում երկրորդ տեղը զբաղեցնում էին մուսուլմանները, երրորդ տեղը՝ ռուս բողոքականները և ընդամենը չորրորդը՝ վրացիները[3]: Դա հաստատվում է նաև 1919 թվականին վերաբերող ֆրանսերեն լեզվով հայտնի մի տեղեկագրի տվյալներով. դրանում նշվում է, որ 1919 թվականին Ախալքալաքի գավառում, որի տարածքն ըստ այդ տեղեկագրի կազմում էր 2568 քառակուսի կիլոմետր, բնակվում են 82775 հայ: Ըստ այդ աղբյուրի, վրացիների թիվը Ախալքալաքի գավառում հասնում էր 10306-ի,մահմեդականներինը՝ 6338-ի, մնացյալ ազգությունների թիվը՝ 7542-ի[4]: Իսկ ինչ վերաբերում է Բորչալուի գավառին ամբողջությամբ վերցրած, ապա հայերն այնտեղ կազմում էին հարաբերական մեծամասնություն. եթե վերցնենք հարավային և ծայրահեղ արևմտյան մասերը, ապա ըստ Ա. Շահաթունյանի՝ հայերը 1916 թ. կազմում էին ոչ պակաս, քան 75 %, 169351 բնակչից 63702-ը հայեր էին[5]: Իսկ ըստ վերը նշված ֆրանսերեն լեզվով հրապարակված տեղեկագրի, 3200 քառակուսի կիլոմետր տարածք զբաղեցնող Բորչալուի գավառում 1919 թ. ապրում էին 64 հազար հայեր, 7600 թաթարներ, թուրքմեններ և այլ ազգություններ, ինչպես նաև ընդամենը 1150 վրացի[6]: Կան նաև այլ կարգի տվյալներ, որոնք լրացնում, ամբողջացնում են այս պատկերը՝ հարակից հայաբնակ և հայկական որոշ շրջանների հետ մեկտեղ: Այսպես, Հայաստանի և Ադրբեջանի սահմանների վերաբերյալ 1919 թ. ապրիլի 22-ով թըվագրվող մի պատմաքաղաքական տեղեկագրում նշվում է, որ «*վիճելի Բորչալուի և Փամբակի շրջանների սահմաններում ապրում են 105 հազար հայ, 15 հազար մուսուլման, 420 վրացի և 13 հազար այլ ազգություններ, ուրիշ խոսքով՝ 72 % հայ, իսկ վըրացի՝ ընդամենը 0,32 %*»: Այդ նույն տեղեկագրի համաձայն, Ախալքալաքի շրջանում՝ ներառյալ Ծալկան, կային 89-90 հազար

հայ, 8 հազար մուսուլման, 7 հազար վրացի և 17 հազար այլազգի, այսինքն՝ 73,5 % հայ, իսկ վրացի՝ 5,7 %[7]:

1919 թ. մի այլ աղբյուրի համաձայն, վրացիների և հայերի միջև վիճելի համարվող Ախալքալաքի գավառում՝ Ծալկայով հանդերձ, ինչպես նաև Բորչալուի գավառում (Խրամ գետից հարավ) և Ղազախի գավառի հարավային մասում կային 260 հազար հայ, ընդամենը 7 հազար վրացի և 30 հազար այլազգիներ[8]: Ուշագրավ է այս առումով նշել նաև 1919 թ. վրաց - հայկական խորհրդաժողովում Ղորղանովի (Ղորղանյան,Կորգանով) այն դիտողության մասին, ըստ որի վիճելի տարածքում վրացիները կազմում են ընդամենը 500 մարդ, ունենալով միայն երկու գյուղ՝ Սիոնը և Ցագերը, ընդ որում այդ երկու գյուղերը գտնվում էին վրացական զորքերի կողմից զբաղեցրած գծից հյուսիս, և գումարած դրանց երեք թաթարական գյուղեր՝ Կարախսը, Իլիմազլուն և Կիշլագը[9]: Սակայն «վեհապետական» Վրաստանի ախորժակը շատ մեծ էր: Միանգամայն իրավացի է Ռր. Ավետիսյանը, որն իր ուշագրավ «Հայկական հարցը 1918 թվականին» մենագրության մեջ շեշտում է, որ թեև վրացիները կազմում էին Անդրկովկասի բնիկ բնակչության 28 %-ը, սակայն հավակնություններ էին ներկայացնում երկրամասի տարածքի 33 %-ի նկատմամբ (61 հազար քառակուսի կիլոմետր), 43 % կազմող կովկասյան մահմեդականները՝ տարածքի 38 %-ին (70 հազար քառակուսի կիլոմետրը), իսկ բնիկ բնակչության 29 %-ը կազմող հայերի 54,5 հազար քառակուսի կիլոմետր տարածքի նկատմամբ պահանջը երկրամասի տարածքի 29 %-ն էր ընդամենը կազմում: Իրավացիորեն Ռր. Ավետիսյանը արձանագրում է այն փաստը, որ «*սակայն Հայկական գավառները միմյանց մեջ և Թուրքիայի հետ բաժանել ցանկացող վրացական մենշևիկներն ու մուսավաքը ձգտում էին հասնել Հայաստանի հաշվին նոր տարածքների ձեռք բերման: Վրացիները ունեին հավակնություն Ղազախի ու Բորչալուի, Ալեքսանդրապոլի շրջանի մի մասի՝ Փամբակի նկատմամբ, որտեղ ոչ մի վրացի չկար, հակառակը՝ հայերի թիվն այդտեղ հասնում էր 171 հազարի: Նույնը և թուրքերի կողմից գրավված Ախալքալաքի նկատմամբ, որտեղ բնակվում էր 90 հազար հայ և ընդամենը 7 հազար վրացի: Այսպիսով, վրացիների հավակնությունները հայկական հողերի նկատմամբ, ներառյալ Ախալքալաքը, միտում էին 13 հազար քառակուսի կիլոմետր տարածքի, 261*

*հազար հայ և 7 հազար վրացի բնակչությամբ: Վրաստանի պահանջած տարածքը կազմում էր 75 հազար քառակուսի կիլոմետրը, 2 միլիոն 951 հազար բնակչությամբ, որոնցից 1 միլիոն 607 հազարը՝ վրացի,535 հազարը՝ հայ, 300 հազարը՝ մահմեդական, 510 հազարը՝ ռուսներ և այլազգիներ»*[10]:

Այս առումով տեղին է նշել, որ ըստ էության վրացիների և կովկասյան մահմեդականների նպատակն էր,ինչպես իրավացիորեն նկատել է Ավստրիական Հանրապետության զինվորական ներկայացուցիչ գեներալ բարոն Գեորգ Ֆրանկենշտայնը իրենց կողքին ունենալ Հայաստան «*առանց Լոռու ու Ղազախի, առանց Արարատյան դաշտավայրի, առանց Շիրակի և Ախալքալաքի, առանց Ղարաբաղի ու Զանգեզուրի, առանց գավառների, որոնք դարեր շարունակ Հայաստանին են պատկանել*»[11]:

Հայ-վրացական հարաբերությունների առնչությամբ տարբեր վավերագրերի, փաստաթղթերի և գիտական առկա գրականության ուսումնասիրությունը հստակ արձանագրում է այն փաստը, որ մինչև Անդրկովկասյան Հանրապետությունների անկախության հռչակագիրը, վիճելի հարցերում քաղաքական կուսակցությունները պաշտպանել են հետևյալ դիրքորոշումը. «*...Սոցիալ - դեմոկրատները՝ մենշևիկները հայտարարել են. "Ինքնակառավարման տերիտորիալ սահմանները պետք է որոշվեն ըստ այդ շրջաններում մեկ կամ այլ ազգերի բնակչության տոկոսային հարաբերության՝ միաժամանակ հաշվի առնելով նաև այդ ազգերի տնտեսական ու մշակութային պայմանները: Իսկ երբ սահմանները որոշվեն, ապա այն պետք է հաստատվի այդ շրջաններում բնակվող ժողովուրդների հանրաքվեի միջոցով":*

*Վրացական ֆեդերալ - սոցիալիստական հեղափոխական կուսակցության կոնֆերանսը վրացական սահմանների առնչությամբ որոշեց. Վրաստանի տարածքը պետք է կազմված լինի հետևյալ շրջաններից՝ Թիֆլիս, Գորի, Դուշեթ, Թելավ, Սիգնախ, Թիոնեթի, Բորչալու, Ախալցիխե, Ախալքալաք, Քութաիս,Բաթում, Սուխում, եթե այդ շրջաններում անցկացված հանրաքվեները պետք է համաձայնություն տան նմանօրինակ որոշմանը*»[12]:

Վիճելի տարածքային հարցերը նման ժողովրդավարական սկզբունքով լուծելու խնդրում հայկական և վրացական քաղաքական-հասարակական հոսանքների միջև մինչ 1918 թ. դեկտեմբերյան ռազմական բախումն իշխում էր «կատարյալ համա-

ծայնություն և փոխըմբռնում»: Հարկ է սակայն ընդգծել, որ լոկ արտաքուստ, քանզի քաղաքականության մեջ ընդունված է մի բան ասել, այլ բան անել: Դա իրեն երկար սպասեցնել չտվեց: 1918 թ. հուլիս - սեպտեմբերին վրացական «Սաքարթվելո» (№ 139) թերթը բանավիճելով հպատակության հարցի շուրջը, ստահոգ կերպով պնդում էր, որ հայերը դաշնակցականների և նացիոնալիստների ազդեցության տակ ձգտում են Վրաստանի տարածքում ստեղծել Հայաստան[13]: Իրավիճակի և ազգային - տարածքային հարցերի նկատմամբ դիրքորոշման այդ տրանսֆորմացիան (փոփոխությունը) ճիշտ է նկատել «Ղարաբաղի կոնֆլիկտ» գրքի հեղինակ Վ. Գ. Թունյանը, ասելով, որ երեք անդրկովկասյան ժողովուրդների դիրքորոշումները մինչև անկախության ձեռքբերումը,1918 թ. մայիսին իրենց կոնտուրները ստացան, ձևափոխության ենթարկվելով հետագայում: Վրաստանը և Ադրբեջանը որպես պետական սահմանների հիմք վերցրեցին վարչական - նահանգային բաժանումը, մերժելով էթնիկական գործոնը, ձգտելով չթույլատրել Հայաստանի Հանրապետության ամրապընդումը: Եթե հայկական կողմը, ելնելով Կովկասյան տան կամ էլ Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման շահերից, ինչ - որ տեղ գնում էր զիջումների ազգային օրգանիզմի ձևավորման խնդրում, համաձայնվելով առանձին տարածքների ժամանակավոր առանձնացմանը (այսինքն՝ փաստորեն օտարմանը - Վ.Վ.), ապա վրացական և մուսուլմանական կողմերը, գտնվելով, ինչպես միանգամայն ճիշտ նկատում է Վ. Գ. Թունյանը, գաղտնի դաշինքում, օգտագործելով բարենպաստ դրությունը, գրավեցին անզիջում դիրք ազգային - պետական շինարարությունում[14]: Վըրաստանը կանգնած էր Ռուսաստանյան կայսրության կազմում գտնվող նախկին նահանգային սահմանների անբաժանելիության տեսակետի վրա, իսկ Հայաստանը պաշտպանում էր էթնիկական գործոնի հաշվառումը[15]: Այնպես, որ կարելի է համաձայնըվել Վ. Գ. Թունյանի նաև այն տեսակետի հետ, որ ըստ էության տարածաշրջանի բոլոր երեք ժողովուրդների ներկայացուցիչները նահանգների սահմանների վարչական փոփոխությունների մասին ոչ մի համաձայնության չեն եկել ինչպես մինչև 1917 թըվականը, այնպես էլ 1918 թվականին[16], որն էլ ապագայի աղե-

[2] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

տալի իրադարձություններին տանող պատճառներից մեկը հանդիսացավ: Փոխանակ զբաղվելու լուրջ քաղաքականությամբ, իրապես մոբիլիզացնելով սեփական առկա ռեսուրսները և ամրապընդվելու հայոց միջնաբերդերում, հույս չդնելով կովկասյան տան հարևանների խաբուսիկ և դեմագոգիկ խոստումների վրա, երևանյան քաղաքականագետները ընկան քաղաքական դիսկուսիաների ու ոչ լուրջ դիվանագիտական ինտրիգների ոլորտը՝ տանուլ տալով մեծ ռազմավարության բնագավառում:

Յարկ է ասել, որ վերջին հանգամանքը լավ են ըմբռնել որոշ խորաքափանց հայ մտավորականներ: Ապրելով հայ-վրացական փոխհարաբերությունների կիզակետում, լայնորեն շփվելով վրաց և հայ ժողովուրդների քաղաքական վերնախավերի հետ, մեծագույն հայ բանաստեղծ Յովհ. Թումանյանը,կարծես թե կանխագուշակելով ապագայի փոթորկալից իրադարձությունները, վրաց հասարակության ընդերքում հասունացող փոփոխությունների աղետաբեր շունչը և սպառնացող վտանգը հայ ժողովրդի կենսական շահերին, դեռ 1917-1918 թթ. սահմանագծին իր տագնապն է արտահայտել այդ կապակցությամբ, և զգուշացրել, որ փաստորեն դատարկ խոսակցություններով զբաղվելու և սին խոստումներին հավատալու փոխարեն (որը ևս «բնական է» հարևան ժողովրդի տեսանկյունից) հարկավոր է ամրացնել լեռնաշխարհները, ապահովել դրանց անվտանգությունը զինական և ռազմավարական առումներով: Արդեն 1918 թ. ապրիլին Վրաստանում Յայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Գեորգիի Եվանգուլյանին (Եվանգուլով) հասցեագրված իր մի նամակում (Յովհ. Թումանյանը որոշակի մտերմություն էր անում վերջինիս հետ, և ըստ երևույթին, բարձր էր գնահատում նրա դիվանագիտական գործունեությունը - Վ.Վ.) հետևյալ ուշագրավ միտքն էր զարգացնում (որոշ վիճարկելի կողմերով հանդերձ, և դա էլ բնական է, քանի որ Յովհ. Թումանյանը պրոֆեսիոնալ քաղաքագետ չէր, բայց շատերից կռահողականությամբ անչափ բարձր էր - Վ.Վ.). «*Մեր ընդհանուր վիճակը, գործերի դրությունը, ուժերի հարաբերակցությունը նկատի ունենալով և ծանոթ լինելով մեր անցյալին, ես համոզված էի, որ ռուսների՝ Կովկասը թողնելուց հետո մենք չենք կարողանալու պահենք մեզ թողնված ֆրոնտը և բերդերը իրենց ռազմական ու այլ պարենավորման հսկայական պահեստներով: Ինձ թվում էր, որ պետք է մեր ժողովուրդը բոլոր հովիտներից ու դաշտավայրերից տեղի տա և նո-*

*րից մտնի իր աշխարհքի հին բնական միջնաբերդերը - լեռնաստանները, ինչպես պատահել է մեր պատմության ընթացքում շատ անգամ և էս դեպքում, Ռուսահայաստանում Կուրի և Արաքսի մեջ գտնվող լեռնաշխարհում - Լոռի, Ղազախ, Շամշադին - կլիներ զինված ու ապահով և մեր ամեն տեսակ մթերքների պահեստներ, մեր լեռնաշխարհքում կլինեին, որոնք պետք է ընկնեին միայն հայ ժողովրդի հետ, երկրորդը - չէինք տալ էդ ամենը թըշնամուն բերդերը թողնելիս, և սոված թշնամուն կշտացնել և ուժեղացնել ըստ ամենայնի: Ազգային խորհուրդը ուրիշ կերպ էր մըտածում և միանգամայն ապահով էր համարում ամենը ու բնավ կանգ չառավ էս առաջարկի ու իրադրության վրա (թեև ես պատմական ու ռազմական շատ տվյալներով էի ապացուցանում): Նրանք (ասել է, թե Ամերիկայի և Անգլիայի ներկայացուցիչները) խոստանում էին շատ խոշոր գումար դնել էդ գործի վրա, նկատելով էդ դիմադրությունը, դաշնակիցների կռիվը և էդ լեռնաշխարհների և Ղարաբաղի ուժեղացումը: 1917 թ. դեկտեմբերին և 1918 թվի հունվարին էս միտքը արծարծեցի Հայոց Ազգային խորհըրդում և առաջարկեցի մտածել բերդերից ամեն տեսակ մթերք ու զենք քաշել դեպի մեր լեռնաշխարհները - ապահովել և ամրացնել մեծաքանակ թնդանոթներով ու ամեն տեսակ զենք ու մթերքով*»[17]:

Արդեն վերը նշեցինք, որ մեծագույն Հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանը պրոֆեսիոնալ քաղաքագետ չէր, և ամենևին էլ պարտադիր չէր, որ նա ամեն ինչում իրավացի լիներ և կողմնորոշվեր քաղաքական խաղերի մութ լաբիրինթոսում: Սակայն ինչպես Հովհ. Թումանյանի, այնպես էլ շատ-շատերի մոտ իշխող մի մտայնություն կար, որ մտածելու տեղիք է տալիս: Պրոբլեմը վերաբերում է այն հարցադրմանը, ըստ որի թշնամուն հակահարված տալու համար անհրաժեշտ է, որ «մեր ժողովուրդը բոլոր հովիտներից ու դաշտավայրերից տեղի տա և նորից մտնի իր աշխարհքի հին բնական միջնաբերդերը - լեռնաստանները, ինչպես պատահել է մեր պատմության ընթացքում շատ անգամ»: Դժվար է համաձայնվել այս տեսակետի հետ, քանզի դարերի ընթացքում դա ժողովրդի ստվար զանգվածներում արմատավորել է պարտվողական տրամադրություններ,նվազեցրել զինվորական կորովի ուժգնությունը, տկարացրել ազգային ոգին, ավելացրած դրան նաև այն հանգամանքը, որ տվյալ իրավիճակում հաշտվելով այդ մտքի հետ և ետ քաշվելով դեպի Հայոց լեռների խորքերը, հայե-

րը բնականաբար հրաժարվել են հովիտներում ու դաշտավայրերում ամրապնդվելու մտքից և բերդա - ամրոցաշինությունից, զբաղվելով համատարած եկեղեցաշինությամբ, որը դրսից խրախուսվում էր, սևեռուն գաղափար դարձնելով այն հայեցակետը, թե թշնամուն կարելի է դիմադրել (այլ ոչ թե հաղթել)՝ միայն ամրապնդվելով լեռնաստաններում (դա ցայտուն երևում է Կիլիկիայի հայկական պետականության պատմությունն ուսումնասիրելիս, ինչն ակնհայտ է դարձնում հենց նշված գործոնի դերը: Կիլիկիայում ևս հայերը կարողացան ամրապնդվել միայն լեռնաստաններում, զիջելով հովիտները և արգավանդ դաշտավայրերը, ինչը շարունակվեց դարեր շարունակ, և որի լավագույն օրինակը Զեյթունի պատմաքաղաքական փորձն է - Վ.Վ.): Ինչպես տեսնում ենք պրոբլեմներ կային, կան և շրջանցել դրանք իմաստ չունի, այլ հարկ է վերաիմաստավորել անցյալի փորձը, ինչպես նաև նորովի մոտենալ նաև Հայոց Մեծերի արտահայտած որոշ մտքերի հետ, անշուշտ փորձ անգամ չանելով ստվեր գցելու նրանց հեղինակության և առհասարակ ամեն ինչի վրա: Միաժամանակ, իրադարձությունները ակնհայտորեն ցույց տվեցին, որ նույնիսկ Հովհաննես Թումանյանի խոսքերում առկա ռացիոնալ հատիկներին ուշադիր ունկնդրողներ չեղան:

Ավա՜ղ: Ասողին լսող էր հարկավոր, և ճոռոմախոս քաղաքագետները, որոնք Մ. Խորենացու խոսքերով ասած ծույլ ու ամբարտավան աշակերտների նման «դեռ չսովորած» իրենց «աստվածաբան» էին երևակայում և ներկայացնում[18], իրենց հարազատ ժողովրդին կերակրելով հայ - վրացական եղբայրության և լուսավոր ապագայի, ծովից ծով Հայաստանի մասին գայթակղիչ կերակուրներով, որը հետո հանգեցնելու էր Սևրյան ոգորումներին և շլացմանը, վիլսոնյան վեհերոտ մանդատյորության սպասելիքներին և այնուհետև՝ սրընթաց գահավիժմանը:

Իսկ 1918 թ. իրականությունն ավելի ռեալ էր, քան դա պատկերացնում էին քաղաքագետները: Հետաքրքիր է նկատում այս կապակցությամբ ամերիկահայ հեղինակ Վերնոն Վ. Ասպատուրյանը. *այնուամենայնիվ, այս Հայաստանը («ծովից ծով») իրապես ոչ ռեալ էր և Դաշնակիցների կողմից լուրջ չէր դիտվում: Փարիզում մնացած հայկական լիդերները զգուշորեն իրենց պահանջները սահմանափակում էին Ռուսահայաստանի նկատմամբ պահանջատիրությամբ և իրենց խաղում «ռուսական ազդեցության ոլորտը» դիտում որպես «մեռնող» գործոն, նախքան բոլ-*

*շևիկները և թուրքերը կվերակենդանանային, իսկ դաշնակիցները նման պահանջն ընդունում էին որպես վստահություն վայելող և ունակ էին իրենց համարում արագորեն շարժվելու և վճռաբար ընդունելու այդպիսի Հայաստանը*[19]:

Հենց այսպիսի աշխարհաքաղաքական իրավիճակում էլ, արդեն 1918 թ. մայիսյան անկախական գործընթացներից հետո վրաց մենշևիկների մոտ հասունացավ այն սևեռուն համոզմունքը, որ տարածքային - սահմանային հարցերում հարկավոր է նախապատվությունը տալ Վրաստանի վեհապետական շահերին:

Դեռևս հունիսի 1-ին Հայոց Ազգային խորհրդի նախագահին ուղղված դիմումագրում (№ 6666) Վրաստանի զինվորական նախարարության ղեկավարի պարտականությունները կատարող Գեորգաձեն հաղորդում էր, որ Վրաստանի կառավարությունը իրեն լիազորել է հաղորդել, որ անկասկած անթույլատրելի է Թիֆլիսում օրենսդրական և վարչական գործառնություններով օժտված որևիցե քաղաքական օրգանի (հայկական - Վ.Վ.) գոյությունը, քանի որ դա նշանակում է վրաց ժողովրդի սուվերեն իրավունքների ոտնահարում[20]: Անշուշտ, դժվար է չհամաձայնվել վրացական կողմի հարցադրման հետ, որոշակի վերապահումներով հանդերձ: Ինքնին հասկանալի է, որ ոչ մի լուրջ պետություն էլ չի կարող համաձայնվել այն մտքի հետ, որ իր սուվերեն տարածքում գործի այլ ժողովրդին պատկանող օրենսդրական և գործադիր քաղաքական գործառնություններով օժտված որևիցե այլ մարմին, առավել ևս երբ վերջինս փորձում էր շարունակել Թիֆլիսից երևանյան իր գործերի կառավարումը, բացատրելով դա Հայաստանի մայրաքաղաքում կենցաղային և այլ կարգի հարմարությունների բացակայությամբ, գումարած դրան նաև այն հանգամանքը, որ Վրաստանի մայրաքաղաքում առկա էր հայկական զինվորական ոչ աննշան մի թվաքանակ՝ զենք ու զինամթերքով հանդերձ: Բնականաբար, այս հանգամանքը չէր կարող դուր գալ Վրաստանի սուվերեն պետության կառավարությանը, և ոչ մի կարգին պետություն էլ չէր կարող դա հաշվի չառնել, և ինքնին հասկանալի էր, որ վրացիները ձգտում էին օր առաջ շուտափույթ ազատվել այդ գործոնի առկայությունից Վրաստանում, ինչի հետ չէին ցանկանում հաշվի նստել հայ գործիչները: Դարձյալ այդ օրը՝ 1918 թ. հունիսի 1-ին Վրաստանի Գլխավոր շտաբի գնդապետ Զախարիաձեն հաղորդում էր Հայոց Ազ-

գային խորհրդի նախագահին, որ Վրաստանի կառավարության որոշման և զինվորական նախարարի կարգադրության համաձայն բոլոր հայկական զորամասերը և զինվորական աստիճանավորները ենթակա են 3 օրվա ընթացքում Վրաստանի Հանրապետության սահմաններից անհապաղ արտաքսման կամ զինաթափման, նշելով, որ դեպի Ղարաքիլիսա տանող ճանապարհը բաց է[21]:

Վրացիները ձգտում էին հնարավորին չափով շուտ ազատվել հայկական ներկայությունից Թիֆլիսում և այլուր, իսկ Վրաստանի մայրաքաղաքում գտնվող Հայկական Առանձին կորպուսի շտաբային սպաների թիվը կազմում էր 17 մարդ, օբեր - սպաներինը՝ 194, բժիշկներինը՝ 4, չինովնիկների թիվը՝ 32 հոգի, և վերջապես զինվորների թիվը հասնում էր 1538-ի[22], ինչը բնականաբար, անհանգստացնում էր վրացական կողմին և դա ևս վրացիների համար վճռորոշ գործոն էր, ձգտելու համար ազատվել հայկական ներկայությունից Վրաստանի մայրաքաղաքում՝ Թիֆլիսում:

Սակայն դա դեռ սկիզբն էր: 1918 թ. հունիսի 3-ի դիմումագրում՝ ուղղված Հայոց Ազգային խորհրդին, այդ նույն Գեորգաձեն հայտնում էր, որ Թուրքիայի կամ Ադրբեջանի հետ որևիցե պայմանագրի դեպքում, Վրաստանի կառավարությունը չի կարող այն իր համար ընդունելի և պարտադիր համարել[23]: Ակնհայտ էր դառնում, որ այս քայլերով Վրաստանը պարզապես հող էր նախապատրաստում Անդրկովկասյան տանը արտոնյալ տեղ ու դիրք գրավելու համար, ձգտելով առկա աշխարհաքաղաքական իրավիճակից բխող բոլոր առավելությունները ծառայեցնել իր օգտին:

Հայ - վրացական հարաբերությունների բարդացման ընկըզբնական ժամանակահատվածում պատերազմական իրադրության առաջացման առիթ հանդիսացավ այն հանգամանքը, որ Վրաստանի կառավարությունը չկամություն դրսևորեց Թիֆլիսից բաց թողնել Հայոց Ազգային խորհրդի գույքը, այն անարդարացիորեն համարելով իր սեփականությունը: Հայկական կողմի նկատմամբ դժկամ և օտարոտի վերաբերմունք Վրաստանի կառավարությունը ցուցաբերեց նաև 1918 թ. հունիսի 21-ին, երբ Թիֆլիսից Հայաստան էին տեղափոխվում Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության «թիֆլիսաբնակ» անդամնե-

րը: Ինչպես վկայում են ժամանակակիցները (Ս. Վրացյան և ուրիշներ), կառավարության անդամներին տեղափոխող 3 ավտոմոբիլները Երևան բաց թողնվեցին չափազանց մեծ դժկամությամբ, ընդ որում *նրանց ճանապարհելու համար չէր եկել Վրաստանի ոչ մի պաշտոնակատար անձ*: Թիֆլիսից Հայոց Ազգային խորհրդի հեռացումը Վրաստանի համար քաղաքական կարևոր խնդիր էր, և նրանք դրան հասան, միանգամայն իրավացիորեն գտնելով, որ չի կարելի սեփական երկիրը կառավարել դրսից, հասկացնելով հայերին, որ Թիֆլիսը Հայաստանի մայրաքաղաքը չի, որ անհրաժեշտ է տեղափոխվել Երևան, ինչը և կատարվեց Վրաստանի կառավարության և հասարակական կարծիքի ճնշման տակ, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ նման դիրքորոշման հետ համակարծիք էին նաև որոշակի մտավորական և քաղաքական շրջաններ Երևանում, որոնք հոգնել էին նաև անպտուղ միջկուսակցական կռիվներից ու վեճերից այդ խնդրի շուրջ, և անհանդուրժելի էին համարում այդպիսի իրավիճակը: Այդ մասին միանշանակ հայտարարեց նաև Հովհ. Քաջազնունին կառավարության հուլիսի 13-ի նիստում, ասելով, որ ինքը կհրաժարվի վարչապետությունից, եթե Հայոց Ազգային խորհուրդը շարունակի մնալ Թիֆլիսում: Ի վերջո հարցը լուծվեց: Թեկուզև որոշակի դժկամությամբ, որը պատիվ չէր բերում հայկական կողմին, բայց Հայոց Ազգային խորհրդի տեղափոխման հարցը լուծվեց, և վրացիներն էլ վերջապես հանգիստ շունչ քաշեցին: Երևանում էլ կարծես թե վերջ տվեցին այդ հարցի հետ կապված անպտուղ միջկուսակցական վեճերին և ձեռնամուխ եղան գործնական քայլերի: Սակայն Վրաստանի հետ տարաձայնության հիմնական պատճառը Բորչալուի գավառում Հայաստանի և Վրաստանի միջև պետական սահմանի շուրջ առաջացած սահմանավեճն էր, և մասնավորապես վերջինիս կազմի մեջ մտնող հայաբնակ Լոռի - Փամբակի, Հարավային Բորչալուի պատկանելիության մասին հարցը: 1918 թ. մայիսին թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի գրավման ժամանակաշրջանում, Հայոց Ազգային խորհուրդը, հաշվի առնելով Վրաստանի սահմանների անվտանգության հարցը, համաձայնվեց Վրաց կառավարության խնդրանքի հետ, որպեսզի վրացական զորամիավորումները զբաղեցնեն այդ շրջանը:

Հատկանշական է, որ այդ պահին դեմոկրատական Վրաստանի ղեկավարները՝ Նոյ Ռամիշվիլին և Նոյ Ժորդանիան Հայոց

Ազգային խորհրդի ներկայացուցիչներ Ավ. Ահարոնյանին, Ալ. Խատիսյանին և Հովհ. Քաջազնունուն խոստացան, որ վրացական բանակը կդատարկի Բորչալուն այն բանից հետո, երբ թուրքերը հեռանան Վրաստանի սահմանամերձ շրջաններից:

Որոշ ժամանակ անց, 1918 թ. հունիսի սկզբին Վրաց Ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան և Վրաստանի վարչապետ Ն. Ռամիշվիլին այցելում են Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցչություն և Ավ. Ահարոնյանին, Հովհ. Քաջազնունուն և Ալ. Խատիսյանին Վրաստանի կառավարության անունից հրավիրում մասնակցելու Ախալքալաքի, Բորչալուի շրջանների բաժանումը ազգային սկզբունքներով կատարելու համար հրավիրվող խորհրդակցությանը: Այնուհետև, ինչպես պարզապես փաստագրում է Ս. Վրացյանը, Հայոց Ազգային խորհուրդը նշանակում է Խ. Կարճիկյանին, Գ. Խատիսյանին և զոր. Գ. Ղորղանյանին (զորավար Ղորղանով)որպես հայկական պատգամավորության ներկայացուցիչներ, որոնք ներկայանում են ընդունելության Վրաստանի կառավարությանը, որը նրանց կատարյալ անակնկալ է մատուցում. «*...Ի. Ծերեթելին, հանուն Վրաց Ազգային խորհրդի հայտարարեց, որ Վրաստանի սահմանների մեջ են մտնելու ամբողջապես Ախալքալաքի, Ղազախի ու Բորչալուի գավառները և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը: Ծերեթելին բացատրեց, որ նման սահմանների հաստատումը անհրաժեշտ է վրաց ժողովրդի կենսական շահերի համար, որ ռազմագիտական տեսակետից, Վրաստանը չի կարող ապրել առանց Լոռի-Փամբակի: Մյուս կողմից, հայերի շահն էլ պահանջում է այդ շրջանների Վրաստանի սահմաններում լինելը, որովհետև այդպիսով հանձին Վրաստանի, Կովկասում կստեղծվի կենսունակ և հզոր քրիստոնյա պետություն, որը գերմանացիների աջակցությամբ կպաշտպանի և հայերին*»[24], քանի որ «*հայերը, Բաթումի համաձայնությունից հետո, չեն կարող կազմել քիչ թե շատ կենսունակ պետություն և իրենց ծեռնտու է ուժեղացնել Վրաստանը*»[25]:

Այս հայտարարությունը սառը ցնցուղ էր հայերի գլխին: Վրացական դիրքորոշման անսպասելի փոփոխությունը շփոթմունք է առաջ բերում հայկական քաղաքական շրջաններում: Այս առիթով Խաչատուր Կարճիկյանը հայտարարում է, որ. «*Ծերեթելու հայտարարության մեջ ինքը տեսնում է Հայաստանը Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի մեջ բաժանելու հին նախագծի*

*իրագործման գործընթացը»*[26]: Այս նույն տեսակետին է նաև Վահան Փափազյանը (Կոմս). «*Վրացիները կլանելով Ախալքալաքը, Արտահան - Արդուինի շրջանները եւ մեր առջեւ փակելով Սեւ ծովը տանող ճորոխի հովիտը՝ ախորժակ ունէին ձեռք ձգելու նաեւ Լոռիի ամբողջ հովիտը, հողամաս մը, որ բացառապէս հայերով բնակեցուած էր եւ հարուստ էր անտառներով ու հռչակավոր պղնձահանքովը: ...Վրացիները, որոնք պատմութեան մեջ միշտ եղբայրօրէն կենակցած են հայութեան հետ, գերազանցեցին ազրպէյջանցիներուն, ախորժակնին ուտելով բացուեցավ: Օգտուելով Հայաստանի ներքին ծանր վիճակին, տնտեսական ծանր պայմաններէն եւ նորակազմ պետութեան յարաբերական թուլութիւնէն, յանկարծակի խուժեցին Լոռիի գիւղերը և փորձեցին վրացական վարչութիւններ հաստատել»*[27]:

Վրացական դիրքորոշման փոփոխությունը առաջ է բերում հայկական հասարակայնության լայն շրջանների խոր վրդովմունքը: «Եղբայր» վրացիների վերաբերմունքից դժգոհ, 1918 թվականի հունիսի 26-ին Լոռու և Ղազախ - Շամշադինի հայրենակցական միությունների ժողովը՝ կապված սույն գավառները Վրաստանի Հանրապետությանը կցելու առիթով, իր կողմից ընդունված բանաձևում ընդգծում էր.«*Նկատի ունենալով... ազգերի ինքնորոշման իրավունքը..., նկատի ունենալով վերջապես այն հսկայական զրկանքները և վնասները, որ կրեց հայ ժողովուրդը այս աշխարհասասան պատերազմի ընթացքում, թե Ռուսաստանի և Տաճկաստանի մեջ, որոնցից հետո գեթ տեղին առիթ է ներկայացել այդ ժողովրդին միանալու, ինքնամփոփվելու և միատարր կյանք հաստատելու առանց այն էլ չափազանց սեղմ և անձուկ աշխարհագրական սահմաններում, այն ինչ Լոռուց և Ղազախ - Շամշադինից զրկվելը ծանր հարված կլինի հայ ժողովրդի սրտին և ոտնահարում է նրա էական իրավունքները»*[28]: Հայոց Ազգային խորհրդին ներկայացրած բանաձևում Լոռու և Ղազախ - Շամշադինի հայրենակցական միությունները խնդրում էին դիմել ամենաակտրուկ միջոցների այդ առիթով և վարչություններին իրազեկ պահել այդ խնդրի վերաբերյալ արված քայլերի մասին[29]:

Հարկ է սակայն նշել ևս մի կարևոր հանգամանքի մասին: Հարցը վերաբերում է այն բանին, որ դեռևս մինչև այդ հանրահայտ ախալքալաքյան իրադարձությունները տեղական բնակ-

չության մեջ որոշակի տագնապ և անվստահություն կար վրացական իշխանությունների կողմից սպասվելիք արդար գործողությունների նկատմամբ: Տեղական որոշ լիդերներ ըստ երևույթին լավ էին ըմբռնում իրավիճակի ողջ լրջությունը, ապագայում ընթանալիք աշխարհաքաղաքական գործընթացների հնարավոր միտումները և դիմելով Հայոց Ազգային խորհրդին, ակնկալում էին ադեկվատ գործողությունների ձեռնարկում, որն ավա՜ղ ոչ հաճախ էր սքափ գնահատվում վերջիններիս կողմից:

Այսպես,դեռ 1918 թ. մայիսի 15-ին Ախալքալաքի Ազգային խորհրդի նախագահի պաշտոնակատար Վ. Այվազյանը Թիֆլիսի Հայոց Ազգային Կենտրոնական խորհրդին հասցեագրված դիմումագրում նշում էր Ախալքալաքի շրջանի ծանր վիճակի մասին, նաև հայտնելով, որ տեղի զինվորական գունդը չունի հարկավոր քանակությամբ հրացաններ և փամփուշտներ: Ավելին, այդ տեղեկագրում ավելացվում էր, որ 3000-ից ավելի զինվորների մեծագույն մասն անզեն են, իսկ զենք ունեցող զինվորը ունի ոչ ավելի քան 100 - 200 փամփուշտ, ընդգծելով, որ փամփուշտի պաշար բոլորովին չկա: Դիմումագրում նաև ասվում էր, որ դրսից ոչ մի օգնություն չստանալով մինչև օգոստոս ամիսը, և սեփական սուղ միջոցներով մասնավոր աղբյուրներից փամփուշտ և զենք ձեռք բերելով, հազիվ կարողացել են պահպանել սահմանները և արգելել թշնամու հարձակումը գավառի հայ և վրացի գյուղերի վրա: Ամփոփելով ասելիքը, խնդրագրի հեղինակը խնդրում էր ուշադրությամբ քննարկել այն և բավարարել առկա պահանջները, հատուկ ընդգծելով, որ դրանից է կախված գավառի 80 հազար հայ ազգաբնակչության գոյության անմիջական ապահովությունը և ընդհանուր ֆրոնտի դրությունը[30]:

Այս առումով հետաքրքիր է նշել, որ չնայած առկա բարդություններին և աշխարհաքաղաքական իրավիճակի մեծ լարվածությանը և խճճվածությանը, ինչպես նաև այն հանգամանքին, որ հայերը դեռևս չունեին հարկ եղած կառույցները տարածաշրջանում սեփական ազգաբնակչության կյանքը կազմակերպելու և նոր փորձություններից ապահովագրելու տեսանկյունից, այնուամենայնիվ որոշ քայլեր քաղաքական կոնկրետ շրջանակների կողմից ձեռնարկվեցին և ձեռնարկվում էին: Ուշագրավ է մի այսպիսի փաստ. 1918 թվականի հունիսի 3-ին Ավհացհոն դպրոցի պետ Թոխաձեին ուղղված դիմումագրում Հայոց Ազգային խորհուրդը խնդրում էր՝ հենվելով Վրաստանի կառավարության

կարգադրության վրա կատարել հարկ եղած միջամտությունը և նույն օրը մի աերոպլան ուղարկել Բորչալուի գավառի Շուլավեր վայրը՝ այն պատճառաբանությամբ, որ ստացված տեղեկություն-ների համաձայն Շուլավերի քաղաքը շրջապատված է տեղական թաթարների բազաներով և տեղի են ունեցել հրացանաձգու-թյուններ, միաժամանակ անհրաժեշտություն է առաջացել հետա-խուզել հարձակվողների ուժերը և տեղաբաշխումը, ինչպես նաև պարզել, առկա՞ են արդյոք կանոնավոր զորքեր և հրետանի տա-րածքում[31]:

Հարկ է ասել, որ չնայած վրացական իշխանությունների որոշ ցուցադրական հանդուրժողականությանը, որը բացատրր-վում էր իրավիճակից բխող մարտավարական խնդիրներով, ներ-քին լարվածությունը պահպանվում էր և սքողվում կոսմետիկ բա-րի դրացիական վերաբերմունքի դրսևորումներով:

Ի դեպ, անհետաքրքիր չէ նշել, որ այդ օրերին Բորչալուի հայկական տարածքների նկատմամբ, բացի «եղբայրական» Վր-րաստանից, աչք էր դրել նաև մյուս հարևանը՝ մուսավաթական Ադրբեջանը, այդ ***արհեստական պետությունը***: Այսպես, 1918 թ. հունիսի 14-ին Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործե-րի նախարար Մ. Հաջինսկին նամակով (№ 15) դիմելով Վրաս-տանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, և նշելով, որ Վրաստանի կառավարությունը Բորչալուի գավառը համարելով Վրաստանի տարածք, այնտեղ է ուղարկել վրացա-կան զորքերի ջոկատ գերմանական զորաջոկատի հետ միասին՝ իբր թե գավառը ավազակային բանդաներից մաքրելու համար, ինչպես նաև նշված ջոկատի և խաղաղ մուսուլմանական բնակ-չության միջև տեղի ունեցած բախման մասին պնդում էր, որ Բոր-չալուի, Թիֆլիսի և Սիգնախի (նաև՝ Սղնախ) գավառների համա-տարած մուսուլմաններով բնակեցված որոշակի մասերը բազմի-ցըս իրենց ներկայացուցիչների միջոցով ցանկություն են արտա-հայտել լինել Ադրբեջանի Հանրապետության կազմում: Հաջինս-կին իր կառավարության անունից կատեգորիկ բողոքում էր ընդ-դեմ Վրաստանի Հանրապետության կողմից ձեռնարկված վերը նշված կարգադրությունների դեմ և համառորեն խնդրում երկու երկրների միջև բարի դրացիական հարաբերությունների պահ-պանման համար ձեռնարկել անհետաձգելի միջոցներ Բորչալուի գավառի սահմաններից վրացական զորամասերի դուրս բերման

և Ադրբեջանի տարածքի վերը նշված մասերի զբաղեցման մասին կարգադրության չեղյալ հայտարարելու մասին[32]:

Հենց այսպես, ոչ ավել, ոչ պակաս: Սակայն վրացիները դրանից ամենևին էլ չվհատվեցին, և գլուխները չկորցրեցին, ոչ էլ շատ լուրջ ընդունեցին դիվանագիտական այդ խաղաքայլը (ինչպես հաճախակի դա պատահում էր վերջիններիս հայ գործընկերների հետ):Վրաստանի այդ ժամանակվա մինիստր-նախագահի և արտաքին գործերի նախարարի պարտականությունները կատարող Ն. Ռամիշվիլին իր պատասխանում՝ 1918 թ. հունիսի 17-ին (№ 6933) խոր ափսոսանք էր արտահայտում, որ նման միջոցառումները,որոնք անհրաժեշտ են Վրաստանի Հանրապետության տարածքում ներքին կարգ ու կանոնի պահպանման համար,կարող են որևիցե թյուրիմացության առարկա հանդիսանալ: Ռամիշվիլին շեշտում էր, որ Բորչալուի գավառը միշտ եղել է Վրաստանի տարածքային կազմում և չի հանդիսացել վեճերի ու կասկածների առարկա, չնայած այդ գավառը նախկինում ևս չի ներկայացրել միատարր էթնիկական միավոր: Վերջինս Ադրբեջանի կառավարությանը նաև հայտնում էր, որ հավասարապես վեճի ենթակա չի և Վրաստանի արևելյան սահմանը: Ավարտելով դիմումագիրը, Ռամիշվիլին վստահություն էր հայտնում, որ Ադըրբեջանական Հանրապետության կառավարությունը այսուհետ թույլ չի տա միջամտություն իրենց ներքին գործերին, քանզի խնդիր կա պահպանելու այն բարի դրացիական հարաբերությունները, որոնք վաղուց ի վեր գոյություն ունեն իրենց միջև և որոնք անկեղծորեն ցանկանում է պահպանել վրացական կառավարությունը[33]: Այ հենց այս վերջին միտքն էլ կարևոր է, քանզի փաստագրում է այն եղելությունը, ինչ եղել է և իրականում կար գերակշռող վրաց - ադրբեջանական հարաբերություններում, և սուր ծայրերով նպատակաուղղված է եղել Հայաստանի Հանրապետության դեմ: Որոշ ժամանակ դեռ կրքերը մնում են բորբոքված վիճակում, և վրաց - ադրբեջանական փոխհարաբերությունների մեջ որոշակի տագնապ է մնում՝ ոչ երկար ժամանակով: 1918 թ. հունիսի 22-ին Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի մինիստր Մ. Հաջինսկին մեկ անգամ ևս փորձում է Ադըրբեջանի օգտին ինչ - որ բան անել, և դիմումագրով (№ 19) դիմում է իր ներկայացուցչին Վրաստանում, խնդրելով տեղյակ պահել Վրաստանի կառավարությանը, որ Ադրբեջանի կառավա-

րությունը ցանկանում է շուտափույթ կազմել հատուկ խառը վըրաց - ադրբեջանական հանձնաժողով, որը մոտակա ժամանակաշրջանում ձեռնամուխ պիտի լինի տարածքների սահմանազատման հետ կապված բոլոր հարցերի քննարկմանը և լուծմանը, և խնդրում էր համաձայնության դեպքում հայտնել պատգամավորների թիվը, հանդիպման վայրը և ժամկետը[34]:

Սակայն վրացական կողմը շատ յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում այս հարցադրմանը, և ըստ էության կարծես թե անտեսելով ադրբեջանական կողմի մոտիվացիաները, իր խոսքն է առաջ տանում, կամ էլ լռության մատնում այն, ինչ իրենց համար անցանկալի էր: Լավագույնը, որ այս իրադրությունում առաջարկում են վրացիները ադրբեջանցիներին, դա այն էր, որ գնացին դիվանագիտական մանևրումների, ժամանակ շահելով ավելի ավելի խելացի և նպատակահարմար քայլերի համար: Այն իր արտացոլումը գտավ Վրաստանի Հանրապետության կառավարության 1918 թ. օգոստոսի 31-ի դիմումագրում (№ 3004) ուղղված Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին, որում նըշվում էր, որ Վրաստանի Հանրապետության կառավարությունը օգոստոսի 24-ին որոշել է Ադրբեջանի և Վրաստանի միջև ծագած վիճելի հարցերի լուծման համար կազմել արբիտրաժային հանձնաժողով՝ երեք անձից բաղկացած, որոնցից մեկը պիտի ընտրըվեր Ադրբեջանի Հանրապետության կառավարության,մյուսը՝ Վըրաստանի կառավարության, երրորդը՝ այդ երկու արբիտրների ընտրությամբ՝ չեզոք երկրների ներկայացուցիչների թվից[35]:

Հենց այսպես աններբանկատորեն Հայաստանի հարևանները զբաղված էին ստորաքարշ դիվանագիտական գործողություններով, անտեսելով հայտնի տարածքների օրինական տիրոջ՝ Հայաստանի Հանրապետության իրավունքները: Այն կարծես թե ձևավորված և քողարկված ադրբեջանա-վրացական քայքայիչ երկյակ էր ընդդեմ Հայաստանի: Այն էլ ավելի խճճեց հայվրացական հարաբերությունները, էլ ավելի բարդացնելով աշխարհաքաղաքական իրավիճակը Անդրկովկասում:

Հասկանալի է, որ այս ամենը վաղուց էր հասունանում: Առկա փաստաթղթերի ուշադիր զննումը վկայում է, արդեն այդ մասին ինչ-որ չափով գրել ենք, որ հայ - վրացական հարաբերությունները սկսեցին մթագնվել դեռ մինչև Ախալքալաքի և Բորչալուի հանրահայտ դեպքերը, և դրանց մեջ որոշակի իմաստ կար:

Անշուշտ, վրացիների այդ յուրահատուկ ներքին գերապատվական շահը նկատի ուներ Հայաստանի Հանրապետության նախարարապետը Անդրկովկասում բրիտանական բարձր կոմիսար գնդապետ Ստոքսի հետ ունեցած զրույցի ժամանակ 1920 թ. սեպտեմբերի 31-ին, երբ ասում էր, որ հայերը «*միշտ էլ լավ են վերաբերվել դեպի վրացիները*», սակայն վերջիններս տրամադիր չեն եղել ավելի սերտ կապեր հաստատելու, քանզի վախենալով, որ ավելի սերտ կապվելով Հայաստանի հետ, կգրգռեն տաճիկներին իրենց դեմ, իսկ տաճիկների հետ իրենք թշնամանալ չեն ցանկանում[36]: Դա այդպես էր և 1918 թվականին, երբեմն լավ քողարկված, երբեմն բացահայտ: Այսպես, Հայոց Ազգային խորհրդի նախագահը 1918 թ. հուլիսին դիմելով Վրաստանի մինիստր-նախագահին, տեղեկացնում էր, որ հուլիսի 1-ի տեղեկագրով Վրաստանի Հանրապետության զորքերի դաշտային շտաբի պետը Վրաստանի կառավարության կարգադրության համաձայն պահանջել է կամ անհապաղ դուրս հանել Թիֆլիսում գտնվող հայկական զորամասերը կամ էլ 3-օրյա ժամկետում զինաթափել վերջիններիս, ընդգծելով նաև, որ երկաթգիծը մինչև Ղարաքիլիսա բաց է: Ազգային խորհրդի նախագահը նշելով, որ երկաթուղագծով դուրս բերման համար որոշ ժամանակ է պահանջվում, բողոքում էր, որ հայկական զորամասերի անհապաղ զինաթափումը ոչ մի հանգամանքով չի արդարացվում, որ դա հայ ժողովրդի իրավունքների ոտնահարում է, քանի որ դրանք Թիֆլիսում են գտնվում իրադարձությունների բերումով, այլ ոչ թե ինքնակամ: Հայոց Ազգային խորհրդի նախագահը գտնում էր, որ այն պետք է կատարվի(զորամասերի դուրս բերումը - Վ.Վ.)Ալեքսանդրապոլից դուրս գալուց հետո, ոչ այլ կերպ, քան պլանաչափ, աստիճանաբար[37]: Հարկ է ընդգծել, որ այդ ժամանակահատվածում թուրքական առաջխաղացման հետևանքով վրաց - գերմանական զորաջոկատները գրավել էին Բորչալուն, ընդ որում վրացական կողմը փարիսեցիական պատճառաբանություն էր մեջտեղ բերել, որ իբր թե այդ գրավումը ժամանակավոր բնույթ ունի, և ելնում է Վրաստանի պաշտպանության շահերից:

Սակայն իրականում իրադարձությունները միանգամայն այլ ընթացք ստացան: Փորձառու Ի. Ծերեթելին սկզբում դիվանագիտորեն վրացական կողմի համար ժամանակ խնդրեց հարցի հետագա քննության և արդարացի լուծման համար: Սակայն

որոշ ժամանակ անց, «*առանց հայերին տեղեկացնելու, Վրաստանի կառավարությունը հայտարարեց Վրաստանի սահմանագծի մասին՝ մտցնելով նրանց մեջ և վիճելի համարվող շրջանները*»[38]: Այդ նույն ժամանակաշրջանում, ինչպես վկայում են ժամանակակիցները,վիճելի տարածքներում վրացիները իրենց պահում էին այնպես, ինչպես իրենց տոհմական կալվածքում, հարկախեղդ էին անում հայերին, պաշտոնից հեռացնում էին անհնազանդներին, անտեղի զորակոչեր էին անցկացնում: Ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը «Armenian review» հանդեսի 1993 թվականի 46 հատորում գրում է, որ վրացական առաջնորդները հայերին դիտում էին որպես պոտենցիալ «հինգերորդ զորասյուն», օտարերկրյա պետությունների կողմից մեքենայությունների սուբյեկտ, որոնք հույս ունեին առավելություններ ձեռք բերել Վրաստանի թուլությամբ[39]: Միևնույն ժամանակ նույն հեղինակը ավելացնում էր, որ հայկական առաջնորդներն էլ հավատում էին, որ Դաշնակիցները համակրում են իրենց՝ սեփական պահանջների հարցերում[40]:

Վրացիները սակայն ունեին ավելի իրական հիմքեր ոգևորվելու և նախահարձակ լինելու՝ ձգտելով տիրել ոչ միայն Ախալքալաքին, այլև Լոռուն: Վրացիներին ոգևորողների դերում հայտնվեցին գերմանացիները:

Վրաստանի կառավարության դիրքորոշումը ակնհայտորեն հակահայկական էր, որը երբեմն քողածածկված եզրեր էր գտնում ադրբեջանականի հետ: Ըստ վրաց շովինիստների,որոնց հետ համամիտ էին ազերիները, Անդրկովկասի ամբողջ բնակչության ավելի քան 30 %-ը կազմող հայերը պետք է ամփոփվեին միայն Սևանա լճի ավազանում և Արարատյան դաշտի մի հատվածում, այսինքն՝ բավարարվեին ընդամենը 11 հազար քառակուսի կիլոմետր տարածքով, որը կազմում էր Անդրկովկասի տարածքի միայն 5 %-ը: Իսկ Վրաստանը, որի բնակչությունը ավելին չէր, քան հայերի թիվը, հավակնում էր տիրելու Անդրկովկասի ամբողջ տարածքի 42 %-ին, այսինքն՝ մոտ 8 անգամ ավելի, քան պետք է ունենային հայերը[41]: Անդրկովկասի տարածքի մնացած 53 %-ին հավակնում էր Ադրբեջանը, որը վկայում էր այն մասին, որ գոյություն ուներ վրաց - ադրբեջանական շահերի ներդաշնակություն, փոխհամաձայնություն ընդհանուր ռազմավարությունում: Վրաստանը օգտվելով ինչպես Հայաստանի խարխլված

ռազմաքաղաքական և ընկերային կացությունից, այնպես էլ Գերմանիայի Թիֆլիսում գտնվող ներկայացուցչության տնտեսական և ռազմական աջակցությունից, ձեռնամուխ եղավ իր մերձավոր հարևանի՝ Հայաստանի նկատմամբ ավազակային նպատակների իրագործմանը:

Այս առումով հատկանշական է Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի և Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Կրեսի միջև կայացած պաշտոնական զրույցից մի ուշագրավ դրվագ. «*Անդրկովկասում գերմանական միսիայի ներկայացուցիչ Ֆոն Կրեսը Թիֆլիսում հայտնում է Ջամալյանին, որ հայերն ազատեն «վրացական» տարածքներն առանց արյունահեղության: Ջամալյանի այն հարցադրմանը, թե ինչու՞ է գերմանական միսիայի ներկայացուցիչը խառնվում վրաց - հայկական գործերին և սատար կանգնում վաղուց ի վեր հայերին պատկանող հողերին հավակնող Վրաստանին, Ֆոն Կրեսը պատասխանել է, որ Գերմանիան գըտնըվում է Վրաստանի հետ նույն միության մեջ և պարտավորություն է վերցրել պաշտպանել այդ հանրապետության տարածքային շահերը և դա է իրենց միսիայի նպատակը Անդրկովկասում, չնայած մի այլ կապակցությամբ Ֆոն Կրեսը արել էր այլ կարգի մի ուշագրավ հայտարարություն. այսպես, Ա. Ջամալյանի հետ իր զրույցներից մեկում Ֆոն Կրեսը առանձնապես ընդգծելով, որ Թուրքերը գրավել են Հայաստանի «ամենահետաքրքիր շրջանները», հատուկ նշել էր,որ «եթե Հայաստանը չվերադառնա Բրեստում գծված սահմաններից դուրս գտնված իր խոշոր հողամասերը՝ նա չի կարող բարգավաճել և Անդրկովկասում չի կարող տեվական խաղաղություն լինել*»[42]: Ստացվում էր, որ գերմանական պատվիրակության կողմից արված այս հայտարարությունը ընդամենը դեմագոգիա էր, նրբորեն քողարկված մի քաղաքական մանևր, որով վերջինս ջուր էր լցնում վրացիների ջրաղացին, փոխարենը մոլորության մեջ գցում հայկական կողմին, որը երբեմն հակված էր հավատալու նման ստահոգ, դեկլարատիվ բնույթի հայտարարություններին: Պրովրացական դիրքորոշումն ավելի ամուր էր և ավելի իրական, ինչը հաստատվում է բազմաթիվ փաստերով:

Ի դեպ, պետք է նկատել, որ դեռ մայիսի 14-ին Վրաց Ազգային խորհուրդը որոշում էր ընդունել խնդրել Գերմանիայի հովանավորությունը: Ավելին, 1918 թ. հունիսի 11-ին Թիֆլիսում Գո-

լովինյան պողոտայում տեղի ունեցավ գերմանա - վրացական զորքերի մեծ զորահանդես, որն ընդունեցին մինիստր-նախագահ Նոյ Վիսարիոնի Ռամիշվիլին, ռազմական նախարար Գեորգաձեն, գեներալ-լեյտենանտ Գաբաևը և գերմանական պատվիրակ կոմս Շուլենբերգը, օբեր - լեյտենանտ Կայզերը[43]: Կառավարության ղեկավար Ն. Վ. Ռամիշվիլին գերմանական զորքերին դիմեց ճառով, որում ողջունեց նրանց Կովկաս գալու կապակցությամբ, և վստահություն հայտնեց, որ դեմ առ դեմ կանգնած վրացական և գերմանական զորքերը կկարողանան պահպանել կարգ ու կանոնը երկրում: Այնուհետև ճառով հանդես եկավ կոմս Շուլենբերգը, որը վստահություն հայտնեց, որ այսուհետև կայսերական գերմանական և հանրապետական վրացական զորքերը գտնվելու են մշտական բարեկամության մեջ և պաշտպանելու են մեկը մյուսի շահերը[44]:

Գերմանացիները ոչ մի հիմք չունեին դժգոհ մնալու վրացական կառավարությունից: Դա ի միջի այլոց երևում է այն բանից, որ գեներալ Ֆոն Կրեսը (կամ ֆոն Քրես) նույնիսկ անհրաժեշտ գտավ հետագա խրախուսման նպատակով վրաց մի շարք նախարարների իր կառավարության կողմից պարգևատրման ներկայացնել: «*Վրացական պետության նախատեսվող պաշտոնական ճանաչման կապակցությամբ,* - գրում է Ֆոն Կրեսը գեներալ-ռայխսկանցլերին 1918 թ. սեպտեմբերի 8-ին, - *ցանկալի է Վրաստանի ղեկավար անձանց նվիրել գերմանական շքանշաններ... գերազանցության նշանի* (շքանշանի) *ներկայացնելու համար ես առաջին հերթին առաջ եմ քաշում մի խումբ անձանց, որոնց ես ստորև թվարկել եմ ըստ խմբերի՝ կախված շքանշանի աստիճանից.*

1. *մինիստր - նախագահ Ժորդանիա:*
2. *արտաքին գործերի մինիստր Չխենկելի, ինչպես նաև նրա տեղակալը և ներքին գործերի մինիստր Ռամիշվիլին: Այնուհետև՝ Ազգային խորհրդի նախագահ պ-ն Չխեիձեն:*
3. *Հաջորդը՝ մինիստրները, որոնք առաջին հերթին կարևոր են մեզ համար գերմանական կառավարության հետ համատեղ աշխատանքում. դրանք են զինվորական մինիստր Գեորգաձեն, ֆինանսների մինիստր Ժուրուլին և երկաթուղային ճանապարհների մինիստր Լորդկիպանիձեն: Այնուհետև՝ Ազգային խորհրդի փոխպրեզիդենտ Բարաթաշվիլին*»[45]:

Չնայած այս արարողությունը չկայացավ,սակայն փաստն ինքնին շատ խոսուն է: Արդեն մայիսի 25-ին Փոթի ժամանեց գերմանական զորքերի 3 հազարանոց էշելոնը, իսկ մայիսի 28-ից հետո (Գերմանիայի կողմից Վրաստանի ճանաչումից հետո) Փոթիում կնքվեցին ևս 6 պայմանագրեր, համաձայն որոնց Գերմանիան մոնոպոլ իրավունք ձեռք բերեց շահագործելու Վրաստանի տնտեսական ռեսուրսները, իսկ Փոթի նավահանգիստը և երկաթուղային ուղիները անցան գերմանական հրամանատարության հսկողության տակ: Վերջապես, հունիսին Թիֆլիսում և Վրաստանի գլխավոր ստրատեգիական նշանակություն ունեցող քաղաքներում տեղաբաշխվեցին գերմանական զորքեր՝ 30 հազար մարդ, որոնց հետո՝ արդեն 1919 թ. սկզբին «փոխարինեցին» անգլիական զորքերը: Վրացական կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա (12 հուլիսի) Գերմանիան ձեռք բերեց Չիաթուրիի մարգանեցի (մանգան) հանքերը շահագործելու իրավունքը 30 տարի ժամկետով(ի դեպ, հարկ է հատուկ նշել, քանզի դա կարևոր է. Չիաթուրիի մարգանեցի հանքերը տալիս էին մարգանեցի համաշխարհային հանույթի 40 %-ը, հետևաբար կարևոր դեր էին խաղում համաշխարհային տնտեսության մեջ), Փոթի նավահանգիստը՝ 60 տարով, Շորապան - Չիաթուրի - Սաչխերե երկաթուղագիծը՝ 40 տարով: Մայիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում գերմանացիները Վրաստանից դուրս բերեցին 30 մլն մարկին համարժեք պղինձ, ծխախոտ, թեյ, մըրգեր, գինի և այլն: Նույնիսկ գերմանական միսիայի ղեկավար Ֆոն Կրեսի նվազեցված տվյալներով, Վրաստանում գտնվելու ժամանակահատվածում իրենց կողմից Գերմանիա արտահանվեց 31 հազար տոննա մարգանեց, մոտ 70 հազար տոննա պղինձ, 360 տոննա բուրդ, 40 հազար 350 հատ ոչխարի մորթի և այլն[46]: Այստեղից էլ ինքնաբերաբար ակնհայտ է դառնում գերմանական շահագրգռվածությունը Վրացական խնդրում,և նրանց կողմից ցուցաբերվող օժանդակությունը Վրաստանին՝ հայ-վրացական հակամարտությունում[47]:

Վեհապետական Վրաստանի դիրքերից ամեն ինչ թույլատրելի էր, առավել ևս նրանց կողքին էր կանգնած Կայզերական Գերմանիան: Իսկ հիմնավորումներ որքան ասես գտնվում էին:Հայ-վրացական հարաբերությունները շիկանում էին և ի վերջո հանգեցնում պատերազմական իրավիճակի: Ամեն պատրվակ

օգտագործվում էր կրքերը բորբոքելու համար: Այս առիթով Ս. Վրացյանը դիպուկ նկատում էր, որ «*վրացիները ավելի նպաստավոր պայմաններում էին և առիթ չէին փախցնում վիրաւորելու հայերի ինքնասիրությունը*»[48]:

Հայաստանի արտաքին գործերի նախարարությանն ուղղված 1918 թ. հուլիսի 26-ի նամակում Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական միսիայի ղեկավար Ջամալյանը գրում է Ազգային խորհրդի և հայկական կորպուսի պահեստների պահպանության հետ կապված հարցերի մասին, շեշտելով, որ Վրաստանի տեղական իշխանությունների, հատուկ օրգանների ինքնագլուխ գործունեության մասին, որոնք մի տեղ իրենց պահակն են դնում, մի այլ տեղ՝ կնքում պահեստը, իսկ երրորդ տեղում՝ պարզապես գրավում պահեստները[49]:

Այդ նույն օրը, 1918 թ. հուլիսի 26-ին Ջամալյանը բողոքի նոտա է ուղարկում Վրաստանի արտաքին գործերի նախարարություն, փաստեր բերելով վրացիների կողմից հայկական ունեցվածքի նկատմամբ կատարվող սիստեմատիկ չարաշահումների և խախտումների մասին: Ջամալյանը գտնում էր, որ հայկական կորպուսի ունեցվածքի, զենքի ու հանդերձանքի նկատմամբ կատարվող ոտնձգությունները ծնշող տպավորություն են թողնում հայկական հասարակայնության վրա: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը պահանջում էր վրացական նախարարից տեղյակ պահել իշխանության բոլոր համապատասխան օրգաններին, որպեսզի Վրաստանի տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության ողջ ունեցվածքը դիտեն որպես անվիճելիորեն անձեռնմխելի,իսկ վիճելի հարցերում ունեցվածքի հետ կապված ոչ մի վիճակտ տեղ չգտնի, առանց նախօրոք Վրաստանի արտաքին գործերի նախարարության և Վրաստանում հայկական դիվանագիտական միսիայի միջև հարաբերությունները պարզելու[50]:

Լոռուեի գյուղական կոմիսարին ուղղված Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության ներքին գործերի նախարարության Ալավերդու տեղամասի կոմիսար Միրաքովի դիմումագրից (№ 35) տեղեկանում ենք, որ Բորչալուի գավառային կոմիսարի հուլիսի 23-ի № 876 հրահանգի համաձայն կարգադրված է եռօրյա ժամկետում 2 օրինակով կազմել 1895 - 1899 թթ. ծնված երիտասարդ մարդկանց ցուցակները, որոնք ենթակա են զորակոչի,

և տվյալ փաստաթղթերը ներկայացնել ըստ հասցեի[51]: Վրացինե-րը,հասկանալի նկատառումներով, տենդագին կերպով շտապում էին իրենց ներկայությունը Լոռու - Փամբակի շրջանում դարձնել ավելի իրական և արդյունավետ, հերթական հակահայկական ո-տընձգությանը ծեռնամուխ լինելով:

1918 թ. օգոստոսի 3-ին վրացիների կողմից հերթական քայլն է կատարվում ամրապնդվելու և իրենց ներկայությունը և դիրքերը ուժեղացնելու համար հայտնի շրջաններում: Այսպես, Վրաստանի ռազմական մինիստր Գեորգաձեն Հայաստանի Հան-րապետության զինվորական նախարարության Գլխավոր շտա-բին հասցեագրված դիմումագրով պահանջում էր անհապաղ կարգադրություն անել Թիֆլիսում և Վրաստանի տարածքում գտնվող Հայկական կորպուսի բոլոր զինված զինվորներին ան-հապաղ Հայաստանի Հանրապետության սահմանները ուղարկե-լու մասին հարկ եղած հրահանգները տալով, նշելով նաև, որ անհրաժեշտ շարժակազմը երկաթուղով տեղափոխելու համար կտրամադրվի, միաժամանակ խնդրելով, որ զինվորներից զենքը առգրավվի և պահվի մի շինությունում ըստ հայեցողության[52]:

Վրացիները ամեն պատեհ և անպատեհ առիթ օգտագոր-ծում էին հայերի վրա ճնշում գործադրելու նպատակով, վիրավո-րելով վրացահայերի ազգային արժանապատվությունը, և ոտըն-ձըգություն կատարելով Թիֆլիսում գտնվող հայկական ունեց-վածքի նկատմամբ: «Էրթոբա» թերթը (1918 թ. օգոստոսի կեսեր) առաջնորդող հոդվածում գրում էր Մանթաշևի քարավանսարա-յում կատարված խուզարկությունների մասին, որոնելով այլևայլ գուներանգներ հակահայկական հիստերիայի հերթական փործի համար: Այսպես, այդ թերթը գրում էր, որ Մանթաշևի պահեստնե-րում հայտնաբերվել են մի ամբողջ պահեստ ռումբեր, թնդանոթ-ներ և պայթուցիկ նյութեր, ավելացնելով,որ դրանք այնտեղ պահ-պանության են տվել հայկական նացիոնալիստ - դաշնակցական-ները պրովոկացիոն նպատակներով: Այդ կապակցությամբ Թիֆ-լիսում Հայաստանի դիվանագիտական միսիային կից Ինֆորմա-ցիոն բյուրոն հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ հասա-րակայնությանը տեղեկացնում էր, որ Մանթաշևի քարավանսա-րայում գտնվող ունեցվածքը պատկանում է Առանձին Հայկական կորպուսի զորամասերին, և կնքված է վերջինիս կնիքով: Հաղոր-դագրության վերջում Ինֆորմացիոն բյուրոյի պետ Մալխազևը

պաշտոնապես հայտնում էր, որ ոչ մի կուսակցություն, և առանձնապես Դաշնակցությունը այդ ունեցվածքի նկատմամբ որևիցե վերաբերմունք չունի[53]: Ինչպես տեսնում ենք, Վրաստանին պատրվակ էր պետք, և նրանք այն գտնում էին: Թեկուզև արդեն վերն ասել ենք այդ մասին. ամեն մի պետություն էլ դժվար թե այլ կերպ վերաբերվեր իր սուվերեն տարածքում գտնվող օտարազգի զորաջոկատի, զենքի ու զինամթերքի առկայության նկատմամբ ունենալիք դիրքորոշման հարցերում:

Արդեն վերը մասնակիորեն անդրադարձել ենք, որ հայվրացական հարաբերությունների սրման, պատերազմական առճակատման գործում որոշակի դեր է խաղացել նաև դեմոկրատական Վրաստանի հակահայկական քաղաքականությունը հայաբնակ բնակչության շրջանում: Հատկանշական է այս առումով Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի 1918 թ. օգոստոսի 26-ի բողոքագիրը՝ ուղղված Վրաստանի արտաքին գործերի նախարարին (№ 534). «*Ներկայացնելով ընդսմին Ալլահվերդիի շրջանի կոմիսարի սույն տարվա հուլիսի 27-ի № 35 գրությունը՝ ուղղված Լոռուքի գյուղական կոմիսարին ի մասին 1895-1899 թթ. ծնվածների զորակոչի Վրաստանի կողմից, իմ կառավարության հանձնարարությամբ հայտնում եմ ամենավճռական բողոք այն մասին, որ Վրաստանի կառավարությունը զորակոչ է անում Բորչալուի վիճելի շրջանում, որի սեփականության իրավունքի մասին Հայաստանի Հանրապետությունը երբեք չի կասկածել և պարոնայք նախարարներ Ժորդանիան և Ռամիշվիլին դեռ սույն տարվա հունիս ամսին հայտարարեցին Քաջազնունուն, Ահարոնյանին ու Խատիսյանին, որ հիշյալ շրջանը ժամանակավոր կերպով գրավված է վրաց զորքերի կողմից՝ թուրքերի ճանապարհը դեպի Թիֆլիս կտրելու նպատակով*»[54]:

Վրացիները դեպքը բացատրեցին «թյուրիմացությամբ» և խոստացան «համապատասխան հրահանգներ» տալ,բայց իրենց գործելակերպը չփոխեցին, և իրադարձությունների ընթացակարգում նոր գուներանգներ չհայտնվեցին:

Նույն օրերին, մի այլ նոտայով, հասցեագրված Վրաստանի արտաքին գործերի նախարարի պարտականությունները կատարող Նոյ Վիսարիոնի Ռամիշվիլուն,հիշեցնելով օգոստոսի 26-ի

---

[3] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

իր վերոնշյալ դիմումագրի մասին, Վրաստանում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Արշակ Ջամալյանը վճռական բողոք էր հայտնում «վիճելի Բորչալուի շրջանում Վրաստանի կառավարության կողմից 1895-1899 թթ. ծնվածների շրջանում անցկացվող զորահավաքի մասին», որի մասին ինչպես Ն. Վ. Ռամիշվիլին, այնպես էլ Ն. Ն. Ժորդանիան հունիս ամսին հայտարարել էին, որ այն «*վրաց զորքերի կողմից գրավված է ընդամենը ժամանակավորապես*», նպատակ ունենալով կանգնեցնելու տաճիկների առաջխաղացումը դեպի Թիֆլիս: Իր դիմումագիրը ավարտելով, Ա. Ջամալյանը հայտարարեց, որ ըստ այդմ ինքը նորից դիմում է պ. մինիստրին ամենավճռական բողոքով ընդդեմ վրացական իշխանությունների գործողությունների հիշատակված զոնայում, որը հակասում է Վրաստանի կառավարության բարձրագույն ներկայացուցիչների հայտարարություններին օկուպացիայի ժամանակավոր բնույթի մասին[55]:

1918 թ. սեպտեմբերի 24-ին թվագրվող մի տեղեկատվության մեջ դարձյալ հաղորդվում է Լոռու շրջանում կատարվող բռնարարքների, և հայերի շրջանում իրականացվող ապօրինի զորահավաքի մասին, որը բռնությամբ իրագործում էին գյուղական կոմիսարները, որոնք չներկայացածների ծնողներին սպառնում էին հաշվեհարդարով: Այդ հաղորդագրության մեջ ընդգծվում էր այն մասին, որ հայկական բնակչությունը բողոքում է այդ կարգադրության դեմ և հրաժարվում կատարել այն, մերժումը պատճառաբանելով նրանով, որ Լոռու տեղամասի միացման հարցը Վրաստանին կամ Հայաստանին վճռված չէ, և հետևաբար իրենք համաձայն են զորակոչի ենթարկվել միայն այն դեպքում, եթե այդ մասին կարգադրություն արվի նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից[56]:

Սցենարը կար, և վրացիները ըստ այդ սցենարի գործում էին և հետևողականորեն զբաղվում հակահայկական ուղղվածության ահաբեկչական գործողություններով, այն համեմելով «բարեկամության և եղբայրության մասին հավաստիացումների» կարգախոսներով:

1918 թ. սեպտեմբերի 27-ին Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը Վրաստանում՝ Ա. Ջամալյանը իր օգնական Թումանյանի հետ այցելեցին նախագահ Ն. Ժորդանիային, որպեսզի բողոք ներկայացնեն Լոռվա շրջանի հայերին զորահա-

վաքի ենթարկելու դեմ: Սակայն նրանց սպասում էին նոր անակընկալներ, նոր ելևէջներ վրացական փքուն առոգանությամբ՝ մեծամիտ և վեհապետական Վրաստանի շահերից բխող: Հայաստանի ներկայացուցիչը Ժորդանիային հայտարարեց, որ «*վրացիք զորաժողով են հայտարարել մի շրջանում, որ Վրաստանի մի մասը չի հանդիսանում և նրանց համար լավագույն դեպքում վիճելի շրջան կարող է միայն համարվել*»[57]: Ժորդանիան,որին դեռևս 1915 թ. մեծագույն բոլշևիկ Վ. Ի. Լենինը անվանել էր «բացահայտ սոցիալ-շովինիստ»[58], դրան պատասխանեց, որ թեև Լոռին իրավ վիճելի մի գավառ է, սակայն ըստ 1783 թ. դաշնագրի շարունակում է մնալ Վրաստանի սահմաններում և կազմում է Վրաստանի մի մասը, եթե իհարկե, հրավիրվելիք խորհրդաժողովում չորոշվի, որ գավառն անցնում է Հայաստանին: Մինչ այդ, ըստ Ժորդանիայի, լոռեցիները կհամարվեն վրացահպատակ ու քաղաքացիական իրավունքներ ստանալով, պետք է կատարեն բոլոր պարտականությունները: Ժորդանիան գտնում էր, որ եթե վրացական կառավարությունը լոռեցիներից զինվոր չվերցնի, ապա նրանց համար արտոնյալ դրություն կստեղծվի, իսկ դա անարդար կլինի, քանի որ Վրաստանի գավառներից մի քանիսը դարձյալ վիճելի են համարվում, ինչպես օրինակ Սղնախի մի մասը, Ղարեազը և Զաքաթալան, իսկ այդ գավառներից զորք վերցըվում է: Ժորդանիան պնդում էր, որ Զաքաթալան վրացիներինն է, սակայն մնում է թուրքերի ձեռքին և իրենք այդ գործին չեն խառնվում՝ մինչև սահմանների վերջնական կարգավորումը: Այդ իսկ պատճառով նույն ձևով պետք է մոտենալ «*Լոռու խնդրին*»,- պնդում էր Ժորդանիան: Նոյ Ժորդանիան նաև յուրովի է մեկնաբանում վերն արդեն ասված տարածքների «*ժամանակավոր գրավման մասին*» հարցը . «*ժամանակավոր խոսքը ոչինչ չի նշանակում, որովհետև ամեն բան, գուցե և մեր հանրապետությունների գոյությունը ժամանակավոր է: Ներկայումս Լոռին մեր ձեռքին է գտնվում իբրև պատմական Վրաստանի մի մասը և մենք նրան համարում ենք Վրաստանի տերիտորիա, իսկ թե ապագայում ինչպես կտնօրինվի նրա վիճակը, արդյոք համաձայն էթնիկական սկզբունքի թե այլ կերպ, մենք չգիտենք: Ձեր պահանջը, որ մենք Լոռիում զորաժողով* (այսինքն՝ զորահավաք - Վ.Վ.) *չանենք, որովհետև հայերը պրետենզիաներ ունեն նրա վրա, անընդունելի է, որովհետև հակառակ դեպքում մենք պետք է հրաժար-*

*վենք մեր երկրի գրեթե բոլոր ծայրամասերում զօրաժողով անելուց, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բոլոր ծայրամասերի վրա մեր հարևանները պրետենզիաներ են երևան հանում: Եթե դուք ցանկանում եք Լոռվա հայերի համար մենք բացառություն անենք, դրա համար հիմք չենք տեսնում*»[59]: Ավարտելով իր ասելիքը, Ժորդանիան ընդգծում է, որ զորակոչային համապատասխան վերը նշված տարիքի «*լոռեցի զինվորները երևի կծառայեն Թիֆլիսում, իսկ այլ հասակի գյուղացիները կարող են, եթե ցանկանում են, հայկական զորքերի մեջ մտնել*»[60]: Ժորդանիան շեշտում է նաև, որ Վրաստանը որևէ երկրամասի վիճակը որոշելու խնդրում կարող է ղեկավարվել պայմանական իրավունքների տեսակետով, և քանի որ Լոռուն մի կողմից «*սպառնում են թուրք ավազակները, իսկ մյուս կողմից՝ Ադրբեջանի կառավարությունը, որն արդեն Խան-Խոյսկու բերանով հետին նպատակներով սուտ լուրեր է տարածում, թե Բորչալուի մեր գրաված վայրերում կոտորում են թյուրքերին և մինչև անգամ գերմանացիների միջամտությունն է հրավիրում թյուրքերին պաշտպանելու համար, այս հանգամանքներում հարկավոր է Լոռին պաշտպանել զինվորական ուժերով: Եվ Լոռվա հայերը, որ մեր շնորհիվ վայելում են կյանքի և գույքի ապահովություն, պարտականություններ էլ պետք է կրեն*»[61]: Ասել է, թե սրանով վրաց ղեկավարները արդարացնում էին իրենց կողմից անցկացվող անհիմն և հակաօրինական զորակոչերը Լոռվա հայկական տարածքում, չնայած այն հանգամանքին, որ այդ երկրամասում ապրող հայերը ամենևին էլ Վրաստանի քաղաքացիներ չէին, ինչը ժխտում էր Ժորդանիան վերը հիշատակված հանդիպման ժամանակ, և հետևաբար արդարացնում վրացական իշխանությունների ապօրինի հակահայկական գործողությունները:

Մի այլ տարբերակով, վրացիները այս դեպքերը բացատրեցին «թյուրիմացությամբ» և խոստացան «համապատասխան հրահանգներ» տալ, բայց իրենց ընթացքը շարունակեցին անփոփոխ պահել, նորանոր խարդախ մանևրումների գնալով: 1918 թ. սեպտեմբերի 29-ին Ջամալյանը մի նոր «ամենավճռական բողոք» ևս ուղարկեց Վրաց կառավարությանը, հայտնելով թե՝ «*մինչև այսօր էլ շարունակում եմ ստանալ տեղեկություններ վիճելի գոտու բնակիչների կողմից, որոնք գանգատվում են, որ վրաց իշխանությունները զորակոչ են անում*»: Այս բողոքն էլ ունե-

ցավ նախկինի հետևանքը. «սիրալիր խոստում և ողդեգրված գործելակերպի շարունակություն»[62]: Ավելին,վրացիներն անցան էլ ավելի նրբանկատ մոտեցումների, քողածածկված շախմատային քայլեր կատարելով, մանևրելով ինչքան հնարավոր է՝ դիմացինին խճճելու նպատակադրումով:

Վրացական իշխանությունները հայտնի ռազմավարական նկատառումներից ելնելով, արդարացնում էին նաև իրենց վերաբերմունքը (անմարդկային և դաժան) հայ գաղթականության նըկատմամբ: Այսպես, «Борьба» թերթի 1918 թվականի օգոստոսի 8-ի 138 համարում, վկայակոչելով մամուլի բյուրոյի տեղեկությունները, հայտնվում էր, որ Վրաստանի տարածքում գտնվող 200 հազար փախստական հայերից ամեն օր սովից և հիվանդություններից մեռնում էին 1000 հոգի,գլխավորապես՝ երեխաներ[63]: Ելնելով հենց այդ հուսահատական վիճակից, 1918 թ. օգոստոսի 8-ին Ախալքալաքի հայկական ընկերակցության վարչությունը դիմելով Վրաստանում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին, շեշտում էր այն մասին, որ թուրքերի կողմից Ախալքալաքի գավառի գրավումից հետո (այսինքն՝ հունիսի 1-ից հետո) միայն գավառի բնակչության աննշան մասն է այնտեղ մընացել: Դիմումագրում նշվում էր, որ գավառի 100 հազարանոց բնակչությունից 80 հազարը վախենալով թուրքերի կողմից կոտորված լինելու հանգամանքից, մինչև վերջիններիս գալը, բախտի քմահաճույքին թողնելով իրենց միլիարդանոց ունեցվածքը (հարյուր հազարավոր փութ պատրաստի հաց, մոտ 10 մլն փութ արժեք ունեցող բերք և այլն), դուրս են եկել Ախալքալաքի գավառից, և թաքնվել Բակուրիանում և Բորչալուի գավառի Ծալկայի տեղամասում, որից 40 հազարը՝ Բակուրիանում և նույնքան՝ Ծալկայում: Ախալքալաքի հայկական ընկերակցության վարչությունը գտնում էր, որ քանի դեռ կառավարությունը չի բնակեցրել տարածքը եկվոր տարրերով, փախստականները պետք է վերադառնան, և պետք է կազմակերպվի գավառական միլիցիա համամասնական սկզբունքներով[64]: Սակայն այս խնդրում հայերի դեմ խոչընդոտներ հարուցվեցին, և թուրքերից ետ չմնալով, վրացական իշխանությունները սովից ու հիվանդություններից ոչնչացող հայ գաղթականության նկատմամբ որդեգրեցին կոշտ ու կոպիտ,քողածածկված հակահայկական քաղաքականություն: Ըստ էության փախստականների վերադարձը հարազատ բնակության

վայրերը նրանց սրտով չէր, և մեքենայությունները իրենց երկար սպասեցնել չտվեցին: Դա հստակ երևում է Ա. Ջամալյանի օգոստոսի 8-ի գրությունից՝ ուղարկված Հայոց Ազգային Կոմիտեին և Հայաստանի խորհրդին: Դրանում մասնավորապես ասվում էր հետևյալը.«*վրացիք մեր հետ լավ չեն վարվում, մանավանդ գաղթականների ընդունելության հարցում: Հայ-վրացական հարաբերությունների դրությունը բարդանում է նաև այն հանգամանքով, որ վրացիք գրավիլ են Լոռին և ուզում էն իրենց երկրին կցել, մի բան, որ նրանք ոչ մի տեսակետից իրավունք չունին: Այս բոլորով հանդերձ, մենք հույս ունինք, որ հենց գաղթականների վերադարձի խնդիրը կարգադրվի և մեր սահմանները որոշվին, կարելի կլինի ավելի նորմալ հարաբերություններ ստեղծիլ վրացիների հետ*»[65], որոնք ձգտում էին փոխել երկրամասի ժողովրդագրական նկարագիրը:

1918 թ. հոկտեմբերի 2-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին ուղղված գրության մեջ Վրաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատարի անունից նշվում էր, որ «*Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդը միջնորդություն է հարուցել թույլ տալու այնտեղ գտնվող հայ փախստականների մի մասին տեղաբաշխելու Լոռվա տեղամասի սահմաններում գտնվող հայկական գյուղերում, սակայն նրանց և մուսուլմանների միջև Սանգլխի շրջանում տեղի ունեցած բախումները նկատի ունենալով, իրենք անհրաժեշտ են գտնում, որ Հայաստանի կառավարությունը իր վրա վերցնի այժմ Վրաստանի Հանրապետությունում գտնվող հայ փախստականների մի մասին Հայաստան տեղափոխելու, մի մասին էլ՝ Արմավիրի շրջանի հայկական գյուղերը*»[66]: Եվ միայն մի բանի հետ էր «եղբայրական» Վրաստանը համաձայնվել. «*...հայ փախստականների աննշան մասն էլ ժամանակավորապես կարող է թողնվել իր ներկա տարաբնակեցման սահմաններում, ընդ որում մեր կողմից կըձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները նրանց անվտանգության ապահովման համար*»[67]: Վրացիները հրաշալի հասկանում էին, ինչ են անում: Վերջիններիս նպատակը մեկն էր՝ օգտվելով ստեղծված խճճված, սակայն իրենց համար նպաստավոր իրավիճակից՝ հայկական հայտնի գավառները՝Ախալքալաքը և Լոռի-Փամբակը բռնաքափել բնիկ բնակիչներից՝ հայերից, և դրանով իսկ լուծել բոլոր սահմանային - տարածքային վեճերը:

Փարիսեցիական մոտեցումներ, ոչինչ չտվող: Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարությունը ի պատասխան հոկտեմբերի 2-ի վերը բերված գրության, Ա. Ջամալյանի միջոցով հոկտեմբերի 15-ին Վրաստանի կառավարությանը ուղարկում է պատասխան հեռագիր (№ 1028), որում մասնավորապես շեշտվում էր հետևյալ միտքը. «*Նախկին Բորչալուի գավառի Լոռու տեղամասը Հայաստանի կառավարությունը չի համարում Վրաստանի տարածքի կազմի մեջ մտնող, և հետևաբար չի ընդունում Վրաստանի կառավարության «իրավունքը» արգելել հայ փախստականներին բնակություն հաստատելու այդ տեղամասի հայկական գյուղերում: Եվ եթե Վրաստանի կառավարությունը այնուամենայնիվ խոչընդոտներ կհարուցի այդպիսի տարաբնակեցման դեմ, ապա Հայաստանի կառավարությունը դա կհամարի ոչ թե իրավունքի ակտ, այլ ռասիզմի ակտ*»[68]:

Նմանատիպ մի բողոքագիր էլ ուղարկվում է 1918 թվականի հոկտեմբերի 23-ին (№ 1357), որում դարձյալ բողոք էր հայտնըվում Լոռու տարածքում հայ փախստականներին հայկական գյուղերում տեղաբաշխելու կապակցությամբ, և շեշտվում էր, որ «...*նախկին Բորչալուի գավառի Լոռու տեղամասը Հայաստանի կառավարությունը չի համարում Վրաստանի տարածքային կազմում գտնվող, և ըստ այդմ Վրաստանի կառավարությանը իրավունք չի վերապահում արգելել այդ տեղամասի հայկական գյուղերում փախստական հայերին տեղաբաշխելը*»:Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը գտնում էր, որ եթե Վրաստանի կառավարությունը այնուամենայնիվ խոչընդոտի այդպիսի տեղաբաշխմանը, ապա Հայաստանի կառավարությունը դա կհամարի ոչ թե իրավունքի, այլ բռնության ակտ[69]: Ասել է, թե դիվանագիտական հակամարտությունը շարունակվում էր, և այլևայլ դրսևորումներ գտնում: Հարկ է ասել նաև մի կարևոր հանգամանքի մասին, և դա կարևոր է երկրամասում այսպես կոչված դաշնակիցների դերը ըմբռնելու տեսանկյունից: Հարցը վերաբերում է այն բանին, որ այդ դեպքերից անմիջապես հետո էլ, արդեն Լոռու չեզոք գոտու առաջացման պայմաններում 1919 թ. փետրվարի 13-ին վրաց մենշևիկյան կառավարությունը օկուպացիոն իշխանություններից կարգադրություն ստացավ՝ թույլ չտալ Վրաստանով փախստական հայերի անցումը, որոնք Թուրքիայից ուղևորվում էին Հայաստան և այլն[70]: Հենց այսպես, սցենարը

պարզ էր, որն ակնհայտորեն նպատակամղված էր հայ - վրացական հակամարտության արհեստականորեն պահպանմանը՝ այլևայլ դրսևորումներով, իսկ պղտոր ջրում ձուկ որսալը հարմար էր և հեշտ:

Այնուհանդերձ, կասեցնել պատերազմի մեքենայի գործողությունները երկու հարևանների միջև՝ չհաջողվեց: Հարաբերությունները հատկապես սրվեցին 1918 թ. հոկտեմբերին, երբ թուրքերը դատարկեցին Լոռի - Փամբակի շրջանը և հայոց զորքերը Դրոյի գլխավորությամբ զբաղեցրին այդ տարածքը: Նախկին պայմանավորվածությունները հայերի և վրացիների միջև՝ կապված վերոհիշյալ տարածքները թուրքերի հեռանալուց հետո ըզբաղեցնելու խնդրի հետ, խախտվեց և սահմանակռվի պատճառ հանդիսացավ: Հայկական զորախմբի մուտքը Լոռի տեղի ունեցավ ավելի շուտ, քան Եռյակ Միության, և հետևաբար Գերմանիայի վերջնական անձնատուր լինելը:

Մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ հայերին այդ մասին պարզ դարձավ օգոստոսի 31-ին Երևան Օսմանյան արևելյան բանակի հրամանատար Խալիլ փաշայի պաշտոնական այցից հետո, սակայն այն ունի նաև իր նախապատմությունը, ինչին ստորև կանդրադառնանք: Մասնավորապես որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի և հայտնի վիճելի տարածքների նկատմամբ գերմանա - թուրքական, և մասնավորապես Թուրքիայի դիրքորոշման որոշ արժեքավոր մանրամասներ: Այդ կապակցությամբ ուշագրավ են 1918 թվականի օգոստոսի 11-ին Թիֆլիսում ավստրո - հունգարական ներկայացուցչության ղեկավար բարոն Ֆոն Ֆրանկենշտայնի կողմից հրավիրված բանկետի ժամանակ դրան մասնակցած գեներալ Ֆոն Կրեսի, Խալիլ փաշայի և այլոց կողմից արծարծված որոշ մտքեր: Այսպես, Ֆոն Կրեսը նշել է, որ ինքը խոսել է Խալիլ փաշայի հետ այն մասին, որ նա պետք է իր զորքերի մի մասը Անդրկովկասից տեղափոխի Միջագետք: Եվ չնայած այն հանգամանքին, որ Խալիլ փաշան հենց այդ բանկետի սկզբում շեշտել էր, որ պետք է ամեն կերպ աջակցել, որ վերանան մշտական անհամությունները հայերի և թուրքերի միջև, որ չի կարելի ամիսներով, տարիներով իրար փչացնել և իրար վնասելու մասին մտածել, այնուամենայնիվ երկյուղ է արտահայտել, թե զորքերի ետ քաշվելու դեպքում հայերը իբր թե նրանց թիկունքից կհարվածեն: Դրան իբր թե գեներալ Ֆոն Կրեսը պատասխանել է, որ հա-

յերն այդպիսի բան չեն անի, սակայն եթե այդպիսի բան անեն, այն ժամանակ իրենք՝ գերմանացիները, որպես Թյուրքիայի դաշնակիցը, իրենց, գուցե և վրացական զորքերով դուրս կգան հայերի դեմ: Այնուհետև Ֆոն Կրեսը իբր թե Խալիլ փաշային համոզել է, որ Հայաստանը չի կարող հանգստանալ այն պարագայում, որի մեջ է տվյալ պահին, որ այդ երկիրը տևականորեն հանգստացնելու համար անհրաժեշտ է նրան վերադարձնել այն գավառները, որ Բրեստ - Լիտովսկում գծած սահմաններից այս կողմում են գտնվում, և եթե Տաճկաստանը ետ քաշի իր զորքերը մինչև Բրեստի սահմանները, հայերը պատրաստ կլինեն իրենց զորքի թիվը քչացնել մինչև 10-12 հազար մարդ[71]: Կարևոր է նշել նաև 1918 թ. օգոստոսի 16-ին Ֆոն Կրեսի հետ Ա. Ջամալյանի հանդիպման որոշ մանրամասների մասին, որից պարզ է դառնում, թե ինչ դիրքորոշում և մտադրություններ են ունեցել տարածաշրջանային ուժերը թուրքերի Լոռու-Փամբակի և այլ հատվածներից հեռանալուց առաջ, ինչպես նաև հայերի նկատմամբ ոչ այնքան բարեկամաբար տրամադրված Ֆոն Կրեսի որոշ հետաքրքիր հետևությունների մասին: Այդ հանդիպման ժամանակ Ֆոն Կրեսը Ա. Ջամալյանին դիմելով,պարզապես ընդգծում է, որ թուրքերը հայերի և Հայաստանի նկատմամբ հարձակողական ծրագրեր չունեն, սակայն միաժամանակ ավելացնում է, որ ոչ ոք չի կարող ոչինչ երաշխավորել: Զրույցի վերջնամասում Ֆոն Կրեսը չափազանց բովանդակալից միտք է արտահայտում: Վերջինս ընդգծում է. «*շիտակ թուրք չկա աշխարհի երեսին, պ. Ջամալյան*,- ընդմիջեց ինձ գեներալը,- *և Խալիլ փաշան էլ շիտակ մարդ չէ… որ երկու քայլից այն կողմը ոչինչ չի տեսնում քաղաքական հորիզոնում: Նրա և ուրիշների տարբերությունն այն է, որ նա ըգ-ցում է հայերի հետ բարեկամ մնալու անհրաժեշտությունը ներկա ռազմական սիտուացիայում* (իրավիճակում)*, …իսկ Էսադներն ու Նուրիները այնքան են խորացել պանթյուրքական հիմարությունների մեջ, որ երկու քայլից այն կողմը ոչինչ չեն տեսնում քաղաքական հորիզոնում*»[72]: Այս և այլ կարգի փաստերից պարզ է դառնում, թե ինչքան անկայուն էր հայերի վիճակը Անդրկովկասում, և թե ինչ չափով կարելի էր հույս դնել զանազան խոստումների կամ հաղորդագրությունների ճշմարտացիության վրա: Վերջապես, վերջին հանգույցը: Ինչպես արդեն վերը նշել ենք, օգոստոսի 31-ին Խալիլ փաշան ժամանեց Երևան: Ուղևորության ժա-

մանակ վերջինիս ուղեկցում էին բարոն Ֆրանկենշտայնը, Ա. Զամալյանը և ուրիշներ: Խալիլի այցը պետք է որոշ պարզություն մտցներ իրադրության մեջ: Խալիլ փաշան Երևանում արժանացավ բավական սրտաբաց ընդունելության: Վերջինիս կայարանում դիմավորեց ներքին գործերի մինիստր Արամ Մանուկյանը, որը Խալիլ փաշայի վաղեմի ընկերն էր: Կայարանում հանդիպման ժամանակ Խալիլ փաշան վազելով ընդառաջում է և գրկախառնվում Արամի հետ, որից հետո Խալիլ փաշան ընդունում է պատվավոր պահակախմբի պարադը (զորահանդես) և ապա պատվավոր հեծելազորի ուղեկցությամբ Արամ Մանուկյանի հետ միասին մտնում քաղաք:

Հյուրի պատվին տրված ճաշկերույթից հետո տեղի է ունենում պաշտոնական խորհրդակցություն մինիստր - նախագահ Քաջազնունու և Հայաստանի խորհրդարանի նախագահ պ. Սահակյանի մասնակցությամբ: Առաջին հերթին Հովհ. Քաջազնունին խորհրդակցության առաջ դրեց Փամբակն ու Լոռին դատարկելու հարցը: Երկար խոսակցությունից հետո հարցը փակվեց նրանով, որ Խալիլ փաշան երեք օրվա ընթացքում պետք է իր կառավարությանը այդ գավառները դատարկելու առաջարկ աներ և համապատասխան հրաման ստանալուց հետո դատարկեր հայտնի տարածքները: Ինչպես նշվում է պ. Զամալյանի կողմից, սա արդեն նահանջ էր այն խոստումից, որ տվել էր Խալիլ փաշան ճաշի վերջում՝ երեք օրվա ընթացքում իր պատասխանատվությամբ համաձայնության գալով Հայոց կառավարության հետ՝ դատարկել Հայաստանի գրաված մասերը՝ Փամբակ-Լոռին, ամբողջությամբ կամ մասամբ: Ա. Զամալյանը այս կարևոր հանդիպմանը անդրադառնալով, վերջնամասում նշում է Խալիլ փաշայի կողմից արտահայտած չափազանց հետաքրքիր մի խոսքի մասին, որը շատ ուշագրավ է: Այսպես, Խալիլ փաշան հատուկ ընդգծում է. «*Մենք թուրքերս չենք մտածում որևէ ժողովուրդ ընտըրկացնելու մասին, սակայն մենք,մի իղձ ունենք և ուզում ենք այդ իղձան իրագործել: Մենք ցանկանում էինք վերականգնել կապը մեր հին հայրենիքի-Թուրանի հետ և դրա համար ուզում ենք, որ մեր երկու հայրենիքները իրար միացնող ճանապարհները ուրիշների տիրապետության տակ չլինի*»: Այդպիսով, այն միտքը, թե թուրքերը ցանկանում էին Անդրկովկասի վրայով իրենց տիրապետությունը տարածել մինչև Թուրքեստան՝ իր շատ որոշ արտահայտությունը գտավ Խալիլ փաշայի խոսքերի մեջ[73]:

Այստեղից պարզից էլ պարզ է, որ թուրքական այդ մոտեցումը որքան երկդիմի էր, այն լի էր հակասականությամբ և անորոշությամբ, երբեմն էլ պարզապես սովորական դիվանագիտական ներկայացում էր, որի խայծը ոչ հազվադեպ կուլ էին տալիս ոչ փորձառու հայ քաղաքագետները: ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված 1918թ. սեպտեմբերի 19-ի զեկուցագրում (№ 771) Ա. Ջամալյանը տեղեկացնում էր Աբդուլ-Քերիմ փաշայի հետ հանդիպման մասին՝կապված իբր թե վերջինիս կողմից հայ-թուրքական դաշնակցության ստեղծման կամ հայ - թուրքական հարաբերությունների մերձեցման մասին, քննարկելու համար գաղթականների և Լոռու - Փամբակի էվակուացիայի հարցը, ավելացնելով, որ իբր թե փաշան համաձայն է այդ մտքին և իր կառավարությունը արդեն գործնականապես աշխատում է այս ուղղությամբ: Ջամալյանը հայտնում էր, որ Աբդուլ - Քերիմ փաշան տեղեկացրել է իրեն, որ իբր ինքը մի քանի օր առաջ իր կառավարությունից տեղեկություն է ստացել, որ թյուրքերը թողնում են Ղարաքիլիսայից հյուսիս գտնված շրջանը, որ այդ մասին հայտնըվել է հայկական կառավարությանը Ահմեդ Ալի փաշայի միջոցով (Ահմեդ Ալին ի միջի այլոց նկատում է, որ ինքն այդ մասին հայտնել է հայերին Դրոյի միջոցով): Աբդուլ - Քերիմ փաշան նաև ասել էր, որ ինքը Էսադ փաշայի հետ բանակցությունների մեջ է գտնվում՝ ախալքալաքցիներին վերադարձնելու համար իրենց գյուղերը: Հաղորդելով այդ մասին, Ա. Ջամալյանը խնդրում էր ըշտապ իրեն հրահանգավորել, թե ինքը ինչ քաղաքական կուրս պետք է ընդունի տվյալ իրավիճակում և ինչ պետք է հաղորդվի հայկական պատգամավորությանը առաջադրված խնդրի մասին[74]: Այս հարցի մասին վկայող ևս մեկ ուշագրավ տեղեկատվություն կա (№ 789)՝ հասցեագրված Հայաստանի արտաքին գործերի նախարարին, որը 1918 թ. սեպտեմբերի 21-ին ուղարկել էր Թիֆլիսում հայկական դիվանագիտական հավատարմատար Արշակ Ջամալյանը: Հարկ է ընդգծել,որ դրանում ողջ որոշակիությամբ երևում է թուրքական կողմի երկերեսանիությունը. «*Լոռու և Փամբակի մասին Ահմեդ Ալի փաշայի միջոցով Խալիլ փաշան նամակ է ստացել Էնվեր փաշայից, որ այդ գավառների զինվորական օկուպացիան մնա, իսկ քաղաքացիական վարչությունը հանձնել հայերին: Այս առիթով պետք է ասիմ*, - ավելացրեց Խալիլ փաշան, - *Աբդուլ-Քերիմ փաշան մի սխալ է թույլատրել իրեն՝ Վրաց կառավարությանը պաշտոնապես հայտնելով, որ թուրքերը*

*թողնում ին Լոռիի և Փամբակի վարչությունը և շահագրգռված պետութիւնները կարող են իրենց վարչությունը հաստատել այնտեղ. այսօր Ժորդանիան ինձ հայտնեց,որ վրացիք շուտով պետք է իրենց վարչությունը հաստատեն մեր թողնվելիք կամ թողած շրջաններում: Դուք անմիջապես ուղարկեցե՛ք ձեր մարդիկը, սակայն առանց զինվորական մասերի, որ օր առաջ տեր կանգնեն իրենց երկրին»*[75]:

Սույն խնդրի համակողմանի և ավելի լիարժեք բացահայտման տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում կապիտան Մեդվեդևի ծառայողական խոսակցությունը Ղարաքիլիսա - Լոռու տեղամասի պետի հետ 1918 թ. սեպտեմբերի 30-ին, որում փոխգնդապետ Միրիմանովը և գնդապետ Ղորղանովը Երևան էին հաղորդում կարևոր տեղեկություններ թուրքերի մտադրությունների մասին Լոռու-Փամբակի շրջանից իրենց հեռանալու խնդրի հետ կապված: Սույն տեղեկատվությամբ գեներալ Մ. Սիլիկյանին (Սիլիկով) և Դրոյին հայտնվում էր, որ թուրքական 36-րդ դիվիզիայի հրամանատարը կատեգորիկ ձևով հայտարարել է, որ թուրքական պահակակետերը կսկսեն իրենց հեռացումը Վրաստանի սահմանից Ախալքալաքի շրջանում ցերեկը ժամը 12-ին, դեկտեմբերի 4-ին վերջին թուրքական զինվորները կմաքրեն Ախալքալաքը: Կապիտան Մեդվեդևը այնուհետև հայտնում էր, որ իր խնդրանքին, որ գոնե երկու օր թուրքերը կանգնեն սահմանի վրա, 36-րդ թուրքական դիվիզիայի հրամանատարը արձագանքեց՝ կապվելով Շեվքեթ փաշայի հետ, որի բացակայության Ժամանակ շտաբի պետը պատասխանեց, որ Վրաստանի հետ պայմանագրի համաձայն թուրքերը չեն կարող մաքրել Ախալքալաքի գավառը արդեն դեկտեմբերի 4-ի գիշերը: Դիվիզիայի պետը հայտնում էր, որ վրացիները կենտրոնացել են Ախալքալաքի գավառի հյուսիսային սահմանում, և նրանց պահակակետերը գտնվում են թուրքերի պահակակետերից 4 վերստ հեռավորության վրա,այդպիսով հայկական պլանների համար անհրաժեշտ է դեկտեմբերի 2-ի գիշերը՝ լույս դեկտեմբերի 3-ին մոտենալ Վրաստանի սահմանի վրա գտնվող թուրքերի պահակակետերին և Ախալքալաքը գրավել դեկտեմբերի 3-ի գիշերը՝ լույս դեկտեմբերի 4-ին: Կապիտան Մեդվեդևը հայտնում էր, որ անհրաժեշտ է անհապաղ սկսել հայկական հրամանատարության հրամանի իրագործումը: Այնուհետև կապիտան Մեդվեդևը տեղեկացնում էր, որ թուրքական հրամանատարությունն արդեն հրա-

ման է տվել հայկական զորքերին ներս թողնելու մասին: Բացի այդ, հայտնվում էր, որ Ղարաքիլիսա - Լոռու տեղամասի զորամասի պետի անունից ինքը (Մեդվեդևը - Վ.Վ.) թուրքական դիվիզիայի պետի միջոցով մեկ անգամ ևս դիմել է Շեվքեթ փաշային խնդրանքով՝ կանգնեցնել թուրքական պահակակետերին Վրաստանի սահմանի վրա գոնե մինչև դեկտեմբերի 4-ի առավոտը: Կապիտան Մեդվեդևը նաև հայտնում էր, որ ինքը մնում է Ալեքսանդրապոլում՝ հյուպատոսի մոտ՝ հրամանի սպասելով: Այնուհետև ասվում էր, որ իրենց ջոկատի պետը չմտնի Ախալքալաք, քանի որ այնտեղ լինելու են թուրքերը, այլ տեղավորվել Ախալքալաքի մոտ և թուրքերի հետ կապի մեջ մտնել: Կապիտան Մեդվեդևը արձանագրում էր, որ դրությունը շատ լուրջ է, որ զորաջոկատը կարող է դուրս գալ նույնիսկ այդ նույն օրը գիշերը, թուրքական դիվիզիայի հրամանատարը արել է կարգադրություն, որպեսզի սահմանի վրա ջոկատին նոյեմբերի 30-ին ժամը 16-ին չըկանգնեցնեն: Այնուհետև ներկայացվում էր գնդապետ Ղորղանովի խնդրանքը, որով վերջինս խնդրում էր տեղեկացնել դիվիզիայի հրամանատարին, որ իր ջոկատը գտնվում է Համամլույում, և որ Համամլույից մինչև Ախալքալաք, մինչև թուրքերի պահակադիրքերը կազմում է 120 վերստ: Այս շատ հետաքրքիր տեղեկատըվության վերջնամասում կապիտան Մեդվեդևը հայտնում էր Ղարաքիլիսա - Լոռու տեղամասի զորաջոկատի պետին, որ ինքն այդ մասին հայտնել է Երևան՝ Դիվիզիայի հրամանատարին և ըսպասում է համապատասխան կարգադրության այդ կապակցությամբ: Երևանից ստացված պատասխան հեռագրում հրահանգավորվում էր հիշյալ Ղարաքիլիսա - Լոռու տեղամասի զորաջոկատը ժամանակավորապես պահել Համամլույում՝ մինչև հատուկ կարգադրությունը: Այն, որ թուրքական կողմն ունեցել է որոշակի մութ մտադրություններ և ծրագրեր տարածաշրջանային այս հարցերում, ակնհայտորեն երևում է նաև Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ն. Ժորդանիայի զրույցից Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Ֆորեսթյեր Ուոքերի հետ: Այս զրույցը պարզորոշում է նաև որոշ կարևոր «մանրամասներ», համաձայն որոնց թուրքերը ակնհայտորեն ոչ միայն վրացիների հետ տարածքային հարցերի ստորաքարշ առևտուր էին անում, այլև կազմակերպում մի խաղ, որի նետերը իրենց սուր ծայրերով ուղղված էին Հայաստանի դեմ: Երկդիմի մի խաղ, որի նպատակը թուրքերի հեռացումից հետո տարածաշըր-

ջանում լարվածության պահպանումն էր: Եվ այսպես,ինչպես այդ զրույցի ժամանակ ընդգծում է Վրաստանի կառավարության նախագահի Ն. Ն. Ժորդանիան, մինչև անգլիացիների գալը Անդրկովկաս. այլ խոսքերով *մինչև Դաշնակիցների զենքի հաղթարշավը, Վրաստանի կառավարությունը Կոստանդնուպոլսում համաձայնության է եկել թուրքական կառավարության հետ այն կապակցությամբ, որ Ախալցխայի և Ախալքալաքի գավառները պետք է դատարկվեն* (թուրքական զորքերից - Վ.Վ.) *մեկ ամսվա ընթացքում, նոյեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 4-ն ընկած ժամկետում և այդ մարզերը թուրքական զորամասերի կողմից դատարկելուց, դուրս գալուց անմիջապես հետո պետք է մտնեն Վրաստանի Հանրապետության զորքերը և զբաղեցնեն մաքրված երկրամասը*: Զրույցի վերջնամասում Ն. Ն. Ժորդանիան ընդգծում է, որ ինքըն ունի այդ հանգամանքն հաստատող փաստաթղթեր[76]:

Ինչևիցե: Վերադառնանք բուն ասելիքին: Հոկտեմբերի 5-ին Խալիլ փաշան դարձյալ ժամանում է Երևան և հայտնում իր կառավարության կամքը՝ դատարկելու Լոռի-Փամբակի շրջանները: Եվ ինչպես վկայում է Հայաստանի խորհրդարանի պատգամավոր Արշամ Խոնդկարյանը, Խալիլ փաշան «*եկավ ոչ թե բանակի գլուխ անցած, ինչպես սպասում էինք մենք բոլորս գրեթե ամեն օր, այլ որպես հյուր «իր հին բարեկամ Արամին»՝ Հայաստանի ներքին գործոց նախարարին*»[77]: Խալիլ փաշայի վերոնըշյալ հաղորդումից հետո հայկական և թուրքական զինվորական ներկայացուցչությունները պայմանավորվում են հիշյալ շրջաններում թուրքական զորամասերին հայկականով փոխարինելու ծրագրի շուրջ, ինչն էլ իրականացվում է հոկտեմբերի 18-ին: Սակայն ամեն ինչ այնքան հարթ չի ընթանում, ինչպես կարելի էր սպասել՝ համաձայն թուրքական «սայթաքուն» խոստումների: Դա մասնավորապես երևում է հետևյալ հաղորդագրությունից. Հայկական դիվիզիայի պետին ուղղված ուղերձում Օսմանյան կայսրության ներկայացուցիչ և դիվիզիոնային գեներալ Մահմեդ օղլին հայտնում էր, որ ինքը գեներալ Խալիլ փաշայից հեռագիր է ստացել, որում վերջինս խնդրել է հաղորդել, որ էվակուացիան կսկսվի ընթացիկ ամսվա (հոկտեմբերի) 18-ին և խնդրել հայկական կառավարությանն անել բոլոր կարգադրությունները վերոնըշյալ տարածքը նշված օրը զբաղեցնելու համար[78]: Զինվորական նախարար Հախվերդյանը (Հախվերդով) վերը բերված նա-

մակի (№ 22) պատճենն ուղարկելով Հայկական դիվիզիայի պետին, հաղորդում էր, որ Մահմեդ Ալի փաշայից ստացված այդ նամակին որպես լրացում իր անձնական պարզաբանումից բացահայտ է դարձել, որ այդ հաղորդագրությունը պետք է հասկանալ այնպես, որ պահակապոստերի (պահակակետ) հերթափոխությունը պետք է տեղի ունենա 18-ի գիշերը՝ լույս 19-ին, այլ ոչ թե 15 - 16-ին, ինչպես իրենք ենթադրում էին: Հապաղումը տեղի է ունեցել հեռագրի ստացման ուշացման պատճառով: Զինվորական նախարարը հայտնում էր, որ բանակցությունների համար նախնական հանդիպումը գնդապետ Ղորղանովի և Դրոյի կողմից պետք է իրականացվի նրանց համաձայնության հիման վրա՝ թուրքական ջոկատների պետի հետ: Հախվերդյանը հրամայում էր շարադրվածը հաղորդել հայկական զորաջոկատների պետերին՝ այն իրագործելու համար: Վերջնամասում նախարարը հայտնում էր, որ իրագործման մասին ինքը սպասում է հաղորդագրության[79]:

Վերոհիշյալ բոլոր փաստաթղթերը վկայում են մի գործընթացի մասին, ըստ որի դրանով Հայաստանին վերադարձվում էր (կամ էլ ձգտում էին վերադարձնել) մի հողամաս, որ նրան էր պատկանում նույնիսկ Բաթումի դաշնագրով: Սակայն իրականությունն ավելի բարդ էր: Այդ մասին ցայտունորեն երևում է ժամանակակցի և այդ ժամանակաշրջանի իրադարձությունների ակտիվ մասնակցի՝ Ս. Վրացյանի հետևյալ խոսքերից. «*Բնորոշ է, որ նոյն ձեւի յայտարարութիւն արաւ եւ վրաց կառավարութեան Թիֆլիսի թրքական ներկայացուցիչը՝ խորհուրդ տալով միաժամանակ վրացիներին՝ գրաւել Ախալքալաքի գավառը: Խաղը պարզ էր. հայերը և վրացիները միաժամանակ ուզելով գրաւել Ախալքալաքը՝ անխուսափելի կէրպով պիտի ընդհարուէին, ինչ - որ մտնում էր թուրքերի քաղաքական հաշիւների մեջ: Հայերը, զբաղուած լինելով ներքին աւելի ծանրակշիռ հարցերով՝ ուժ չունէին Ախալքալաքը գրավելու համար*»[80]:

Սակայն փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրությունը որոշակի հիմք է տալիս մեզ եզրակացություն անելու այն մասին, որ վրացիները թուրքերի հետ ավելի լավ և ռեալ պայմանավորվածություն ունեին, քան հայերը, և ավելին, վրացիները լինելով ավելի հիմնավոր տեղեկացված ընթացող գործընթացների մասին, ունեին ռազմավարական անվիճելի պլյուսներ՝ իրենց

ապօրինի մտադրություններն իրականացնելու տեսանկյունից: 1918 թ. հոկտեմբերի 17-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը հասցեագրված նամակում Ա. Ջամալյանը, ըստ երևույթին կռահելով այդ ամենի մասին, գրում է, որ վրացիների կողմից Ախալքալաքի գավառը գրավելու մտադրությունը իրականություն է դառնում,ավելացնելով, որ դեռևս ամբողջական գրավում տեղի չի ունեցել, որովհետև «*թյուրքերը վերջնականապես դեռ չեն հեռացել այնտեղից, սակայն արդեն նշանակված վարչական, փոստային և այլ հաստատությանց գլխավոր պաշտոնյաները մեկնել են իրենց տեղերը*»: Նամակի վերջում Ա. Ջամալյանը շատ զգուշավոր վերապահում է անում (հային հատուկ, որն այսօր էլ կա, հանկարծ օտարներին նեղություն չտան, հանկարծ միջազգային և այլ ատյաններում չզբաղվեն հայերի անօրինականությունների, ագրեսիվ գործողությունների և այլնի մասին քննարկումներով - Վ.Վ.), որ այնուհանդերձ պետք չէ և անհարմար է սույն բողոքը ներկայացնել վրացական կառավարությանը, որովհետև դա կարող է գաղթականների վերադարձի առաջ դժվարություններ հարուցանել[81]: Ոչնչով չարդարացված ըզգուշավորություն,որ հանկարծ «եղբայր վրացին» ոչ մի վատ բան չմտածի և նախահարձակ չլինի: Հարկ է ասել, որ հայկական կողմի մոտեցումներում երբեմն իշխում էին էմոցիոնալ գուներանգները, որոնք հնարավորություն չէին տալիս ռացիոնալ եզրահանգումների գալ, ավելի իրատեսորեն գնահատելու դեպքերն ու իրադարձությունները:

Անշուշտ, հայկական կողմն իր պատկերացումներն ուներ, և կան փաստաթղթեր, որոնք վկայում են, որ Հայաստանի կառավարությունը ելնելով էթնիկական սկզբունքից, մոռանում էր, որ իրեն ձեռնտու է այդ սկզբունքը, իսկ Վրաստանին՝ այլ սկզբունքներ, որոնք միջազգային հարաբերությունների պրակտիկայում, պատմության մեջ ամենևին էլ նորություն չէին, և բացառություն չէին կազմում: Մյուս կողմից, աշխարհաքաղաքական ընդհանուր իրավիճակի բացասական շերտանստվածքներն իրենց դերն էին կատարում: Ինչևիցե,Հայաստանի կառավարությունն իր ռազմաքաղաքական գործունեության մեջ ելնում էր գլխավորապես այն փաստից (իսկ դա քաղաքականության մեջ ամենևին էլ ամեն ինչ չէ - Վ.Վ.), որ Ախալքալաքի գավառի ողջ բնակչության 77 %-ը հայեր են, իսկ վրացիները՝ ընդամենը 6,5 %-ը[82], այսինքն գլխա-

վորապես հենվում էր էթնիկական սկզբունքի վրա, ինչպես նըշվում է 1918 թ. հոկտեմբերի 17-ի մի փաստաթղթի նախագծում՝ հասցեագրված Ն. Վ. Ռամիշվիլուն (նույնը կարելի է ասել թե՛ Բորչալուի գավառի, և թե՛ հետևաբար Լոռու հատվածի վերաբերյալ), շեշտելով նաև այն հանգամանքի մասին, որ դեռ 1917 թ. վարչական բաժանման մասին հարցի քննարկման ժամանակ հայկական բնակչությունը հասարակական կազմակերպությունների կոլեկտիվ հեռագրում՝ ուղղված Անդրկովկասի իշխանություններին, հայտարարել էր իր ամուր վճռի մասին՝ միանալ Երևանի նահանգին[83]: Այդ փաստաթղթի նախագծում միանգամայն արդարացիորեն նշվում էր, որ Ախալքալաքի բնակչությունը սեղմված է եղել համակենտրոնացման ճամբարի ճիրաններում, որ նա ենթարկվում է բանդաների հարձակմանը, վրացական ստորին օղակի քաղաքացիական վարչակազմի գործակալների կողոպուտներին, և ամենազանազան բռնաճնշումներին, և սահմանափակումներին, հատկապես պարենամթերքների ծեռքբերման գործում: Փաստաթղթի այդ նախագծում շեշտվում էր, որ վրացական իշխանությունների բռնաճնշումների քաղաքականության հետևանքով, փախստականների ոչ մեծ խմբաքանակները, որոնք ներթափանցել էին Վրաստանի Սուրամի և Մանգլիսի շրջանները, այդ վայրերից անխղճորեն դուրս են վռնդվել և թողնըվել բախտի քմահաճույքին: Փաստաթղթի վերջնամասում ընդգծվում էր, որ Ախալքալաքի գավառի պատկանելիության հարցը Վրաստանին կամ Հայաստանին կարող է լուծվել միայն միջազգային արբիտրաժի միջոցով և Ախալքալաքի գավառի բնակչության կամքի ազատ արտահայտման համաձայն, որի համար գավառի օկուպացիոն վրացական իշխանությունների կողմից ոչ մի հիմք չունի[84]:

Ակնհայտ է, որ և՛ հայերը, և՛ վրացիները, և՛ թուրքերը Անդրկովկասում ունեին իրենց ռազմավարությունը, իրենց կոնկրետ քաղաքական շահերը, և ստեղծված գեոքաղաքական իրավիճակում ավելի բարդ էր Հայաստանի խնդիրը, որը ձգտում էր ամրապնդվել հյուսիսային հայկական շրջաններում: Հայկական կողմը ձգտում էր կողմնորոշվել վրաց - թուրքական խաղերում, և պաշտպանել սեփական ազգաբնակչության շահերը Ախալքալաքում և Բորչալույում, ինչպես և մնացած վայրերում: Հնարավոր է, որ հայերը որոշ հույսեր էին կապում նաև թուրքական խոստում-

ների հետ: Այդ հանգամանքը չի բացառվում, սակայն հայկական իշխանությունների սևեռուն կողմնորոշումը դեպի Սևրյան երկրները ճակատագրական դեր խաղաց երկրի ընդհանուր ռազմավարության որոշման հարցերում, և իր կնիքը թողեց հայ ժողովրդի պատմական ճակատագրի այս կամ այն դրսևորման մեջ:

Եվ այնուամենայնիվ, թուրքերն Անդրկովկասում ունեին միանգամայն այլ ռազմավարական նկատառումներ, և ամենևին էլ չէին պատրաստվում հենց այնպես հեռանալ: Անդրկովկասում հետագայի իրենց խաղաքարտերն ապահովելու տեսանկյունից ելնելով, ինչպես նաև ձգտելով ապահովել հայ - վրացական մրցակցություն, թուրքերն ըստ էության նմանատիպ խոստումներ էին տալիս նաև վրացիներին, ինչը լավ է երևում հոկտեմբերի 24-ի հայ-վրացական հանդիպման արդյունքներն արտացոլող մի փաստաթղթի վերլուծությունից: Այսպես, այդ հանդիպման ժամանակ Վրաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ն. Վ. Ռամիշվիլին շեշտելով, որ Վրաց կառավարությունը պատրաստ է համաձայնության գալու Հայաստանի կառավարության հետ խնդիրը խաղաղ կերպով լուծելու, և եթե համաձայնությունը չկայանա, գործը արբիտրաժի հանձնելու, սակայն ինքը տեղեկություններ ունի, որ Շուլավերի հայերը ինչ-ինչ պատրաստություններ են տեսնում, և Լոռու վերաբերյալ Հայաստանի կառավարությունը տաճիկների հետ համաձայնության է եկել, որոնց թողտվությամբ էլ գրավել է նրանց թողած դիրքերը: Հայաստանի ներկայացուցիչը ի պատասխան ընդգծում է, որ անելով այդ քայլը,Հայաստանի կառավարությունը տարակույս չի ունեցել, որ Լոռու տաճիկների կողմից գրաված շրջանը կազմում է Հայաստանի մի մասը, ինչպես որ վրացիներն իրենց իրավունք են տվել մյուս մասի գրավման վերաբերյալ՝ թեև գուցե ժամանակավորապես համաձայնության գալով գերմանացիների հետ, այնպես էլ Հայաստանի կառավարությունը իր իրավունքն է համարել բռնելու տաճիկների թողած մասը: Դրան ի պատասխան Ռամիշվիլին շատ յուրօրինակ պատասխան է տալիս, ասելով, որ եթե Հայաստանը մեծանա (ըստ երևույթին նկատի ունի այն ակնկալիքները և փոփոխությունները, որոնք սպասվում էին՝ Առաջին աշխարհամարտի և դրա արդյունքների ամփոփման հետ կապված), վիճելի հարցերը ավելի հեշտությամբ կլուծվեն, որովհետև Հայաստանի տաճկական մասերը, որոնք պետք է միանան իրենց պետությանը, ազգաբնակչություն չունեն, և հետևապես հայերը տերիտո-

րիա ձեռք բերելով հնարավորություն կունենան ավելի զիջող լինելու վրաց սակավահող ժողովրդի հանդեպ[85]: Յուրօրինակ մոտեցում, որի հիմքում ընկած է վեհապետական Վրաստանի մեծապետական շահը:

Իրադարձությունները զարգանում էին իրենց հատուկ ընթացքով և նորանոր ճշգրտումներ մտցնում աշխարհաքաղաքական - տարածաշրջանային իրավիճակում, վերջինիս մոտիվացիաներում: Ինչպես արդեն նշվել է, 1918 թ. հոկտեմբեր ամսին և հետագա ժամանակահատվածում Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարությունը ռազմաքաղաքական որոշակի պատրաստություններ ձեռնարկեց թուրքերի կողմից թողնվելիք տարածքները գրավելու - զբաղեցնելու ուղղությամբ: Զինվորական նախարարին ներկայացված 1918 թ. հոկտեմբերի 18-ի զեկուցագրում (№ 710) գեներալ - մայոր Մ. Սիլիկյանը և Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Ալ. Շնեուրը զինվորական նախարարին տեղեկացնում էին, որ թուրքական հրամանատարության հետ կայացած համաձայնության հիման վրա Հայկական բանակի Լոռու ջոկատը Դրոյի գլխավորությամբ հոկտեմբերի 18-ին դուրս գալով Ղարաքիլիսայից (Հայկական զորքերի Դիլիջանի զորամասը Ղարաքիլիսա էր մտել հոկտեմբերի 18-ին, ժամը 11 անց 20 րոպեին)[86], մոտեցել են Սիպտախի, Գերգերի մատույցներին[87]: Վերոհիշյալ բարձրաստիճան սպաները հոկտեմբերի 20-ի գրությամբ (№ 0742) արդեն տեղեկացնում են, որ Դիլիջանյան զորաջոկատը հոկտեմբերի 18-ին ժամը 22-ին գրավել է Շահալի կայարանը և Քոբեր կիսակայարանը[88]: Հոկտեմբերի 19-ին հայերը թողնում են Քոբեր կիսակայարանը, սակայն այն օրվա վերջին հայկական 1-ին և 2-րդ հրաձգային գնդերը վերագրավում են, և մոտենում Սանահին կայարանին[89]: 1918 թ. հոկտեմբերի 21-ի գրությամբ (№ 108) գեներալ - մայոր Սիլիկյանը (Սիլիկով) տեղեկացնում էր զինվորական նախարարին, որ հոկտեմբերի 19 - 20-ն ընկած ժամանակահատվածում հայկական զորքերը գրավել են Նովոպոկրովկա, Ջալալ-օղլի, Վարդանլուր և Քարաքենդ ռազմագիծը: Հայտնվում էր, որ ուղարկվել է հետախուզություն վրացա - գերմանական մատույցները պարզելու համար[90]: Վրացիներն այդ օրերին գերմանացիներից որոշակի աջակցություն են ստանում և էլ ավելի ոգևորվում: Դա երևում է

ներքոհիշյալ փաստից: Ինչպես երևում է Հայկական դիվիզիայի հրամանատարի պաշտոնակատար գեներալ - մայոր Փիրումովի զինվորական նախարարին ուղղված զեկուցագրից (№ 118), հոկտեմբերի 21-ին, երբ հայկական հեծելապարեկը մտել է Վորոնցովկա գյուղը, սկզբում լավ է ընդունվել գերմանացիների կողմից (տակտիկական նկատառումներով - Վ.Վ.), իսկ այնուհետև շրջապատվել է և զինաթափվել: Այնուհետև հայտնվում էր, որ ուղարկված պառլամենտյորներին (բանագնաց) գերմանացիները վերադարձրել են հեծելապարեկի հետ միասին, խնդրելով չանցնել Ձալլու գետը, այն համարելով Վրաստանի սահմանագիծ[91]:

Այս նույն տեղեկությունները, որոշակի վարիացիաներով հանդերձ պարունակվում են նաև շտաբի պետի պաշտոնակատար կապիտան Գրոսսի ստորագրությամբ հայտնի 1918 թ. հոկտեմբերի 24-ի զեկուցագրում (№ 00119), որն հասցեագրված էր դարձյալ զինվորական նախարարության Գլխավոր շտաբին: Դրանում նշվում էր, որ Լոռու ջոկատի պետ գնդապետ Ղորղանովը հեռագրել է, որ Վորոնցովկա ուղարկված բանագնացներին գերմանացիները մերժել են ետ տալ կալանված և զինաթափված հեծելապարեկը, որից հետո բանագնացները ձեռնունայն ետ են եկել՝ բավարարվելով գերմանացիների կողմից հայտնված ներողությամբ տեղի ունեցած թյուրիմացությունների համար[92]:Վրացգերմանական համաձայնությունը ռեալ էր, և տալիս էր պրակտիկ արդյունքներ՝ ապահովելով մեծապետական Վրաստանի դիրքերը նշված տարածքներում և դրանց մատույցներում:

Սակայն ինչպես արդեն ասացինք,Դրոն մտավ Լոռի-Փամբակ և դա առաջ բերեց վրացական կողմի հակազդեցությունը, որը հոկտեմբերի 19-ին ի դեմս վրացական արտաքին գործերի նախարար Գվարժալաձեի՝ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին Վրաստանում՝ Արշակ Ջամալյանին է հանձնում հետևյալ բողոքագիրը (№ 4303). «*Վրաստանի Հանրապետության կառավարությունը տեղեկացավ, որ Թիֆլիս նահանգի մեկ մասը՝ Քոբեր կիսակայարանից սկսած մինչև սահմանակից կամուրջը, այլև Սանահինի մոտի շրջանները, սույն թվի հոկտեմբերի 18-ին գրավվել են Հայկական կանոնավոր զորքերի 1-ին և 4-րդ հրացանաձիգ գնդերի կողմից: Վրաց կառավարությունը, որ միշտ պատրաստ է խաղաղ, փոխադարձ համաձայնության միջոցով կարգավորել սահմանների հարցը բարեկամ Հայաստանի Հան-*

*րապետության հետ, իր պարտականությունն է համարում հայտարարելու, որ քանի այդպիսի համաձայնություն չի կայացել, հայկական զորամասերի մուտքը Թիֆլիսի նահանգի սահմաններից ներս Վրաց կառավարության կողմից կդիտվի որպես Հայաստանի կողմից արված ակներև մի թշնամական քայլ Վրաստանի նկատմամբ*»[93]:

Հարցի էությունը պարզելու նպատակով հայկական կողմը կոնկրետ քայլեր է ձեռնարկում, բնականաբար ձգտելով խուսափել հարցերի լուծման պատերազմական եղանակներից: Ինչպես տեղեկացնում է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղարկված 1918 թ. հոկտեմբերի 20-ի հեռագրով (N$^{\underline{o}}$ 1301), այդ նպատակադրումով նա նույն թվականի հոկտեմբերի 19-ին հանդիպում է ունեցել Վրաստանի արտաքին գործերի նախարարի պարտականությունները կատարող Գվարժալաձեի հետ, որն էլ հայտնել է, որ վրացական կառավարության կարծիքով հայկական զորքերը պետք է մաքրեն թուրքերի կողմից զբաղեցրած Լոռու տեղամասը «*մինչև սահմանների մասին հարցի վճռվելը խաղաղ եղանակով*»: Ա. Ջամալյանը կոնֆլիկտի լուծման նպատակով հարց է բարձրացնում՝ ամեն ինչում կոնդոմինիմում հաստատելու մասին[94]: Գվարժալաձեն նորից պնդում է, որ խնդիրը վերաբերում է ոչ թե Լոռվա այս կամ այն մասին,այլ Թիֆլիսի ողջ նահանգին, և Վրաց կառավարության կարծիքով հայկական զորքերը չպետք է մտնեն Թիֆլիսի նահանգի սահմաններից ներս, անկախ այն բանից, թե այդ նահանգի այս կամ այն մասը ինչպես է կոչվում: Ինչպես տեսնում ենք, իսկապես շատ հետաքրքիր է իր մտքերը ձևակերպում վրացի այս պաշտոնյան: Շարունակենք: Այնուհետև Գվարժալաձեն խոսակցության ընթացքում հայտնում էր, որ մոտ մեկ ամիս առաջ Աբդուլ Քերիմ փաշան «*պաշտոնական թղթով*» հայտարարել է վրացական կառավարությանը, որ թուրքերը շուտով թողնելու են Լոռին և առաջարկել է միջոցներ ձեռք առնել գրավելու այդ երկիրը մինչև Ղարաքիլիսայից փոքր ինչ հյուսիսով անցնող Ալեքսանդրապոլ գավառի սահմանը: Այդ ժամանակ վրաց ազգային դեմոկրատները, ըստ Գվարժալաձեի, պնդել են կառավարությանն անմիջապես

[4] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

միջոցներ ձեռք առնելու Լոռվա այդ մասը գրավելու համար, սակայն իբր թե Ժորդանիան, Ռամիշվիլին և ինքը՝ Գվարժալաձեն հակառակվել են այդ քայլին, ասելով, թե այդ հողի ում պատկանելը վիճելի է, և որ իրենք առհասարակ դեմ են վիճելի հողեր գրավելուն: Սակայն Գվարժալաձեն իր միտքն ավարտելով, հայտնում էր, որ երեկ լուր է ստացվել, որ հայերը մտել են Լոռվա շրջան, ինչը ծայրաստիճան գրգռել է ազգային դեմոկրատիային, որոնց ստիպմամբ էլ միջոցներ են ձեռք առնվել հայերի առաջխաղացման դեմն առնելու համար: Ջամալյանի այն հարցին, թե ի՞նչ պետք է անել՝ այդ ինցիդենտին (միջադեպ) վերջ դնելու համար, Գվարժալաձեն պատասխանում է, որ լավ կլինի, որ հայերը առայժմ հեռանան Թիֆլիսի նահանգի սահմաններից՝ ավելորդ կոնֆլիկտների տեղիք չտալու համար՝ մինչև սահմանների հարցի կարգավորումը, որի ժամանակ, անշուշտ, հայերի արդար իրավունքները անտես չեն առնվի (իբր թե - Վ.Վ.): Դրան Ջամալյանը պատասխանում է, որ անդրկովկասյան ժողովուրդների սահմանաբաժանումը պետք է կատարվի համաձայն ազգագրական սկզբունքի, ինչ-որ իրենք պաշտպանել են հանձնաժողովներում՝ Լոռվա խնդրի վերաբերյալ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այնտեղ ազգաբնակչության 90 %-ը հայերն են կազմում[95]:

Սակայն այս զրույցը անհետևանք չի մնում: Առաջ ընկնելով ասենք, որ դրանից հետո հանդիպելով Արզումանովին և Կ. Գազազյանին (ՀՅԴ), Ռամիշվիլին հաղորդում է, որ Ջամալյանի կողմից արտաքին գործերի նախարարի տեղակալ Գվարժալաձեին հայտարարվել է, որ իբր թե Հայաստանի կառավարության և թուրքերի միջև կայացել է համաձայնություն հայկական զորքերի կողմից Լոռու շրջանը գրավելու կապակցությամբ: Ջամալյանը բողոքի նոտայով դիմելով Ռամիշվիլուն, իր վրդովմունքն է հայտնում, որ այդ բովանդակությամբ հաղորդագրություն տպագրվել է վրացական թերթերում: Ջամալյանը շեշտում է, որ թյուրիմացությունից խուսափելու համար ինքը նորից պնդում է, որ Գվարժալաձեի հետ խոսակցության ժամանակ ինքը վերջինիցս լսել է, որ իր ձեռքի տակ կա փաստաթուղթ, ըստ որի Թուրքիայի ներկայացուցիչը Վրաստանում՝ Աբդուլ Քերիմ փաշան առաջարկել է Վրաստանի կառավարությանը զբաղեցնելու Լոռու շրջանը, քանի որ թուրքերն այնտեղից հեռանում են: Ջամալյանը այնուհետև տեղեկացնում է, որ ինքն այդ խոսակցության ժամանակ

հակառակն է ասել, պնդելով, որ նմանատիպ առաջարկ Հայաստանի կառավարությունը ստացել է Հայաստանում Թուրքիայի ներկայացուցիչ Մահմեդ Ալի փաշայից (հարկ է նշել որոշ հակասականության մասին, որ կա Ա. Ջամալյանի խոսքերում, որից և կառչել է ճարպիկ վրաց քաղաքագետը՝ հայերին մեղադրելով նախահարձակողականության և իրենց «եղբայր» վրացիներին՝ հայերի կողմից դավաճանելու մեջ - Վ.Վ.)։ Ընդ որում Ա. Ջամալյանը գրում է, թե ինքն ավելացրել է, որ արդեն այն հանգամանքը, որ միևնույն տարածքն առաջարկվել է Վրաստանին և Հայաստանին գրեթե միաժամանակ, ցույց է տալիս, որ վեճը պետք է լուծվի երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ[96]։ Անշուշտ, հասկանալի է, որ այստեղ նպատակը պարզ էր։ Միանգամայն ճիշտ է այս առումով նկատել Սիմոն Վրացյանը. «*Խաղը պարզ էր. <u>հայերը և վրացիները անխուսափելի կերպով պիտի ընդհարուէին, ինչ - որ մտնում էր թուրքերի քաղաքական հաշիւների մեջ։ Հայերը, զբաղուած լինելով ներքին աւելի ծանրակշիռ հարցերով՝ ուժ չունէին Ախալքալաքը գրավելու համար։</u> Վրացիները, օգտուելով առիթից՝ փութացին զօրք մտցնել եւ իրենց իշխանութիւնը Ախալքալաքի շրջանի վրայ, ինչ-որ վրդովում առաջ բերեց հայկական շրջաններում*»[97]։

Հատկանշական է,որ հենց այդ օրերին Վրաստանի իշխանությունները որոշ խոչընդոտներ են սկսում հարուցել Վրաստանից դուրս բերվող ապրանքների և այլնի նկատմամբ, ձգտելով յուրահատուկ բլոկադային վիճակ ստեղծել Հայաստանի համար, հմտորեն օգտագործելով երկաթուղու և առհասարակ բոլոր տեսակի կոմունիկացիաների ընձեռած հնարավորությունները։ Չընայած այն հանգամանքին, որ Ժորդանիայի և Ռամիշվիլու հետ տեղի էր ունեցել խոսակցություն և Վրաց կառավարությունը պաշտոնական խոստում էր տվել հայկական կողմին, ոտնձգությունները շարունակվում էին։ Այդ մասին Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը 1918 թ. հոկտեմբերի 19-ին տեղեկացնում է Հայաստանի արտաքին գործերի նախարարին, փաստեր բերելով, որ Վրաստանի ժողովրդական գըվարդիայի ոստիկանական գործերով զբաղվող այսպես կոչված առանձին զորախմբերը ամեն տեսակ խոչընդոտներ են հարուցում ապրանքները պահեստներից տեղափոխելու կամ վագոններում դարսելու համար, միաժամանակ ավելացնելով, որ խու-

զարկողները ոչ միայն թեյն ու շաքարն են գրավում, այլև ծխախոտը, լոբին և այլն: Դիմումագրի վերջնամասում Ջամալյանը տեղեկացնում էր, որ Ժորդանիան խոստացավ կարգադրել, որ վերադարձնեն առգրավված իրերը և վերացնեն Հայաստանի համար նախատեսված ապրանքների տեղափոխության դեմ հարուցված արգելքները, դրա հետ մեկտեղ պահանջելով, որ հայկական կողմը ներկայացնի ցուցակներ տեղափոխվելիք ապրանքների վերաբերյալ[98]: Սակայն վրացական կողմը ողջ ապրանքը չի վերադարձնում, չնայած Ժորդանիայի հավաստիացումներին, այլ միայն մի մասը, որն իբրև փաստաթուղթ ուներ[99]: Վրացական կողմը բյուրոկրատական այդ բռնաճնշումների մեխանիզմով ձգտում էր խեղճացնել հայկական կողմին, ստիպել գնալ զիջումների սահմանային - տարածքային խնդիրներում:

Վրացիները հավակնում էին անառարկելիորեն տիրել Լոռուն՝ այն հողատարածքին, որը Վահան Փափազյանի բնորոշմամբ «*...Հայաստանի թոքն է. առանց այդ գեղեցիկ և ռազմական կարևորություն ունեցող շրջանի և երկաթուղագծին, անկարելի էր շնչել*»[100]:

Հոկտեմբերի 20-ին, Սանահինում կանգնած զրահապատ գնացքների պետ Գոգվաձեն ստացավ զինվորական նախարարի հրամանը,որում պահանջվում էր հայկական զորամասերից մաքրել Լոռին, ներառյալ Շահալի կայարանը: Վերջինս Հայաստանի կառավարությանը ուղարկեց հետևյալ բովանդակությամբ հեռագիրը. «*Հիմնվելով Վրաստանի Հանրապետության զինվորական նախարարի թիվ 642 հեռագրի վրա՝ հանձնարարում եմ ձեզ 24 ժամվա ընթացքում տեղեկացնել ձեր կառավարությանը, որ դուք պետք է հեռանաք ձեր այժմ գրաված տեղից Շահալի կայարանից այն կողմը: Սպասում եմ ձեր պատասխանին մինչև 22 հոկտեմբերի ժամը 2 կեսօրից հետո*»[101]:

Հաջորդ օրը, հոկտեմբերի 21-ին Գոգվաձեն ստանում է զինվորական նախարարության հետևյալ հեռագիրը.«*Վաղը, հոկտեմբերի 22-ին ժամը 12-ին, երկաթուղով ձեզ մոտ են գալիս նահանգային գումարտակի 250 զինվորներ, դեպի Վորոնցովկա է շարժվում զորավար Ցիցիանովի զորամասը՝ բաղկացած մարտկոցներից և հետևակներից: Զորավար Ցիցիանովի գալուց հետո նա կընդունի բոլոր զորքերի հրամանատարությունը: Ամբողջ Բորչալուի գավառի մաքրագործման և մինչև Թիֆլիսի նահանգի*

*սահմանները հեռանալու պահանջն անպայման է»*[102]: *«Մեր պահանջը, որ հայերն ազատեն ամբողջ Բորչալուի գավառը և հետ քաշվեն մինչև Թիֆլիսի նահանգի սահմանը, անվերապահ է»*, - 1918 թ. հոկտեմբերի 22-ին գրում էր զինվորական նախարարի տեղակալ գնդապետ Գեղևանովը[103]:

Ուշագրավ է,որ հայկական կողմը որոշակի տեղեկատվություն ուներ վրացական կողմի նախապատրաստությունների մասին, և ինչ - ինչ քայլեր ձեռնարկում էր Վրաստանի ագրեսիվ գործողությունները կանխելու ուղղությամբ: Այդ մասին է վկայում գեներալ - լեյտենանտ Մ. Սիլիկյանի և փոխգնդապետ Ալ. Շնեուրի ստորագրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ուղարկված հոկտեմբերի 22-ի հեռագիրը (թիվ 00111), որում հաղորդվում էր այն մասին, որ «*վրացիները Քոբեր կիսակայարանին են մոտեցրել զրահագնացքը և 300 կարմիր գվարդիականներ՝ Սանահին կայարանին: Առավոտյան, լուրերի համաձայն, նրանց կմոտենան ևս 500 կարմիր գվարդիական, նույնքան՝ Քորինջ գյուղին. եկել է գերմանական սպա՝ 10 զինվորների հետ միասին: Վրացիները պահանջեցին մաքրել Շահալի կայարանը: Դիլիջանյան ջոկատի պետին հրահանգ է տրված ակտիվ գործողությունների դեպքում հարձակման անցնել և գրավել Սանահին կայարանը*»[104]: Բացի այդ, կարգադրվեց այդ նպատակի համար Դիլիջանի զինապահեստից ուղարկել հրացանափամփուշտներ, ռումբեր և շրապնել (կլոր գնդակներով լցրած հրետանային ռումբ)[105]:

Երկու կողմերն էլ ինչ - ինչ քայլեր ձեռնարկում էին, սակայն վրացիներն ավելի ագրեսիվ էին և նախահարձակ: Հոկտեմբերի 22-ի վերջում զինվորական նախարար Գեորգաձեն հեռագրում է գնացքների պետ Գոգվաձեին, թե «*քանի որ Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանը, իր կառավարությունից դեռ չի ստացել մեր դիմումի պատասխանը, հրամայում եմ շտապով գրավել այն գիծը, որ մենք բռնում էինք թուրքերի հեռանալուց առաջ և ոչ ոքի թույլ չտալ անցնելու ոչ այդ գծի այն կողմը, ոչ այս կողմը: Մեր զորքերը դեռ չպետք է անցնեն այդ գիծը»:* Եվ մի լրացուցիչ հեռագրով էլ հրամայեց՝ *«առանց վրաց կառավարության արտոնության Հայաստանից ոչ ոքի թույլ չտալ մտնելու Վրաստան»*[106]:

Ակնհայտորեն պարզ է, որ Վրաստանը Հայաստանին դըրդում էր պատերազմի, օգտվելով Գերմանիայի հովանավորությունից: Ինչպես վկայում է ժամանակակիցը՝ Ս. Վրացյանը, «*Գերմանիայի զինվորական ներկայացուցիչ Ֆոն Կրեսը աշխատում էր համոզել Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանին ընդունել վըրացիների վերջնագիրը և առանց արյունահեղության դատարկել «վրացական» հողը: Ջամալյանի հարցումին, թե արդյոք Գերմանիան կխառնվի՞ հայ - վրացական սահմանային վեճին, Ֆոն Կրեսը պատասխանեց դրական մտքով: Գերմանիան, որպես Վրաստանի դաշնակից, պարտավորված է պաշտպանել վերջինիս երկիրը այն սահմաններում, ինչ սահմաններում որ ցույց կտա Վըրաց կառավարությունը*»[107]:

Երեկվա «եղբայրների»՝ վրացիների դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ վրդովմունք և զայրույթ առաջ բերեց հայ քաղաքական, մտավորական և կառավարական շրջաններում: Հոկտեմբերի 22-ին Հայաստանի խորհրդարանի նիստում վարչապետ Հովհ. Քաջազնունին հայտարարում է. «*Մեր հողի մի մասը, Լոռի - Փամբակի շրջանում, գրավված էր թուրքական զորքերով: Կառավարությունը մի քանի անգամ պաշտոնական բողոքներ է ներկայացրել թուրքաց կառավարությանը, ինչպես նաև գերմանական և ավստրիական միսիաներին ու գերմանական կառավարությանը և միշտ մի պատասխան է ստացել, որ գրավումը ժամանակավոր է: Հոկտեմբերի 5-ին Խալիլ փաշան Երևանում հայտնեց մեզ, որ հրաման է ստացել դատարկել վերոհիշյալ երկրամասերը: Անմիջապես մեր և թուրքաց շտաբները գծեցին գործողության ծրագիրը, որը սկսվեց հոկտեմբերի 18-ին և առանց որևէ միջադեպի շարունակվեց մինչև հոկտեմբերի 21-ը, երբ գիշերվա ժամը 12-ին հեռագիր ստացանք Դրոյից այն մասին, որ «վրացիները վերջնագիր են ներկայացրել՝ դատարկելու համար մեր ստացած շրջանը մինչև Շահալի ու շարժվեցին Քըրբերի վրայով»: Նա խնդրում է կարգադրություն անել: Կառավարությունը որոշեց չընդունել վերջնագիրը, չհանձնել Շահալի կայարանը և զինված ուժի դիմելու պարագային՝ ցույց տալ դիմադրություն*»[108]:

Իրադարձությունները շարունակում էին զարգանալ, սցենարները անընդհատ փոփոխվում էին: Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված դիմումագրում՝ Վրաստանում

հայկական դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Արշակ Ջամալյանը հայտնում էր, որ գեներալ Կրեսը հաղորդագրություն է ստացել այն մասին, որ հայկական պարեկը ժամանել է Վորոնցովկա, որտեղ կալանվել է գերմանացիների կողմից մինչև միջադեպի պարզաբանումը: Գեներալը ինչպես վրացական կառավարությանը, այնպես էլ հայկական ներկայացուցչին հայտնել է, որ գերմանացիները հայերի դեմ ոչինչ հակառակը չունեն, որ հայերը կարող են գրավել վերջին թուրքական դիրքերը, սակայն ոչ մի դեպքում չեն կարող թողնել նրանց վրացա - գերմանական ուժերի կողմից գրավված գծից այն կողմ: Ջամալյանը սույն գրության մեջ հայտնում էր, որ Ֆոն Կրեսը հաղորդել է, որ հայկական պարեկների հայտնվելը Վորոնցովկայում տագնապ է առաջ բերել հայկական հնարավոր ագրեսիվ գործողությունների հանդեպ: Այնուհետև Ջամալյանը տեղեկացնում է իր հանդիպման մասին Վրաստանի մինիստր-նախագահի պաշտոնակատար Գեորգաձեի հետ, որը հայտնել էր Ջամալյանին, որ անհապաղ կկասեցվեն իրենց կողմից ձեռնարկված ռազմական միջոցառումները՝ պայմանով, եթե ստանան հայկական կողմի համաձայնությունը միջադեպի խաղաղ կարգավորման խնդրում: Վերջում Ա. Ջամալյանը տեղեկացնում էր, որ իբր թե տհաճ միջադեպերից խուսափելու նպատակով Թիֆլիսում գտնվող Հայաստանի սեփականությունը հանդիսացող պահեստների պահպանությունը իր վրա է վերցրել Վրաստանի կառավարությունը, իսկ հայկական պահակազորը ուղարկվել է Երևան[109]: Ասել է,թե տենդագին ձևով վրացիների կողմից պատրվակներ և առիթներ էին որոնվում շիկացնելու համար առանց այն էլ արդեն բավականաչափ լարված իրադրությունը, իսկ վերջիններս արտաքուստ հանդես էին գալիս խաղաղասիրական բնույթի առաջարկներով, հաճախ էլ դեմագոգիկ բնույթի հայտարարություններով: Նմանատիպ մոտեցումներում վրացիները վայելում էին գերմանացիների աջակցությունը, որը սակայն ոչ միշտ էր հստակ և հաճախ շփոթության մեջ էր գցում հայկական կողմին: Հոկտեմբերի կեսերին հանդիպելով գեներալ Ֆոն Կրեսի հետ, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը վերջինից պահանջում է պատասխանել այն հարցին, թե ճի՞շտ է արդյոք, որ վրացիները ցանկանում են գրավել Լոռու թուրքերից ազատվող մասը՝ ընդհուպ մինչև Փամբակի որոշ մասերը, նշելով նաև դեպի Սանահին ուղևորված գերմանական զորաջոկատի մասին: Ի տարբերու-

թյուն իր նախորդ հայտարարությունների, Ֆոն Կրեսը այս անգամ ավելի քողարկված պատասխան է տալիս, ասելով, թե իբր անհիմն են այն լուրերը, որ գերմանացիները պետք է աջակցեն վրացիներին իրենց առաջխաղացման մեջ, և եթե վրացիք չուզենան հետևել իրենց խորհուրդներին և մնան առկա սահմաններում, ապա պետք է պարզ լինի, որ գերմանացիները երբեք չեն մասնակցի նրանց այդ ձեռնարկին: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը միամտաբար հավատալով այդ պնդումին, ի պատասխան ասում է, որ դժվար թե գեներալը, որ այդքան աշխատել է Լոռին և Փամբակը թյուրքերից ետ ստանալու համար, որպեսզի դրանք վրացիներին հանձնի: Զրույցի վերջնամասում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը հայտնում է, որ ինքը հավատում է, որ լուրջ խոսակցություններ վերոհիշյալ խնդրի շուրջ Վրաց կառավարության և Գերմանիայի պատգամավորության միջև տեղի չեն ունեցել[110]:

Սակայն հայկական կողմը ակնհայտորեն թյուրիմացության մեջ էր գերմանական հավաստիացման առումով իրենց անկողմնակալության մասին Լոռու խնդրում, ինչը հերքվում է թե՛ նախորդ պնդումներով, և թե՛ իրադարձությունների զարգացման ներքին լարվածության և խորքային երևույթների վերլուծությամբ: Երկակի խաղը գերմանական կողմի քաղաքականությունում ակնբախ էր, ինչը շուտով ակնհայտորեն բացահայտ է դառնում:

Եվ այսպես, ինչպես հոկտեմբերի 23-ի գրությամբ տեղեկացվում է Հայաստանի արտաքին գործերի նախարարին, Հայաստանի դիվանագիտական միսիայի ղեկավար Ա. Ջամալյանը հոկտեմբերի 23-ին հանդիպում է ունենում ինչպես Վրաստանի մինիստր-նախագահին փոխարինող Գեորգաձեի, այնպես էլ Ֆոն Կրեսի (նաև ֆոն Քրես) հետ: Խոսքն անշուշտ, գնում էր Լոռու մասին: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ֆոն Կրեսը խոսելով Եկատերինֆելդի հետ կապված հայկական կողմի աշխուժացման մասին, անհնարին էր համարում, որ առկա (ստեղծված) բարդ քաղաքական հանգամանքներում Հայաստանի կառավարությունը մտադրություն ունենար ընդհարվելու Վրաստանի հետ, ասելով, որ դա «*մի քանի տաքգլուխ սպաների գործ է, կամ թերևս ավանտյուրա է հայկական ծառայության մեջ գտնված ռուս օֆիցերների կողմից, որոնք ուզում էին պղտոր ջրում ձուկ որսալ*»

(ակնհայտ է, որ սակայն թե ուր է ծռում Ֆոն Կրեսը, որը ևս պղտոր ջրում ձուկ որսալու կողմնակից էր, թեկուզև դա վերագրում էր այլոց - Վ.Վ.): Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը Ֆոն Կրեսին հայտնում էր, որ ինքը ստույգ աղբյուրներից տեղեկություն ունի, որ Վրաց կառավարությունը որոշում է կայացրել բռնագրավել ամբողջ Բորչալուի գավառը, ուրեմն և Լոռվա այն մասը, որը թուրքական լծից ազատելու համար զգալի աշխատանք է «թափվել»: Սակայն Ֆոն Կրեսը կասկած է հայտնում, թե ի՞նչ ուժով պիտի իրագործեն վրացիք իրենց որոշումը: Ջամալյանը տալիս է ուղիղ պատասխան, ասելով, որ հույս են դրել գերմանական աջակցության վրա: Ֆոն Կրեսը տալիս է բավականին անորոշ, սակայն ակնհայտորեն պրովոկացիոն պատասխան, ասելով հետևյալը. «*Այդ մասին մի անգամ էլ գրավոր եմ հայտնել, որ ես ոչ մի կերպով չեմ արգելի, որ հայերը գրավեն Թուրքիայից ազատված Լոռին և խորհուրդ եմ տվել Վրաց կառավարությանը, որ նա էլ արգելք չհանդիսանա*»: Այնուհետև ավելացնում է, որ եթե վերջինս իրենց խորհրդին չհետևի և թշնամական գործողություններ սկսի այդ խնդրում Հայաստանի դեմ, ոչ մի աջակցություն չի գտնի գերմանացիների կողմից…, սակայն եթե հայերը դուրս գան նախկին թյուրքական գծից, որպեսզի գրավեն և իրենց՝ գերմանացիների ու վրացիների դիրքերը, ինքը կիրամայի պատերազմական բոլոր միջոցներով դիմադրել: «*Սակայն գտնում եմ*,- ավելացնում է գեներալը,- *որ միանգամայն ցավալի կլինի, որ հենց այստեղ մի փամփուշտ պարպվի, որովհետև ոչ ոք չի կարող նախատեսնել, թե այդ մի հատիկ պայթյունը ներկա հանգամանքներում ինչ հետևանքներ կարող է ունենալ*»[111]: Ֆոն Կրեսը հանդիպման վերջում խաղաղության կոչ է անում: Վրաստանի Հանրապետության մինիստր-նախագահի հետ հանդիպումը ևս ծանր ընթացք է ունենում: Ոգևորված իրենց համար բարենպաստ աշխարհաքաղաքական կացությունից և գերմանական սվինների ակնհայտ աջակցությունից կամ լավագույն դեպքում հայերի նկատմամբ գերմանացիների թշնամական նեյտրալիտետից, վրաց քաղաքագետը հետևյալ մեղադրանքն է ներկայացնում Ջամալյանին. «*Թյուրքերի հետ քաշվելուց հետո հայերը առանց նախազգուշացնելու Վրաց կառավարությանը կամ աշխատելու նրա հետ համաձայնության գալ, մտել են Թիֆլիսի նահանգի սահմանները Լոռվա շրջանում: Տպավորությունն այն է, որ հայերը բռնագրավումների քաղաքականություն են կիրառում՝*

*ինչպես թյուրքերը, փոխանակ համաձայնության քաղաքականության»*[112]: Ջամալյանը որպես պատասխան հայտնում է, որ Լոռին Հայաստանի անկապտելի սեփականությունն է, որ Վրաստանն ինքը պիտի առներ հայերի համաձայնությունը Բորչալուի հայաբնակ վայրերը գրավելու համար, որ դա թշնամական ակտ է Վրաստանի Հանրապետության կողմից[113]:

Բնականաբար,Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է հնարավոր ամեն ինչ աներ պահպանելու համար սեփական տարածքների անվտանգությունը, միաժամանակ տեր կանգներ իր օրինական տարածքների յուրաքանչյուր մասին՝ պաշտպանելով սեփական հպատակների իրավունքները: Ինչպես արձանագրվում է Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական միսիայի օրագրում, արդեն 1918 թ. հոկտեմբերի 21-23-ի վիճակով հայկական զորքերը գրավեցին Լոռիում ոչ միայն տաճիկների թողած գիծը, այլև առաջ անցան դեպի վրաց և գերմանական զորքի բռնած տերիտորիան: Այդ առթիվ հայերը ստացան Վրաց կառավարությունից մի նոտա, որով բողոք էր հայտնվում և պահանջ դրվում մինչև խնդրի խաղաղ լուծումը ետ պահել հայկական զորամասերը Թիֆլիսի նահանգի տարածքը մտնելուց: Միաժամանակ ասվում էր այն մասին, որ Ֆոն Կրեսը խոստացել է, որ գերմանական զորքերը չեզոք դիրքում կմնան, եթե հայերը գրավեն նախկին թուրքական մասը, իսկ եթե արշավեն դեպի վրաց մասը՝ դիմադրություն ցույց կտրվի[114]:

Կարևոր է ընդգծել, որ Հայաստանի կառավարությունը պատերազմելու ծգտում չուներ, և այդ իսկ պատճառով էլ վրացական կառավարության վերջնագրին տվեց հետևյալ պատասխանը (22 հոկտեմբերի, № 5149). «*Թիֆլիս. վարչապետ Ժորդանիային, պատճենը՝ Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանին.*

*Դիլիջանյան զորամասի պետը հայտնում է,որ վրացական հրամանատարությունը նրան վերջնագիր է ներկայացրել ազատել Շահալի կայարանը: Հրամայված է չթողնել կայարանը, իսկ եթե վրացիք հարձակման կանցնեն՝ պաշտպանվել: Խույս տալու համար բարդություններից, որոնք կարող են նոր թշնամություն-ների դուռ բանալ, խնդրում եմ, հանուն պատերազմից տանջված, բզկտված Վրաստանի և Հայաստանի, որոնք տառապել ու տանջվել են պատերազմից հանուն իրավունքի և արդարության, զգուշանալ հարձակողական գործողություններից և պահել վրաց*

*զորքերին նրանց բռնած այժմյան գծի վրա, իսկ սահմանների խնդիրը լուծել խաղաղ համաձայնությամբ:*

*Հիշեցնում եմ Ձեզ Ձեր հանդիսավոր հայտարարությունը հունիսին՝ Նոյ Ռամիշվիլիի և Աիարոնյանի ու Խատիսյանի ներկայությամբ, թե Վրաստանը ոչ մի հավակնություն չունի Լոռիի նկատմամբ և միայն ժամանակավորապես է գրավել այն. վարչապետ Քաջազնունի*»[115]: Վրաստանում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանին հասցեագրված հեռագրում այդ նույն բնագավառի ներկայացուցիչ Արզումանովը նշում էր, որ Շահալի կայարանը ազատելու մասին վրացական նոտան ինքն արդեն հաղորդել է, միաժամանակ տեղեկացնելով, որ զրահագնացքի պետի ուլտիմատումը հանդիսացել է կազուս, և հույս էր հայտնում, որ Թիֆլիսում ամեն ինչ կպարզվի...[116]:

Սակայն ամեն ինչ ապարդյուն էր: Վեհապետական Վրաստանը, հենվելով գերմանական սվինների վրա, փորձում էր Հայաստանի հաշվին ընդարձակվել և դառնալ Կովկասյան տան ամենամեծ սեփականատեր տանտերը՝ օգտվելով բոլոր տեսակի բարիքներից և ճակատագրի, աշխարհագրական դիրքի ընձեռած գեոպոլիտիկ բոլոր առավելություններից. օր օրի նրանց դիրքորոշումն ավելի ու ավելի անկանխատեսելի էր դառնում, հայ-վրացական հարաբերությունները հագենում էին վառոդի լիցքով, որն ամեն պահ պատրաստ էր պայթելու: Վրաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ն. Վ. Ռամիշվիլին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանին ուղարկած 1918 թ. հոկտեմբերի 23-ի գրության (№ 12130) մեջ հայտնում էր (շատ նրբանկատորեն ձևակերպելով ասելիքը - Վ.Վ.), որ «իբր թե» «*Հայաստանի կառավարության նախագահի խնդրանքի համաձայն Վրաստանի զինվորական նախարարությունը հրամայել է վրացական զորքերին մնալ մինչև թուրքերի հեռացումը իրենց կողմից զբաղեցրած Քորինջ - Ծաթեր - Կամենկա գծի վրա ներառյալ և սպասել սահմանների մասին հարցի խաղաղ եղանակով լուծմանը*»: Դրա հետ մեկտեղ վրաց նախարարը բողոքում էր, որ «*հայկական զորքերը շարունակում են ագրեսիվ գործողությունները Վրաստանի դեմ*», և որ «*վրացական կառավարությունը հենց նոր տեղեկություն է ստացել*», որ «*հայկական զորամասերը պահանջել են մաքրել Քորինջը և դրանից հետո հարկադրել են հեռանալ գերմանական պա-*

*հակազորին և զբաղեցրել Քորինջ - Ծաթեր գիծը*»: Վերջում, ամփոփելով ասելիքը, վրաց նախարարը հայտնում էր, որ քննարկելով ստեղծված իրավիճակը, Վրաստանի կառավարությունը հանձնարարել է իրեն տեղյակ պահել Հայաստանի կառավարությանը, որ «*եթե հայկական զորամասերը անհապաղ չմաքրեն Քորինջ - Ծաթեր գիծը կամ այսուհետ էլ Թիֆլիսի նահանգի սահմաններում կգրավեն տարածքի որևիցե նոր մաս, ապա վրացական կառավարությունը դա կհամարի ռազմական գործողությունների սկսում Հայկական Հանրապետության կառավարության կողմից, որի վրա էլ ընկնում է ողջ պատասխանատվությունը՝ երկու կողմերի համար էլ կործանարար հետևանքներով*»[117]: Սակայն շուտով ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որ Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը ինքն իր ուժերով ի վիճակի չի լինում վերը նշված դիմումագիրն ուղարկել սեփական կառավարությանը (կամ էլ հնարավոր է, միայն իրեն հասկանալի նրբին նկատառումներից ելնելով, գտնելով, որ անհրաժեշտություն կա ուղղակի կապ հաստատել կառավարության հետ-Վ.Վ.): Այդ իսկ պատճառով էլ հոկտեմբերի 24-ին (№ 1977) Ա. Ջամալյանը նորից դիմում է Ն. Վ. Ռամիշվիլուն (№ 12130 վրացական դիմումագիր - նոտային ի պատասխան), ասելով, որ Երևանի հետ կապի բացակայության պատճառով ինքը զրկված է Վրաստանի կառավարության նոտան անհապաղ սեփական կառավարությանը ուղարկելու հնարավորությունից, և կարգադրություն անել հենց նույն օրը նոտան ռադիոյով Երևան հաղորդել, դրա հետ մեկտեղ հնարավորություն տալ իր կողմից լիազորված անձանց՝ Մ. Արզումանովի և Շահմազյանի գլխավորությամբ արտակարգ գնացքով մեկնել՝ առաջապահ զորամասերին նոտայի պատճեն հասցնելու համար, այնուհետև հեռագրով այն Երևան հաղորդելու համար[118]: Չնայած այս դժվարություններին, Հայկական կողմը համառորեն ձգտում էր խուսափել իր համար անցանկալի և տհաճ պատերազմի հասունացումից, որը կարող էր աղետալի հետևանքներ ունենալ տնտեսական - քաղաքական առումով: Այդ բանը հստակ երևում է այն հրահանգներից, որոնք տրվում են Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանին Հովհ. Քաջազնունու կողմից ուղարկված 1918 թ. հոկտեմբերի 24-ի գրությամբ (№ 389): Դրանում Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ Հովհ. Քաջազնունին միա-

նըշանակ պնդում էր, որ «ոչ մի ագրեսիվ նպատակներ» իրենք չունեն և չեն արել այդ ուղղությամբ «ոչ մի քայլ»: Հովհ. Քաջազնունին ընդգծում էր, որ Հայկական զորքերի Լոռվա զորաջոկատը «*հրահանգ է ստացել բռնել այն տեղերը և գիծը, որ կդատարկեն տաճիկները, առանց անցնելու այդ գծից*»[119]: Հովհ. Քաջազնունին այդ գրության մեջ անդրադառնալով Քոբեր կիսակայարանի շուրջ ծավալված իրադարձություններին և գերմանացիների հետ ունեցած միջադեպին, նորից շեշտում էր, որ «*Հայկական կառավարությունը մտադրություն չունի զենքի ուժով վճռելու սահմանների վեճը*», քանի որ «*կառավարությունը կանգնած է այն տեսակետի վրա, որ ոչ միայն թյուրքերի դատարկած վայրը, այլև Բօրչալու գավառի ամբողջ հայկական մասը... պատկանելու են Հայաստանին և ոչ Վրաստանին, բայց Հայաստանը իր իրավունքները ցանկանում է պաշտպանել ոչ պատերազմով, այլ բանակցությունների և համաձայնությունների ճանապարհով*»: Շարունակելով իր միտքը, Հովհ. Քաջազնունին Ա. Ջամալյանին հայտնում էր, որ «*մյուս կողմից Հայաստանի կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող ընդառաջել Վրաստանի պահանջը՝ նախ թողնել վրացիներին գրավել զօրքերով ամբողջ Բօրչալու գավառը և ապա սկսել բանակցություններ*»: Հովհ. Քաջազնունին ընդգծում էր, որ Հայկական կառավարությունն արդեն տվել է իր խաղաղասիրության ամենամեծ ապացույցը նրանով, որ վրացիներից չեն պահանջել անմիջապես դատարկելու «*արդէն գրաված հայկական տերիտորիան և պատրաստվելով այդ հարցը բանակցությունների նյութ դարձնել*»[120]: Վերջնամասում Հովհ. Քաջազնունին Ա. Ջամալյանին տեղեկացնում էր, որ «*իրենք համաձայն են, որ վրաց զօրքերը ժամանակավորապես, մինչև բանակցությունների ավարտը մնան Սանահինում և Վորոնցովկայում, պահանջելով, որ սակայն վրացիք այդ սահմաններից առաջ չանցնեն*»: Այնուամենայնիվ, այս բոլորով հանդերձ, Ա. Ջամալյանին հասցեագրված այս չափազանց ուշագրավ նամակագրությունում Հովհ. Քաջազնունին մի կարևոր վերապահում էր անում, ընդգծելով հետևյալը. «*իսկ եթէ վրացիները ուրիշ տեսակետի վրա են, եթէ նրանց տիրապետական ակնկալությունները մղում են իրենց մեր երկրի խօրքը և եթէ մտադրություն ունին դնել մեզ կատարած իրողության առաջ, այլ այն ժամանակ ուրիշ քայլ չի մնա, քանց երբ զենքով պաշտպանիլ մեր իրավունքները և մեր*

*պատիվը: Մենք չենք ուզում պատերազմ. մենք ուզում ենք ամեն կերպ պահպանել մեր բարեկամական հարաբերությունները Վրաստանի հետ... բայց ուզում ենք, որ այն խաղաղասեր և բարեացակամ ընթացքը բանի և Վրաստանը, ուզում ենք, որ նախ ճանաչի և հարգի մեր իրավունքները, և ցույց տալ այդ ոչ միայն հայտարարություններով:*

*Ներկա դեպքում մենք պահանջում ենք, որ Վրաստանը չանցնի այդ գիծը, ուր կանգնած է եղել թուրքերի հանդէպ: Մենք ևս մեր կողմից պարտավորվում ենք չանցնել այդ գծից առաջ և չանցնել այն:*

*Պահանջում ենք, որ ամենակարճ ժամանակամիջոցում հրավիրել կոնֆերանս, կամ գործադրել դրանք՝ արբիտրաժ հայվրացական սահմանների վեճը խաղաղությամբ լուծելու համար: Պատրաստ ենք այսօրվանից մտնել վրացիների հետ բանակցության մեջ այդ կոնֆլիկտը կամ արբիտրաժը հրավիրելու համար»*[121]: Հենց այսպես: Սակայն իրադարձությունների հետագա զարգացման ընթացքը ակնհայտորեն ցույց տվեց, որ այդ ամենը անբավարար էր վրացիների համար: Նրանք ունեին միանգամայն այլ ծրագրեր:

Հերթական քայլերն այդ ուղղությամբ կատարվում են 1918 թ. հոկտեմբերի 24-25-ին: Այսպես, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը Վրաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված 1918 թ. հոկտեմբերի 24-ի դիմումագրում (№ 1388) բողոքում էր վրացական մամուլում հայտնված ռազմական մինիստրի այն կարգադրության կապակցությամբ, որով արգելքներ էին հարուցվում Հայաստանից եկող քաղաքացիների առաջ, վերջիններիս անցագիր չտալով: Ա. Ջամալյանը Վրաստանի իշխանություններից խնդրում էր շտապ պարզաբանումներ մտցնել այդ հարցում, միաժամանակ հայտնելով, թե տարածվու՞մ է արդյոք սույն կարգադրությունը նաև Երևանից եկող հատուկ թղթատարների (սուրհանդակների) վրա, և եթե ոչ, ապա տրվե՞լ է արդյոք համապատասխան կարգադրություն սահմանապահ իշխանություններին[122]: Սակայն վրացիները մտադրություն չունեին կանգ առնելու կես ճանապարհին, և օր օրի վրա ուժեղացնում են ճնշամեխանիզմը, նորանոր հնարքների դիմելով: Այդ մասին մենք տեղեկանում ենք Ա. Ջամալյանի հերթական՝ 1918 թ. հոկտեմբերի 25-ի դիմումագրից (№ 1402)՝

ուղղված Վրաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ն. Վ. Ռամիշվիլուն, որում հայտնըվում էր, որ պետական բանկի Թիֆլիսի գրասենյակում Հայկական կառավարությանը հասանելիք Հայկական բոների ստացման խնդրում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացուցչին գրասենյակի կառավարիչը հայտարարել է, որ Վրաստանի ֆինանսների նախարարության 1918 թվականի հոկտեմբերի 24-ի № 1738 հրահանգի համաձայն, որին հետևել է կառավարության որոշումը, ինքը չի կարող բոները դուրս գրել: Դրան ի պատասխան Ա. Ջամալյանը իրեն թույլ է տալիս հիշեցնելու Վրաստանի ներկայացուցչին, որ դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև ընդհատված չեն, և հետևաբար Վրաստանի կառավարությունը իրավունք չունի արգելք դնելու Հայաստանի կառավարությանը պատկանող գումարի վրա: Վերջում Ա. Ջամալյանը Վրաստանի արտաքին գործերի նախարարից խնդրում էր հաղորդել նման արգելքի մոտիվների մասին Հայաստանի կառավարությանը[123]: Սակայն վըրացական կողմը ամենևին էլ իրեն վատ չզգաց դրանից, և առաջ քաշեց իր սեփական պատճառաբանությունները: Ի պատասխան Ա. Ջամալյանի հոկտեմբերի 25-ի նամակի, Վրաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ն. Ռամիշվիլին իր հոկտեմբերի 26-ի դիմումագրում (№ 4485) հայտնում էր, որ Վըրաստանի կառավարության որոշմամբ ֆինանսների նախարարին հրահանգ է տրվել կասեցնել բոների տրամադրումը մինչև հոկտեմբերի 23-ի իրենց կողմից ուղարկված նոտայի (№ 12130) պատասխանի ստացումը, որը ապահովում էր կոնֆլիկտի խաղաղ հանգուցալուծումը: Ռամիշվիլին հայտնում էր, որ հենց որ իրենք ստանան այդ պատասխանը, այդ ժամանակ անհապաղ կարգադրություն կարվի վերոհիշյալ արգելքը վերացնելու համար[124]:

Իրադարձությունները սակայն զարգացման այլ «տրամաբանություն» ունեին և վրացիները ամենևին էլ չէին պատրաստվում խստորեն հետևել իրենց իսկ կողմից արված հայտարարությունների տառին ու ոգուն: Վրացիները սկսեցին տենդագին զինվորական պատրաստություններ տեսնել, մեծաքանակ զորաջոկատներ կուտակել և պատրվակ որոնել ռազմական առճակատման համար: Նույնիսկ տեղի ունեցան ընդհարումներ, մինչև հու-

կական «լուրջ» պատերազմը, որը բռնկվեց 1918 թ. դեկտեմբերին: Այսպես, զորավար Ցուլուկիձեի հրամանով դեռ հոկտեմբերի 23-ին Գոգվաձեի զրահապատ գնացքը հրանոթներից ռմբակոծեց Շընիխ գյուղը: Այդ կապակցությամբ հոկտեմբերի 23-ին Այրում կայարանից զրահագնացքի պետ Գոգվաձեն հաղորդում է Սանաhին՝ գեներալ Ցուլուկիձեին հետևյալը. «*Ձեր հրամանի համաձայն իմ կողմից զրահագնացքը թողնվել է Շընիխ գյուղի մոտ և հետախույզների խումբ է ուղարկվել գյուղ: Գյուղի մոտ հետախույզները հանդիպել են հակառակորդի հրացանակրակին: Հրաձգությունը շարունակվել է 45 րոպե: Վտանգի պատճառով իմ կողմից հետախույզներին օգնություն է ուղարկվել՝հետևակի մի մասը զրահագնացքի հետ միասին, սակայն տեսնելով, որ հրաձգությունը չի դադարում, ես մի քանի արկ արձակեցի հակառակորդի ուղղությամբ: Պարզվեց, որ Շընիխ գյուղում կանգնած են եղել 25 հեծյալ և 20 մարդ հետևակ: Մեր կողմից կորուստներ չըկան: Այժմ հանգիստ է: Սանրամասները կզեկուցվեն անձամբ: Կապիտան Դիղեբուլիձեի սահմանապահների ջոկատը գրավել է գնդապետ Ջախարիաձեի կողմից նշված դիրքը: Զրահագնացքի պետ Գոգվաձե*»[125]:

Միջադեպի նկատմամբ որոշակի հետաքրքրություն ունեին նաև գերմանացիները: Սակայն ինչպես պարզվում է Ա. Ջամալյանի Երևան ուղարկված մի զեկուցագրից, գերմանացիները կարծես թե չկասկածելով հայերի խաղաղասիրական մտադրությունների մեջ, այնուամենայնիվ ցույց են տվել, թե իբր թե տեղյակ չեն թե ինչպես է վրացական զրահագնացքը հայտնվել Շահալի կայարանի մոտ: Միաժամանակ ըստ Ջամալյանի հաղորդագրության, Ֆոն Կրեսը հավաստիացրել էր, որ վրացիները իբր թե համաձայնություն են տվել Կրեսի ներկայացուցիչներին վիճելի հարցերը լուծել համաձայնեցնող հանձնաժողովի կամ արբիտրաժի միջոցով[126]:

Սակայն այս և այլ կարգի միջամտությունները դեռևս արդյունք չէին տալիս, իսկ ընդհարման վտանգը մնում էր օրակարգում դրված: Քիչ անց, վրացի զինվորների ջոկատը ընդհարում ունեցավ հայ գյուղացիների և այդ շրջանում գտնվող փոքրաքանակ հայկական զորամասի հետ: Անշուշտ, զարմանալի կլիներ, եթե Հայաստանի կառավարությունը և հայ ժողովուրդը, որ գըտնըվում էին ծանր տնտեսական և գեոքաղաքական անհարմար ի-

րավիճակում, սովալլուկ գաղթականների բանակները աչքի առաջ ունենալով անգամ այդ պայմաններում չփորձեցին հակազդել այդ հակահայ քայլերին, տեղյակ չլինեին ռազմական անցուդարձին: Հոկտեմբերի 24-ին ժամը 22-ին գեներալ Սիլիկյանը Ղարաքիլիսայից զինվորական նախարարին ուղարկված հեռագրում նշում է, որ հետախուզության միջոցով պարզվել է, որ մինչև Շուլավեր՝ ձախ տեղամասում վրացիներ չկան, և կամրջի հակառակ կողմում մեր առաջամաս դիրքերը կանգնած են երկաթուղու վըրա: Այնուհետև ասվում էր,որ գերմանացիներն իրենց դիրքերն են դրել և որ նույն օրը տեղամաս է ներկայացել պառլամենտյոր (բանագնաց, սուրհանդակ),որը հայտարարություն է արել, որ վըրացիները ուլտիմատում չեն ներկայացրել, այլ ընդամենը առաջարկել են մաքրել Շահալի կայարանը: «*Վաղը նրանց խնդրանքով*, - ասվում էր վերոհիշյալ հեռագրում, - *նրանց ջոկատի շտաբի պետի հետ բանակցությունների համար Քոլագերան կայարանից մեկնում են Դրոն և փոխգնդապետ Շնեուրը: Մեր ջոկատը առաջամաս զորամասերով գրավում է Շընիխ - Քորինջ - Ծաթեր - Գերգերի - Ջալալօղլի - Նովոպոկրովկա գիծը*»[127]:

Ուշագրավ փաստաթուղթ, որը վկայում է այն մասին, որ վրացիները դեռ բացարձակ վստահություն չունեին իրենց ուժերի նկատմամբ, թե չէ ավելի լկտի կլինեին այդ պահին, և որ հենվելով գերմանական սվինների վրա, փորձում էին ժամանակ շահել զարգացնելու համար իրենց առաջխաղացումը՝ սպասելով ավելի համար պահի: Այդ մասին ակնառու կերպով վկայում է նաև ներքոհիշյալ փաստաթուղթը. այսպես, 1918 թ. հոկտեմբերի 24-ին ժամը 16 անց 30-ին զինվորական նախարարին ուղղված հեռագրում փոխգնդապետ Շնեուրը տեղեկացնում էր հետևյալը. «*Ժամը 15-ի մոտ վրացիների գումարտակը հյուսիսից մոտեցել է Ծաթեր գյուղին: Ռազմական գործողություններ չեն ծավալել... Մնացած ճակատի վրա առանց փոփոխությունների է:Ժամը16-ին Քոբեր կիսակայարանից հարավ կամրջի վրա երևաց Գլխավոր շտաբի գնդապետից, շտաբային մի սպայից և համհարզից բաղկացած վրացական պատգամավորությունը, որը հայտարարեց Դրոյին, որ վրացիները հավակնում են Կամինկա գետի ձախ ափից դեպի հյուսիս ընկած ողջ շրջանին, ինչպես նաև Ծաթեր և Քորինջ գյուղերին, որոնք գրավվել են գերմանացիների, այլ ոչ թե թուրքերի կողմից: Վրաստանի զինվորական նախարարը հրամայել է այդ գյուղերը վրացիների կողմից գրավել: Դրոն հայտա-*

*րարեց, որ կատեգորիկ հրաման է ստացել պահել Նովոպոկրով-կա - Ջալալօղլի - Վեթվենդ - Քոբեր - Քորինջ և մինչև Կուլպ ձգվող ճակատը, որից հետո պատգամավորությունը հեռացավ»*[128]:

Հայկական կողմի խաղաղ զգուշավորությունը ամենևին էլ վրացիների կողմից ըստ էության լուրջ չէր ընդունվում և երբեմն նրանք փորձում էին շոշափել, գտնել հայկական կողմի թույլ կետերը նախահարձակ լինելու համար: Դա դեռ պատերազմ չէր, սակայն կարելի էր համարել պատերազմի նախապատրաստություն, որից Հայաստանը համառորեն խուսափում էր՝ ձգտելով իրավիճակային հարցերի քաղաքական - դիվանագիտական լուծումներ գտնել: Գեներալ Սիլիկյանը հոկտեմբերի 25-ին Դիլիջանից հեռագիր է ուղարկում Հայաստանի զինվորական նախարարին (պատճենը՝ գեներալ Փիրումովին), որում հայտնում էր այն մասին, որ ժամը 18-ին փոխգնդապետ Կորոլկովից տեղեկատվություն է ստացվել, որ նույն օրը ցերեկով վրացիները հարձակում են սկսել Ծաթեր գյուղի վրա, որից հետո սկսվել է փոխհրաձգությունը: Սակայն որոշ ժամանակ անց այն ավարտվել է, հայկական կողմի ոչ մեծ կորուստներով: Այնուհետև ասվում էր, որ պառլամենտյորներ են ուղարկվել վրացիների մոտ, նրանց հայտնելու համար, որ կոնֆլիկտը կարելի է հարթել դիվանագիտական եղանակով[129]:

Եվ այնուամենայնիվ, դա վրացիներին ակնհայտորեն չէր բավարարում, քանի որ վերջիններս այլ կերպ էին մտածում: Ձեռնարկելով լայնածավալ նախապատրաստություններ, վրացիները զգալի ջանքեր էին գործադրում դրա համար հասարակական կարծիքը ընդդեմ հայերի տրամադրելու ուղղությամբ, ավելի ու ավելի սաստկացնելով այդ քաղաքականությունը: Հայկական կառավարությունը իրագործում էր համապատասխան ռազմաքաղաքական գործունեություն, մոբիլիզացնելով իր սուղ միջոցները, հնարավորին չափով աշխատելով հաշվի առնել շրջափակման հնարավոր տարբերակները, որոնց մեջ ընկավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը 1918 - 20-ական թվականների անտանելի ծանր օրերին, երբ ի տարբերություն 1980-ական թվականների վերջերի - 1990-ական թվականներին, չկային օդային և այլ կարգի կամուրջներ, զանազան կոմունիկացիաներ, և ամբողջ հույսը ցամաքային կոմունիկացիաների վրա էր, որոնք գրեթե լիովին վերահսկվում էին Վրաստանի շովինիստների կողմից:

Օր օրի Վրաստանը ավելի ու ավելի զազրելի էր դառնում:

Գեներալ-մայոր Սիլիկյանը զինվորական նախարար Հով-հաննես Հախվերդյանին ուղղված մի գրության մեջ (1918 թ. հոկ-տեմբերի վերջ) տեղեկացնում է. «*Առկա տեղեկությունների համաձայն վրացիները ուժեղացված կերպով հասարակայնությու-նից թաքցնում են Շահալին մաքրելու իրենց ոչ ճիշտ պահանջ-ների մասին և հայերին մեղադրում են ագրեսիվ գործողություն-ների մեջ: Վրացիները գրեթե մի գումարտակ զորուժով հյուսիս-արևելքից մոտեցել են Ծաթեր կայարանին մինչև 200 քայլ, ուր թաքնվել են և խրամատավորվել: Մոտեցվել է ռեզերվը: Հոկտեմ-բերի 24-ին վրացական զորաջոկատի պետ գնդապետ Ջախա-րիածեի հետ Դրոյի և Մ. Արզումանովի ունեցած խոսակցություն-ներից պարզ է դարձել, որ վրացիները Ծաթերի և Քորինջի հանձ-նումը համարում են ընդամենը նախնական զիջում բանակցու-թյուններից առաջ, իսկ առաջիկայում նկատառումներ ունեն Ձա-լալօղլու շրջանի նկատմամբ, որը հավանաբար նրանց կողմից չի գրավվել միայն մեր կողմից թուրքերին արագ փոխարինելու հետևանքով, որին նրանք չեն սպասել: Մ. Արզումանովը տեսել է Վրաստանի զինվորական նախարարի հրահանգը այդ շրջանը գրավելու մասին: Ռազմական հետախուզության ուղարկումը Ձեր հրահանգով կարգադրվել է կանգնեցնել: Մինչև այժմ մեր զորամասերը ոչ մի տեղ առաջխաղացում չեն ունեցել*»[130]: Վե-րոնշյալ տեղեկատվությունը հաստատվում է նաև հայկական պատգամավորության անդամ Արզումանովի Սանահինից Վրաս-տանի մինիստր - նախագահին և ՀՀ դիվանագիտական հավա-տարմատար Ա. Ջամալյանին ուղարկված 1918 թ. հոկտեմբերի 25-ի հեռագրով (№ 895), որում Արզումանովը հայտնում էր, որ ինքը պարզել է Ծաթերի և Քորինջի մասին հարցը, ինչպես նաև բանակցել է նաև գնդապետ Ջախարիածեի հետ, որը հրահանգ ուներ զբաղեցնելու հին գիծը: Արզումանովը խնդրում էր ռազմա-կան գործողություններ չսկսել Ծաթերի և Քորինջի համար մինչև հայկական պատգամավորության ժամանումը Երևան[131]: Պա-տասխան հեռագրերից եւ մեկում (26 հոկտեմբերի,1918թ.)՝ հաս-ցեագրված գեներալ - մայոր Մ. Սիլիկյանին և Դրոյին, զինվորա-կան նախարար գեներալ - մայոր Հախվերդյանը հայտնում էր, որ Վրաստանի մինիստր - նախագահը իրենց հեռագրել է, որ վրա-ցական զորքերին հրամայված է պահել մինչև թուրքերի հեռա-

ցումը զբաղեցրած գիծը, և հենց Քորինջ - Ծաթեր - Կամենկա գետով ներառյալ, միաժամանակ սպասելով հարցի խաղաղ լուծմանը՝ սահմանների մասին փոխադարձ համաձայնության կայացմամբ: Այնուհետև ասվում էր, որ դրա հետ մեկտեղ հայկական զորամասերը գրավել են Ծաթեր - Քորինջը՝ ստիպելով այնտեղից սահմանապահ կայազորին հեռանալ: Վերջնամասում զինվորական նախարարը տեղեկացնում էր, որ իր № 688 հեռագրի և մինիստր - նախագահի հրամանի համաձայն և վրացիների հետ պայմանավորվածության հիման վրա հրամայվում է մաքրել Ծաթերը և Քորինջը, որոնք թուրքերի կողմից չեն զբաղեցվել մինչև վերը մատնանշված գիծը, ինչպես նաև ոչ մի զորամաս առաջ չըքաշել: Հեռագրի վերջում ասվում էր, որ այդ մասին տեղեկացվել է նաև Վրաստանի կառավարությանը[132]: Եվ այսպես, փոխգնդապետ Կորոլկովին ուղղված հոկտեմբերի 26-ի հեռագրում, Դրոն, հիմք ունենալով զինվորական նախարարի հրամանը (№ 905), հրամայում էր հոկտեմբերի 27-ին ժամը 9-ին իրականացնել Քորինջի և Ծաթերի հանձնումը, ավարտելով պահակակետերի փոփոխությունը, այդ մասին ժամանակին տեղեկացնելով վրացական հրամանատարությանը[133]:

Ուշագրավ են այդ ժամանակաշրջանի մյուս հեռագրերը և դիմումագրերը, այլևայլ փաստաթղթերը, որոնց հեղինակները ռազմական ուժերի ղեկավարներն են և արտաքին գործերի նախարարության պաշտոնյաները, և իհարկե՝ մինիստր - նախագահը, որոնց շնորհիվ զգալի հստակություն է մտցվում ուսումնասիրվող հարցում և ավելի ամբողջական, լիարժեք է դառնում Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության անդրանիկ ռազմաքաղաքական քայլերի բացահայտումը հայկական պետականության կայացման, նրա զարգացման համար անհրաժեշտ գեոքաղաքական պայմաններն ապահովելու տեսանկյունից:

Եվս մի կարևոր հավելում վկայում է նորաթուխ պետության ամենևին էլ ոչ ռազմատենչ քաղաքականության և հայկական կառավարության իրական ձգտումների մասին՝ բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ եղանակներով: Զորական նախարարին ուղարկված հաղորդագրության մեջ փոխգնդապետ Շնեուրը հայտնում էր, որ ստացվել է տեղեկություն այն մասին, որ համաձայն նախորդ կարգադրությունների, մեր զորքերի կողմից գրավ-

վել են Շընիխը, Արջիկը, Աղնածորը, իսկ քանի որ այդ գյուղերը ընկած են Թիֆլիսյան նահանգում, ապա մեր զորամասերին հրաման է ուղարկված ետ նահանջել դեպի Կուլպ գյուղի շրջանը, և այդ մասին զգուշացնելով վրացիներին՝ հնարավոր թյուրիմացությունից խուսափելու համար[134]:

Սակայն այս նախազգուշական, զիջողական բնույթի քայլերը ամենևին էլ չեն սթափեցնում շովինիզմի ոգով տոգորված վրաց ղեկավարներին և նրանց ամբարտավան զինվորականությանը, որը ոգևորված Հայաստանի կողմից արվող զիջումներից և չանսալով խոհեմության զգաստամիտ կոչերին, փորձում է դիրքերն ամրապնդել: Այդ մասին է վկայում հետևյալ հեռագիրը, որն ուղարկել է փոխգնդապետ Շնեուրը Հայաստանի արտաքին գործերի նախարարին Դիլիջանից, որում տեղեկացնում է հոկտեմբերի 26-ի իրադարձությունների մասին՝ հենվելով Դրոյից ստացված հաղորդագրության վրա: Դրանում նշվում էր, որ հոկտեմբերի 26-ին ժամը 6-ին վրացիները մի գումարտակով և գնդացիրներով զինված՝ Ծաթերից հարձակում են կատարել մեր սահմանապահ տեղամասի վրա, բացելով գնդացրային և հրացանային կրակ: Այնուհետև այդ նույն տեղեկագրում ասվում էր, որ մեր սահմանաջոկատի անընկճելիության և հմուտ կրակի շնորհիվ վրացական գումարտակը ետ է շպրտվել, և վրացիները փախել են, առգրավվել է 13 ժապավեններով հանդերձ մի գնդացիր և հրացաններ, գերի է վերցվել մի յունկեր և հեծյալ գումարտակի մի զինվոր, մի զինվոր էլ վրացական գնդից: Այնուհետև հաղորդագրության վերջնամասում ասվում էր, որ հայկական կողմից կորուստներ չկան: Հաղորդագրության ամենավերջում փոխգնդապետ Շնեուրը ի հավելումն Դրոյի ուղարկած ինֆորմացիայի, հայտնում էր, որ այդ ամենը տեղի է ունեցել առավոտյան՝ մինչև Ծաթեր - Քորինջը ազատելու մասին հրամանի ստացումը, որն ստացվել է ժամը 15-ին, և անհապաղ տրվել է Դրոյին, և հավաստիացնում, որ այդ գյուղերը կազատագրվեն[135]:

Ինքնին հասկանալի է հայկական զինվորականության, և մասնավորապես թե՛ Դրոյի, և թե՛ փորձված հետախույզ Ալեքսանդըր Շնեուրի մարտավարությունը, որոնք անշուշտ տեղեկացված լինելով խնդրի քաղաքական կարգավորման ուղղությամբ կող-

[5] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

ների ձեռնարկած քայլերին, ճկունորեն կողմնորոշվում էին կոնկրետ իրավիճակներում, և չէին շտապում թե՛ հապճեպ որոշումներ կայացնել, և թե՛ կոնկրետ ռազմական գործողություններ ձեռնարկել՝ խուսափելով իրադարձությունների զարգացման հնարավորին չափով անկանխատեսելի ընթացքից, ձգտելով հայ ժողովրդի ազգային - պետական շահերը չվտանգել, խուսանավելով վրաց-գերմանա-թուրքական մեքենայությունների հորձանուտում:

Հոկտեմբերի 26-ին Գոգվաձեն իր զրահագնացքով անցավ մինչև Այրում և հայ գյուղացիներից պահանջեց ճանաչել Վրաստանի գերապատվությունը: Ավելին, Վրաստանի խորհրդարանում, հոկտեմբերի 26-ի արտակարգ նիստում ելույթ ունենալով, արտաքին գործոց նախարար Նոյ Ռամիշվիլին, անշուշտ, մեղադրելով Հայաստանին ագրեսիայի մեջ, և սպառնալով, որ եթե եա չքաշվի սահմաններից, որպիսին իրենք գրավում էին մինչև թուրքերի հեռանալը, կամ էլ եթե գրավեն Թիֆլիսի նահանգի շրջանակներում որևիցե տարածք, ապա այդ դեպքում Վրաց կառավարությունը դա կհամարի ռազմական գործողությունների սկիզբ հայկական կառավարության կողմից: Բացի այդ, Ն. Ռամիշվիլին արեց հետևյալ հայտարարությունը, որը բառացի մեջբերում ենք. «*Ամեն տեսակ թյուրիմացություն ցրելու համար, հարկավոր եմ համարում հայտարարել, թե մենք Թիֆլիսի նահանգը հայտարարում ենք Վրաստանի անվիճելի տերիտորիան: Ինչպես պատմական, այնպես և դեմոկրատական սկզբունքները պահանջում են Թիֆլիսի նահանգի հարցի այդօրինակ լուծումը, որը և ընդունելի է Վրաց կառավարությանը:*

*Վրաց դեմոկրատական հանրապետական կառավարությունը համաձայն է սահմանային բոլոր վեճերը լուծել խաղաղ համաձայնությամբ, իսկ եթե անհնարին լինի՝ արբիտրաժի միջոցով: Հույս ունենք, որ այս միակ խելացի ուղին ընդունելի կլինի և Հայոց կառավարության կողմից, որով և հնարավոր կլինի ցավալի միջադեպը հարթել և վրաց ու հայ դեմոկրատիան իրենց մեջ ուժ կը գտնեն երաշխիքի համար ապագայում նա միասնական ու համերաշխ աշխատանքի*»[136]:

Հաջորդող ճառով սակայն հանդես եկած զինվորական նախարար Գեորգաձեն վրացական փքուն ամբարտավանությամբ ավելացրեց, թե ինքը «*զենքի ուժով կճնշե ապստամբությունը*»[137]: Վերը նշված հռետորներից ըստ էության չէին տար-

բերվում նաև վրաց սոցիալ - դեմոկրատները, որոնք ազգային հարցում կանգնած էին շովինիստների հետ միևնույն դիրքերում և գտնում էին, որ «*Թիֆլիսի նահանգը իրենից ներկայացնում է Վրաստանի անվիճելի տարածքը*»[138], իսկ հանուն ճնականության կոչ էին անում խաղաղ եղանակներով լուծել կամ էլ ինչպես վրաց սոցիալ - դեմոկրատ Մ. Արսենիձեն էր «նրբանկատորեն» նշում, քողածածկված մտքեր արտահայտելով այն մասին, որ իբր թե «*իրենց կառավարությունը բոլոր միջոցները ձեռնարկել է արյունահեղության դադարեցման համար, ...ցուցաբերելով անսովոր համբերատարություն, նման հանգստություն և տոկունություն է ցույց տվել մեր բանակը*»[139]:Մի այլ «պառլամենտյոր»,սոցիալիստ-հեղափոխական Գոբեչիան կոչ էր անում, որ իրենց բոլորի համար անսովոր այդ դժբախտությունից խուսափելու համար իրենց կառավարությունը իր վրա նախաձեռնություն պետք է վերցնի ստեղծել այնպիսի միջազգային օրգան, որը միջոցներ կգտնի բոլոր հարցերի խաղաղ լուծման համար[140]: Սակայն ոչ բոլորն էին այդպես կարծես թե համեմատաբար «պարզ» ու «խաղաղասիրաբար» մտածում: Պատգամավոր Գոմարթելին իր ելույթն սկսեց ասելով,որ կա մի առած,թե «*որքան ուզում ես գայլին կերակրիր, նրա աչքը միշտ անտառումն է*», ցանկանալով մատնանշել Լոռվա անտառները: Սակայն նա ավելի խորը գնաց, հասնելով բացահայտ վիրավորանքների, բոլոր դժբախտությունների մեջ մեղադրելով «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցությանը: Մասնավորապես իր ելույթում Գոմարթելին շեշտեց. «*Մենք հնարավորություն ունեցանք համոզվելու, թե որպիսի զգացումներ է տածում այդ կուսակցությունը դեպի Վրաստանը... նրանք վարվել են այնպես, ինչպես որ պետք է վարվեին... ես պետք է Ձեզ անկեղծորեն հայտարարեմ, որ Վրաստանի թշնամիների մեջ դաշնակցականները վերջին տեղը չեն բռնում: Եթե դուք դիմում եք հայ դեմոկրատիային, դուք մոռանում եք, որ այդ դեմոկրատիային ղեկավարում է Դաշնակցությունը: Անազնիվ բան է լինել բացարձակ թշնամի, բայց երբ դաշնակցականի սիրտը սև է, նա մեզ ցույց է տալիս սպիտակ ատամները... մենք պետք է ամեն բանի պատրաստ լինենք*»[141]: Ահա այսպես էին վարվում վրաց պառլամենտի պատգամավորները, անարդար մեղադրանքներ ուղղելով իրենց պատմական հայրենիքի իրավունքները պաշտպանելու համար ոտքի կանգնած հայկական

դեմոկրատիայի հասցեին: Սակայն բոլորին գերազանցեց վրաց անկախ ազգային - դեմոկրատ Վեշապելին, որը քողածածկույթ ընտրելով շաբլոն ֆրազները, բառացիորեն արտաբերեց հետևյալը. «*մենք՝ նացիոնալիստներս, հասկանում ենք,թե հայերի քաղաքականությունը ներկա միջադեպում չի սպառնում միայն Լոռու տեսանկյունով, այլ սնվում է հայերի ավելի խոր ազգային գաղափարով: Հայաստանի պատմական ու քաղաքական պայմանները այն աստիճանի աննպաստ են, որ անհնարին են դարձնում իրենց սահմաններում հայկական պետության ստեղծելը: Այդ պատճառով, պետական շինարարության ծանրության կենտրոնը հայերը փոխադրել են իրենց դրամատերերի միլիոնների օգնությամբ Կովկասի սահմանները:*

*Նրանց նպատակն է ձեռք բերել քաղաքական կենտրոն Վրաստանի մայրաքաղաքում, վերածելով այն Հայաստանի մայրաքաղաքի: Այդ պատճառով նրանց բովանդակ քաղաքականությունը այստեղ հանդիսանում է կռվի քաղաքականություն Թիֆլիսի համար*»[142]: Այնուհետև հռետորը նշում է վրացիների մոտ ազգային քաղաքականության բացակայության մասին և խորհուրդ է տալիս *«ավելի ակտիվ քաղաքականություն վարել Ադրբեջանի և լեռնական ժողովուրդների միության հետ բարեկամական հարաբերությունների հաստատման ուղղությամբ, իրենց դարավոր հարևանների հետ ընդդեմ եկվոր տարրերի*»[143]: Հենց այսպես, վրաց պառլամենտի պատգամավորները ոչ միայն հայերին եկվոր էին համարում և անմիջական եզրեր փնտրում ադրբեջանա - թուրքական ազգերի ներկայացուցիչների հետ, որի մասին բացեիբաց այդպես դեկլարատիվ ոչ միայն հայտարարում էին, այլև կոնկրետ քայլերի դիմում թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմական, և թե՛ մասսայական լրատվության միջոցները օգտագործելով:

Ի վերջո, սուր վիճաբանություններից հետո, Վրաստանի պառլամենտը կառավարության զեկուցման հիման վրա ընդունում է բանաձև, որում ասվում էր, որ նա «*համաձայն է ամեն մի վիճելի հարցի խաղաղ լուծման, բայց ոչ ոքի թույլ չի տա խուժել Վրաստանի սահմանները զենքով և սպառնալ մեր ազատությանը*»: Այդ պատճառով էլ պառլամենտը հավանության է տալիս կառավարության ձեռնարկած միջոցներին և անցնում է հերթական գործերին[144]: Խոսքով՝ ամեն ինչ, գործով՝ ոչինչ: Սովորա-

կան վրացական ճոռոմաբանություն՝ վտանգավոր նպատակադրումներով և հակահայկական վառոդալիցքով լի:

Այս սահմանավեճը երկու կողմերի համար էլ հղի էր աղետալի հետևանքներով: Ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը «Armenian review» ամսագրի էջերում ոչ առանց հիմքի նշում է, որ մինչև 1919 թ. աշունը փոխադարձ կախումը նույնապես դարձավ փոխգործողությունների առիթ, և Վրաստանի Սոցիալ - Դեմոկրատական կուսակցության և Դաշնակցության միջև քաղաքական տարաձայնությունները հանգեցրին այդ պետությունների համար առևտրի կորուստին, սահմանների պաշտպանության ծախսերին՝ ընդհանուր վտանգի դեմ երկկողմանի անվտանգության բացակայությամբ, և այդ ամենը ակնհայտ դարձավ, հենց որ նրանց սահմանների մոտ ծավալվեց ռուսական քաղաքական պատերազմը և դաշնակիցները սպառնացին դուրս գալ տարածաշրջանի սահմաններից, և ըստ էության շարունակվեց 1918 թ. մայիսին, որպես վերապրելու ուղի նկատվեց ավելի շատ հեռացումը իրարից, քան համագործակցությունը միմյանց հետ[145]: 1918 թ. աշունը լի էր տագնապով, և երկու հարևան երկրները իներցիայի ուժով, կարծես թե անտես մի ուժով ներքաշվում էին պատերազմական մղձավանջի մեջ:

Ինչպես պարզվում է գեներալ - մայոր Սիլիկյանի 1918 թ. հոկտեմբերի 27-ի հաղորդագրությունից՝ ուղղված զինվորական նախարարին, հոկտեմբերի 27-ին ժամը 3-ին և 5-ին զրահապատ գնացքը միաժամանակյա գնդացրային և հրետանային կրակ է բացել կամրջի մատույցների մոտ, հետևակային զորամասերը հարձակվել են Ծաթերի վրա: Նշվում էր նաև, որ վրացիների հարձակումը ետ է մղվել, նրանք փախել - ցրվել են, զրահապատ գնացքը ետ է քաշվել: Հաղորդագրության մեջ ընդգծվում էր, որ հրետանային կրակ չեն արձակել և վրացական պատվիրակությունը գեներալ - մայոր Կիլտ Տոլուշիձեի գլխավորությամբ Ղարաքիլիսա է ուղևորվել՝ Դրոյի հետ բանակցելու համար: Տեղեկատվությունը Սիլիկյանը ավարտում էր նրանով, որ հայտնում էր, որ ինքը գերի վրացիներին վրացական պատգամավորության խնդրանքով թույլատրել է բաց թողնել և մեկնում է Երևան[146]:

Սակայն վրացիներին զգաստացնելն այնքան էլ հեշտ չէր, և շատ դեպքերում էլ պարզապես անհնարին էր, և սահմանավեճը մնում էր փակուղային վիճակում: Այդ մասին են վկայում հետա-

գա շրջանի իրադարձությունները: Այսպես, Շահալի կայարանի պետը Ղարաքիլիսայի միջոցով հոկտեմբերի 28-ին կառավարությանը հաղորդագրություն է ուղարկում (հոկտեմբերի 27-ի վիճակով) Լոռվա վիճակի մասին, որում տեղեկացնում էր, որ բնակչության և Վրաստանի զորքերի միջև տեղի է ունեցել բախում՝ վերջիններիս կողմից բնակչությունից անասուններ պահանջելու հողի վրա: Այնուհետև ասվում էր, որ գյուղացիները հրաժարվել են անասուն տալ: Դրա հետ մեկտեղ ավելացվում էր, որ բռնախըլման «ցանկության» դեպքում նրանք զինված դիմադրություն են ցույց տվել և վրացական զորքերից խլել 2 գնդացիր: Հայտնվում էր, որ Թիֆլիսից Սանահին՝ ճակատ են ուղարկվել վրացական զորքեր, իսկ հոկտեմբերի 27-ին ուղևորվել է զրահագնացք: Հաղորդագրության վերջնամասում ասվում էր, որ Սանահինից եկած ռուսների տեղեկությունների համաձայն գյուղացիները փակել են 2 զրահագնացքների ետդարձի ճանապարհը, որոնք կտրվել են իրենց զորքերից[147]:

Եվ այդ ամենը վրացիների կողմից ուղեկցվում էր հերյուրանքների հեղեղով Վրաստանի Հանրապետության մամուլի էջերում: Հակահայկական հիստերիան շատ թանձր էր: Այդ կապակցությամբ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը 1918 թ. հոկտեմբերի 29-ին նոտայով (N$^{\underline{o}}$ 1465) դիմում է Ն. Վ. Ռամիշվիլուն: Ա. Ջամալյանը նշված դիմումագրի մեջ շեշտում էր, որ Վրաստանի կառավարության պաշտոնական օրգան «Սաքարթվելո Ռեսպուբլիկայի» վերջին համարներում հայտնվել են մի շարք հոդվածներ, որոնք վերաբերում էին Լոռու շրջանում տեղի ունեցած և ընթացող իրադարձություններին և գրված են ոչ բարեկամական դիրքերից Հայաստանի Հանրապետության նկատմամբ, օգտագործելով այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «*վրացական զորքերը ստիպված են եղել զինված ուժ գործադրել մաքրելու համար մեր (վրացական) տերիտորիան հայկական զորքերից*», և որ «*մենք (վրացիներս) ստիպել ենք հայկական զորքից մաքրել մեր տերիտորիան*», որի համար Ջամալյանի կողմից նշվում են «**Кавказское слово**»-ի 229, 231 համարները: Ավարտելով իր դիվանագիտական դիմումագիրը, Ա. Ջամալյանը այն կարծիքն էր արտահայտում, որ հենց այդ հոդվածների նման տոնով կառավարական օրգանը բնավ չի կարող նպաստել երկու հանրապետությունների միջև առաջ եկած պրոբլեմների և թյուրիմացությունների արագ

լուծմանը, և այդպիսի հոդվածների հրապարակման անցանկալիությունն էր արտահայտում[148]:

Անշուշտ, ուրբաթն ավելի շուտ եկավ, քան շաբաթը, ինչը ցույց տվեցին ապագա ռազմական գործողությունները: Ինչևիցե, մի փաստ ևս էլ ավելի սրեց դրությունը, և վրացիների ռազմատենչ կրքերը էլ ավելի բորբոքեց: Դա հոկտեմբերի 27-ի Վրաստանի արտաքին գործերի նախարար Ն. Վ. Ռամիշվիլու հայտնի դիմումագիրն էր Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնականների կառավարություններին(№ 1500): Այդ փաստաթղթում ընդգծվում էր. «*Համաշխարհային պատերազմը մոտենում է իր ավարտին և կասկած չկա, որ մոտ ապագայում կգա մի պահ, երբ համաշխարհային կոնգրեսում կվճռվեն ընդհանրապես ժողովուրդների ճակատագրերը, և մասնավորապես նախկին Ռուսաստանյան կայսրությունից առանձնացվածներինը: Այդ կոնգրեսին դեմ հանդիման պետք է պատրաստ լինեն հանդես գալու համերաշխ և բարեկամաբար Անդրկովկասի և Կովկասի ժողովուրդները, քանի որ միայն այդ դեպքում նրանց ձայները, որպես փոքր ժողովուրդների և նոր պետական կազմավորումների, կարող են կշիռ և նշանակություն ունենալ:*

*Այդ նկատառումով անհրաժեշտ է, որպեսզի Անդրկովկասի և Կովկասի պետությունների կառավարությունները պայմանավորվեն ինչպես այդպիսի համերաշխ ելույթի, այնպես էլ միմյանց միջև փոխադարձ բարենպաստ բարի դրացիական գոյակցության համար՝ ներծծված փոխադարձ վստահության և պատրաստակամության ոգով՝ մեկը մյուսին օգնության հասնելու համար: Այդ նպատակներով Վրացական Հանրապետության կառավարությունը առաջարկում է Հայկական և Ադրբեջանական Հանրապետությունների կառավարություններին, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի լեռնական ժողովուրդների միության կառավարությանը հավաքվել կոնֆերանսի Թիֆլիսում, նոյեմբերի 3-ին ժամը 12-ին, ցերեկը (նշում. հետագայում Վրացական կառավարությունը կոնֆերանսի հրավիրումը հետաձգեց մինչև նոյեմբերի 10-ը, այդ մասին տեղյակ պահելով Հայաստանի կառավարությանը), արտաքին գործերի մինիստրության շենքում (Երմոլովյան 9), ուղարկելով անհրաժեշտ օրինական լիազորություններով օժտված երկուական ներկայացուցիչ այդ կոնֆերանսին:*

*Ընդ որում Վրացական Հանրապետության կառավարությունը որոշել է կոնֆերանսի լուծմանը դնել հետևյալ հարցերը.*

1. *Կոնֆերանսին հրավիրված պետությունների անկախության փոխադարձ ճանաչում;*
2. *Բոլոր վիճելի հարցերի լուծում, չբացառելով և սահմանների մասին վեճերը՝ շահագրգռված պետությունների համաձայնությամբ, իսկ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում՝ արբիտրաժի միջոցով;*
3. *Փոխադարձ պարտավորություն չմտնելու որևիցե պետության հետ որևիցե համաձայնության մեջ՝ ի վնաս կոնֆերանսին մասնակցող ժողովուրդներից որևիցե մեկի;*
4. *Փոխադարձ աջակցությամբ համերաշխ ելույթ համաշխարհային կոնգրեսում՝ պետությունների անկախության ճանաչման և ընդհանուր շահերի պաշտպանության նպատակներով:*

*Որպես պատասխան խնդրում եմ ինձ նախօրոք տեղյակ պահել»*[149]: Դիմումագիրը ստորագրվել էր Վրաստանի արտաքին գործերի նախարարի պարտականությունները կատարող Ն. Ռամիշվիլու և գրասենյակի դիրեկտոր Լորդկիպանիձեի կողմից, և ինչպես բնութագրում է հենց վրաց գործիչ Զուրաբ Ավալովը, Ռամիշվիլու ստորագրած փաստաթուղթը հիշեցնում էր մի քիչ ներքին գործոց նախարարի շրջաբերական[150]: Իրավացի էր Ա. Ջամալյանը, երբ գրում էր, որ դրա մեջ «*ամենախտացած ձեւով հանդէս էր գալիս վրացական հեգեմոնիայի զգացումը և այդ ըզգացումով պայմանաւորուած արհամարհանքը դէպի հարեւան պետութիւնները...*»[151]: Հարկ է նշել, որ այս դիմումագիրը ըստ էության իրենից հիշեցնում էր յուրահատուկ դիվանագիտական փաստաթուղթ, որի միջոցով Վրաստանը սկսեց ոչ առանց հաջողության մանևրել, ժամանակ շահել, առավել ևս եթե նկատի ունենանք, որ կոնֆերանսի տեղն ու ժամը, ինչպես նաև օրակարգը որոշվել էր առանց հաշվի առնելու մյուս պետությունների կամքը: Սակայն լիովին ակնհայտ էր, և դա դժվար չէր նկատել, որ առաջին հերթին այն նպատակաուղղված էր Հայաստանի դեմ, և վերջինիս մոլորեցնելու նպատակ էր հետապնդում: Ակնհայտ էր նաև, որ քանի որ Կովկասյան լեռնականները և Ադրբեջանը ընդհանուր եզրեր ունեին Վրաստանի հետ, դրանց հնարավոր ռազմաքաղաքական համերաշխումն ընդդեմ Հայաստանի՝ հանուն Կովկասյան տան մեջ իրենց խնդիրների լուծման, բնականաբար հայկական կողմի համար անհասկանալի այս դիմումագիրը կասկածների մեջ գցեց: Միաժամանակ հայկական կողմը փորձեց ո-

րոշ խնդիրներ լուծել՝ հույսը դնելով վրացական կողմի ողջախոհության վրա: 1918 թ. հոկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովի. Քաջազնունին ևս մեկ անգամ դիմելով Վրաստանի Հանրապետության մինիստր - նախագահ պ. Ռամիշվիլուն, ի պատասխան վերջինիս հոկտեմբերի 25-ի երեկոյան Երևանում ստացված (№ 5277) հեռագրի (առանց ամսաթվի և համարի), շեշտում էր, որ «*հայկական զորքերին խիստ հրաման է տրված զբաղեցնել միայն թուրքերի կողմից լքված դիրքերը: Հրամանը կրկնված է: Մասնավորապես, կարգադրություն է արված մաքրել Ծաթեր - Քորինջը, որոնք գրավվել են հավանաբար թյուրիմացաբար կամ պաշտպանության նպատակներով: Բարեհաճե՛ք ձեր կողմից կարգադրություն անել ընդհատել վըրդովեցուցիչ գործողությունները և վրացական զորքերի տագնապ ներշնչող տեղաշարժերը: Սահմանների մասին հարցի խաղաղ լուծման համար առաջարկում եմ հրավիրել Հայ-Վրացական կոնֆերանս*»[152]: Վրացական կողմի համար Հայաստանի նկատմամբ նման ռազմավարությունը կառուցվում էր՝ հաշվի առնելով վերջինիս համար աշխարհաքաղաքական գործոնի բոլոր հնարավոր պլյուսները և մինուսները: Հոկտեմբերի 31-ին որպես պատասխան Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատարը Վրաստանում համապատասխան նոտա է ուղարկում (№ 1488): Դրանում ասվում էր, որ *ի պատասխան հոկտեմբերի 27-ի առաջարկության (№ 1500) ինքը պատիվ ունի իր կողմից հայտնելու, որ նշված առաջարկի պատճենը իր կողմից ուղարկված է սուրհանդակի միջոցով Երևան անհրաժեշտ հրահանգավորումներ ստանալու համար: Հաղորդելով այդ մասին և իմանալով կառավարության մշտընդոլա ձգտումը ամրապնդելու բարեկամական հարաբերությունները հարևան պետությունների, այդ թվում Վրաստանի հետ,-* ընդգծում էր ՀՀ դիվանագիտական հավատարմատարը,- *ինքը վստահություն է հայտնում, որ նաև Վրաստանի կողմից առաջարկված մտքերը կհանդիպեն Հայաստանի կառավարության սկզբունքային լրիվ համակրանքին:* Միաժամանակ ՀՀ դիվանագիտական հավատարմատարը իր պարտքն էր համարում ավելացնել, որ *վրացիների իսկ կողմից առաջադրված գաղափարի հաջող իրագործումը զգալի չափով կշահեր ինչպես կոնֆերանսի առարկայի, այնպես էլ դրա տեղի ու ժամանակի նախօրոք քննարկումից ու բանակցություններից,*

*եթե այդպիսի նախնական քննարկում իրականում տեղ գըտներ*[153]:

Մինչ վերոհիշյալ հեռագրի պատասխանը ստանալը, Ա. Ջամալյանը 1918 թ. հոկտեմբերի 31-ին ևս մի ուշագրավ նոտա (№ 514) է ուղարկում Վրաստանի արտաքին գործերի նախարարի պարտականությունները կատարող Ն. Վ. Ռամիշվիլուն, որում անդրադառնում էր ինչպես Վրաստանի կառավարության հոկտեմբերի 19-ի չարաբաստիկ նոտային, այնպես էլ մինչև հոկտեմբերի 30-ն ընկած անցքերին, ներկայացնելով Հայաստանի կառավարության դիրքորոշումը հայտնի հարցերի վերաբերյալ: Դըրանում մասնավորապես Ա. Ջամալյանի կողմից շեշտվում էր. «*Այս նամակի հիման վրա պատիվ ունեմ Ձեզ տեղ հասցնելու Հայաստանի կառավարության կատեգորիկ հայտարարությունը, որ նա չի ձեռնարկել որևիցե քայլեր, որ կարող էին հիմք տալ ենթադրություն անել իր կողմից որևիցե ագրեսիվ մտադրությունների մասին բարեկամական Վրաստանի նկատմամբ: Հայկական զորքերի Լոռու ջոկատը հրահանգ է ստացել զբաղեցնել թուրքերի կողմից էվակուացված տարածքները, բայց ոչ անցնել նախկինում օտոմանյան զորքերի կողմից զբաղեցրած գիծը: Ոչ մեծ Քոբեր կիսակայարանի գրավման պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ այդ կիսակայարանում չի եղել ոչ գերմանական, ոչ վրացական պահակազոր, և հեռախոսային հայտնի չէր, թե դեմարկացիոն գծի ո՞ր կողմում է գտնվում Քոբերը: Գերմանական սպայի հայտարարությունից տեղեկանալով այն մասին, որ Քոբերը վրացական կողմում է, հեծելապարեկը ետ քաշվեց: Մի այլ ոչ մեծ հեծելապարեկի հայտնվելը Վորոնցովկայում առաջ է եկել այնտեղ գտնվող վրացական և գերմանական զորաջոկատների հրամանատարների հետ բանակցությունների մեջ մտնելու անհրաժեշտությամբ, և բնավ ոչ զավթողական նպատակներով, որն ապացուցվում է Վորոնցովկայում հայտնված մարդկանց քանակով՝ 18 զինվոր մեկ սպայի հետ միասին:*

*Այդ նույն նամակով ինձ տրված հրահանգների համաձայն նույնպես պատիվ ունեմ հայտարարելու, որ իմ կառավարությունը մտադրություն չունի զենքի ուժով լուծել սահմանազատման հարցերը: Հայաստանի կառավարության տեսակետն այնպիսին է, որ ոչ միայն թուրքերի կողմից էվակուացված տարածքները, այլև ընդհանրապես Բորչալուի գավառի հայերով զբաղեցրած ողջ շրջանը պետք է պատկանեն ոչ թե Վրաստանին, այլ Հայաս-*

*տանին: Սակայն իր իրավունքները նշված տարածքների նկատմամբ Հայաստանի կառավարությունը մտադիր է լուծել ոչ թե զենքի, այլ դիվանագիտական առնչությունների և համաձայնության միջոցով: Մյուս կողմից, սակայն Հայաստանի կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող համաձայնվել վրացական կառավարության պահանջի հետ՝ հայկական զորքերից ազատել թուրքերի կողմից զբաղեցրած շրջանը և թույլ տալ ողջ Բորչալուի գավառի գրավումը վրացական զորքերի կողմից մինչև խաղաղ բանակցությունների սկսվելը, ինչպես դա պահանջում է Վրացական կառավարությունը: Հայաստանի կառավարությունը գտնում է, որ չպնդելով վրացական զորքերի կողմից հայկական տարածքների անհապաղ ազատագրման վրա և համաձայնվելով այդ տարածքի մասին հարցը դարձնել բանակցությունների առարկա, նա դրանով իսկ տալիս է իր խաղաղասիրության լավագույն ապացույցը»*[154]:

Ակնհայտ է Հայաստանի Հանրապետության խաղաղասիրական դիրքորոշումը սահմանավեճում և մնացյալ հարցերում, սակայն բացահայտորեն Վրացական կառավարությունը լուրջ ուշադրություն չդարձրեց այս դիմումագրի վրա, շարունակեց օգտագործել անդրկովկասյան ժողովուրդների կոնֆերանս հրավիրելու քողածածկույթը, ներքուստ նախապատրաստվելով իրադարձությունների զարգացման այլ ընթացքի: Այդ մասին է վըկայում Վրաստանի արտաքին գործերի նոր պաշտոնակատար Եվգենի Գեգեչկորու 1918 թ. նոյեմբերի 5-ի նոտան (№ 4599)՝ հասցեագրված Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատարին: Դրանում մի քիչ ավելի ճկունորեն, քան հոկտեմբերի 31-ի տարբերակում, վրացական կողմն արդեն ոչ միայն նշում էր, որ կոնֆերանսում քննարկվող հարցերի ծրագիրն ունի նախնական նախագծի բնույթ, այլև ընդգծվում էր, որ կոնֆերանսի մասնակիցների ցանկության դեպքում նրանք հնարավորություն ունեն քննարկման դնել այլ հարցեր, բացի իրենց կողմից նախագծվածներից: Վերջնամասում նրբանկատորեն սքողելով հակասությունները, Գեգեչկորին փարիսեցիորեն վստահություն էր հայտնում, որ «*գործի շահերը կգերակայեն մաքուր ձևական բնույթի նկատառումների նկատմամբ և Անդրկովկասի բոլոր ժողովուրդների համար այդքան անհրաժեշտ կոնֆերանսը կկայանա*»[155]:

Ինչպես Ռամիշվիլու, այնպես էլ այս դիմումագիրը համապատասխան քննության արժանացավ Հայաստանի խորհրդարանում, ստացավ որոշակի գնահատական և հասարակական արձագանք, որին կանդրադառնանք առանձին:

Սակայն կանխել պատերազմը, չհաջողվեց: Պատերազմի մեքենան շարժվում էր գլխապտույտ արագությամբ, և Կովկասյան նախկին երկու «բարեկամ» ժողովուրդների կանգնեցնում քաղաքական և ռազմական բնույթի նորանոր աղետների ու փորձությունների առաջ: Իրադարձությունները և դեպքերը զարգանում էին անսովոր արագությամբ, ոչ ստանդարտ սցենարով: Դիվանագիտական պայքարը զուգակցվում էր ռազմականի հետ: Մի շարք փորձերը խորհրդաժողովների միջոցով լուծել սահմանային - տարածքային խնդիրները՝ չհաջողվեց:

Պատերազմը նախորդվեց վրացական զորամասերի գործադրած ենիչերիական գործողություններով ու բռնություններով Լոռվա հայկական գյուղերի բնակչության նկատմամբ, որին այնուհետև ավելացավ Ախալքալաքը: 1918 թ. նոյեմբեր - դեկտեմբերի սկզբներին Հայաստանի կառավարությունը բազմիցս գանգատներ ու բողոքներ էր ստանում Վրաստանի իշխանությունների և զորքերի կողմից խաղաղ հայ բնակչության նկատմամբ գործադրված բռնարարքների, ունեցվածքի կողոպուտների մասին: Տեղաբաշխվելով հայկական գյուղերում, վրաց զորաջոկատները կողոպուտի և անհարկի խուզարկությունների էին ենթարկում Լոռվա հայկական գյուղերի և Ախալքալաքի հայերին:

Մի կարևոր նկատառում ևս: Խնդիրը վերաբերում է այն բանին, որ վրաց ղեկավարները առհասարակ շատ լավ էին օգտագործում իրավիճակի ընձեռած բոլոր հնարավորությունները, և իրենց պահում փորձառու եվրոպական դիվանագետների նըման: Այդ մասին է վկայում Ա. Ջամալյանի նոյեմբերի 5-ի հաղորդագրությունը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին: Անգամ 1918 թ. նոյեմբերի սկզբի կրիտիկական օրերին վրաց քաղաքական լիդեր Գեգեչկորին կապված Վրաստանում սպասվելիք մինիստրական կազմի փոփոխման հետ, իրատեսորեն օգտվեց իրավիճակից և Վրաստանում մինիստր-նախագահի պաշտոնը գրավելու նպատակադրումով, անսալով հայերի և վրացիների միջև օրըստօրե շիկացող մթնոլորտը, չհապաղեց դիմել տեղական դաշնակցականների օգնությանը, վերջիններիս նախընտրական խոստումներ տալով՝1) անմիջապես կար-

գադրել փախստականների խնդիրը, 2) կռիվ սկսել վրաց նացիոնալիստական հոսանքների դեմ, 3) արդար ձևով լուծել հայ-վրացական սահմանային խնդիրները՝ հայերի ցանկության համեմատ և հայ - վրացական մերձեցում առաջ բերելով՝ մեկուսացնել Ադրբեջանին: Գեգեչկորին այս պլատֆորմի վրա աշխատելու համար անհրաժեշտ էր համարում,որ 1) Չխենկելին, Ռամիշվիլին և Գեորգաձեն հեռանան նախարարությունից, և որ 2) Դաշնակցությունը իր աջակցությունը խոստանա իրեն, և ժամանակ տվեց մինչև նոյեմբերի 5-ը, ասելով, որ եթե դաշնակցականների կողմից բացասական վերաբերմունք լինի դեպի ինքը և իր պլատֆորմը, ապա ինքը չի ստանա մինիստր - նախագահի պաշտոնը[156]: Շատ ուշագրավ մի փաստաթուղթ, որն ակնառու կերպով վկայում է վրացիների փարիսեցիական օգտապաշտական վերաբերմունքի մասին դեպի հայերը, որը ևս կարելի է հասկանալ՝ ելնելով Վրաստանի շահերից:

Ամեն ինչ հարմարեցվում էր Վրաստանի վեհապետական շահերին: Վրացական իշխանությունները նոյեմբերի սկզբներին չափազանց լարված վիճակ ստեղծեցին՝ կապված Հայաստանի դիվանագիտական միսիայի աշխատակիցների Թիֆլիսում ծավալած գործունեության, ինչպես նաև Վրաստանի մայրաքաղաքում գտնվող հայկական կորպուսին պատկանող ունեցվածքի ճակատագրի տնօրինման հետ: 1918 թ. նոյեմբերի 3-ին Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը բողոքագրով դիմելով Վրաստանի արտաքին գործերի մինիստրին, հայտնում էր, որ վրացական հատուկ ջոկատի աշխատակիցները, չնայած բողոքներին, խուզարկություն են կատարել գնդապետ Դոլուխանովի մոտ, որը գտնվելիս է եղել Հայաստանի դիվանագիտական միսիայի կազմում, որին վրացիները ապօրինաբար ձերբակալելով տարել են հատուկ ջոկատի շենք: Բացի այդ, հայտնվում էր, որ այդ ընթացքում վերջինիս հարցաքննել են որպես վկա՝ կապված Քսանկա կայարանի մոտ տեղի ունեցած պայթյունի հետ, որից հետո նոր բաց են թողել[157]:

Անշուշտ, սա պատրվակ էր ավելի խոշորամասշտաբ հակահայկական գործողությունների համար: Վրացիները ոտնձգություն են կատարում Թիֆլիսում գտնվող հայկական ունեցվածքի պահեստների նկատմամբ: Այդ կապակցությամբ Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը նոյեմբերի 4-ի իր բողոքա-

գրում՝ ուղղված Վրաստանի արտաքին գործերի մինիստրին, նըշում էր այն մասին, որ Հայաստանի Հանրապետության ունեցվածքը պահպանող շինությունում (Մանթաշովի տանը) հայտնվելով Թիֆլիսի պահակազորի պետ գեներալ Աիմեդելովը պահանջել է անհապաղ հանձնել պահեստում գտնվող ողջ ունեցվածքը, ընդ որում վկայակոչելով Վրաստանի Հանրապետության կառավարության ինչ-որ կարգադրություն: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը հայտնում էր, որ գնդապետ Դոլուխանովի միջոցով հայտարարություն է արվել, որ Վրաստանի արտաքին գործերի նախարարության կողմից ոչ մի հարաբերություն այդ առիթով ՀՀ դիվանագիտական միսիայի հետ չի եղել, հետևաբար պահեստները չեն կարող բացվել[158]:

Վրաստանի իշխանությունները նորանոր քայլերի են դիմում, ձեռնարկելով հայ բնակչության զինաթափում և այլ ապօրինի գործողություններ: Վրաստանի արտաքին գործերի մինիստրի պարտականությունները կատարող Գեգեչկորին 1918թ. նոյեմբերի 8-ի գրությամբ ի պատասխան Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի 1918 թ. նոյեմբերի 4-ի նոտայի հայտնում էր, որ անվտանգության ապահովման նպատակով, խուսափելու համար դժբախտ պատահարներից կապված քաղաքի կենտրոնում գտնվող զինամթերքի պահեստների և զինվորական հանդերձանքի հետ, Վրաստանի կառավարությունը որոշել է Մանթաշովի տանը պահպանվող և հայկական զորամասերին պատկանող ունեցվածքը տեղափոխել քաղաքից դուրս: Միաժամանակ ասվում էր, որ իբր թե հաշվի առնելով հայկական կողմի խնդրանքը, այդ հրամանի կատարումը կասեցվել է: Պահանջվում էր <u>ամենա ոչ կարճ</u> ժամանակամիջոցում հաղորդել, թե երբ հատկապես կարող են ձեռնամուխ լինել իրենց ունեցվածքի դուրս բերմանը Մանթաշովի տնից դեպի զինանոց (կամ էլ զինապահեստ), որոնց ցուցակները կընդունվեն Վրաստանի կառավարության կողմից ի պահպանություն[159]: Հասկանալի է թե ինչ խոչընդոտներ էր հարուցում Վրաստանը և ինչ նպատակներով: Վըրացիները քայլ առ քայլ խորացնում էին տագնապը հայ - վրացական հարաբերություններում: 1918 թ. նոյեմբերի 8-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարի պարտականությունները կատարող Ե. Գեգեչկորին ի պատասխան Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի նոյեմբերի 2-ի և 5-ի բողոքի նո-

տաների, նշում էր, որ 1) կառավարության որոշումը Թիֆլիսի բնակչության զինաթափման մասին տարածվում է նաև հայերի վրա, բացառությամբ Թիֆլիսում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի կազմում գտնվողների, 2) Հայկական հրետանային դիվիզիաների 2 անձնակազմերի 2 մարտկոցների ունեցվածքի պահպանությունը զինվորական նախարարությունն իր վրա է վերցնում, 3) նշված մարտկոցների ծառայակազմը անհապաղ պետք է ուղարկվի Հայաստան, որոնց հետ միասին կարող են տարվել և ձիերը, ընդ որում հրետանավորները Թիֆլիսում զենք կրելու իրավունքից չեն օգտվում[160]:

Հենց այսպես վրացիները ուժեղացնում էին ճնշումը, յուրահատուկ ներքին բլոկադա կազմակերպելով հայերի և Հայաստանի շուրջ: Թեկուզև արդեն այդ մասին վերն ասել ենք, այդ ամենի համար որոշակի հիմք ունեին, կապված հատկապես հայկական զինվորականության զենքի ու զինամթերքի առկայության հետ Վրաստանի սրտում՝ Թիֆլիսում: Սակայն դա նաև պատրվակ էր, որից վրացիները հրաշալի օգտվում էին: Այդ նույն Գեգեչկորին ի պատասխան նոյեմբերի 6-ի Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի հերթական նոտայի, նոյեմբերի 8-ին հաղորդում էր, որ Վրաստանի կառավարությունը ներկա պահին հնարավոր չի գտնում թույլատրել հայկական զորամասերի զինվորական հանդերձանքի և ռազմամթերքի դուրս բերումը Թիֆլիսից Երևան՝ Բորչալուի գավառի ռազմական վիճակում գտնվելու կապակցությամբ: Միաժամանակ Գեգեչկորին արձանագրում էր, որ անհրաժեշտություն է առաջացել անհապաղ շտապ քաղաքից դուրս բերել հայկական զորամասերին պատկանող զինվորական հանդերձանքը և ռազմամթերքը, որը պահպանվում էր Մանթաշովի քարվանսարայում և ուրիշ պահեստներում, խնդրում էր ներկայացուցիչ գործուղել հետ՝ պարետային ծառայության հետ, բանակցությունների համար. այդ հարցի վերաբերյալ Թիֆլիսի կայազորի պետ, զինվորական նախարարության ներկայացուցիչ գեներալ-մայոր Ահմեդելաշվիլու հետ բանակցելու համար[161]:

Որոշ հակաքայլեր հայկական կողմը փորձեց ձեռնարկել, և սակայն էական արդյունքների չհասավ: Նոյեմբերի 8-ին Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը դիմելով Վրաստանի արտաքին գործերի մինիստրին, նշում էր, որ իր կողմից արդեն կարգադրություն է արվել ռազմամթերքի (ռումբեր, փամ-

փուշտներ, ծեռքի նռնակներ և տարբեր տեսակի պայթուցիկ նյութեր և իրեր) տեղափոխության նպատակով միսիայի համար հատկացված քաղաքից դուրս գտնվող շինություն: Միաժամանակ Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը խընդրում էր չմերժել շտապ կարգադրություն անել թույլատրելու համար ողջ ունեցվածքը տեղափոխել Հայաստան[162]:

Սակայն վրացական իշխանությունները մտադիր չէին այդ մտքի հետ համակերպվել և ադեկվատ քայլեր ձեռնարկել, որը չէր համապատասխանում իրենց շահերին: 1918 թ. նոյեմբերի 8-ի գրության մեջ՝ ուղղված Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը, Ջամալյանը տեղեկացնում էր իր հանդիպման մասին Գեգեչկորու հետ, որին ինքը տեղյակ էր պահել երկաթուղային երթևեկության հետ կապված վերջին գնացքների ապահովության հարցի մասին, ինչպես նաև խնդրել միջոցներ ձեռք առնելու Սանահինում պահեստավորված Հայաստանին պատկանող ապրանքները թալանի չենթարկելու վերաբերյալ[163]: Նույն օրերին Ջամալյանը Վրաստանի արտաքին գործերի մինիստրին ուղղված մի այլ գրության մեջ բողոքում էր հայկական սպաների կողմից զենք կրելու իրավունքի արգելման հարցի հետ կապված[164]:

Վրացիների ոտնձգությունները ավելի ու ավելի սանձարձակ էին դառնում: Այսպես, 1918 թ. նոյեմբերի 9-ին Վրաստանի Հանրապետության հաղորդակցության ճանապարհների մինիստրը տեղեկացնում էր Վրաստանի Հանրապետությունում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին այն մասին, որ ինքը տեղեկացվել է, որ զինվորական նախարարի կարգադրության համաձայն, Վրացական երկաթուղագծի հարավային ճյուղը ռազմական դրության մեջ հայտարարելու կապակցությամբ, ոչ մի գնացք, բացառությամբ օտոմանյան կառավարության շարժակազմերի, չպետք է բաց թողնվի Շահալի կայարանից հարավ: Դա նկատի ունենալով, ավելացնում էր վրաց մինիստրը, երևանյան գնացքները պետք է առաջիկայում բաց թողնվեն Թիֆլիսից՝ միայն մինչև Շահալի կայարանը, ուր պետք է տրվի Հայկական երկաթուղու շարժակազմը ուղևորների տեղափոխման և բեռների վերաբեռնման համար[165]:

Ահա այսպես վրացիներն ուժեղացնում էին տնտեսական և ռազմական ճնշամիջոցները Հայաստանի դեմ, սանձարձակու-

թյուններ կատարելով հայտնի տարածքների հայկական բնակավայրերում: Վրացական իշխանությունները 1918թ. նոյեմբերի ըսկըզբներին Բորչալուի գավառի սահմաններում տեղաբաշխված զինվորական ջոկատների միջոցով ամեն կերպ և ամեն տեսակի բռնություններ էին գործադրում արդեն Շուլավեր բնակավայրում:Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը բողոքի նոտայով դիմելով Վրաստանի Հանրապետության արտաքին գործերի մինիստր Ե. Պ. Գեգեչկորուն (9 նոյեմբերի, 1918 թ., № 1689 գրություն) վրդովմունքով նկատում է. «*Շուլավերին ներկա պահին շրջապատված է զինվորական ջոկատով, որը ռմբակոծման սպառնալիքի տակ պահանջում է անհապաղ իրեն հանձնել երկու հազար հրացան, վեց գնդացիր, երեք հազար ռումբ և վեց հարյուր ատրճանակ... Սկզբնապես թուրքական, ապա գերմանական և վրացական իշխանությունների կողմից իրականացված կրկնակի զինաթափումներից հետո, բնակչությունը հնարավորություն չունենալով կատարելու այդ պահանջը, խուճապահար սպասում է ռմբակոծման: Ես ավելորդ եմ համարում մատնանշել, թե ինչպիսի տխուր հետևանքներ կարող է ունենալ Բորչալուի հայկական բնակչության նկատմամբ վրացական իշխանությունների թշնամական վերաբերմունքը երկու եղբայրական ժողովուրդների խաղաղ գոյակցության համար, հատկապես նկատի ունենալով մոտակայքում տեղաբաշխված հայկական զորամասերին, որոնք նույնիսկ առանց Հայաստանի կառավարության կամքի կարող են ներգրավվել անցանկալի բախման մեջ*»: Նոտայում հույս էր հայտնվում, որ դա նկատի ունենալով, «*ամենաանհապաղ միջոցները կձեռնարկվեն վերացնելու լուրջ բարդություններ սպառնացող Շուլավերյան միջադեպը տեղական վրացական իշխանությունների և հայկական բընակչության միջև նորմալ հարաբերություններ հաստատելու համար*»[166]:

Ըստ երևույթին հենց այս տագնապալի իրողություններից ելնելով, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը 1918 թ. նոյեմբերի 11-ին գրում էր,որ «*վըրացիք արդեն միջոցներ են ձեռք առնում, որպեսզի գրավեն Ախալցխան և Ախալքալաքը, հենց որ թուրքերը հեռանան: Այսպիսով, վրաց կառավարությունը, որ այս ամբողջ ամիսների ընթացքում ոչ միայն չէր ուզում Ախալքալաքի հայ ժողովրդին տերություն անհիլ, այլև դիտավորյալ թե անդիտավորյալ կերպով հյու-*

*ծում էր և մաշում նրանց Ծալկայում, Բակուրիանում, այլև համ-դես է գալիս Ախալքալաքի տիրող դերում»*[167]: Իր այս մտքերը Ա. Ջամալյանը ավարտում է ըստ էության կարևոր եզրահանգումով. «*...հրամանագրել Դրօյին, որ Լոռվա շրջանի մեր այն գյուղերը, որ գերմանացիք արդեն թողել են, գրավվի հայկական զօրքով, մինչև իսկ այստեղ վրացիներ կան... Այսպիսով, կստեղծվի զին-վորական գրավում, որ պետք է պահպանվի մինչև որ վրացիք կը-համճին մեզ հետ բանակցել այս ու մնացած սահմանների խնդիրը կարգադրելու համար: ...Պետք է համաձայնության գալ Խալիլ փաշայի հետ, որ նա ի կատարումն իր բարեկամական խոստում-ների իր զօրքերը յետ քաշելու դեպքում նախազգուշացնի մեզ, որպեսզի մեր երկիրը ուրիշների ձեռքը չընկնի*»[168]: Անշուշտ, լիո-վին ընբռնելի է Ա. Ջամալյանի այս տագնապը, և նրա խորհուր-դը՝ միջոցներ ձեռք առնել: Սակայն արդեն ասվել է, որ ամեն ինչ չէ, որ հայերից էր կախված կամ Հայաստանի կառավարության չափազանց խելացի և նպատակահարմար գործողություններից: Աշխարհաքաղաքական իրավիճակն այնքան էր բարդ ու խճըճ-ված, որ իրադարձությունների այդ գլխապտույտ փոփոխվող ըն-թացքում դժվար էր ճիշտ կողմնորոշվել և իրատեսական որոշում-ներ կայացնել: Մյուս կողմից ակնհայտ էր թուրքական կողմի եր-կակի խաղը, որի հետ հայկական լիդերները որոշակիորեն ավե-լորդ հույսեր էին կապում, առանց խորապես ըմբռնելու, որ թուր-քերին Անդրկովկասում այլ նպատակներ էին հետաքրքրում և որ Կովկասյան տան իրենց հարցադրման մեջ հայերին նրանք ամե-նաերկրորդական դերն ու տեղն էին հատկացնում: Դեռ 1918 թը-վականի հոկտեմբերի 5-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղարկված գրության մեջ Ա. Ջամալյանը նրբորեն այն միտքն էր արտահայտում, որ իբր թե «*թիւրք սպաներից մեկը հաղորդել է մերոնցից մեկին, թե թիւրքերը պաշտոնապես պետք է հայտնեն, թե գնում են, սակայն փաստորեն պիտի մնան այն-տեղ*»[169]: Ուշագրավ միտք: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ նմանատիպ վերաբերմունքից բխում էր, որ պետք է ոգևորվեին և նախահարձակ գործողությունների դիմեին վրացիները, միևնույն ժամանակ մշակելով զանազան պահեստային տարբերակներ: Ստորև կբերենք ևս մեկ փաստաթուղթ, որն ապացուցում է, որ վրացիները շատ լրջորեն էին վերաբերվում անդրկովկասյան տան ներսում տեղի ունեցող անցուդարձին, և որ զիջումների

պարագայում էլ ձգտում էին զիջել այն, ինչ չէր կարելի պահել կամ որևիցե միջոցով կարելի էր մանևրել: Մի շարք փորձեր էլ նորից կատարվեցին խորհրդաժողովների միջոցով լուծել հարցը: Հայաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչին ուղարկված նոտայում Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը սկզբունքորեն ընդունելով խորհրդաժողովի գաղափարը՝ անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, Հայաստանի կառավարության անունից անհրաժեշտ էր համարում մտնելու բանակցությունների մեջ Վրաստանի կառավարության հետ՝ պարզելու համար ինչպես խորհրդաժողովի ժամանակը և տեղը, այնպես էլ զբաղմունքների կազմը և ծրագրերը:*Իսկ ինչ վերաբերում է երկու հանրապետությունների միջև պետական սահմանների հաստատման հարցին, ապա այն պետք է արտահայտվի երկու հանրապետությունների փոխադարձ համաձայնությամբ մինչև նշված խորհրդաժողովի հրավիրումը*,- շեշտում էր Ս. Տիգրանյանը[170]:

Ցանկալի արձագանքը վրացական կողմից չստացվեց: Պարզապես վրացական իշխանություններն ունեին իրենց գործողությունների ծրագիրը և իրենց սցենարը, որով էլ առաջնորդվում էին, տարածքային հարցերում ավելի ու ավելի անզիջում և համառ դառնալով: Նույնիսկ այդ ծանր պահերին Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձում էր հարցը լուծել խաղաղասիրական դիրքերից: ՀՀ Նախարարների խորհուրդը, 1918 թվականի նոյեմբերի 11-ին լսելով արտաքին գործերի նախարարի զեկուցումը հայ - վրացական սահմանի հաստատման շուրջ վարվող բանակցությունների վերաբերյալ, որոշում ընդունեց հանձնարարել արտաքին գործերի նախարարին Վրաստանի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարել վերաբաժանման շրջանակներում[171]:

1918 թ. նոյեմբերի 14-ին Կ. Պոլսից վերադարձող Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը (Ա. Ահարոնյան, Մ. Պապաջանյան, Ալ. Խատիսյան, զինվորական խորհրդական Կորգանով) հասնում է Թիֆլիս, ուր խորհրդակցություն է ունենում վրացական կառավարության հետ, որը պահանջում էր Վրաստանին զիջել Ախալքալաքի և Բորչալուի գավառները այն պատրվակով, իբր թե հայերը պետք է ստանան Թուրքահայաստանի վեց վիլայեթները ևս, հետևաբար հողի կարիք չպետք է ու-

նենան[172]: Հրաշալի դեմագոգիա, աներեսություն՝ նպատակին ամեն գնով հասնելու խնդրում:

1918 թ. նոյեմբերի 15-ին Նախարարների խորհրդի նիստը հայտնում է, որ համաձայն արտաքին գործոց նախարարի հաղորդագրության տաճկական 9-րդ բանակի հրամանատար Շէվքի փաշան առաջարկել է կազմել հայ - վրացա - թուրքական խառը հանձնաժողով էվակուացիայի և կառավարելու ձևի հարցերը լուծելու այն շրջաններում, որոնք գրավված են տաճկական զորքերով և պետք է դատարկվեն: Այդ կապակցությամբ Նախարարների խորհուրդը որոշում է ընդունում համաձայնվել քննության նյութ դարձնելու միայն բնակչության թողած տերիտորիան վերադառնալու կարգի խնդիրը և չշոշափել էվակուացիայի հարցը, ընդունելով այն արդեն որոշված, ինչպես և կառավարելու ձևի հարցը, որը մտնում է միայն Հայաստանի կառավարության իրավասության սահմանների մեջ և այն պայմանով, որ հանձնաժողովին պետք է մասնակցեն միայն հայերը և թուրքերը, առանց վրացիների մասնակցության, ընդսմին ցանկալի համարել, որ հանձնաժողովի զբաղմունքները կատարվեն Երևանում, և ոչ թե Ալեքսանդրապոլում[173]: Այս շատ ուշագրավ փաստաթղթից պարզ է դառնում, թե ինչպիսի խառնաշփոթ էին ցանկանում ստեղծել թուրքերը գոյություն ունեցող աշխարհաքաղաքական իրավիճակում՝ իրար դեմ հանելով հայերին և վրացիներին, ինչից հայկական կողմը համառորեն փորձում էր խուսափել, և որը դժվարին խնդիր էր: Վրացական կողմին թուրքական մոտեցումը ձեռնտու էր, և նման իրավիճակում վրացիներն ամեն ինչ անում էին, որպեսզի հայ - վրացական սահմանակնճիռը իրենց օգտին վճռեն, ցինիկաբար խաղարկելով հայ ժողովրդի համար ստեղծված տնտեսական ծանրագույն իրավիճակի խաղաքարտը: Հայաստանում Վրաստանի դիվանագիտական հավատարմատար Մդիվանուն ուղարկված 1918 թ. նոյեմբերի 18-ի հեռագրում(№ 3035) արտաքին գործերի նախարար Գեգեչկորին հաղորդում էր, որ նախորդ օրը կառավարության կողմից լսվել է իր զեկույցը Հայաստանի հետ փոխհարաբերությունների մասին: Գեգեչկորին հայտնում էր, որ իր տեսակետը հավանության է արժանացել, և հանգում է նրան, որ <u>տարածքային սահմանազատման հարցում վրացիները միանգամայն որոշակի իմաստով կանգնած են իրենց օգտին պահելու «*Ախալքալաքի գավառը, զիջումներ անելով Լո-*</u>

*ռու տեղամասում*»: Այնուհետև Ե. Պ. Գեգեչկորին ասում էր, որ իրենք եռանդուն կերպով պաշտպանում են Թուրքիայի և հնարավորին չափով Ադրբեջանի շրջանակներում նրանց (ասել է թե հայերի - Վ.Վ.) տերիտորիայի ընդարձակվելը: Այնուհետև,տվյալ հաղորդագրության մեջ գոհունակություն էր արտահայտվում վրացա - ադրբեջանական փոխհարաբերություններից և դրանք բավարար համարում: Հարկ է սակայն ընդգծել, որ հաղորդագրության վերջնամասում Գեգեչկորին Մդիվանուն հայտնում էր. «*Հայաստանի մի քանի ոչ պատասխանատու քաղաքագետների հաշվարկները ամենայն հավանականությամբ չեն արդարանա: Անգլիան մուսուլմանության հետ չի վիճի*», և որպես ապացույց Գեգեչկորին շեշտում էր անգլիական զորքերի Բաքու ժամանելու մասին, և թուրքական ու գերմանական զինվորական ուժերի հեռացման մասին: Գեգեչկորին եզրափակում էր դիմումագիրը նրանով, որ Մդիվանուն խորհուրդ էր տալիս ծգտել գործել փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծման ոգով, մի դույզն իսկ չանտեսելով սեփական շահերը: Ի վերջո, հետաքրքիր է նաև նըշել, որ Գեգեչկորին խորհուրդ էր տալիս մասնակցել Կարճիկյանի հուղարկավորությանը և այդ ոգով ճառ արտասանել[174]:

Ակնհայտ էր, որ վրացական կողմն արդեն իր քաղաքական գործողությունների որոշակի պլանն էր իրագործում և դրանով էր առաջնորդվում՝ ծգտելով հնարավորին հաշվի չառնել հայկական կողմի պահանջները: Բնականաբար, Հայաստանի իշխանությունների վերը նշված բազմաթիվ բողոքագրերն ու դիվանագիտական նոտաները ցանկալի ազդեցություն չէին թողնում Վրաստանի կառավարության վարքագծի ու գործողությունների վրա: Այդ մասին է ցայտունորեն վկայում ՀՀ Նախարարների խորհրդի 1918 թ. նոյեմբերի 19-ի նիստի որոշումը. դրանում լսելով մինիստր - նախագահի զեկուցումը Ախալքալաքի գավառը զորամասեր մտցնելու մասին, որոշում է ընդունում այդ հարցի մասին նորից խորհրդակցել Հայաստանի խորհրդի ֆրակցիաների հետ[175], ինչը վկայում է Հայաստանի կառավարության միանգամայն խաղաղասիրական ծգտումների մասին:

Առանձնապես վրդովեցուցիչ էր վրացիների քաղաքականությունը հայկական Ուզունլար (Օձուն) գյուղի նկատմամբ, որի

մասին տեղեկանում ենք Բորչալուի գավառի գեներալ - նահանգապետ Ցուլուկիձեին ուղղված Մանգլիսյան Սահմանապահ ջոկատի երրորդ (3-րդ) Վորոնցովկայի բաժնի վրաց զորքերի հրամանատար գնդապետ Ռամազովի 1918 թ. նոյեմբերի 21-ի զեկուցագրից, որում ասվում էր ուղղակի հետևյալը. «*Հաղորդում եմ Ձեզ, որ այսօր, ժամը 15-ին, հրացանաձգություն էր լսվում Ուզունլար գյուղի ուղղությամբ: Ես ուղարկեցի պարեկներ պրոււչիկ Շուբլաձեի հետ հետախուզելու, թե ինչումն է բանը: Շուբլաձեի երևալով հրացանաձգությունը դադարեցվում է: Պարզվեց, որ պահակային հարյուրյակի զինվորները և Ուզունլար գյուղի բնակիչները հրացանաձգության են բռնվել միմյանց հետ, որի ժամանակ սպանվել է ուզունլարյան միլիցիոները և վիրավորվել է ձին, զինվորների կողմից սաստիկ ծեծ է կերել գյուղի կոմիսարը: Պատմածներից երևում է, որ հարյուրյակի զինվորները մեղավոր են եղել, բայց հանդուգն, բացահայտ և զինված ելույթը մարտական շղթայաշարերով առիթ է տալիս մտածելու, որ գյուղում շատ զենք կա: Անհրաժեշտ է խուզարկություն կատարել գյուղի բոլոր տներում և միաժամանակ հարկավոր է այստեղից հեռացնել երկու հարյուրյակներին էլ, և փոխարինել դրանք ուրիշ զորամասերով, քանի որ զինվորները սաստիկ սանձարձակ են դարձել և իրենց կողոպուտներով հուզում են տեղական բնակչությանը: Վաղը, իրադրությունը պարզելու համար և գյուղացիների ցանկությամբ մտադիր եմ Ուզունլարում տեղակայել ուզունլարյան սահմանապահ տեղամասի անձնակազմին և նշանակել այդ գյուղի պարետ տեղամասի պետին*»[176]: Սակայն այդ քայլը ևս խաղաղություն չմտցրեց այդ գյուղում, քանզի վրացիները շարունակեցին իրենց հակահայկական գործողությունները, էլ ավելի գրգռելով տեղաբնակ հայերին: Ամեն ինչ տանում էր պատերազմի և ռազմական լուրջ գործողությունների: Իրադարձությունները սկսում են զարգանալ գլխապտույտ արագությամբ, դիվանագիտական դեմարշներն ու բողոքագրերն ուղեկցվում են անմիջական պատերազմական գործողությունների հայցեպ ու տենդագին նախապատրաստություններով: Վրացիները ոգևորվելով իրենց հարմար աշխարհաքաղաքական կացությունից, հաղորդակցության ուղիների նկատմամբ շահավետ վերահսկողությունից, Ադրբեջանի հարմարավետ չմիջամտությունից և մեծ տերությունների խարդախ ու նենգամիտ վերաբերմունքից, ոգեվորված ավելի ու ավելի մարտականորեն էին տրամադրվում և

ձգտում էին դեպի հայկական լեռնաշխարհները՝ Լոռի, Ախալքալաք, Բորչալու:

Մինչ հայ - վրացական սահմանագլխին ռազմական գործողությունների ամպեր էին կուտակվում, կրքերն ավելի ու ավելի էին բորբոքվում, ընթանում էր դիվանագիտական հակամարտություն, որում հայկական կողմը համառորեն ձգտում էր խուսափել ռազմական առճակատումից, որը ձեռնտու էր միայն Վրաստանին: Դեռ 1918 թ. նոյեմբերի սկզբներին Երևան էր եկել Վրաստանի պառլամենտի անդամ և Հայաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Մդիվանին՝ վրաց-հայկական սահմանակնճիռը լուծելու նպատակով: Նոյեմբերի 29-ին նա գրավոր կերպով հաղորդեց Հայաստանի արտաքին գործերի նախարարին, որ ինքը լիազորված է վերջնականապես լուծելու սահմանախնդիրը և կայացվելիք վճիռը ներկայացնելու Վրաստանի կառավարությանը ի վավերացումն: Սակայն դրա հետ մեկտեղ վրաց դիվանագետը նրբորեն ներկայացնում էր Վրաստանի տարածքային հավակնությունները Հայաստանի նկատմամբ. «*Վրաստանի Հանրապետության կառավարության կարծիքով սահմանագիծը Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև պետք է անցնի նախկին Թիֆլիսի նահանգի հին սահմանով, այսինքն՝ ներկայումս Ախալքալաքի և Բորչալուի գավառները նախկին Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառից բաժանող գծով՝ հարավային կողմից, իսկ արևելյան կողմից՝ այն գծով, որ բաժանում է Բորչալուի գավառը նախկին Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառից, և խնդրում է Ձեզ տեղեկացնել ինձ, համաձայնու՞մ է արդյոք այն որևիցե առարկության Հայաստանի Հանրապետության կողմից ընդդեմ սահմանների այդպիսի ուղղորդման և նրա առարկությունները*»[177]:

Ի պատասխան դրան, 1918 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը ուղարկում է համապատասխան նոտա Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Մդիվանուն, որն էլ այն պետք է հասցեագրեր սեփական կառավարությանը,որը նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 7-ն ընկած ժամանակաշրջանում, անսալով հայկական կողմի խաղաղասիրական տրամադրություններին, զբաղված էր ռազմական գործողությունների ձեռնարկմամբ, ինչի մասին ստորև կանդրադառնանք: Դեկտեմբերի 7-ի գրությամբ Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը հայտնում էր վրա-

ցական կողմին, որ ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում «*Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև սահմանագծի ուղղվածության հարցում հայկական կառավարությունը ելնում է այն սկզբունքներից, որոնք միշտ բաժանվել են հայկական և վրացական դեմոկրատիաների ղեկավար շրջանների կողմից և բազմիցս սանկցիավորվել են 1917 թ. ընթացքում և այս տարվա ընթացքում մի շարք խորհրդակցությունների և հաստատությունների կողմից, որոնք մշակել և քննարկել են նշված հարցը: Վրացական և հայկական ներկայացուցիչների համաձայնությամբ որոշված սահմանագծի հիմքում ընկած է, ինչպես հայտնի է՝ ռեալ ազգային - տարածքային տարաբնակեցման ազգագրական սկզբունքը, այդ սկզբունքի շեղմամբ հօգուտ Վրաստանի՝ ելնելով տեղագրական անհրաժեշտության նկատառումներից: Ըստ տարածքների սահմանազատման այդ սխեմայի, որն ընդունված է և վրացական պաշտոնական շրջանների կողմից, վեճի ենթակա չէ Ախալքալաքի գավառն ամբողջովին և Բորչալուի գավառի մեծ մասը, ուր հայ բնակչությունը կազմում է բացարձակ մեծամասնություն, դրանք կազմում են Հայաստանի անկապտելի մասը*»: Միաժամանակ նշվում էր, որ Բորչալուի գավառի հյուսիսային մասը և Թիֆլիսի գավառի հարավային մասը՝ ընդհուպ մինչև Թիֆլիս քաղաքը, չնայած որ այս շրջանում հայկական բնակչությունը գերակշռում է վրացական բնակչության նկատմամբ, մտցված են Վրաստանի կազմի մեջ՝ այն հաշվով, որ Վրաստանում հայերը կունենան ազգային - մշակութային ինքնորոշման երաշխիքներ:

Այնուհետև սույն նոտայում ընդգծվում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունելի չի համարում վրացիների կողմից առաջադրված սահմանների նոր ուղղվածությունը, սակայն դրա հետ մեկտեղ իր պարտքն է համարում հայտարարել, որ Վրաստանի Հանրապետության կառավարության կողմից այդ առաջարկության վրա պնդումը կհանգեցնի հարցը ամբողջությամբ վերանայելու անհրաժեշտությանը, ընդ որում վերանայման կենթարկվի ոչ միայն շրջանների մասին հարցը (Ախալքալաքի և Բորչալուի մի մասը), որոնց առիթով ներկայումս վրացական կառավարության կողմից վեճ է հարուցվել, այլև այն շրջանների (Բորչալուի մի մասը և Թիֆլիսի նահանգի հյուսիսային մասը), որոնք կարող են անվիճելիորեն Վրաստանի տարածքի հաշվին գրանցվել միայն Հայաստանի և Վրաստանի միջև

տարածքային սահմանազատման ողջ նախկին սխեմայի լրիվ և աներկբա պահպանման դեպքում[148]:

Այս առումով անկասկած հետաքրքրություն են ներկայացնում նաև Ալ. Խատիսյանի (Խատիսով) նոյեմբերի 30-ի նշումները՝ կապված սահմանների ուղղման հետ: Վերջինս ընդգծում էր, որ սահմանազատումները պետք է անցկացվեն ազգագրական սկզբունքի հիման վրա և վեճերի դեպքում հարցերը պետք է լուծվեն ինքնորոշման կարգով և բնակչությունը պետք է արտահայտվի, ավելացնելով, որ մշտապես այդ տեսակետի վրա է կանգնած եղել վրացական սոցիալիստ - ֆեդերալիստների կուսակցությունը, որպեսզի Վրաստանին վերաբերվեին միայն Ախալքալաքի և Բորչալուի գավառների վրացիներով բնակեցված կտորները, որը կազմում է նշված գավառների աննշան մասը: Խատիսյանը նշում էր, որ այդ տեսակետին են եղել վրաց ժողովրդի բոլոր պաշտոնական ներկայացուցիչները՝ բազմաթիվ կառավարական հանձնաժողովներում: Խատիսյանը արձանագրում էր, որ միայն 1918 թվականի հուլիսին առաջին անգամ Վրաստանի Ազգային խորհրդի նախագահ Իրակլի Ծերեթելին հայտարարեց, որ Վրաստանի սահմանը պետք է զբաղեցնի ողջ Թիֆլիսի նահանգը, Ղազախի գավառը և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասը: Նշելով, որ վերջին երկու գավառները արդեն չեն մտնում Վրաստանի կողմից նախագծվող պետական կազմի մեջ, այլ այդ վայրերը մտցված են կից գավառների մեջ, որոնցում գրեթե 200 հազար հոգի հայ են, և ոչ ավելի, քան 15 վրացի կա, որոնք սահմանների ուղղման միջոցով մեծ չափով կարող են դուրս բերվել Հայաստանի սահմաններից: Խատիսյանը իր այս նոթերի վերջում նշում էր, որ երկու կողմերի իրավունքները վեճերի ընթացքում պետք է հավասար լինեն և փաստորեն հարաբերությունը առարկայի նկատմամբ պետք է հաստատվի համաձայնությամբ, այլ ոչ թե միակողմանի հայտարարությամբ՝ ազդարարելով տարածքները իրենց պետության սեփականություն և դրանք գրավելով ռազմական ուժով[179]:

Ամեն դեպքում Հայաստանի կառավարությունը փորձում էր անել ամեն հնարավորը այդ բարդ իրավիճակից դուրս գալու համար՝ պահպանելով արժանապատիվ կեցվածքը: 1918 թ. դեկտեմբերի 1-ին Նախարարների խորհրդի նիստում արտաքին գործերի նախարարը զեկուցում է Վրաստանի ներկայացուցիչ Մդի-

վանիից ստացված գրության մասին հայ-վրացական սահմանների վերաբերմամբ, և ներկայացնում իր պատասխանի նախագիծը: Կառավարության անդամները որոշում են՝ համաձայնվելով արտաքին գործերի նախարարի առաջադրած տեսակետների հետ, հանձնարարել նրան տեղեկացնել պ. Մդիվանու միջոցով Վրաստանի կառավարությանը, որ եթե վերջինս հակառակ մինչև հիմա տեղի ունեցած բանակցությունների և սկզբունքային համաձայնությունների այժմ հայտարարում է ամբողջ Թիֆլիսի նահանգը (ի բաց չառեալ Ախալքալաքի գավառը և Բորչալու գավառի հայկական մասը) Վրաստանին պատկանող, Հայաստանի կառավարությունը իր կողմից վիճելի կհայտարարի Թիֆլիսի գավառը Թիֆլիս քաղաքով հանդերձ[180]:

Հետաքրքիր մոտեցում է, սակայն փակուղային, քանի որ վրացիները դրանից ավելի կատաղեցին: Այդ նույն նիստում (1918 թ., դեկտեմբերի 1) մինիստր-նախագահը զեկուցում է զինվորական նախարարից ստացված գրության մասին Ախալքալաքի գավառը զինված ուժ մտցնելու մասին: Նիստում տեղեկացվում է, որ հարցի մասին զինվորական նախարարը հատուկ խորհրդակցություն է ունեցել Հայկական դիվիզիայի պետ գեներալ Սիլիկյանի (Սիլիկով), զինվորական շտաբի պետ Դոլուխանովի, դիվիզիայի շտաբի պետ գնդապետ Զինկևիչի և Դիլիջանի շրջանի պետ Դրոյի հետ: Խորհրդակցությունը նկատի ունենալով ըսպասվելիք բարդությունները հարավային սահմանի վրա և մի քանի այլ հանգամանքներ, միաձայն եկել է այն եզրակացության, որ ներկայիս Ախալքալաքի գավառը զորամասեր չպետք է մըտցընել, բավականանալով առայժմ միմիայն նախապատրաստական գործողություններով: Ըստ այդմ Նախարարների խորհուրդը համերաշխվելով զինվորական նախարարի և նրա կողմից հրավիրված խորհրդակցության կողմից ընդունված բանաձևի և պատճառաբանությունների հետ,լիովին հիմնավոր գտավ դրանք և դրա հիման վրա զինվորական նախարարին լիազորեց՝ Ախալքալաքի գավառը զորամասեր չմտցնել ու առժամանակ բավականանալ նախապատրաստական գործողություններով[181]:

Այդ նույն ժամանակ վրացիները շարունակում էին պնդել իրենց նոր տեսակետի վրա, և օգտվելով թուրքերի հեռանալուց, սկսեցին նախապատրաստվել հայկական տարածքների զավթման ապօրինի մեծապետական ծրագրերի իրականացմանը, ո-

րին հայկական կողմը փորձում էր հակազդել՝ ամեն ինչ անելով պատերազմի մեջ չմտնելու համար: 1918 թ. դեկտեմբերի 1-ի տվյալներով, կառավարության նիստում խորհրդակցության արդյունքներով, որին մասնակցում էին դիվիզիայի հրամանատար Մ. Սիլիկյանը, ռազմական շտաբի պետ գեներալ - մայոր Դոլուխանովը, Գլխավոր շտաբի Հետախուզական Բաժնի պետ գնդապետ Զինկևիչը և Դիլիջանյան ջոկատի պետ Դրոն, ընդունվում է որոշում՝ կապված հնարավոր ռազմական գործողությունների հետ Ախալքալաքի շրջանում: Մասնակիցները գալիս են այն եզրահանգման, որ Ախալքալաքի գավառի գրավման համար չի կարելի ուղարկել ոչ նշանակալից ուժեր, քանի որ գործելով անվճռական, կվարկաբեկվեն և կիջեցնեն մեր զորքերի բարոյական վիճակը: Ռազմական նկատառումներով անհրաժեշտ է միաժամանակ զարգացնել գործողությունները և Բորչալուի գավառի առավել հայկական կողմի համար ակնհայտ ուղղությամբ[182]:

Սակայն ինչպես արդեն ասվել է, վրացիները շարունակեցին իրենց հակահայկական գործողությունները Հայաստանի հյուսիսային շրջաններում, իրական սպառնալիք ստեղծելով հայկական Լոռու, Ախալքալաքի և Բորչալուի համար, բնակչությանը կանգնեցնելով աղետի, նորանոր փորձությունների և որ շատ կարևոր է՝ արտագաղթի վտանգի առաջ: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը 1918 թ. դեկտեմբերի 2-ի գրությամբ (№ 763)՝ ուղղված Վրաստանի դիվանագիտական միսիայի ներկայացուցչին Հայաստանում, նշում էր, որ վերջին հանդիպման ժամանակ տեղեկանալով, որ Վրաստանի Հանրապետության կառավարությունը նշանակել է Ախալցխա-Ախալքալաքյան գավառի գեներալ - նահանգապետություն և միջոցներ ձեռնարկել Ախալքալաքի շրջանի ռազմական գրավման համար: Ս. Տիգրանյանը Հայաստանի կառավարության անունից բողոքում էր Վրացական կառավարության նշված գործողությունների դեմ, որոնք ուղղված էին Հայաստանի տարածքային իրավունքների դեմ Ախալքալաքի գավառում[183]:

Սակայն դեկտեմբերի 2-ի Գեգեչկորու հեռագիրը՝ուղղված Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մդիվանուն, վկայում է, որ վրացիներն այլ տրամադրություններ ունեին: Նշված հեռագրում Գեգեչկորին հայտնելով <u>իրենց համոզվածության մասին հայկական կառավարության և թուրքական</u>

հրամանատարության միջև կայացած համաձայնության կապակցությամբ, գտնում էր նաև, որ այդ հանգամանքը բարդացնում է հայերի հետ հնարավոր համաձայնության խնդիրը: Գեգեչկորին Մդիվանուց խնդրում էր, որ աշխատի այդ հարցը պարզել Տիգրանյանի հետ, վերջինիս տեղեկացնելով,որ խորհրդաժողովը հետաձգված է, հարցնելով նաև թե ինչու հայկական կառավարությունը պատգամավորներ չի ուղարկել: Տեղեկատվության վերջնամասում Գեգեչկորին նշում էր, որ ինքը հնարավոր է համարում հայերի հետ նախօրոք բանակցություններ վարել, սակայն եթե նրանց կողմից ցանկություն չարտահայտվի ընդառաջ գնալ, այդ գաղափարը երկար ժամանակով կվարկաբեկվի[184]:

Այս փաստաթուղթը պարզ վկայում է վրացական սցենարի կանխորոշվածության մասին, ծգտման մեջ հանդիպակաց կողմի նկատմամբ մեղադրանքների միջոցով քաղաքական անմեղսակցության ալիքի ստեղծել, շփոթության մեջ գցելով հանրային կարծիքը: Դա շարունակվում է հետագայում ևս: Վրաստանի կառավարության հետագա քայլերը ևս այդ մասին են վկայում: Վրաստանի կառավարության որոշումով շրջափակվում է ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Բաթում - Ալեքսանդրապոլ երկաթուղին, որով դժվարությամբ Հայաստան էր գալիս կենսական մեծ նշանակություն ունեցող պարենամթերք և այլն՝ ԱՄՆ-ից և այլ երկրներից: Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Մդիվանին Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված 1918 թ. դեկտեմբերի 4-ի գրության մեջ ցինիկաբար հայտնում էր, որ իրականում Ախալցխա-Ախալքալաքյան շրջանի գեներալ - նահանգապետի նշանակումը կատարվել է ոչ թե վերջին օրերին, այլ դեռ երկու ամիս առաջ, և այդ ժամանակ ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցները Վրաստանի Հանրապետության զորքերի կողմից Ախալքալաքի շրջանը գրավելու համար, որ բոլոր միջոցները ձեռնարկվել են միանգամայն բացահայտ բոլորի աչքի առաջ, և նույնիսկ կազմակերպվել է դեպի Ախալքալաքի գավառն ուղարկվող զորքերի զորահանդես: Վերջնամասում Մդիվանին ավելացնում էր, որ հետևաբար, դեկտեմբերի 2-ին կայացած իրենց խոսակցությունը ոչ մի կերպ չէր կարող իր մեջ պարունակել հաղորդագրություն այն մասին, որ Վրաստանի կառավարությունը միմիայն այժմ է նախապատրաստվել Ախալքալաքի շրջանի գրավմանը[185]:

Տիպիկ վրացական հոգեբանություն՝ վեհապետական շովինիզմի դիրքերից: Ավելին, այս քաղաքականության էությունը ավելի բացահայտ երևում է մի այլ փաստաթղթից: Այսպես, այդ նույն Մդիվանին դեռ դեկտեմբերի 3-ի գրությամբ ի պատասխան դեկտեմբերի 1-ի ՀՀ կառավարության նոտայի՝ լրիվ բացահայտում է բոլոր խաղաքարտերը՝ կապված Վրաստանի տարածքային հավակնությունների հետ: Հարկ է նշել, որ դա նա անում է բավականին հմտորեն և ցինիկաբար: Այսպես, Հայաստանում վրաց դիվանագիտական հավատարմատար Մդիվանին վերը նշված փաստաթղթում շեշտում է,որ «*ինքը չի ժխտում այն փաստը, որ 1917 թ. ընթացքում և 1918 թ. սկզբին (մինչև մայիսի 26-ը) իսկապես եղել են վրացական դեմոկրատիայի ղեկավար շրջանների ներկայացուցիչների հայտարարությունները Ախալքալաքի շրջանը և Բորչալուի գավառի մեծ մասը Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու անհրաժեշտության մասին: ...Դրանք կատարվել են այն ժամանակ, երբ դեռ և խոսք անգամ չկար ոչ Վրաստանի, այլև Հայաստանի մասին որպես ինքնուրույն պետությունների, և երբ խոսքը գնում էր, ոչ թե առանձին պետական կազմավորումների սահմանազատման, այլ միասնական պետության կազմի մեջ մտնող առանձին ժողովուրդների միմյանց միջև սահմանազատումների մասին՝ այդ ժողովուրդների հասարակական - տընտեսական կյանքի կազմակերպման համար*»: Ըստ այդմ էլ և կառուցվեց բացառապես ազգագրական սկզբունքի հիման վրա ազգային-տարածքային տարաբնակեցումը, այդպիսի սկզբունքը լիովին համապատասխանում էր հեղինակների առջև դրված խնդրի էությանը:

*Ակնհայտ է, որ այս դեպքում միայն առանձին վերցրած ազգագրական սկզբունքը դառնում է լիովին անբավարար, քանի որ այս կամ այն տարածքի հարաբերությունը այս կամ այն պետության տարածքի նկատմամբ որոշվում է ոչ միայն ընդամենը նրա բնակչության ազգությամբ, այլև պատմական, աշխարհագրական, տնտեսական-կենցաղային և մի շարք այլ պայմանների ամբողջությամբ միասին վերցրած*,- ընդգծում էր Մդիվանին: Այնուհետև, ավելին, դիմացինին ավելի խճճելու նպատակով Մդիվանին շեշտում էր, որ «*վրացական դեմոկրատիայի ոչ մի ներկայացուցիչ ոչ ավելի ուշ, ոչ ավելի վաղ չի հայտարարել, որ Ախալքալաքի և Բորչալուի գավառները կազմում են Հայաստանի որպես ինքնուրույն պետության անքակտելի մասը*» (ընդգծումը

ներն է - Վ.Վ.)։ Շարունակելով իր այս միտքը, Մդիվանին նշում էր, որ *նրանց հայտարարություններում պարունակվել է ընդամենը այն փաստի արձանագրումը, որ այդ գավառներում գերակշռում է հայկական բնակչությունը* (ընդ որում, առանց բացատրելու այդ երևույթի առաջացման պատճառները, այլև այդ բնակչության Ռուսաստանի կազմում որպես ինքնուրույն մշակութային - տնտեսական միավոր կազմակերպվելու հնարավորության արդարացիության ընդունումը)։ Իր ասելիքը Մդիվանին եզրահանգում է հետևյալ ևս ոչ անհետաքրքիր շարադրանքով. «*Ինչ վերաբերում է Փամբակի և Ղազախի շրջաններին, ապա այն բանի հետ կապված, որ պայմանները, որոնց շնորհիվ դրանք ձեռք են բերել ռազմավարական նշանակություն Վրաստանի համար (թուրքերի հարևանությունը) այժմ անցյալ են դարձել, և չնայած պատմության մեջ գոյություն ունեցող դրանց կապին Վրաստանի հետ, վերջինիս կառավարությունը անհրաժեշտ չի գտնում պնդել դրանց այդ երկրի կազմի մեջ ընդգրկելու վրա:*

*Վերջապես ես չեմ կարող չնշել և այն հանգամանքի մասին, եթե Վրաստանի կառավարությունը համարում է իրեն իրավասու պնդել Ախալքալաքի և Բորչալուի գավառների տարածքները իր կազմում թողնելու վրա, ինչպես դա երևում է շարադրանքից, դա անում է օրգանապես ամբողջական տերիտորիայի պահպանման իր տեսանկյունից՝ միակ արդարացի սկզբունքից ելնելով*»[186]։

Չնայած այս ամենին,Հայաստանի կառավարությունը անընդհատ փորձում էր շտկումներ մտցնել իրավիճակում։ 1918 թ. դեկտեմբերի 4-ին Նախարարների խորհուրդը իր նիստում կրկին լսում է արտաքին գործերի նախարարի զեկուցումը Վրաստանի ներկայացուցիչ Մդիվանու գրության մասին՝ կապված Վրաստանի կողմից Ախալքալաքի գավառը զինված ուժեր մտցնելու կապակցությամբ։ Նիստում ընդունվում է համապատասխան որոշում, որով հանձնարարվում է արտաքին գործերի նախարարին ի լրումն արդեն հանձնված գրավոր բողոքի, հայտնել Մդիվանուն, որպեսզի նա իր կառավարությանը տեղեկացնի, որ Վրաստանի կառավարությունը զորք չմտցնի Ախալքալաքի գավառ, մինչև որ հայ - վրացական սահմանների հարցը լուծվի փոխադարձ համաձայնությամբ կամ այլ խաղաղ ճանապարհով[187]։

Մեծապետական Վրաստանը ամեն ինչ տանում էր դեպի առճակատում: Եվս մեկ փորձ կանխելու համար ռազմական բախումը երկու հանրապետությունների միջև կատարեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը 1918 թ. դեկտեմբերի 5-ին, համապատասխան նոտա ուղարկելով Վրաստանի դիվանագիտական հավատարմատարին Հայաստանում: Դրանում ասվում էր, որ կառավարության հանձնարարության համաձայն խնդրվում է հաղորդել Վրաստանի Հանրապետության կառավարությանը, որպեսզի այն ձեռնպահ մնա իր զորքերը Ախալքալաքի գավառի սահմանները մտցնելուց, մինչև հարցի խաղաղ կարգավորումը նշված շրջանում[188]:

Վրացիները, սակայն յուրովի են որոշում լուծել հարցերը, անսալով հայկական կողմի հորդորները՝ խաղաղ միջոցներով լուծել սահմանավեճը, 1918 թ. դեկտեմբերի 5-ին վրաց զորքերը զորավար Մականի (նաև՝ Մաղաշվիլի) գլխավորությամբ մտնում են Ախալքալաք և հայտարարում այն միացված Վրաստանին: Նույն օրը Վրաստանի զինվորական մինիստրի անունով Ախալքալաքից ուղարկվում է հեռագիր, որում ցինիկաբար խեղաթյուրելով իրականությունը, ասվում էր. «*Ախալքալաքը գրավված է դեկտեմբերի 5-ին, ժամը 10-ին: Բնակչությունը դիմավորել է աղ ու հացով: Շուրջ բոլորը եղել են կողոպուտներ: Ձեռնարկվել են ծայրահեղ միջոցներ, ուղարկվել է հետախուզություն: Բնակչությանը հայտարարվել է իրենց բնակատեղիները վերադառնալու մասին: Սպայական ֆլիգելներից (առանձնաշենք) մեկը,ուր պահվում էր ցորենը, այրվել է թուրքերի կողմից: Զորքերի տրամադրությունը առույգ է. Մական*»[189]: Դրա ետևից գեներալ Մականի կողմից ուղարկվում է մի այլ հեռագիր ևս Վրաստանի կառավարության նախագահի հասցեով, որում նա կառավարությանը շնորհավորում էր առանց արյունահեղության Ախալքալաքի գավառը Վրաստանին միացնելու կապակցությամբ[190]:

Այդ նույն իրադարձությունների կապակցությամբ Վրաստանի արտաքին գործերի նախարար Գեգեչկորին 1918 թ. դեկտեմբերի 7-ի հեռագրով (№ 5447)՝ ուղղված իր դիվանագիտական հավատարմատարին Հայաստանում, տեղեկացնում էր հետևյալը. «*Ախալքալաքը գրավված է մեր զորքերի կողմից դեկտեմբերի 5-ին, առավոտյան ժամը 10-ին: Մեր կառավարության այդպիսի քայլը թելադրված է տեղական բնակչության շահերով,*

*որը ենթարկվում էր անվերջանալի բռնությունների գավառում դեռևս մնացած թուրքական զորամասերի, ինչպես նաև անպատասխանատու անձանց և զինված բանդաների կողմից: Վրացական կառավարությունը իր պարտքն համարեց առաջին իսկ հնարավորության դեպքում վերջ դնել իրերի անտանելի վիճակին, գտնելով, որ Վրաստանի կառավարության կողմից Ախալքալաքի գավառի գրավման հարցը ոչ պատմական, ոչ քաղաքական, ոչ բարոյական առումներով վիճելի չի թվում: Ընդ որում Վրաստանի կառավարությունը լիովին համոզված է մնում, որ այդ հանգամանքը ոչ մի չափով չի կարող ազդել տարածքային սահմանազատման մասին բանակցությունների ընթացքի վրա՝ այդ խնդրի վերաբերյալ երկու կողմերի համար էլ նախընտրելի պայմաններով երկկողմանի համաձայնություն ձեռք բերելու նպատակով»*[191]:

Դեկտեմբերի 7-ին կորնետ Սաղոյանը էսկադրոնով (հեծելավաշտ) մտնում է, Գորելովկա, որտեղ նա Ախալքալաքից եկող բնակիչներից տեղեկանում է, որ վրացական զորքերն արդեն մըտել են Ախալքալաք[192], և սանձարձակություններ են անում, տեռորի մեջ պահելով տեղական հայկական բնակչությանը: Դրանով չսահմանափակվելով, վրաց զորքերը դեկտեմբերի 8 - 9-ին իրականացնում են Ախալքալաքի գավառի Եֆրեմովկա և Տրոիցկոյե գյուղերի սակավամարդ հայ զորամասերի զինաթափումը, որոնք հայերը գրավել էին թուրքերի հեռանալուց հետո[193]:

Հայաստանի զինվորական նախարար Հովհ. Հախվերդյանին ուղղված Ուզունլարի (Օձուն) ընկերակցության ընտրյալների՝ Թադյանի և Կարաբեշիշյանի դիմումագրում նշվում է այն մասին, որ դեկտեմբերի 8-ին վրացական զորքերը ցանկացել են գըրավել Ուզունլար գյուղը, սակայն գյուղի հասարակայնությունը վճռական հակահարված է տվել: Այնուհետև տեղեկագրում ասվում էր. «*...զորքերը վճռել են ուժով գրավել... 2 օր Ուզունլարը գտնվում է հրետանակոծության տակ: Վրացիները սպառնում են կոտորել ուզունլարցիներին: Հազար տուն խնդրում են՝ անհապաղ կարգադրություն անել՝ օգնություն ցուցաբերելու կործանվող հպատակ ժողովրդին*»[194]:

Վրացիները չեն սթափվում, և մթագնված գիտակցությամբ որոշում են շարունակել հաշվեհարդարը գյուղի խաղաղ բնակչության նկատմամբ: Վրացական զորքերը սանձարձակություն-

ների են դիմում, ուզունլարցիներից պահանջելով տալ սայլեր և խոտ, յուղ, ալյուր, կարտոֆիլ, կաղամբ և այլ մթերքներ, որն ի վերջո ավարտվեց նրանց կողմից գյուղական կոմիսարի օգնականի սպանությամբ և կոմիսարի վիրավորմամբ: Գյուղացիները պատգամավորություն են ուղարկում Սանահին՝ ջոկատի հրամանատարի մոտ՝ զինվորներից բողոքելով, որին ի պատասխան այն ձերբակալվում է, սակայն չնայած այդ հանգամանքին, կրկին թնդանոթներով և գնդացիրներով ուղեկցվող էքսպեդիցիոն կորպուս է ուղարկվում Ուզունլար:

Ուզունլարյան դեպքերն ու իրադարձությունները իրենց արտացոլումն են գտել նաև Վրաստանում հրապարակվող«**Борьба**» թերթում, ուր հրապարակված է Ուզունլար ուղարկված № 1 զրահագնացքի պետի հաղորդագրությունը(12 դեկտեմբերի,1918 թվական)՝ ռազմական գործողությունների նկարագրությամբ: Զրահապատ գնացքի պետ Խունդաձեն հայտնում էր, որ ճանապարհին պատժիչ ջոկատը գնդակոծվում է մոտակա սարը բարձրացած ուզունլարցիների կողմից, որոնք իրենց պատիվն ու արժանապատվությունն էին պաշտպանում զավթիչներից, որոնք իրենց պահում էին մոնղոլ-թաթարների նման: Հաղորդագրության մեջ այնուհետև ասվում էր բառացի հետևյալը. «*Զրահապատից պատասխանեցինք հրետանային և գնդացրային կրակով: Մեր հետևակը չկարողացավ սարը բարձրանալ և նահանջեց, թողնելով մեկ գնդացիր... Մեր հետևակը խիստ տուժեց, հայերը մեծ քարեր էին նետում կայարանի վրա և առաջ բերեցին ռազմամթերքով բեռնված երեք թուրքական վագոնների պայթյունը: Անհրաժեշտ է, որ Սանահին և Այրում կայարանների միջև անընդմեջ տեղաշարժվի զրահագնացք*»[195]: Ինչպես վկայում են արխիվները, իրականում Լոռու տեղամասում հրետանիով ռմբահարման էին ենթարկվում ոչ միայն Ուզունլար գյուղը, այլև մի շարք ուրիշ գյուղեր՝ Ագրին, Ամուչը, Ակռռին և այլն: Բռնության վրդովեցուցիչ ակտերը, համատարած կողոպուտները, ձերբակալությունները և խուզարկությունները կատարվում էին բոլոր գյուղերում, որտեղ կանգնած էին վրացական զորքեր, չնայած վրացական կողմը դեկտեմբերի 9-ի տվյալներով հերքում էր վերը նշված վանդալիզմի և ալան-թալանի, խաղաղ բնակչության նկատմամբ ծաղր ու ծանակի փաստերը[196]: Ուզունլարյան իրադարձությունները խըթանեցին հետագա լարվածությունը հայ-վրացական հարաբերու-

թյուններում և ապագայում ծավալված դրամատիկ սցենարներում իրենց բացասական դերը կատարեցին:

Նույնիսկ այս դժնդակ և չափազանց խճճված, բարոյական - հոգեբանական առումով անտանելի իրավիճակում հայկական կողմը դարձյալ փորձում է դիվանագիտական եղանակներով լուծել կոնֆլիկտը, խուսափելով ոչ ցանկալի և կործանաբեր պատերազմից: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը այդ նպատակով համապատասխան նոտա է ուղարկում Վրաստանի արտաքին գործերի նախարարին (պատճենը՝ Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին), որում ասվում էր (9 դեկտեմբերի, 1918 թ., № 6913). «*Ղարաքիլիսա - Լոռիի զորամասի պետը հաղորդում է, որ երկրորդ օրն է գտնվում են վրացական զորքերի հրետանային և գնդացրային կրակի տակ: Լոռիի հյուսիսային մասի հայկական գյուղերը ենթարկվում են կողոպուտների և բռնությունների այդ նույն զորքերի կողմից: Հայաստանի կառավարությունը վճռական կերպով բողոքում է վրացական զորքերի սանձարձակությունների դեմ վրացական զորքերի կողմից բռնությամբ գրավված Հայաստանի տարածքի մեջ մտնող շրջաններում: Եթե Ձեր կողմից չձեռնարկվեն անհապաղ միջոցներ վերջ տալու* (նկատի ունի՝ սանձարձակություններին - Վ.Վ.)*, հետևանքների պատասխանատվությունը Հայաստանի կառավարությունը հանում է իր վրայից*»[197]: Իրականում հրետանակոծման էին ենթարկվում ոչ միայն Ուզունլար գյուղը, այլև մի շարք ուրիշ գյուղեր, ինչպես օրինակ Ագվին, Ամուչը, Ակոռին և ուրիշ բնակավայրեր, որն ուղեկցվում էր բռնություններով, համատարած կողոպուտներով, ձերբակալություններով և խուզարկություններով, ինչի մասին արդեն վերը նշել ենք: Կարծես թե ցանկանալով ընդգծել, որ իրենց քաղաքական ագրեսիվ կուրսը ամենևին էլ չի փոխվել, Վրաստանի արտաքին գործերի նախարար Գեգեչկորին որպես լրացում իր № 5447 հեռագրի՝ հասցեագրված Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մդիվանուն, նոր հեռագիր է ուղարկում (9 դեկտեմբերի, 1918 թ., № 5497): Դրանում վերջինս նախահարձակության մեղքը գցում էր հայկական կողմի վրա, շեշտելով, որ «*Սանահինի մոտ հայտնվել են 4-րդ հայկական հրաձգային գնդի զորամասերը գնդապետ Տեր-Նիկողոսովի գլխավորությամբ, որոնք գրգռում են տեղական բնակչությանը, ստեղծում թյուրիմացություն, որը վերաճեց այսօր Սանահին կայարա-*

*նի գնդակոծմանը»*: Այնուհետև Գեգեչկորին հայտնում էր, որ «*Ախալքալաքից զինվորական մինիստրության կողմից ստացվել է հաղորդագրություն, ըստ որի Բոգդանովկա գյուղում հայտնաբերվել է հայկական հեծելավաշտի ներկայություն*»: Հաղորդելով այն մասին, Գեգեչկորին խնդրում էր «*ձեռնարկել քայլեր, որոնք իրենց կպահովեին անցանկալի միջադեպերից: Եվ նորից կրկնում, որ Ախալքալաքի գրավումը ամենևին էլ չի սասանում այն հիմքերը, որոնք կարող էին դրվել փոխադարձ համաձայնության դեպքում*»[198]:

Խոսքով արվում էր ամեն ինչ, սակայն վրացիները ինքնավստահությամբ լի էին չխուսափելով նաև ռազմական առճակատումից, թեկուզև առաջին զոհերը պետք է, որ վերջիններիս սթափեցնեին: Ինչպես հաղորդում է «Борьба» թերթը (№ 241), արդեն դեկտեմբերի 9-ին Սանահինի մոտ վրացիները տվել էին 3 սպանված, ծանր վիրավորվել էր 1 հոգի, թեթև վիրավորվել՝ 3 հոգի, անհետ կորել՝ 2 հոգի, արձակվել է 3600 փամփուշտ[199]: Պարզից էլ պարզ է, որ սրանով վրացական մամուլը բորբոքում էր հակահայկական կրքերը, փորձելով հարցերը լուծել ռազմական առճակատման եղանակով:

Ուզունլարի և դրա հետ կապված դեպքերի պատճառների վերհանմանը և իրադարձությունների զարգացման գնահատականներին իր վերաբերմունքն է արտահայտում նաև ՀՀ Նախարարների խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 9-ի նիստը, որում լսվում է մինիստր - նախագահի զեկուցումը Դրոյից ստացված հեռագրի մասին՝ Ուզունլար հայկական գյուղի ռմբակոծման մասին վրաց զորքերի կողմից, ինչպես նաև վերջիններիս կողմից Լոռվա հյուսիսային մասում իրականացրած թալանի, բռնությունների մասին՝ հայ ազգաբնակչության նկատմամբ: Այդ կապակցությամբ Նախարարների խորհուրդը համապատասխան որոշում է ընդունում հանձնարարելով արտաքին գործերի նախարարին հեռագրել Վրաց կառավարությանը տեղի ունեցող դեպքերի մասին, խստիվ բողոքելով վրաց զորքերի վայրագությունների մասին մի շրջանում, որ պատկանում է Հայաստանին և ապօրինի կերպով օկուպացվել է վրաց զորքերի կողմից: Նախարարների խորհուրդը պահանջում էր անմիջապես դադարեցնել բռնությունները, հայտարարելով, որ հակառակ դեպքում Հայաստանի կառավարությունը վերցնում է իր վրայից հետևանքների մասին պատաս-

խանատվությունը: Նիստում որոշվում է այդ մասին տեղյակ պահել նաև ՀՀ դիվանագիտական հավատարմատարին Թիֆլիսում, ինչպես նաև Ալեքսանդրապոլում Հայաստանի ներկայացուցիչ Խոյեցյանին, ինչպես նաև զինվորական նախարարին և Դրոյին հրահանգելով, որպեսզի վրաց ներկայացուցիչ Մդիվանիի գնացքը անարգել բաց թողնեն Թիֆլիս մեկնելուն, միաժամանակ ձեռնարկելով անհրաժեշտ զինվորական նախապատրաստություննները, եթե ծագեն բարդություններ[200]:

Հայկական կողմը յուրովի փորձեր էր անում մանևրելու, ձգտելով խուսափել լուրջ պատերազմից և երկու կողմերի համար էլ կործանարար հետևանքներ ունեցող ռազմական գործողություններից:Հայկական դիվիզիայի հրամանատարին ուղղված 1918 թ. դեկտեմբերի 10-ի զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանի (Հախվերդով) գրավոր հրամանագիրը վկայում է այդ մասին: Դրանում մասնավորապես ասվում է. «*Ինչպես հրահանգված է, հեծելազորին հրահանգված է Ախալքալաքի տեղամասում վարել հետախուզություն և վրացիների հետ շփման մեջ չմտնելով, փոխհրաձգության չգնալ, և ցույց չտալ դիմադրություն,մինչև վրացիները չմտնեն Ալեքսանդրապոլի գավառի սահմանները: Այդ դեպքում հարձակվել, որի համար հարկավոր է նախապատրաստել ուժեր, առաջ քաշել մեկ գումարտակ Ալեքսանդրապոլից*»[201]:

Ալեքսանդրապոլից հաղորդված դեկտեմբերի 10-ի մի այլ հեռագրում (№ 00345)՝ ուղղված Դրոյին, գեներալ - մայոր Սիլիկյանը հրահանգում էր հրաման տալ Ախալքալաքի գավառում գտնվող հայկական հեծելավաշտին փոխհրաձգության մեջ չընդրտնել, այլ մշտապես գտնվելով վրացիների հետ սահմանակցային հարաբերություններում, բուռն գրոհի դեպքում՝ նահանջել[202]: Ակնհայտ է հայկական կողմի չպատերազմելու ցանկությունը, բարդություններից խուսափելու բացահայտ ձգտումը:

1918 թ. դեկտեմբերի 11-ին կայանում է կապիտան Մեդվեդևի ուղիղ գծով ծառայողական խոսակցությունը Դրոյի հետ, որից պարզ է դառնում հետևյալը. Դրոյի անունից գնդապետ Միրիմանովը Աhարոնյանի, Պապաջանովի, Արզումանովի և ուրիշ անձանց ներկայությամբ Վրաստանի ներկայացուցչին է ներկայացնում ներքոհիշյալ բողոքի նոտան. «*Ուզունլար գյուղի բնակիչների նկատմամբ բռնությունը գեներալ Ցուլուկիձեի զորքերի*

*կողմից ստիպել է Լոռիի տեղամասի բնակչությանը ապստամբել... Առաջարկում են նշված շրջանից հեռացնել բոլոր զորամասերը հետագա բարդացումներից խուսափելու համար: Մենք չենք կարող լինել մեր գյուղերի, կանանց և երեխաների հրետանային և գնդացրային կրակի ենթարկման ականատեսները: Ես խնդրում եմ հանուն երկու ժողովուրդների բարօրության նշանակել հանձնաժողով հետաքննության համար և այդ շրջանում միայն ադմինիստրացիան թողնել: Հետագա պատասխանատվությունը դնում ենք վրացական հրամանատարության վրա»*[203]:

Դեկտեմբերի 11-ին ժամը 12-ին Հայաստանի Հանրապետության Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական Բաժնի պետ Զինկևիչի՝ Գլխավոր շտաբի պետին հասցեագրված հաղորդագրության մեջ նշվում էր, որ «*վրացիները երրորդ օրն է գնդակոծում են Ուզունլարի, Ծաթերի բնակչությանը: Երկաթուղային ծառայողները խուճապահար փախել են. Գորելովկա - Բոգդանովկա շրջանում վրացական զորամասերի հետ Ախալքալաքյան հեծյալ ջոկատի հանդիպումից հետո ոչ մի հաղորդագրություն չի ստացվել: Ջոկատներում*(նկատի ունի Ղարաքիլիսա - Լոռիի և Ալեքսանդրապոլի - ընդգծումը մերն է - Վ.Վ.) *տեղի է ունենում նոր վերախմբավորում»*[204]:

Դեկտեմբերի 12-ին Զինկևիչը նոր ամփոփագիր է ուղարկում Գլխավոր շտաբի պետին, որում ասվում էր. «*Դեկտեմբերի 9-ից սկսեցին ստացվել տեղեկություններ, որ Լոռիի շրջանում վրացիները սկսել են իրականացնել բռնություններ խաղաղ հայկական բնակչության նկատմամբ: Ուզունլար և Ծաթեր գյուղերը ենթարկվել են հրետանային և գնդացրային կրակի, որն ստիպել է հենց իրենց՝ մերձակա գյուղերի բնակիչներին անցնել հարձակման: Դիմանալով ուժեղ մարտի, նրանք փախուստի մատնեցին վրացիներին, գրավելով գնդացիրները, և կտրելով երկու զրահագնացքների ճանապարհը: Առայժմ դեկտեմբերի 12-ի վիճակով հայ գյուղացիների կողմից գրավվել է Սանահին գյուղը, նրանք մոտեցել են հենց Ալլավերդիի գործարանին»*[205]:

Հետաքրքրական է այս առումով նաև Դոյի 1918 թ. դեկտեմբերի 12-ի հաղորդագրությունը՝ ուղղված Նախարարների խորհրդի նախագահին (պատճենը՝ Դիվիզիայի հրամանատարին և Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարին), որում ասվում էր. «*Ախալքալաքյան ուղղությունում վրացիները*

*հարձակում են կատարել: Դիլիջանի հրամանատարի հրամանի համաձայն ես կարգադրել եմ նահանջել Բոգդանովկայից Գորելովկա: Վերջինիս նորից մոտեցել են վրացական զորամասերը, մերոնք ետ են քաշվել դեպի սահմանը: Ամբողջ Ախալքալաքյան ուղղությունում վրացական զորաջոկատը առայժմ հայտնաբերվել է 300 հոգիանոց կազմով՝ ունենալով 4 թնդանոթներ: Վաղն առավոտյան ամբողջ առաջին դիվիզիոնը առաջ եմ շարժում դեպի Ախալքալաքի սահմանը: Լոռվա իրադարձությունները հետանձգման կարիք չեն զգում: Խնդրում եմ թույլ տալ առայժմ անհապաղ գրավել Սանահինը, Վորոնցովկա - Ալավերդին»*[206]:

Վրացիների ռազմագիտական ընդգրկումները չափավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ի դեմս Հովհ. Քաջազնունու (վրաց-հայկական պատերազմի անմիջապես նախօրյակին) 1918 թ. դեկտեմբերի 12-ին ևս մեկ անգամ փորձում է անկանխատեսելի հետևանքներով լի իրադարձությունների զարգացման ընթացքի վրա ազդել և այդ նպատակադրումով դիմումագիր է հղում Վրաստանի կառավարության նախագահ Ժորդանիային՝ կապված վրացական զորքերի գործողությունների հետ Բորչալուի գավառի հայկական մասում, որը բռնի զավթվել էր Վրաստանի կողմից: Դիմումագրում ասվում էր, որ Վրաստանը ստեղծել է դրություն, որն առաջիկայում «*հանդուրժել հնարավոր չի: Միայն վրացական զորքերի անհապաղ հեռացումը այդ շրջանից կարող է կանխել հետագա արյունահեղությունը և հաստատել ամուր բարեկամական հարաբերություններ Վրաստանի և Հայաստանի միջև: Նկատի ունենալով այդ հանգամանքը, Հայաստանի կառավարությունը պատիվ ունի առաջարկելու Վրաստանի կառավարությանը առանց որևիցե հապաղման դուրս բերելու վրացական զորքերը Բորչալուի գավառի հայկական մասից: Մերժման կամ հապաղման դեպքում Հայաստանի կառավարությունը հարկադրված կլինի այդժամ միջոցներ ձեռք առնել՝ պաշտպանելու համար Հայաստանի քաղաքացիների վրացական իշխանությունների բռնություններից և սանձարձակություններից»*[207]:

Վրաստանը սակայն չպատասխանեց խաղաղասիրական քայլով: Վրաստանի կառավարությունը շարունակում էր պնդել իր «անվիճելի» «քաղաքական, տնտեսական, կենցաղային» իրավունքների վրա, և Հայաստանի կառավարության պահանջը

համարում էր «միջամտություն Վրաստանի ներքին գործերին»: Մասնավորապես այդ միտքն է արտահայտում Մդիվանին 1918 թ. դեկտեմբերի 13-ի իր հեռագրում՝ ուղղված Հայաստանի արտաքին գործերի նախարար Տիգրանյանին: Վերոհիշյալ հեռագրում Մդիվանին շեշտելով իր կողմից արված կոնկրետ առաջարկի մասին Բորչալուի գավառում տեղի ունեցող իրադարձությունների խաղաղ կարգավորման ձևերի մասին, միևնույն ժամանակ բողոքում էր, որ ինքը չի կարողացել Հայաստանի մինիստր-նախագահի կողմից Վրաստանի կառավարությանը հասցեագրված նոտան ուղարկել, որում պահանջ էր դրվում անհապաղ մաքրել վրացական զորքերից Բորչալուի գավառի հայկական մասը: Մդիվանին հայտնում էր, որ ինքը համապատասխան հեռագիրը չի ուղարկել Թիֆլիս, քանի որ ոչ միայն չի կարողացել շարժվել դեպի Թիֆլիս, այլև մտնել հեռագրակապի մեջ իր կառավարության հետ: Մդիվանին բողոքում էր, որ այդ ընթացքում, համաձայն Ղարաքիլիսա - Լոռու ջոկատի պետ Դրոյի, վաղը Հայաստանի Հանրապետության զորքերը անցնելու են նախօրոք հաստատված սահմանը, նպատակ հետապնդելով գրավելու Բորչալուի գավառի այն մասը, որը դեռևս 1918 թվականի մայիսին թուրքերի դեմ մարտերում գրավվել են վրացական զորքերի կողմից, որն էլ անխուսափելիորեն առաջ կբերի երկու հանրապետությունների միջև պատերազմական գործողությունների սկսման: Մդիվանին շեշտում էր, որ բացի նրանից, որ «*Հայաստանի կառավարության գործողությունները չի կարելի դիտարկել այլ կերպ, քան որպես միջամտություն Վրաստանի ներքին գործերին, միջազգային հարաբերությունների տեսանկյունից անթույլատրելի է, որպեսզի Հայաստանի կառավարությունը, չսպասելով ուլտիմատումի պատասխանին, ձեռնամուխ է եղել ուլտիմատումում շարադրված պահանջների իրականացմանը՝ ռազմական ուժի ճանապարհով*»: Նոտայի վերջնամասում Մդիվանին արտահայտելով վճռական բողոք, մեկ անգամ ևս խնդրում էր կառավարությանը զեկուցել իր կողմից ընդունված որոշման վերանայման և զորքերին հրաման տալ չանցնել ներկայումս գոյություն ունեցող սահմանը և չմտնել թշնամական գործողությունների մեջ Վրաստանի Հանրապետության զորքերի դեմ[208]:

Ղարաքիլիսայից ուղարկված մի այլ հեռագրում՝ հասցեագրված Հայաստանի պառլամենտի նախագահ Սահակյանին (13 դեկտեմբերի, 1918 թ.), Մդիվանին բողոքելով, որ երեք օր է,

ինչ ինքը նստած է Ղարաքիլիսայում, հնարավորություն չունենալով էլ առաջ շարժվել, և հեռագրաթելով կապվել սեփական կառավարության հետ՝ կապված Բորչալուի գավառի գյուղացիների ապստամբությամբ առաջ եկած իրադարձությունների հետ: Հետաքրքիր է, որ <u>վերջինս չի ժխտում ապստամբության փաստը</u>, որը կարևոր հանգամանք է ընբռնելու համար իրադարձությունների իրական իմաստը: *Դրան զուգընթաց*,- գրում է Մդիվանին,- *իրադարձությունները աղետալի բնույթ են ստանում,* և խնդրում էր ազդել կառավարության վրա (նկատի ունի ՀՀ կառավարությանը - Վ.Վ.), որպեսզի նա չեղյալ հայտարարի իր որոշումը և իրեն հնարավորություն տար հասնել Թիֆլիս, և այնտեղ անձամբ տեղեկացնել Վրաստանի կառավարությանը, դրանով իսկ նպաստել երկու ժողովուրդների համար այդպես հանկարծակի ծագած կոնֆլիկտի լուծման լավագույն եղանակին[209]:

Եվ արդեն 1918 թ. դեկտեմբերի 13-ին դիմելով Վրաստանի դիվանագիտական հավատարմատարին (№ 5572), Ե. Գեգեչկորին նշում էր, որ իրենք ստացել են հավաստի տեղեկություններ, որ Սանահինի շրջանում վրացական զորքերի դեմ ռազմական գործողություններում մասնակցություն են ցուցաբերում և հայկական զինվորական մասերը, ընդ որում նրանց քայլերը կրում են միանգամայն կազմակերպված բնույթ: Այնուհետև նշելով, որ մի րոպե անգամ չթույլատրելով մտածել, որ այդ բոլորը կատարվում է Հայաստանի կառավարության հրամանով, տխուր միջադեպից, ճակատագրական հետևանքների վերածվելու հնարավորությունից խուսափելու նպատակով,որի զոհը արդեն դարձել են տասնյակ զինվորներ և վրացի սպաներ, խնդրում էր ձեռնարկել քայլեր, որպեսզի Հայաստանի կառավարությունը ազդեցության անհրաժեշտ միջոցներ կիրառեր զինվորական մասերի և այն անձանց վրա, որոնք անպատասխանատու, հանցավոր գործողություններով խախտել են երկու հանրապետությունների միջև բարեկամական հարաբերությունները[210]:

Պատասխան նոտայում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության աշխատակից Թումանովը հաղորդում էր, որ իրենք տվյալներ չունեն, բացի վերը նշված հաղորդագրությունից (Գեգեչկորու - Վ.Վ.), որն իբր թե հայկական կանոնավոր զորամասերը գտնվում են վրացական զորքերի կողմից օկուպացված տարածքներում[211]: Իսկ արդեն 1918 թ. դեկտեմբերի

13-ի հեռագրով (№ 5599) Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Պ. Գեգեչկորին ձևականորեն համակարծիք լինելով Հայաստանի խաղաղասիրական առաջարկին՝ բանակցություններ միջոցով լուծել սահմանավեճը, միևնույն ժամանակ պնդում էր, որ առ այսօր որոշ հայկական զորամասեր հայկական ծառայությունների սպաների գլխավորությամբ գնդակոծել են ողջ վրացական սահմանային պահակազորը,մնացածներին գերի վերցնելով, զոհերը տասնյակների են հասնում: Գեգեչկորին այդ նոտայում տեղեկացնում էր, որ արյունահեղության դադարեցման նպատակով իրենց կողմից Սանահին է ուղարկվել պատգամավորություն, որի կազմի մեջ մտել են 3 հոգի Հայոց Ազգային խորհրդից: Վրացական կառավարությունը պնդում էր արյունահեղության դադարեցման և այն անպատասխանատու անձանց պատժելու վրա, որոնք ցավալի իրադարձությունների մեղավորներն էին[212]:

Հարկ է ընդգծել (դա կարևոր է սկզբունքային առումով), որ վրացական կառավարության կողմից հրատարակված ռադիոհեռագրի այս տեքստում (**Борьба**, № 244, 1918 թ.) կային բառերի և բառակապակցությունների փոփոխություններ, որոնք արտաքուստ կարծես թե ոչինչ չէին փոխում, սակայն իրականում կարևոր նշանակություն ունեին (օրինակ՝ «*Վրաստանի կառավարությունը չի կարող կողքից թույլատրել միջամտություն իր գործերին*» բառակապակցությունը նենգափոխվում էր վերջին մասում «*իր ներքին գործերին*» բառակապակցությամբ և այլն) և շփոթության մեջ էին գցում հասարակայնությանը և ապատեղեկատվության խնդիրներ էին լուծում:

Ըստ էության դա պատերազմի նախապատրաստություն էր, պակասում էր միայն առիթը: «*Վրաստանը ամէն կերպ դժուարութիւններ կը յարուցանէր Թիֆլիս - Ղարաքիլիսա գծին վրայ: Օգտուելով մեր նեղութիւններէն եւ ուժասպառ վիճակէն, մեր դըրացիները կուզէին իրենց ի նպաստ լուծել հողային վէճերը, գրաւելով Բորչալուի և Ախալքալաքի գաւառները: Այսպիսով կը ըստեղծուէր այն մթնոլորտը, որմէ ծնաւ հայ - վրացական պատերազմը:*

*Այդ պատերազմի անմիջական առիթները երկուք էին.*
*ա) Հայաստան կ'ուզեր ազատ ելք ունենալ դէպի Պաքում, եւ*

---
[7] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

*բ) իրեն կցել Լոռիի եւ Ախալքալաքի զուտ հայկական գաւառները, որոնց վրայ Վրաստան դրած է իր ձեռքը: Վրաստան հաղորդակցութեան անտանելի դժուարութիւններ յարուցանելով՝ կը ձգտէր ճնշում ի գործ դնել Հայաստանի վրայ, որպէսզի մենք իրեն զիջումներ ընենք՝ հողային վէճերու մեջ: Այս պարագաները պետք կը զգամ շեշտելու, որովհետեւ տարբեր պատճառներ կը փնտռեն հայ - վրացական պատերազմի բռնկման մեջ, ըսելով թէ վճռական դէր կատարած են Հայաստանի մէջ գտնուող ռուս սպաներու հակավրացական փրովոքասիոնները եւ Դրոյի ռազմատենչ խմբակցութիւնը*»,- նկատում է Ալ. Խատիսյանը[213]:

Դիվանագիտական բախումները շարունակվեցին մինչև անմիջական ռազմական գործողությունների սկսումը, որոնց արմատները ամենևին էլ պետք չի որոնել Երևանում և Հայաստանի քաղաքական-ռազմական գործիչների գործողություններում:Երեվանը և Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցչությունը փորձում էին ավելի համբերատար լինել և լուծումներ գտնել ստեղծված էքստրեմալ իրավիճակում, բացառելով և ժխտելով հայկական կանոնավոր զորամասերի ներկայությունը հայտնի տարածքներում: Վրաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղված դիմումագրում (ի պատասխան դեկտեմբերի 13-ի № 5598 գրության) Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի տեղակալ Մ. Թումանովը հաղորդում էր, որ բացի վրացական կողմի հաղորդագրությունից, որոնք մատնանշում էին հայկական կանոնավոր զորամասերի ներկայության մասին վրացական զորքերի կողմից օկուպացված տարածքում, ինքն այլ տվյալներ չունի և հույս էր հայտնում, որ մոտակա օրերին այդ իրադարձությունները կլիկվիդացվեն ի շահ երկու ժողովուրդների[214]:

Սակայն այդ լավատեսությունը բոլորովին էլ չարդարացավ: Վրաստանը պատերազմի տենդագին նախապատրաստություններ էր տեսնում, և այն կանխել չհաջողվեց: Չարաբաստիկ պատերազմը բռնկվեց և իր ամենակուլ երախի մեջ առավ երկու հարևան ժողովուրդներին:

## Գլուխ Երկրորդ
## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Տես՝ Ալ. Խատիսեան. Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բ տպագրութիւն, 1968, Բէյրութ, տպարան Համազգային, էջ 154:
2. Տես՝ Ալ. Խատիսեան, նշված աշխատությունը, էջ 141:
3. Տես՝ **А. Шахатунян. Административный передѣлъ Закавказского края. Тифлисъ, типография "Ашахатаворъ"**, 1918, стр. 71-72:
4. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 452, թ. 3:
5. Տես՝ **А. Шахатунян. Административный передѣлъ Закавказского края. Тифлисъ, типография "Ашахатаворъ"**, 1918, стр. 71-72:
6. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 452, թ. 2:
7. Տես՝ նույն տեղում, գ. 191, թ. 15; գ. 104, թ. 5:
8. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 31: Տես նաև՝ **Армяно - грузинский вооружённый конфликтъ. На основании фактических данныхъ и подлинныхъ документов. Баку, изданiе Бакинского Армянского Нацiонального совѣета. Типографiя "Урардия"**, 1919, стр. 2:
9. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 104, թ. 70:
10. Տես՝ Հրանտ Ավետիսյան. Հայկական Հարցը 1918 թվականին. Եր.: Բարձրագույն դպրոց, 1997, էջ 255:
11. Տես՝ Հրանտ Ավետիսյան, նշված աշխատությունը, էջ 256:
12. Տես՝ Դրո. Կենսագրական: Հուշեր: Վկայություններ. Եր.: Ազատ խոսք, 1991, էջ 112-113: Տես նաև՝ Արշակ Ջամալյան. Հայ-վրացական կնճիռը. - Հայրենիք. - (ամսագիր). - 1928. № 6. - ապրիլ. - էջ 88-90:
13. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 7, թ. 222в:
14. Տես՝ **В. Г. Тунян. Карабахский конфликт. Ереван, 1999, стр. 43:**
15. Տես՝ **В. Г. Тунян**, նշված աշխատությունը, էջ 33:
16. Տես՝ նույն տեղում, էջ 26:
17. Տես՝ Հովհաննես Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու. Տաս հատորով. - հ. 10.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 313-314:
18. Տես՝ Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. աշխարհ. թարգմ. և ծանոթությունները Ստ. Մալխասյանի. խմբ. Գ. Սարգսյան.- Եր.: Հայաստան, 1990, էջ 238:
19. Տես՝ Vernon V. Aspaturian. Armenia in the World Arena,1914-1921.- Armenian Review. spring-winter. 1993. volume 46, number 1-4 (181-184), p. 136:
20. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 17, թ. 7:

21. Տես՝ նույն տեղում, թ. 26:
22. Տես՝ նույն տեղում, թ. 27:
23. Տես՝ նույն տեղում, թ. 11:
24. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն: Եր.: Հայաստան, 1993, էջ 215: Տես նաև՝ ֆ. 200, ց.1, գ. 17, թ. 15-17:
25. Տես՝ **Армяно-грузинский вооружённый конфликтъ. На основании фактических данныхъ и подлинниxъ документов. Баку, изданiе Бакинского Армянского Нацiонального совъета. Типографiя "У-рардия"**, 1919, **стр.** 11:
26. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 17, թ. 15-17:
27. Տես՝ Վ. Փափազյան. Իմ յուշերը. հ. 2, Պէյրութ, 1952, էջ 495-496:
28. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց.1, գ. 36, թ. 108:
29. Տես՝ նույն տեղում:
30. Տես՝ նույն տեղում, թ. 261:
31. Տես՝ նույն տեղում, թ. 204:
32. Տես՝ **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Тифлись,** 1919. **Типография Прав. Груз. Респ., стр.** 436:
33. Տես՝ **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. стр.** 437:
34. Տես՝ **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. стр.** 438:
35. Տես՝ **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. стр.** 439:
36. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 377, ց.1, գ. 40, թ. 1:
37. Տես՝ նույն տեղում, ֆ. 222, ց.1, գ. 24, մաս I, թ. 359:
38. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն: Եր.; Հայաստան, 1993, էջ 215:
39. Տես՝ Stephen F. Jones, p. 64:
40. Տես՝ նույն տեղում:
41. Տես՝ Դրո. Կենսագրական: Հուշեր: Վկայություններ. էջ 114:
42. Տես՝ Դրո. Կենսագրական: Հուշեր: Վկայություններ. էջ 115: Տես նաև՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 37, թ. 16:
43. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 289, ց.1, գ. 2, թ. 13: Տես նաև՝ **«Борьба»**, 1918, № 92:
44. Տես՝ **Германские оккупанты в Грузии в** 1918 **году. Сборник документов и материалов. Составил и подготовил к печати М. М. Габригидзе. Госиздат Груз. ССР,Тбилиси,** 1942, **стр.** 58-59:
45. Տես՝ **Г. В. Хачапуридзе. Борьба за пролетарскую революцию в Грузии. Очерки.** 1917-1921. **Издательство ЦК КП(б) Грузии "Заря востока"**, 1937, **стр.** 135. փաստաթուղթն ամբողջությամբ հրապարակված է **«Правда»**-ի 1933 թ. դեկտեմբերի 1-ի համարում(№ 330):

46. Տես՝ В. И. Адамия. Из истории английской интервенции в Грузии (1918 - 1921 гг.), стр. 38; Տես նաև՝ Г. В. Хачапуридзе. Борьба грузинского народа за установление Советского власти. Москва, 1956, стр. 123; А. Б. Кадишев. Интервенция и гражданская война в Закавказье. М. Военное издательство МО СССР, 1960, стр. 14:
47. Տես՝ Великая Октябрьская Социалистическая революция. Издание Третье, дополненное. Энцилопедия, Москва, "Советская Энциклопедия", 1987, стр. 195:
48. Տես՝ Ս. Վրացեան. Կեանքի ուղիներով. Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ. տպարան «Յուսաբեր», Գահիրե, 1955, հ. 1, էջ 204:
49. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 66, թ. 15:
50. Տես՝ նույն տեղում, գ. 67, թ. 2:
51. Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 13:
52. Տես՝ նույն տեղում, գ. 43, թ. 31:
53. Տես՝ նույն տեղում, գ. 12, թ. 121:
54. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 251; գ. 99, թ. 2; ֆ. 276, ց.1, գ. 27, թ. 12, 150:
55. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 149, թ. 48, գ. 99, թ. 5; ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 14:
56. Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 12, թ. 195:
57. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 5-6; ֆ. 276, ց.1, գ. 67,թ.35:
58. Տես՝ Ленин Соч. т. 21, стр. 306:
59. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 6:
60. Տես՝ նույն տեղում:
61. Տես՝ նույն տեղում:
62. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 216:
63. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 7, թ. 221в:
64. Տես՝ նույն տեղում, գ. 17, թ. 34-35:
65. Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 37, թ. 19:
66. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 12:
67. Տես՝ նույն տեղում, թ. 12:
68. Տես՝ նույն տեղում, թ. 16:
69. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 22; ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 105:
70. Տես՝ В. И. Адамия. Из истории анлийской интервенции в Грузии (1918 - 1921 гг.). Сухуми. Абгосиздат, 1961, стр. 62:
71. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ, 276, ց.1, գ. 37, թ. 13:
72. Տես՝ նույն տեղում, թ. 26 - 27:
73. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 37, թ. 46 - 48:
74. Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 37, թ. 32:
75. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 66, թ. 41-42; ֆ. 276, ց.1, գ. 37, թ. 33 - 34:

76. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 71, թ. 37:
77. Տես՝ ՎէՄ, 1924, հունվար - փետրվար, էջ 56:
78. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1,գ. 17, թ. 33:
79. Տես՝ նույն տեղում:
80. Տես՝ Ս. Վրացեան. Կեանքի ուղիներով. Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ. Բէյրութ, տպարան «Համազգային», 1966, հ. Ե, էջ 41:
81. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 19:
82. Տես՝ նույն տեղում, թ. 21:
83. Տես՝ նույն տեղում, թ. 20; ֆ. 276, ց.1, գ. 96, թ. 2:
84. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 21:
85. Տես՝ նույն տեղում, գ. 147, թ. 43:
86. Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 35:
87. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 4 - 5:
88. Տես՝ նույն տեղում: Տես նաև՝ ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 42:
89. Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 42:
90. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 6; գ. 16, թ. 308:
91. Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 39:
92. Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 40:
93. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն,էջ 216-217; Տես նաև՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 253; ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 18; **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии..., стр.** 445:
94. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 16:
95. Տես՝ նույն տեղում, թ. 44:
96. Տես՝ նույն տեղում, գ. 16, թ. 262:
97. Տես՝ Ս. Վրացեան. Կեանքի ուղիներով. Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ. Բէյրութ, տպարան «Համազգային», հ. Ե, էջ 41:
98. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 67, թ. 9 - 10:
99. Տես՝ նույն տեղում, թ. 10:
100. Տես՝ Վ. Փափազեան. «Իմ յուշերը», Պէյրութ, 1952, հ. 2, էջ 426:
101. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 1:
102. Տես՝ «Հայրենիք» (ամսագիր), 1957, թիվ 2, փետրվար, էջ 3; 1928, ապրիլ, N° 6, էջ 93:
103. Տես՝ Ա. Ջամալյան. Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք» (ամսագիր), N° 27, 1928, էջ 85:
104. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 6; ց.2, գ. 21, թ. 11; ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 36:
105. Տես՝ նույն տեղում:
106. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն: Եր.: Հայաստան,1993, էջ 217: Տես նաև՝ **Армяно-грузинский вооружённый конфликтъ. На основании фактических данныхъ и подлинныхъ**

документовъ. Баку, изданіе Бакинскаго Армянскаго Національнаго совѣта. Типографія "Урардия", 1919, стр. 15:
107.Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն: Եր.: Հայաստան, 1993, էջ 217:
108.Տես՝ նույն տեղում, էջ 218:
109.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 254; ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 21:
110.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.2, գ. 21, թ. 9 - 10:
111.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 50 - 51:
112.Տես՝ նույն տեղում, թ. 49:
113.Տես՝ նույն տեղում, թ. 50:
114.Տես՝ նույն տեղում, գ. 66, թ. 144:
115.Տես՝ Ա. Ջամալյան. Հայ - վրացական կնճիռը, Հայրենիք, 1928, № 27, էջ 93 - 94: Տես նաև՝ Армяно-грузинский вооружённый конфликтъ..., стр. 17-18; Տես նաև՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 150, մաս I, թ. 2; ֆ, 201, ց.1, գ. 157, թ. 45:
116.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 66, թ. 260:
117.Տես՝ նույն տեղում, գ. 147, թ. 71-72:
118.Տես՝ նույն տեղում, գ. 147, թ. 74; գ. 16, թ. 258:
119.Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 125:
120.Տես՝ նույն տեղում:
121.Տես՝ նույն տեղում:
122.Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 103:
123.Տես՝ նույն տեղում, թ. 107:
124.Տես՝ նույն տեղում, թ. 106:
125.Տես՝ Армяно-грузинский вооружённый конфликтъ..., стр. 16:
126.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ.17, թ. 49, 50:
127.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 24:
128.Տես՝ նույն տեղում, թ. 25:
129.Տես՝ նույն տեղում, թ. 42:
130.Տես՝ նույն տեղում, թ. 26:
131.Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 31, 32:
132.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 33:
133.Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 41:
134.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 34-35:
135.Տես՝ նույն տեղում, թ. 35:
136.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.2, գ. 38, թ. 21; ց.1, գ. 147, թ. 83:
137.Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 220:
138.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 83:
139.Տես՝ նույն տեղում, գ. 147, թ. 83:
140.Տես՝ նույն տեղում, թ. 85:
141.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.2, գ. 38, թ. 21:
142.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.2, գ. 38, թ. 22:

143.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 86:
144.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.2, գ. 38, թ. 22:
145.Տես՝ Stephen F. Jones. Georgian - Armenian Relations in 1918-20 and 1991-94: A Comparison. - Armenian Review, vol. 46, № 1-4 (181-184), 1993, p. 65:
146.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 147, թ. 60:
147.Տես՝ նույն տեղում, գ. 99, թ. 24:
148.Տես՝ նույն տեղում, գ. 147, թ. 82:
149.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 150, մաս I, թ. 3:
150.Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն,էջ 220-221:
151.Տես՝ Ա. Ջամալյան. Հայ - վրացական կնճիռը. - Հայրենիք ամսագիր. - փետրվար, 1929, Է տարի, էջ 93:
152.Տես՝ **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии..., стр.** 449:
153.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 150, մաս I, թ. 4:
154.Տես՝ նույն տեղում, թ. 2; գ. 16, թ. 263ա:
155.Տես՝ նույն տեղում, գ. 150, մաս I, թ. 4:
156.Տես՝ նույն տեղում, գ. 66, թ. 109:
157.Տես՝ նույն տեղում, գ. 67, թ. 21:
158.Տես՝ նույն տեղում, թ. 20:
159.Տես՝ նույն տեղում, թ. 14:
160.Տես՝ նույն տեղում, թ. 33:
161.Տես՝ նույն տեղում, թ. 16:
162.Տես՝ նույն տեղում, թ. 18:
163.Տես՝ նույն տեղում, գ. 66, թ. 120:
164.Տես՝ նույն տեղում, թ. 111:
165.Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 17, թ. 78:
166.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 12:
167.Տես՝ նույն տեղում, գ. 66, թ. 147:
168.Տես՝ նույն տեղում, գ. 66, թ. 148:
169.Տես՝ նույն տեղում, թ. 149:
170.Տես՝ նույն տեղում, գ. 16, թ. 5:
171.Տես՝ նույն տեղում, ֆ. 202, ց.1, գ. 13, թ. 89:
172.Տես՝ Ալ. Խատիսեան. Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը..., Բէյրութ, 1968, էջ 114:
173.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ ֆ. 202, ց.1, գ. 13, թ. 89:
174.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ. 27, թ. 1-2:
175.Տես՝ նույն տեղում, ֆ. 199, ց.1, գ. 6, թ. 15:
176.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 12:
177.Տես՝ նույն տեղում, թ. 7:
178.Տես՝ նույն տեղում, թ. 7; Տես նաև՝ Հայաստանի Հանրապետությունը 1918 - 1920 թթ. (քաղաքական պատմություն). Փաստաթղթերի և

նյութերի ժողովածու: Կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան (ղեկավար), Վ. Մելիքյան և ուրիշներ: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000, էջ 73-74:
179.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 37-38:
180.Տես՝ նույն տեղում, ֆ. 201, ց.1, գ. 484, թ. 74, 199:
181.Տես՝ նույն տեղում, ֆ. 199, ց.1, գ. 6, թ. 1:
182.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 41:
183.Տես՝ նույն տեղում, գ. 16, թ. 8:
184.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.2, գ. 27, թ. 3:
185.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 59; գ. 16, թ. 8:
186.Տես՝ նույն տեղում, գ. 99, թ. 46:
187.Տես՝ նույն տեղում, ֆ. 201, ց.1, գ. 484, թ. 74; ֆ. 199, ց.1, գ. 6,թ. 19:
188.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ.16, թ. 10:
189.Տես՝ **Армяно-грузинский вооружённый конфликтъ…, стр.** 31:
190.Տես՝ նույն տեղում, էջ 31:
191.Տես՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու.., էջ 77:
192.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 150, թ. 11-12:
193.Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 226:
194.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 13:
195.Տես՝ նույն տեղում:
196.Տես՝ նույն տեղում, ֆ. 223, ց.1, գ. 61, թ. 24:
197.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 13:
198.Տես՝ **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр.** 452:
199.Տես՝ **Армяно-грузинский вооружённый конфликтъ…, стр.** 22:
200.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց.1, գ. 6, թ. 24:
201.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 11:
202.Տես՝ նույն տեղում, գ. 665, թ. 9:
203.Տես՝ նույն տեղում, գ. 16, թ. 13-14:
204.Տես՝ Բանբեր Հայաստանի արխիվների. 1991. N° 3, էջ 25:
205.Տես՝ նույն տեղում, էջ 74:
206.Տես՝ նույն տեղում:
207.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 14:
208.Տես՝ **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр.** 456 - 457:
209.Տես՝ **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр.** 458:
210.Տես՝ նույն տեղում, էջ 460:
211.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 96, թ. 38:
212.**Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр.** 461:

213.Տես` Ալ. Խատիսեան. Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բ. տպագրություն, 1968, Բէյրութ, էջ 118:
214.Տես` ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 96, թ. 38:

## Գլուխ Երրորդ

# ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ, ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի կողմից գործադրված ջանքերը էական արդյունքներ չտվեցին, ամեն ինչ գնում էր դեպի փակուղի, և «եղբայրական» Վրաստանը նպաստում էր դրան: Կանխել պատերազմը՝ չհաջողվեց: Այն սկսվեց դեկտեմբերի 13-ին: Այդ մասին դիպուկ է նկատում Հայաստանի Առաջին Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին. «*Դեկտեմբերի սկզբներին ծագեց կարճատեւ հայ - վրացական պատերազմը:*

*Երբ թուրքական բանակը՝Ալեքսանդրապոլի վրայից անցնելով՝ հասաւ Փամբակ ու գրաւեց Ղարաքիլիսան, վրացիները օգտուեցին հանգամանքից ու զօրքերը մտցրին Հայկական Լօռին: Պատրուակը այն էր, թե ուզում են կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը դէպի Թիֆլիս: Բայց թուրքերի հեռանալուց յետոյ էլ վրացիները չուզեցին դատարկել Լօռին, ընդհակառակը, եռանդօրէն աշխատում էին ամրացնել ու յաւերժացնել իրենց տիրապետութիւնը,իսկ տեղացիների դժգոհութեան արտահայտութիւնները խեղդում էին դաժանօրէն:*

*Լօռին - կռվածաղիկ էր Հայաստանի եւ Վրաստանի միջև, ամէնից ցաւոտը հայ - վրացական սահմանային վէճերի մեջ:*

*Մեզ վրա ճնշում գործ դնելու նպատակով, Վրաստանը փաստօրեն կտրել էր մեր հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ, փակել էր մեր սահմանները, նույնիսկ այն հացը, որ ուղարկւում էր դրսից մեր սովամահ գաղթականութիւնը կերակրելու համար, այդ հացն էր հանդիպում Վրաստանում բազմազան արգելքների ու ուշանում էր, լրիւ չէր հասնում տեղը:*

*Վրաստանը գրաւել էր Լօռին, փակել երկաթուղին ու պաշարել մեզ, այն էր պատերազմի հիմնական պատճառը:*

*Իսկ անմիջական առիթը՝ Լոռուայ մի քանի հայ գիւղերի ապստամբութիւնն էր եւ Վրաց կառավարութեան գործադրած անհամապատասխան խիստ միջոցները, կարծես կառավարու-*

*թիւնը առիթ էր որոնում (ու նույնիսկ ինքը ստեղծում) որպեսզի կոտորի ու ահաբեկի հայ ազգաբնակչութիւնը»*[1]:

Բավականին ամբողջական և ուշագրավ է Հայաստանի Սովետական Հանրագիտարանի համապատասխան հատորում զետեղված կարծիքը հայ - վրացական պատերազմի ծագման պատճառների մասին: «*Այն հակասությունները, որոնք հանգեցրին Անդրկովկասյան սեյմի վերացմանը, երեք ազգ. հանրապետությունների ստեղծումից հետո ոչ միայն չթուլացան, այլև ավելի սրվեցին, վերաճեցին զինված ընդհարումների նրանց միջև: Դեռևս 1918-ի մայիսին, երբ թուրքական զորքերը մտել էին Անդրկովկաս, վրացական մենշևիկները, նրանց առաջխաղացումը դեպի Թիֆլիս կանխելու պատրվակով, իրենց զորքերը մտցրին Լոռի: 1918-ի վերջին, երբ թուրք զորքերը թողեցին Անդրկովկասի սահմանները, Վրաստանի մենշևիկյան կառավարությունը հրաժարվեց Լոռին վերադարձնել Հայաստանին: 1918-ի դեկտեմբերին Վրաստանի և Հայաստանի միջև Լոռու համար պատերազմական գործողություններ սկսվեցին: Ընդհարմանը միջամտեցին Անտանտի երկրները: Անգլիացիների առաջարկով Բորչալուի գավառից ստեղծվեց «չեզոք գոտի», որն ընդգրկում էր գրեթե ամբողջ Լոռին: Անգլիական զորքերը մտան «չեզոք գոտի»: Այդպիսով, Հայաստանի Հանրապետությունից խլվեցին նրա հյուսիսային շրջանները»*[2]:

Վրաց - հայկական պատերազմի մեջ բոլշևիկյան պետական - քաղաքական, կուսակցական գործիչ Ս. Օրջոնիկիձեն մեղադրում է Մեծ Բրիտանիային. «*Անդրկովկասի ռեսպուբլիկաների մեծ հովանավորը՝ Անգլիան և նրա գործակալները, իրենց տիրապետությունը հիմնելով «բաժանիր և տիրիր» սկզբունքի վրա, պատերազմ են հրահրում Վրաստանի և Հայաստանի միջև: Եթե Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերությունների ամբողջ պատմությունը երբեք պատերազմ չի տեսել այդ երկու եղբայրական ժողովուրդների միջև, ապա բավական եղավ, թույլ տվեք ասել, սոցիալիստների՝ մենշևիկների և դաշնակների՝ իշխանության գլուխ անցնելը և երկու եղբայրական ժողովուրդները մահացու կռիվ սկսեցին <u>ինչ-որ մի պատառ հողի համար</u>, թափելով հարյուրավոր բանվորների և գյուղացիների՝ հայերի և վրացիների արյունը ի հաճույս անգլիական վաճառականների և արդյունաբերողների, որոնք օգտվեցին դրանից, որպեսզի թե՛ մենշևիկ-*

*յան և թե՛ դաշնակցական բանդիտներին քշեին վիճելի տերիտորիայից և հայտարարեին չեզոք գոտի, այսինքն գցեին իրենց ծեռքը, որը և նրանք արին: Հիմարացված դաշնակներն ու մենշևիկները բացատրություններ էին տալիս պառլամենտ - Բալագանում՝ ոմանք Երևանում, մյուսները՝ ի դեմս Ժորդանիայի,Թիֆլիսում: Վրացական ռազմատենչ նացիոնալիստների այն հարցին, թե ինչու՞ պատերազմը դադարեց և ինչու՞ այն անհետևանք ավարտվեց, ալեհեր ծերունի Ժորդանիան, որը ծերության հասակում դարձել էր համաշխարհային իմպերիալիզմի սպասավորը, իր մարդակեր նացիոնալիստներին շփոթված պատասխանում էր, թե պատերազմը դադարեց, որովհետև "Անգլիայի միջամտության հետևանքով պատերազմը կորցրեց իր հեռանկարը..."»*[3]: Ընդհանուր առմամբ, որոշ վերապահումներով հանդերձ, կարելի է համաձայնվել վերոնշյալ տեսակետով արտահայտված այս կամ այն նրբերանգի հետ, սակայն կան հարցադրումներ, որոնց հետ դժվար է համաձայնվել, քանի որ դրանք իրողությունը չեն արտահայտում: Հարցը վերաբերում է պատերազմի պատճառներին և առիթներին, մոտիվացիային: Համակարծիք լինելով Հովհ. Քաջազնունու վերն արտահայտված մտքերի հետ, միաժամանակ սակայն դժվար է համաձայնվել այն տեսակետի հետ, ըստ որի պատերազմի սկսման մեջ «*որոշ դեր կատարել է նաեւ մեր բանակի մէջ գտնւող ռուս սպաների պրօվօկացիան*», որովհետև անհավանական էր, որ այդ ռուս սպաները «գրգռում էին» հայկական զինվորական շրջանները Վրաստանի դեմ, ստեղծում էին թշնամական մթնոլորտ, որ «*շատ նպաստաւոր էր ռազմական գործողութիւններ սկսելու համար*»[4], քանզի դրանք հաստատող ուղղակի և հիմնավորված լուրջ փաստեր պարզապես չկան:

Ըստ էության քիչ ավելի ամբողջական և ավելի տրամաբանական է Հայ Ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության 7-րդ հատորում արտահայտված տեսակետը (հաշվի առնելով նաև այն ժամանակաշրջանը, երբ այն գրվել է): Ընդհանուր առմամբ ճիշտ է բացահայտված սյուժեն, վեր հանված է այն աշխարհաքաղաքական իրավիճակը, որը հանգեցրեց այդ պատերազմին: Որպեսզի նյութն ավելի ամբողջական և լիարժեք ընկալվի, բառացի մեջբերում ենք հետևյալը. «*Բորչալուի գավառի համար 1918 թվականի դեկտեմբերին եղբայրասպան պատերազմ է ծագում Հայաստանի և Վրաստանի միջև: Միջամը-*

*տելով այդ պատերազմին, անգլիական իմպերիալիստներն առաջարկում են վիճելի շրջանը հայտարարել «չեզոք գոտի», որը կառավարվելու էր անգլիական «նահանգապետի» կողմից: «Չեզոք գոտի» մտցվեցին անգլիական զորքեր... երկրամասը բաժանելով մանր մասերի, անգլիական իմպերիալիստներն այդ վայրերում հիմնում էին իրենց ժամանակավոր գեներալ-նահանգապետությունները (Կարսում, Բաթումում և այլ վայրերում) կամ ստեղծում "չեզոք գոտիներ"*»[5]:

Հարկ է նշել, որ այս հարցի հետ կապված կան որոշ տարակարծություններ ևս, որոնց մասին նույնպես արժե նշել: Վրաց - հայկական պատերազմի սկսվելու օրի հետ կապված տարբեր հեղինակներ տարբեր օրեր են նշում և միակարծիքություն այս տեսակետում չկա: Այդ օրերիականատես, ՀՀ վերջին վարչապետ Ս. Վրացյանը որպես այդ պատերազմի սկիզբ դիտում է դեկտեմբերի 13-ը[6], մեր օրերի հետազոտող Հ. Գևորգյանը ևս նույն կարծիքին է[7], Աշ. Մելքոնյանը նշում է դեկտեմբերի կեսերը՝ տեղին ընդգծելով նաև, որ այդ պատերազմի «*սանձազերծման գործում... իրենց ամենամեծ դերն ունեցան թուրքերը*»[8], իսկ Մ. Կարապետյանը որպես այդ պատերազմի սկիզբ դիտում է դեկտեմբերի 11-ը, երբ Ալեքսանդրապոլից ուղարկված հայկական 4-րդ հետևակային գնդի առաջին գումարտակը շարժվեց Ախալքալաքի գավառ, և առատ ձյան միջոցով շարժվելով դեպի քաղաք, ճանապարհին ընդհարում ունեցավ վրացական փոքրաթիվ կայազորի հետ, որը կարճատև մարտից հետո դիմեց նահանջի[9]:

**«Великая Октябрьская Социалистическая революция»** հանրագիտարանում նշվում է, որ ռազմական գործողությունները սկսվեցին դեկտեմբերի 9-ին, որն առաջ բերեց շովինիստական պայքթյուն և մենշևիկյան Վրաստանում, և դաշնակցական Հայաստանում[10]:

Սակայն ի մի բերելով վերն ասվածը, կարելի է գալ այն եզրահանգմանը, որ առավել նպատակահարմար թվագրումը դեկտեմբերի 13-ն է, երբ սկսվեցին ռազմական բուռն և լուրջ գործողություններ Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև: Վրաց-հայկական ռազմաճակատում գործող Հայկական զորքերի թվակազմի մեջ ներգրավվեցին 3-րդ բրիգադի 5-րդ և 6-րդ հայկական գնդերը՝ իրենց տրամադրված հրետանային դի-

վիզիոնով, որոնք տեղակայված էին Ղարաքիլիսայում և Դիլիջանում, 2-րդ հետևակային գունդը՝ 6-րդ հրետանային մարտկոցով, 4-րդ գունդը, որից մեկ գումարտակ արդեն ուղարկվել էր Ախալքալաք, գնդապետ Կորոլկովի հեծյալ գունդը, որը տեղաբաշխված էր Շահալի - Վորոնցովկա ուղղության վրա[11]:

Ս. Վրացյանը իր «Հայաստանի Հանրապետություն» գրքում բերում է այդ պատերազմին մասնակցած զորամիավորումների մասին բավականին ամբողջական տվյալներ. «*Գործողություն սկսող զորամասի մեջ մտնում էին հետևյալ միավորները. աջ թևում՝ փոխգնդապետ Կորոլկովը 6-րդ գնդի 2-րդ վաշտով, 2 գնդացիրով, 3 հարյուրյակ ձիավորով և միլիցիոն գնդի 4 վաշտով: Կենտրոնում՝ փոխգնդապետ Նեստերովսկին 4-րդ գնդի 2 գումարտակով, 4 գնդացիրով, 7-րդ լեռնային մարտկոցը 2 թնդանոթով: Ձախ թևում՝ գնդապետ Տեր - Նիկողոսյանը 5-րդ գնդի 3 գումարտակով, 12 գնդացիրով, 4-րդ լեռնային մարտկոցը 3 թնդանոթով: Ընդհանուր պահեստ՝ հրամանատար գնդապետ Միրիմանյանը 4-րդ գնդի 3 վաշտով, 4-րդ գնդի ձիավոր հետախույզներով և 7-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանոթներով: Զորամասի ուժերի համագումար թիվն էր՝ 28 վաշտ, 26 գնդացիր, 7 լեռնային թնդանոթ, 4 հարյուրյակ ձիավորներ: Այս համեստ ուժերով սկսվեց հայ - վրացական պատերազմը*»[12]:

Ավելի ընդհանրացնող տվյալներ այդ պատերազմին մասնակցած հայկական բանակի թվակազմի մասին հանդիպում ենք ՀՀ զինվորական առաջին նախարար գեներալ Հախվերդյանի հուշագրությունում. «*վաշտերը 100 - 200 անձնակազմ ունենալու պայմաններում զորամասերի անձնակազմի քանակը պետք է կազմեր 6000 սվին, 2000 աշխարհազորայիններ և 16 - 20 հրանոթ*»[13]: Ի դեպ հարկ է ասել, որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր բանակի թիվն ըստ Հովի. Քաջազնունու 1919 թ. աշնանը ԱՄՆ-ի կառավարությանը ներկայացրած հուշագրի տվյալների ևս այնքան մեծ չէր, և հասնում էր 1919 թ. հուլիսի վերջերին 18 հազար հոգու[14], որից ինչպես արդեն տեսանք վերը, 6000 հոգի գտնվում էր հայ - վրացական ճակատում:

Սակայն հայկական բանակի զորամասերը անցնելով սարդարապատյան ճակատամարտաշարքի բովով (որի մասին հիշողությունները դեռևս բավականաչափ թարմ էին), բավականին թրծվել էին և մարտունակ էին, և դեռևս նրանցից հեռու էին

քեմալա-բոլշևիկյան քայքայիչ քամիների հովերը, աշխարհաքաղաքական իրավիճակն էլ դեռևս այնքան սարսափելի չէր, ինչպես 1920 թվականի դեկտեմբերին, իսկ դաշնակիցներն էլ առատ խոստումներ էին տվել: Այնուհանդերձ, այդ փոքրաթիվ բանակի իրական հնարավորությունները բավականին համեստ էին, հատկապես զինվածության, և հանդերձավորման, ռազմամթերքի և սննդամթերքի առումով: Հայաստանի ծանր սոցիալ - տնտեսական իրավիճակը, բազմահազարանոց գաղթականությունը իր պրոբլեմներով հանդերձ իր ծանր կնիքն էր թողնում այդ ամենի վրա: Ավելացրած դրան, վրացական զորքերն ավելի լավ էին հագեցած տեխնիկապես նաև այն առումով, որ նրանց ուղեկցում էին 3 զրահագնացքներ, որոնք հզոր ուժ էին ներկայացնում: Հետագայում պարզվել է, որ Հայաստանի դեմ գործող վրաց զորքերի թիվը կազմել է 12 հազար սվին[15], այսինքն գրեթե 2 անգամ ավելի հայկական զորքերից: Դա շատ պատկերավոր է նկատել Ս. Վրացյանը իր «Կյանքի ուղիներով» հիշողությունների հրաշալի գրքաշարի Ե. հատորում. «*Այստեղ կարող եմ ասել, որ Հայաստանը բոլորովին անպատրաստ էր նման պատերազմի համար, բայց ժողովուրդը և բանակը այնքան վրդովված էին վրացիների անիրավ վերաբերմունքից, որ կռվեցին արտակարգ քաջությամբ: Ընդհակառակն, վրացիները, որ ամեն տեսակետից գերազանց վիճակի մեջ էին, ունեին առատ ռազմամթերք, ուտելիք, հաղորդակցության միջոցներ, պատերազմի համար անհրաժեշտ մեքենայական սարքավորում, Գերմանիո աջակցությունը իրենց թիկունքում, զարմանալի կերպով ապիկար դուրս եկան*»[16]:

Իսկ ահա հայ մեծագույն բանաստեղծ Հովհ. Թումանյանը Անդրանիկ Օզանյանին 1918 թ. դեկտեմբերի 14-ին ուղարկված նամակում պատերազմի այս պատճառների ու սկզբի մասին շատ պատկերավոր նկատում է. «*Լոռեցիները վրաց զորքերի լըրբությունից կատաղած հարձակվել են նրանց վրա, և առաջ է եկել կանոնավոր պատերազմ: Վրացիք նահանջել են մինչև Բողչալու՝ տալով բավական սպանվածներ և գերիներ:*

*Զբաղված ենք էդ կռիվը վերջացնելու գործով*»[17]:

Եվ այսպես դեկտեմբերի 13-ին հայկական զորքերը ձեռնամուխ են լինում Լոռի - Փամբակը վրացական զորքերից մաքրելու Հայաստանի Հանրապետության կառավարության հրամանի կատարմանը: Հայկական զորքերի հարձակումը նախատես-

ված էր իրականացնել Վորոնցովկա - Պրիվոլնոյե - Սանահին - Օփրեյթ - Այրում ուղղությամբ: Կռիվների առաջին օրվա արդյունքները գոհացուցիչ էին հայկական կողմի համար, չնայած զարհուրելի ցրտերին և այն հանգամանքին, որ մեր զինվորները տաք հագուստից զուրկ էին: Ուշագրավ է Ալ. Խատիսյանի այդ օրերի նկարագրությունը. «*Հայերը համոզուած էին, որ իրենց գործը արդար է: Եւ, ընդհանրապէս, պետք է ըսել, որ պատերազմը ժողովրդական էր, հակառակ ցուրտին և սովին: Հոգեբանօրէն մեր ժողովուրդը կը մղուէր դէպի ազատ ելք, որ փակուած էր Վրաստանի կողմէ: Այնտեղէն էր, որ կը սպասէին հաց եւ յարաբերութիւն արտաքին աշխարհի հետ:*

*Պատերազմը կը մղուէր շատ փոքրիկ ուժերով, կանոնաւոր կռուող զինուորներու թիւը 1000-էն աւելի չէր, բայց անոնց միացած էր Բորչալուի գաւառի ամբողջ հայութիւնը, որ կատաղօրէն կը կռուէր ձգտելով միանալ Հայաստանին*»[18]:

Վրաց - հայկական պատերազմի առաջին իսկ օրը գնդապետ Տեր - Նիկողոսյանի «*զորամասը, գիշերային խիզախ գրոհով, գրավեց Վորոնցովկան ու Պրիվոլնոյեն: Գերի առնվեցին 5 վրացի սպաներ, 45 զինվոր, 3 լեռնային թնդանոթ, 1 «մաքսիմ» գնդացիր, առատ փամփուշտ ու մեծ քանակությամբ ծիեր: Հայկական կողմի կորուստներն էին՝ սպանված տեղակալ Զարաֆյանը, վիրավոր՝ 8 զինվոր և տեղակալ Ազատյանը, որը մինչև կռվի վերջը զորամասից չհեռացավ: Գնդապետ Նեստերովսկու զորամասը գրավեց Սանահին կայարանը, ուր մերոնց ձեռքն ընկան 49 վագոն ու 1 շոգեշարժ և գերի առնվեցին 15 զինվորներ*»[19]: Հայերը որոշակի մարտական հաջողություններ ունեցան նաև Այրումի ուղղությամբ: Վճռականորեն հաղթահարելով 3 զրահապատ գնացքների համառ դիմադրությունը, գնդապետ Կորոլկովի զորամասը քանդեց երկաթուղագիծը և կտրեց նրանց նահանջի ճանապարհը[20]:

Իսկ ինչպես հաղորդում է Դրոն իր հեռագրերից մեկում, այդ նույն ժամանակ գնդապետ Նիկողոսովի գլխավորությամբ գործող ջոկատը գրավելով Նովո-Միխայլովկա գյուղը, շարունակում էր հետախուզությունը դեպի հյուսիս: Դրոն նաև տեղեկացնում էր, որ փոխգնդապետ Նեստերովսկու ջոկատում գտնվող կապիտան Թարվերդովը գիշերային գրոհով ջարդեց վրացիների ջոկատը Հաղպատի և Ախթալայի միջակայքում և գրավեց երկու

հաուբից և մեկ գնդացիր,իսկ շտաբս-ռոտմիստր Փիրումովը Լալվար լեռան մոտ ջախջախեց վրացիներին, գրավելով 1 գնդացիր և 15 գերի: Զինվորական ամփոփագիրը Դրոն ավարտում էր տեղեկատվությամբ այն մասին, որ «*որսորդները վրացական զրահագնացքների վրա ռմբահետումներ են կատարել, որոնցից մեկը պայթեցվել է, և հարձակումը ուղղվել է Ալավերդու կողմը*»[21]:

Հաջող անցան նաև հայկական զորքերի դեկտեմբերի 14-15-ի ռազմական գործողությունները: Վրացիները չդիմացան ճնշմանը և թողեցին Ալլահվերդին (Ալավերդի), որից հետո դուրս եկան Բոլնիս - Խաչեն - Եկատերինֆելդ գիծը: Ինչպես այդ մասին վկայում է Ս. Վրացյանը, «*նույն օրը Կորոլկովի Այրումի ջոկատը, մի խիստ հաջող շարժումով, ոչնչացրեց վրացական մի գունդ և գրավեց Հայրում կայարանը: Վրացիներից գերի ընկան 12 սպաներ գնդ. Վաչնաձեի գլխավորությամբ և 300 զինվորներ: Մոտ 200 հոգի սպանվեցին ու վիրավորվեցին, մյուսները փախան: Մեր կողմից սպանվեցին տեղակալ Մուկուչ Տեր - Հովհաննիսյանը և մի զինվոր, վիրավորվեցին 7 հոգի: Տեր - Նիկողոսյանի և Նեստերովսկու զորամասերը շարունակեցին ճնշել վրացիներին դեպի հյուսիս: Վրաց կողմից սկսեցին երևալ Թիֆլիսից հասած թարմ ուժեր*»[22]:

Այդ նույն օրերին պատերազմը մղվում էր նաև դիվանագիտական ոլորտում: Հայաստանի արտաքին գործերի նախարար Տիգրանյանը 1918 թ. դեկտեմբերի 14-ի ռադիոհեռագրով (№ 912)՝ ուղղված Վրաստանի արտաքին գործերի նախարարին, նշելով, որ ստացել է վերջինիս դեկտեմբերի 9-ի թիվ 5599 հեռագիրը (ըստ էության ուշացած և անպատեհ) և դեկտեմբերի 12-ին ուղարկված երկրորդ նոտան՝ դիմում է վերջինիս առաջարկությամբ վրացական զորքերը դուրս բերել Բորչալուի գավառի հայկական մասից, շեշտելով, որ այդ միջոցը միակ նպատակահարմարն է հետագա արյունահեղության դադարեցման համար: Տիգրանյանը փաստում էր, որ հայկական կառավարության առաջարկը ամենևին չի հանդիսանում միջամտություն Վրաստանի ներքին գործերին, քանի որ ինչպես բազմիցս հայտարարվել է, այդ «*շրջանը անկասկած չի մտնում Վրաստանի տարածքի մեջ, որ բռնի գրավվել է վրացական զորքերի կողմից*»: Այնուհետև շատ դիպուկ Ս. Տիգրանյանը նկատում էր, որ «*ծայրահեղ իր խաղաղասիրությամբ Հայաստանի կառավարությունը ժամանակավո-*

*րապես հաշտվել է այդ դրության հետ, հույս ունենալով, որ Վր-*
*րաստանի կառավարությունը ձեռնպահ կմնա ագրեսիվ գործո-*
*ղություններից խաղաղ բնակչության դեմ, որը չի ցանկանում*
*միանալ Վրաստանին*»: Ս. Տիգրանյանը շեշտում էր, որ «*այդուա-*
*մենայնիվ Վրաստանի կառավարությունը ոչ միայն ընդառաջ չը-*
*գնաց Հայաստանի ցանկությանը՝ խաղաղ ձևով լուծել սահման-*
*ների մասին հարցը, այլև նպատակ ունենալով ամուր կերպով ի-*
*րեն կցել օտար տարածքը, ձեռնարկել է արշավանք ընդդեմ խա-*
*ղաղ բնակչության, որն ուղեկցվում էր արյունոտ և դաժան բռնու-*
*թյուններով ընդհուպ մինչև հայկական գյուղերի գնդակոծումը*
*թնդանոթային կրակով*»: Հեռագրի վերջում Տիգրանյանը շեշտում
էր, որ «*Հայաստանի կառավարությունը չի կարող մնալ անտար-*
*բեր հանդիսատեսի դերում այն բանի նկատմամբ, թե ինչպես հա-*
*րևան պետության զորքերը սանձարձակություններ են անում Հա-*
*յաստանին պատկանող տարածքում և գնդակահարում Հայաս-*
*տանի քաղաքացիներին*»: Ս. Տիգրանյանը ամփոփում էր իր ասե-
լիքը, տեղեկացնելով, որ «*Հայաստանի կառավարությունը ջեր-*
*մորեն ցանկանալով կանխել հետագա բարդացումները*», ցան-
կանում է հավատալ, որ «*Վրաստանի կառավարությունը հարգե-*
*լով Հայաստանի բնակչության ցանկությունները և իրավունքնե-*
*րը կշտապի սեփական նախաձեռնությամբ հեռացնել իր զորքե-*
*րը, որը հնարավորություն կտա վրացական պատգամավորու-*
*թյանը հարաբերության մեջ մտնել հայկական կողմի հետ, վերա-*
*կանգնել հեռագրակապը և դրանով իսկ ամրապնդել ազգակից*
*պետությունների խաղաղ գոյակցությունը*»[23]:

Երկու կողմերն էլ միտումնավոր թե ոչ միտումնավոր հե-
ռագրերը ուշացած էին ստանում, և դա էլ էր ազդում իրադարձու-
թյունների զարգացման ու դրա նկատմամբ վերահսկողության
իրականացման վրա: Պատասխան հեռագրերից մեկում, Գեգեչ-
կորին դիմելով Հայաստանի արտաքին գործերի նախարարին
(պատճենը՝ Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչին {15
դեկտեմբերի, № 5628}), գրում էր, որ ինքը ստացել է միայն №
6913 հեռագիրը, այլ հեռագրեր Վրաստանի կառավարությունը չի
ստացել: Գեգեչկորին աճպարարի հմտությամբ պնդում էր նշված
հեռագրում, որ իբր թե Վրաստանի կառավարությունը ամեն ինչ
արել է, որ բոլոր վիճելի հարցերը լուծվեն համաձայնության հո-
ղի վրա, դրա համար Հայաստանի ներկայացուցիչներին հրավի-
րելով Անդրկովկասյան կոնֆերանսի, սակայն այդ բոլոր փորձե-

րը զուր են եղել: Գեգեչկորին Վրաստանի կառավարության անունից հայտարարում էր, որ հայկական գյուղերի գնդակոծումը և որևիցե ելույթ իրենց կողմից, որոնց մասին հիշատակվում է հայկական կողմի № 912 հեռագրում, չեն եղել մինչև դեկտեմբերի 13-ը, երբ իրենք ստիպված են եղել գնալ դրան պաշտպանության նպատակներով ընդդեմ դեկտեմբերի 9-ին սկսված հայկական զորամասերի ագրեսիվ գործողությունների: Ամփոփելով հեռագիրը, Գեգեչկորին հայտարարում էր, որ միանգամայն որոշակիորեն Վրաստանի կառավարությունը իր պարտքն է համարում հաստատելու իր առաջարկությունը՝ ընդհատել թշնամական գործողությունները, գրավել հին սահմանները և հրավիրել հայվրացական կոնֆերանս՝ վիճելի հարցերի լուծման համար՝ համաձայնության միջոցով, իսկ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում՝ արբիտրաժի միջոցով, հակառակ դեպքում Հայաստանի կառավարության վրա է ընկնում ողջ պատասխանատվությունը երկու հանրապետությունների համար կործանարար հետևանքներով[24]: Նույն բանը Գեգեչկորին պնդեց 1918 թ. դեկտեմբերի 15-ի դիմումագրում՝ ուղղված Համաձայնության երկրների ներկայացուցիչներին: Դրանում նշվում էր, որ դեկտեմբերի 6-ին Սանահինում և Վորոնցովկայում կանգնած իրենց սահմանապահ զորամասերը ենթարկվեցին հայկական կանոնավոր զորամասերի դավաճան հարձակմանը, որի հետևանքով հեռագիրը կտրվեց, իսկ երկաթուղին՝ խանգարվեց: Վրաց լիդերը պընդում էր, որ դեպքերի վայրը ուղարկված պատվիրակությունը, որոնց թվում էին և Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչները, քիչ է մնացել զոհ գնան միջադեպին: Ամփոփելով իր դիմումը, Գեգեչկորին Վրաստանի կառավարության անունից իր պարտքն էր համարում հայտարարել ողջ աշխարհին Հայաստանի կառավարության գործելակերպի մասին և ողջ պատասխանատվությունը իր վրայից վերցնելով, քանի որ օրից օր ըսպասվող Հայաստանի պատվիրակության ժամանումը ձգձգվում է, որի փոխարեն միջազգային հարաբերությունների նորմերով չարդարացված պատերազմը շարունակվում է[25]:

Նույն օրերի մի այլ փաստաթղթում Վրաստանի կառավարությունը պնդում էր, որ իրենք գործ ունեն Հայաստանի «ներքին անիշխանության» հետ[26], որի պայմաններում Հայաստանի Հանրապետության ղեկավարները ոտնատակ են տալիս դեմոկրա-

տական լավագույն ավանդույթները, սպառնալով երկու պետությունների մեջ անիշխանությունը զորացնել, և քանի որ Վրաստանի կառավարությունը այդ հանցանքին ամենևին էլ մասնակից չէ, ուրեմն ողջ պատասխանատվությունը ընկնում է ՀՀ կառավարության վրա, և իրենց երկրի ավերածության դեմն առնելու համար իրենք անխուսափելի համարեցին զինվորական լայն միջոցներ ձեռք առնելու, և քաղաքացիներին կոչ էր արվում կռվելու Երևանի զինվորական խմբակցության դեմ, պահպանելով կատարյալ կարգապահություն և միավորելով բոլոր ուժերը[27]:

Այս միջամտությունը ևս ոչ մի կերպ չի ազդում իրադարձությունների զարգացման հետագա ընթացքի վրա: Պատերազմը կանխելու և եղբայրասպան բախումներին վերջ տալուն Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը և Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ եղան հենց առաջին օրից սկսած: Դեկտեմբերի 13-ին Ազգային խորհուրդը որոշեց պատվիրակություն ուղարկել ապստամբած Լոռու գյուղացիության մոտ, և բանակցել Վրաստանի կառավարության հետ: Վրաց պատվիրակության ներկայացուցիչների հետ (Ն. Ժորդանիա, Ե. Գեգեչկորի, Ն. Ռամիշվիլի) բանակցությունները վարում էին Հայոց Ազգային խորհրդի նախագահ, Վրաստանի պառլամենտի անդամ Արամայիս Երզնկյանը, Արտեմ Խաչատրյանը, Յաղջյանը: Նախնական համաձայնության գալուց հետո, զինված համապատասխան փաստաթղթերով և հրահանգներով, պատվիրակության անդամները (Երզնկյան, Քոչարյան, Աբովյան, Հայաստանի պառլամենտի անդամ Գ. Տեր-Օհանյան) դեկտեմբերի 15-ին դուրս եկան Թիֆլիսից՝ Վորոնցովկայի վրայով Ղարաքիլիսա գնալու համար: Պատվիրակության նպատակն էր՝ անցնելով ճակատային գիծը, կապվել ապստամբած լոռեցիների և Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ բոլոր վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Սակայն դեկտեմբերի 17-ի առավոտյան Եկատերինֆելդում պատգամավորության անդամ Արտեմ Քոչարյանը ենթարկվեց բռնության վրաց ժողովրդական գվարդիականների կողմից՝ մտրակով ծեծի և այլն, Երզնկյանի և Աբովյանի հասցեներին եղան վիրավորանքներ և լուտանքներ՝ սպառնալով կյանքից զրկել: Այն, որ նրանք Վրաստանի պառլամենտի անդամ էին, չազդեց վրաց գվարդիական Մայսուրաձեի վրա, որը հայկական

[8] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

պատվիրակներին մեղադրեց լրտեսության մեջ: Պատվիրակության անդամները ենթարկվեցին ծեծի և վիրավորանքների[28]: Ակընհայտ էր, որ Վրաց կառավարության կողմից բազմիցս արված հայտարարությունները՝ վերջ տալու «եղբայրասպան» պատերազմին, ընդամենը դեկլարատիվ հայտարարություն էր, որը չէր համապատասխանում նրա մեծապետական ծրագրերին ու ձըգտումներին:

Չնայած այս ամենին, այդ ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձում էր կապվել Անդրկովկասում Անտանտյան իր դաշնակիցների ներկայացուցիչների հետ՝ փորձելով միջադեպի հարթման խաղաղ նոր ուղիներ որոնել: Այդ նպատակով ՀՀ Նախարարների խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 14-ի նիստում լսում է մինիստր-նախագահի զեկուցումը ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի Բագու(Բաքու) ուղևորվելու և նրան այդ առթիվ Լոռվա դեպքերի նկատմամբ հըրահանգներ տալու մասին: Ընդունված որոշման մեջ Նախարարների խորհուրդը հանձնարարում է արտաքին գործոց նախարարին Լոռվա իրադարձությունների, Ախալքալաքի վրա զորքերով հարձակվելու և գրավելու, ինչպես նաև Ղարսի ու Կաղզվանի շրջանների թուրքերի կողմից դատարկելու ու վերջիններիս՝ պետական ու մասնավոր անձանց տարած ապրանքները վերադարձնելու մասին տալ Ա. Ահարոնյանին հրահանգներ, որպեսզի նա հանգամանքներին նայած Անգլիական զորքերի գլխավոր հըրամանատար գեներալ Թոմպսոնին (Տոմպսոն) տեղեկություններ հաղորդի՝ ինֆորմացիայի համար, իսկ հարկավոր դեպքում նաև՝ պաշտոնական հարաբերության մեջ մտնի նրա հետ[29]:

Սակայն ապարդյուն:

Վերջ ի վերջո պատերազմի ընթացքի վրա ազդելու և այն կանխելու նպատակով իրենց անմիջական միջամտությունն են կատարում նաև անգլիական զինվորական-քաղաքական ծառայությունները, որոնք իրենց պլաններն ունեին հայտնի տարածաշըրջանում և ամենևին էլ խաղաղասիրությունը չէր առաջնորդում վերջիններիս իրենց գեոպոլիտիկ խոշորամասշտաբ ծրագրերում: Եվ այնուհանդերձ, 1918 թ. դեկտեմբերի 15-ին անգլիական ծառայության կապիտան Գրինը Հայաստանի կառավարությանն է ներկայացնում զինադադարի հետևյալ պայմանները.

*«1) Զինադադար 14 օրով, 2) երկու պատերազմող կողմերը թողնում են Լոռու և Ախալքալաքի բոլոր վիճելի շրջանները, 3) բոլոր գյուղացիները պետք է հանգիստ թողնվեն և ոչ ոք չպետք է միջամտի նրանց գործերին, նրանց պետք է թույլատրվի զբաղվել իրենց ամենօրյա աշխատանքով, 4) երկաթուղագիծը պետք է վերականգնվի, բոլոր գնացքները պետք է բաց թողնվեն և ճանապարհը պետք է բաց լինի ինչպես վրացիների, այնպես էլ հայերի համար առանց որևիցե հապաղման, 5) երկու կողմերն էլ պետք է իրենց ներկայացուցիչներին ուղարկեն Սանահին՝ հարցի համատեղ լուծման համար, 6) զրահագնացքը պետք է կանգնի Սանահինում, վրացական սպասակազմը պետք է թողնի գնացքը, որը պետք է գտնվի բրիտանական հանձնաժողովի կարգադրության տակ, 7) Ախալքալաքի գավառում փախստականների հայկական ներկայացուցիչներին պետք է թույլատրվի մնալ տեղում և շարունակել աշխատանքը առանց արգելքների և ողջ պարենամթերքը պետք է անխոչընդոտ բաց թողնվի»*[30]: Ի դեպ հարկ է ասել, որ բերված տեքստի և «Բանբեր Հայաստանի արխիվների» 1991 թ. № 3-ում հրատարակված տեքստի միջև (էջ 83) որոշակի անհամապատասխանություն կա բերվող կետերի բովանդակության և համապատասխանության միջև, սակայն երևի թե ավելի ամբողջական, ճիշտ է վերը բերված տարբերակը: Հենց այդ տեքստի կետերին էլ համապատասխանում է կառավարության թե՛ հարցադրումը, և թե՛ հարցապնդումը:

1919 թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ Նախարարների խորհրդի նիստը քննարկում է մինիստր - նախագահ Քաջազնունու զեկուցումը՝ Դրոյից ստացված հեռագիրը, կապված կապիտան Գրինի առաջարկության հետ Լոռվա շրջանում ծագած հայ - վրացական կոնֆլիկտը խաղաղությամբ վերջացնելու մասին: Նշվում է նաև, որ այդ կապակցությամբ տեղի է ունեցել նաև կառավարության և Հայաստանի խորհրդի ավագների միացյալ խորհրդակցությունը՝ նոյեմբերի 15-ի երկու նիստերի ընթացքում:Նախարարների խորհրդի նախագահի զեկուցագրում հարց էր բարձրացվում խնդրել կապիտան Գրինին պարզաբանելու իր առաջարկության մի քանի կետեր, որոնց իմաստը կարող էր տարբեր մեկնաբանությունների տեղիք տալ,որից հետո այն մտցնել Հայաստանի խորհուրդ քննության համար: Այդ առթիվ նաև Նախարարների խորհուրդն ընդունում է համապատասխան որոշում՝ հեռագիր ուղարկել Դրոյին, որում նշվում էր, որ կապիտան Գրինի առաջար-

կությունը ընդունվել է սկզբունքային համակրությամբ և մտցվել է Հայաստանի խորհրդի օրակարգ՝ քննության համար կոնկրետ հրահանգներ ստանալու նկատառումով[31]:

Դեկտեմբերի 15-ին վարչապետ Հովի. Քաջազնունին Դարաքիլիսայում գտնվող գեներալ Սիլիկյանի միջոցով Դրոյին հեռագրով տեղեկացնում էր, որ կապիտան Գրինի առաջարկությունը սկզբունքորեն ընդունելի է, սակայն խորհրդարանին զեկուցելու համար անհրաժեշտ է պարզաբանում, քանի որ «*Լոռիի դեպքերը խորհրդի որոշմամբ են ձեռնարկված:Խորհրդում զեկուցում տալու համար անհրաժեշտ է կապիտան Գրինից ստանալ մի քանի բացատրություններ նրա առաջարկի հետևյալ կետերի նկատմամբ: Առաջին կետի մասին՝ տրվու՞մ է արդյոք երաշխիք, որ վըրացիները չեն օգտագործի զինադադարը զորքի ուժեղացման և կենտրոնացման համար: Երկրորդ կետի մասին՝ համաձայն ազգագրական սկզբունքի և ազգերի ինքնորոշման իրավունքի, Ախալքալաքի ամբողջ գավառը և Բորչալվի հայկական մասը անվիճելիորեն մենք համարում ենք Հայաստանին պատկանյալ, վիճելի ենք համարում միայն Խրամ գետից հյուսիս գտնվող մասը: Հինգերորդ կետի մասին՝ ի՞նչ հարցեր պիտի լուծվեն և քննվեն Սանահինում գումարվելիք Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչների ժողովին: Վեցերորդ կետի մասին՝ հնարավոր չէ՞ արդյոք զրահապատ գնացքը թողնել Հայաստանի տնօրինության տակ, որպիսին շատ անհրաժեշտ է Հայաստանին, Երևան - Ջուլֆա երկաթուղագիծը պարսկական քրդերի հարձակումներից պաշտպանելու համար: Մի լրացուցիչ հարց ևս, առաջարկն արվա՞ծ է Վրաստանի Հանրապետությանը և ի՞նչ պատասխան է ըստացված*»[32]:

1918 թ. դեկտեմբերի 16-ին Նախարարների խորհուրդն իր հերթական նիստում լսում է վարչապետ Քաջազնունու զեկուցումը՝ կապված Հայաստանի խորհրդի արտակարգ նիստում կապիտան Գրինի կողմից արված առաջարկության՝ հայ - վրացական կոնֆլիկտը խաղաղությամբ վերջացնելու մասին հարցի քննության հետ կապված: Նախարարների խորհուրդն ընդունում է ըսկըզբունքորեն խաղաղասիրական որոշում. ընդունել կապիտան Գրինի առաջարկը իբրև հիմք խաղաղության բանակցություններ սկսելու համար, համաձայնվելով, որ 1) Ախալքալաքի գավառից և Բորչալու գավառի հայկական մասից վրացական և հայկական

զորքերի դուրս բերելու առաջարկը համարել ընդունելի, եթե հաստատ երաշխիք լինի, որ Վրաց կառավարությունը չի շահագործի այդ հանգամանքը իր զորամասերը ուժեղացնելու և դատարկված գավառները նորից գրավելու նպատակով, 2) հատուկ պատվիրակություն ուղարկելու առաջարկը նկատել ընդունելի, 3) մյուս կետերի վերաբերմամբ սպասել կապիտան Գրինի բացատրություններին[33]:

Բավականին արագ կապիտան Գրինից ստացվում է պատասխան հետևյալ բովանդակությամբ. «*Մինիստր - նախագահ Քաջազնունուն: Առաջին կետի մասին՝ ոչ,չեմ կարող: Եթե վրացիները սկսեն զորախաղացում, զինադադարը խախտվում է: Երկրորդ կետի մասին՝ այդ հարցը լուծելու է հաշտարար վեհաժողովը: Հինգերորդ կետի մասին՝ այդ ժամանակավոր միջոց է, որով հնարավոր է երկաթուղագծի վրա փոխադարձ աշխատանք: Վեցերորդ խնդրի մասին՝ գնացքի խնդիրը կլուծվի արբիտրաժին, միևնույն ժամանակ և վերականգնել երկաթուղագիծը, վերջ տալ ժողովուրդների տանջանքին: Նորից հայտնում եմ հինգերորդ կետը, որ դուք սխալ եք հասկացել: Սահմանին կայարանում երկու կողմերի ներկայացուցիչները պետք է փոխադարձ ջանքերով կանոնավորեն և հսկեն գնացքների երթևեկությունը: 1918 թ. դեկտեմբերի 16: Կապիտան Գրին*»[34]: Այդ կապակցությամբ 1918 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ Նախարարների խորհուրդը քննարկում է վարչապետի զեկուցումը Հայաստանի խորհրդի (պառլամենտի) դեկտեմբերի 16-ին կայացած արտակարգ նիստի որոշման մասին՝ կապված կապիտան Գրինի առաջարկության հետ և այդ կապակցությամբ պատվիրակության կազմման, նրան տրվող հրահանգների, դրանում զինվորականների ընդգրկման, ինչպես նաև ֆրանսիական կապիտան Պուադեբարի մասնակցության մասին այդ պատվիրակության աշխատանքներին: Նախարարների խորհրդի նիստի կողմից ընդունված որոշման մեջ արձանագրվում էր, որ պատվիրակությունը պետք է կազմված լինի Հայաստանի խորհրդի անդամներից, թվով հինգ հոգի, որոնք պետք է նշանակվեին Նախարարների խորհրդի նախագահի համաձայնությամբ: Կառավարության նիստի որոշմամբ Հայաստանի պատվիրակությանը հրահանգվում էր առաջնորդվել կառավարության և ավագների խորհրդի նիստում(այդ թվում միացյալ) ընդունված տեսակետներով, միաժամանակ ընթացքում մշտական կապ պահ-

պանելով կառավարության հետ՝ նոր հարցերի առաջացման դեպքում: Կառավարության որոշմամբ պատվիրակությանը կցվում էր փործառու զինվորական գեներալ Ղորղանովը (Ղորղանյան) (որը նաև սերտ կապեր ուներ ՀՀ հետախուզական ծառայությունների հետ)[35]: Ըստ կառավարության մտահղացման, այդ պատվիրակությանը պետք է ուղեկցեր ֆրանսիական բանակի սպա, կապիտան Պուադեբարը[36]: Պարզելով իրեն հետաքրքրող հարցերը, ՀՀ կառավարությունը և պառլամենտը անհրաժեշտ գտան (դեկտեմբերի 17, № 85) բախման վայրը ուղարկել խաղաղության պատգամավորություն, կարծելով, թե նույնպիսի պատգամավորություն կժամանի Վրաստանից խաղաղ համաձայնության միջոցով կոնֆլիկտի վերացման համար, ինչի մասին և տեղեկացվում էր վերոհիշյալ գրությամբ Վրաստանի արտաքին գործերի նախարարությանը[37]:

Մի այլ գրությամբ (դեկտեմբերի 19, № 946) Հայաստանի արտաքին գործերի նախարար Տիգրանյանը տեղեկացնում էր, որ պառլամենտի որոշմամբ կառավարությունը պատգամավորություն է ուղարկել Վրաստանի կառավարության լիազորների և կապիտան Գրինի հետ համատեղ ռազմական գործողությունների դադարեցման պայմանները սահմանելու համար: Միաժամանակ հայտնվում էր, որ Հայաստանի պառլամենտը գտնում է, որ «*Հայկական կառավարությունը կարող է իր զորքերը Բորչալվի գավառից դուրս բերել միայն այն դեպքում, որ եթե երաշխիք ըստանան, որ այդ գավառը, ինչպես և Ախալքալաքի գավառը կապահովեն վրացական զորքերի նոր ներխուժումից*»[38]: Մերժելով վրացական կողմի սին մեղադրանքները, հեռագրում նաև ընդգծվում էր, որ Վրաստանի կառավարությունը իր ոտնձգությամբ Լոռու նկատմամբ, Ախալքալաքի ռազմական գրավմամբ, ռազմական ռեպրեսիաներով Բորչալույում հանդես է եկել որպես ագրեսիվ նվաճողական քաղաքականության կրող՝ լիովին անտեսելով Հայաստանի կառավարության կողմից բազմիցս արված դիվանագիտական բողոքագրերը և խաղաղության առաջարկները: Միաժամանակ հույս էր հայտնվում, որ Վրաստանի կառավարությունը ընդառաջ կգնա Հայաստանի կառավարությանը ամուր և խաղաղ հարաբերություններ հաստատելու համար՝ բնակչության ինքնորոշման սկզբունքին և փոխադարձ տարածքային իրավունքների հարգման հիման վրա[39]: Հարկ է նշել, որ այս խա-

ղաղասիրական առաջարկը կրկնվում է դեկտեմբերի 22-ին (№ 950), երբ Հայաստանի արտաքին գործերի նախարար Տիգրանյանը հավաստիացնում էր Հայաստանի կառավարության պատրաստակամության մասին՝ վերջ տալու արյունահեղությանը, այդ նպատակով դեռ դեկտեմբերի 19-ին ուղարկելով պատգամավորություն[40]:

Հարկ է ասել նաև, որ Հայաստանի անտանտյան գծով դաշնակիցները այդ օրերին որոշակի կրավորականություն էին ցուցաբերում: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից երևում է, որ հայկական ակնկալիքները կապված անգլիացիների և ֆրանսիացիների դիրքորոշման հետ, այնքան էլ հիմնավոր չէին: Դա երևում է Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Թումանովի (Թումանյան) կողմից Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված մի շարք հաղորդագրություններից (դեկտեմբերի 15-19 ժամանակահատվածում): Դեկտեմբերի 15-ի գրությունում (№ 2229) Թումանովը հաղորդում էր, որ Բորչալվի իրադարձությունների առիթով ինքը զրույց է ունեցել ֆրանսիական և անգլիական ներկայացուցիչների հետ: Թումանովը տեղեկացնում էր, որ ֆրանսիական ներկայացուցիչը համեմատաբար միանգամայն կարեկցաբար է արտահայտվել զինված բախման վերաբերյալ, և ցավում է, որ Հայկական կառավարությունը չի բողոքել դաշնակիցների առաջ վրացիների կողմից Ախալքալաքի գրավման կապակցությամբ և ընդդեմ նրանց բռնությունների Բորչալույում: Թումանովը նաև հաղորդում էր, որ անգլիական մայոր Մակդոնալդը հայտարարություն է արել այն մասին, որ տվյալ պահը հայերի համար չափազանց պատասխանատու է, քանի որ մինչև խորհրդաժողովը՝ հարցերը մնում են չլուծված և որոշումը կարող է թեքվել դեպի անբարենպաստ կողմը, եթե տեղ գտնեն տեղի ունեցածի նման փաստեր (նկատի ունենալով Բորչալվի բախումները): Տեղեկացվում էր նաև, որ հարցում է արվել Բաքու՝ վիճելի տարածքների նկատմամբ դաշնակիցների կողմից հսկողության հնարավորության մասին, և դեռ պատասխան չի ստացվել: Թումանովը այդ հանդիպումից եզրահանգում էր, որ այդ բախումները կբերեն շատ վնաս քաղաքական առումով, և անհրաժեշտ է բոլոր միջոցներով առանց հապաղման հանգցնել պատերազմի հրդեհը, բացատրելով, որ այն թյուրիմացության արդյունք է: Թումանովը գտնում էր, որ կռվելու վճռականություն ցուցաբերելով

տարածքների հարցում, կարելի է համարել նպատակին հասած, սակայն հետագա բախումը ուժեղ կերպով կվնասի գործին[41]:

Թումանովի զգուշավորությունը զուր չէր, առավել ևս ինչպես պարզվում է Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված դեկտեմբերի 17-ի գրությունից (№ 2255) դաշնակիցները վիճելի տարածքների օկուպացիայի համար զորք չէին կարող տալ (անգլիացիները դա արեցին հետո, այն էլ, երբ նպատակահարմար գտան և իրենց հարմար ձևով): Թումանովը տեղեկացնում էր, որ Թիֆլիսում գտնվող ֆրանսիական ներկայացուցիչն առաջարկել է հայկական զորքերը կանգնեցնել Խրամ գետի գծի վրա, միաժամանակ հայտարարելով, որ դա ժամանակավոր օկուպացիա է և նպատակ է հետապնդում պաշտպանել հայկական բնակչությանը, չհավակնելով վերջնականապես լուծել հարցը, որը պետք է վճռվեր կոնֆերանսին, և գտնում էր, որ վրացիները կհամաձայնվեն: Թումանովը այս հաղորդագրության մեջ մի ուշագրավ միտք էր արտահայտում այն մասին,որ <u>վրացիները բանակցություններ են վարում բոլշևիկների հետ, որը նրանց հնարավորություն կտա հնարավորին չափ զորքեր ազատել Դուշեթում և ուրիշ շրջաններում՝ ուղարկելով հայերի դեմ</u> (սա, անշուշտ, վկայում է վրացական կողմի դիվանագիտական նրբանկատության և կուսակցական ֆրազեոլոգիայի, ինչպես նաև «կուսակցականամոլությունից» և զանազան «իզմ»-երից վեր կանգնած լինելու կարողության դրսևորումների մասին, որը խելամտության նշան է քաղաքականության մեջ - Վ.Վ.): Թումանովը նաև տեղեկացնում էր, որ <u>այդ նույն նպատակով հնարավոր է թաթարական ելույթների հրահրում Ղազախում, Նուխիում և ուրիշ գավառներում՝ հայկական ուժերի շեղման նպատակով</u> (ինչ խոսք, հետաքրքիր փաստաթուղթ է, որը վկայում է շատ բանի մասին, կողմերի պատրաստվածության և թրծվածության մասին- Վ.Վ.): Հանրագումարի բերելով իր հաղորդագրությունը, Թումանովը ելնելով Վրաստանի արտաքին գործերի նախարարի հետ զրույցի տպավորությունից, կարծիք է արտահայտում, որ գուցե և վրացիները համաձայնվեն զինադադարի և անհապաղ խորհրդաժողովի հրավիրման գաղափարի հետ, սակայն պայմանով իհարկե, եթե հայկական զորքերը ետ քաշվեն Ղարաքիլիսա, իսկ վրացականը՝ դեպի Խրամ գետը, իսկ նրանց միջև ընկած տարածքում զորքեր չլինեն, ադմինիստրացիան լինի վրացական, իսկ երկաթուղագիծն էլ պահպանվի ժողովրդական գվարդիա-

կանների ուղեկալի (պիկետի)՝ Զուղելիի ջոկատի կողմից, կիսով չափ վրացիներից և հայերից կազմված[42]: Իրադարձությունները, սակայն, նույնիսկ հայերի համար ոչ նպաստավոր այդ սցենարով չզարգացան, և իրադրության մեջ անընդհատ շտկումներ էին մտնում: Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի տեղակալը՝ Թումանովը դեկտեմբերի 18-ի հաղորդագրության մեջ (№ 2259) նշում էր, որ արդեն սկսվել են ռեպրեսիաներ Թիֆլիսում, և որ հաղթել է ռազմական կուսակցությունը, և բանակցություններ են վարվում թուրքերի հետ, և հայտնում էր, որ հայկական բնակչության դեմ ռեպրեսիաների շարունակվելու պայմաններում ինքը մտադիր է դիմել դաշնակիցներին՝ օգնության պաշտոնական խնդրանքով[43]:

Սակայն բանակցությունների սկսվելը ծգծգվում էր, իսկ Վրաստանի պառլամենտում շարունակվում էին հնչել ռազմատենչ ճառեր: Դեկտեմբերի 17-ին ելույթ ունենալով Վրաստանի պառլամենտում, կառավարության նախագահ Ն. Ն. Ժորդանիան կեղծելով փաստերը և խեղաթյուրելով իրականությունը,նշում էր, որ «*այժմ պարզ է դառնում, որ Հայաստանի կառավարությունը և նրա գործակալները սկզբից ևեթ ապստամբություն են սարքել հայկական գյուղերում, այնուհետև օգտվել են դրանից և մեր սահմանները մտցրել իրենց կանոնավոր զորքերը*»: Ն. Ժորդանիան այդպես էր ներկայացնում իրերը, կարծես թե հայկական կողմը ապօրինաբար էր միջամտում իրադարձությունների ընթացքին: Իր ելույթում Ժորդանիան ընդգծում էր, որ ժամանակին իրենք հայտարարել են, որ ողջ Թիֆլիսի նահանգն իրենք համարում են Վրաստանի սահմանների մեջ, և իրենք ողջ տարածքը կզբաղեցնեն, և եթե որևիցե մեկն այստեղ ինչ - որ բան վիճելի է համարում, իրենք պատրաստ են բանակցություններ վարել, և այդ պատճառներով էլ գրավել են «Ջավախեթիան»: Այնուհետև Ժորդանիան ավելացնում էր, որ այդ նպատակով էլ իրենք այնտեղ են ուղարկել զորքեր և դա բնավ էլ չեն թաքցրել, և հիմնել են հատուկ գեներալ - նահանգապետություն Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում, և այդ նպատակով էլ գրագրություն են ունեցել թուրքերի հետ: Ն. Ժորդանիան իր ճառում մեղադրելով Հայաստանին ագրեսիայի մեջ, գտնում էր,որ «*Քաջազնունու կառավարությունը չի կարող լինել "խաղաղ հարաբերությունների մեջ հարևանների հետ"*», պնդելով, որ իրենք ենթադրում են, որ

«*Երևանի կառավարությունը գիտի և կգնահատի այն հանգամանքը, որ եթե ներքին պայմաններում փչացած են հարաբերությունները մուսուլմանների հետ, ապա գոնե լավ հարաբերություններ են պահպանված վրացիների հետ*»: Ժորդանիան իր ելույթում նշում էր, որ «*Հայաստանում հաղթել է պատերազմի՝ մաուզերիստների կուսակցությունը, և իրենք կոչ են անում պայքար սկսել այն կառավարության և այն ռազմական կուսակցության դեմ, որոնք ձեռնարկել են այդ սարսափելի հանցագործությունը*» և «*ով իրենց դեմ զենք է բարձրացրել, իրենք պետք է նույն զենքով պատասխանեն*»[44]:

Իսկ այդ ընթացքում պատերազմը շարունակվում էր, և նորանոր դժբախտություններ և արհավիրքներ բերում երկու ժողովուրդներին: Հետագա արյունահեղությունից խուսափելու և Վրաստանի կառավարությանը զգաստամտության և ողջախոհության կոչելու նպատակով հայկական զորախմբի հրամանատար Դրոն (Դրաստամատ Կանայան) 1918 թ. դեկտեմբերի 17-ին հետևյալ հեռագիրն է հղում վրացական զինվորական հրամկազմին. «*Վրացական հրամանատարությանը՝ Ձեր և Ձեր կողմից ղեկավարվող զինվորների կողմից հայկական բնակչության նկատմամբ գործադրված ճնշումները անցնում են բոլոր հնարավոր սահմանները, որի հետևանքով և եղել է հայկական կառավարության հրամանը զենքի ուժով վերջ դնել բոլոր կարգի ճնշումներին հայկական աշխատավոր գյուղացիության նկատմամբ:*

*Ուշքի եկե՛ք, հիշեցե՛ք, որ դուք դեմոկրատական հանրապետության զորքեր եք, որի գլուխ կանգնած են անձինք, որոնք ազդարարել են ժողովուրդների ինքնորոշման գաղափարը, և անհապաղ մաքրե՛ք մեր տարածքը, եթե դուք չեք ցանկանում հետագա արյունահեղություններ*»[45]:

Դա էլ չզգաստացրեց վրացիներին, պատերազմը շարունակվում էր, հայկական զորքերը լի էին վճռականությամբ ջախջախելու լկտիացած վրացական զորքերին: «*Դեկտեմբերի 17-ին արևելքից գլխապետ Թարվերդյանի ու արևմուտքից Փիրումյանի խիզախ գրոհով ջարդ ու փշուր եղան 5-րդ և 6-րդ վրացական գնդերը և գվարդիայի ու սահմանապահ գումարտակները: Գրավվեցին 2 հաուբիցներ, 2 դաշտային թնդանոթ, 25 գնդացիր և Ախթալա կայարանի մոտ 2 կազմ ու պատրաստ զրահապատ գնացքներ, որոնք տեղն ու տեղը գործադրության դրվեցին հակա-*

*ռակորդի դեմ: Վրացիները ցույց տվեցին կատաղի դիմադրություն և կռվի դաշտը թողին 60 դիակ: Վրաց ճակատի հրամանատար զոր. Ցուլուկիձեն բոլորովին ջախջախված հապճեպ փախավ Հայրում-Սադախլու գիծը՝ հայերի ձեռքը թողնելով նույնիսկ իր սալոն - վագոնը մեջի իրերով»*[46], - գրում է Ս. Վրացյանը: Հայկական զորքերի առաջխաղացումը շարունակվեց, հայ զինվորները հաղթահարելով վրաց զինվորների կատաղի դիմադրությունը, ցուրտը, սննդի ու հագուստի պակասությունները, դեկտեմբերի 18-ին գրավեցին Բոլնիս - Խաչենը: Ընդհանուր ոգևորիչ տրամադրությունը կարևոր ազդակ էր հայկական զորքերի հաջողությունների համար: Մարտական գործողությունները սկսեցին կենտրոնանալ Սադախլուի շրջակայքում: Վրաստանի Հանրապետությունը տենդագին պատրաստություն է տեսնում հայկական զորքերի հանդուգն ու սրընթաց գրոհները կասեցնելու համար: Վրաստանում կատարվում է զորահավաք: Կրքերը անսովոր բորբոքվել էին, Վրաստանի խորհրդարանում ռազմաշունչ ճառերը շարունակվում էին, էլ ավելի սրելով իրավիճակը:

Այդ օրերի հաղորդագրությունները էլ ավելի հստակորեն ցույց են տալիս, որ ընդհանուր տագնապալից իրավիճակի մեղմացման հույսերը զուր էին: Վրացական կողմն ակնհայտորեն որոշակի հույսեր կապելով տարածաշրջանում գործող որոշակիորեն մութ ուժերի հետ, այլ ռազմավարություն էին կիրառում պրակտիկայում: Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի տեղակալ Թումանովի(Թումանյան) 1918թ. դեկտեմբերի 19-ի արժեքավոր ռազմական բնույթի հաղորդագրությունից (№ 2280) տեղեկանում ենք, որ իրավիճակը այդ օրերին արդեն փոփոխված էր, Վրաստանի առաջին օրերի տրամադրությունը դարձել էր ռազմաշունչ, և Վրաստանում լայնածավալ զորահավաք էր իրականացվում:Միաժամանակ այդ հաղորդագրությունից պարզ էր դառնում, որ տեղական հայկական շրջանները համառ պահանջ էին ներկայացրել ամեն գնով վերջ դնել կոնֆլիկտին, որ սպառնում էր ընդունել ժողովրդական բնույթ, երբ այն այլևս կանգնեցնել չէր լինի: Տեղեկացվում էր նաև, որ վրացական կառավարության մոտավոր պայմանները արտահայտվել են նրա մինիստրի խոսքերում՝ ետ քաշվել նախապատերազմյան սահմաններին՝ մինչև Կամենկա գետը, իսկ վրացական սահմանապահ զորքերի տեղը պետք է զբաղեցնեին ժողովրդական գըվարդիականները՝ հայերի հետ համահավասար, իսկ երկաթու-

ղագծի պահպանությունը՝ժողովրդական գվարդիականների կողմից: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը տեղեկացնում էր, որ առաջարկվող նախագիծը նախատեսված է շատ կարճ ժամանակամիջոցի համար՝ մինչև կոնֆերանսի անհապաղ հրավիրումը: Դիվանագիտական հավատարմատարը նաև հայտնում էր, որ միջնորդի դեր կատարող ֆրանսիական զինվորական ծառայության սպա Դյուրուան առաջարկել է, որպեսզի հայկական կառավարությունը հայտարարություն տա այն մասին, որ իր զորքերը ետ է քաշում դեպի հին սահմանը և հայտարարում է, որ դա չի կանխորոշում հարցի վերջնական որոշումը: Դյուրուան ասել էր նաև, որ հայկական կառավարությունը պահանջի կոնֆերանսի անհապաղ հրավիրում, որի հարցը հարկավոր է վճռել մի շաբաթից ոչ ուշ, իսկ տարածայնության դեպքում՝ դաշնակիցների արբիտրաժի միջոցով: Ըստ այդ նույն տվյալների, Դյուրուան կարծիք էր արտահայտել, որ հայկական կառավարությունը պահանջեր խառը հանձնաժողովի ստեղծում, նպատակ հետամտելով վերհանել գյուղացիների ապստամբության պատճառները հայտնի տարածքներում: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը խնդրում էր, որ Հայաստանի կառավարությունը հնարավորին չափով շատ հայտներ իր պայմանների մասին, գտնելով, որ վերջինիս տեսակետը հնարավոր ելքի մասին մնում է ոչ բավականաչափ պարզ: Վերջնամասում դիվանագիտական հավատարմատարի տեղակալ Թումանովը տեղեկացնում էր, որ դաշնակիցների համար կոնֆլիկտը տհաճ է, ավելացնելով նաև, որ վրացական կառավարությունը դեռևս միջամտություն չի խնդրել[47]:

Այդ ընթացքում վրացական կողմը էլ ավելի սրեց վիճակը: Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատարին ուղղված հեռագրում (20 դեկտեմբերի, 1918 թ.) Վրաստանի արտաքին գործերի նախարար Գեգեչկորին հայտնում էր, որ իրենք իրենց դեմ գործող Հայաստանի Հանրապետության զորքերի հրամանատար Դրոյից ստացել են պաշտոնական հեռագիր այն մասին, որ ինքը անցել է վրացական սահմանը և ռազմական գործողություններ է սկսել իրենց դեմ: Ընդունելով, որ նշված պաշտոնական հաղորդագրությունը նշանակում է ռազմական գործողությունների սկիզբ Հայաստանի Հանրապետության կողմից ընդդեմ Վրաստանի Հանրապետության,Վրաստանի Հանրապետությունը ներկա պահից հայտարարում է Հայաստանի և

Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների խըզման մասին, և ետ է վերադարձնում հուլիսի 22-ի հավատարմագրերը[48]:

Եվ ինչպես վկայում է դեպքերի ժամանակակիցը՝ Ս.Վրացյանը, դեկտեմբերի 18-ին «*Սադախլու եկավ և Վրաստանի զինվորական նախարարը, 1000 քարմ զինվորներ, մի հարյուրյակ ձիավոր, 3 լեռնային մարտկոց և վերջին զրահապատ գնացքը: Զորավար Ցուլուկիձեն պատրաստվում էր ուժեղ հակահարձակման*»[49]: Եվ ինչպես դարձյալ փաստերը վկայում են, հայկական ռազմական ուժերը զգալի կորուստներ կրելով, և ոչ մի համալըրում չստանալով, կանգնած էին պրոբլեմների առաջ, չնայած ընդհանուր մարտական բարձր տրամադրվածությունը դեռ պահպանվում էր: Կոմունիկացիաները գտնվում էին անմխիթար վիճակում, ձմռան բարդ պայմաններին միացել էին Շարուրի ճակատից սպառնացող բարդությունները, և Պարսկաստանից ու Նախիջևանից նահանջող թուրքական զորքերի սանձարձակությունները ճանապարհին: Լոռվա պրոբլեմն ընկած էր սակավաթիվ, սակայն մարտերում թրծված հայկական զորաջոկատի վրա: Չընայած հոգնածությանը և պարենի ու ռազմամթերքի պակասությանը, հայկական բանակը լի էր վճռականությամբ ջախջախելու ուժերով զգալիորեն իրեն գերազանցող, լավ զինված, սակայն ամբարտավան վրաց զորքերին: Դիլիջան - Լոռիի զորամասի պետը՝ Դրոն «*որոշեց շրջապատել ու ջարդել Ցուլուկիձեի զորամասը: Գնդ. Տեր - Նիկողոսյանին նա հրամայեց Բոլնիս - Խաչենից մի գումարտակ առաջ քաշել դեպի արևելք՝ երկաթուղու կողմը և ցուցադրական շարժումներով օժանդակել Կորոլկովի զորայունին, իսկ Կորոլկովին հրամայեց երկու թնդանոթ և 3 վաշտ թողնել Հայրումում և մնացած ուժերով, Բարդաձորի և Գյուլ բեգիի վրայով, անցնելով Դամիա գյուղը, վրացիների թիկունքը՝ ջարդել նրանց՝ լուրջ ուշադրություն դարձնելով Շուլավերից Օփրեթ տանող ճանապարհի վրա: Դեկտեմբերի 19-ին փոխգնդապետ Կորոլկովին միացավ միլիցիոն գունդը 350 զինվորներով և 2 գնդացիրներով, որին հրամայվեց գրավել Շուլավերը*»[50]:

Սակայն իսկական պատերազմում լինում են նաև անհաջողություններ ու պարտություններ, չնախատեսված իրադարձություններ, ցավալի վրիպումներ, որոնք դժվարություններ էին առաջ բերում:

Մինչև հայկական զորաբանակի գլխավոր ուժերը կարևոր վերախմբավորումներ էին կատարում և պատրաստվում լուրջ ռազմական օպերացիաների, 4-րդ գնդի 6-րդ վաշտը փոխգլխապետ Ֆեյերկովսկու հրամանատարությամբ և առանձին ձիավոր գնդի 2-րդ դիվիզիոնի 2-րդ հարյուրյակը տեղակալ Տեր-Մարտիրոսյանի գլխավորությամբ, դիմում են ինքնագլուխ, չհամաձայնեցված գործողությունների: Արդյունքը լինում է այն, որ վերջիններս սեփական նախաձեռնությամբ դիմելով հարձակման, գրավում են Սադախլուն: Վրացիները սպիտակ դրոշ են բարձրացնում, սակայն այդ միջոցին վրա հասած վրացական զրահապատ գնացքը գնդացրային և թնդանոթային սաստիկ կրակով ստիպում է անձնատուր լինել հայկական 6-րդ վաշտի և 2-րդ հարյուրյակի զինվորներին, որոնցից շատերը անտեղի սպանվում են, իսկ մոտ 30 զինվորներ Ֆեյերկովսկու ու Տեր - Մարտիրոսյանի հետ միասին գերի են առնվում:

Հայկական հրամանատարությունը ձեռք առավ կտրուկ միջոցներ՝իրավիճակը շտկելու և իրադրության նկատմամբ մարտավարական վերահսկողությունը չկորցնելու համար: Ձեռնարկվեցին անհրաժեշտ օպերատիվ քայլեր. դեկտեմբերի 20-ին Կուռո Թարխանյանի հարյուրյակը գրավեց Շուլավերը:

Սակայն գլխավոր իրադարձությունները ծավալվում էին Սադախլուի շրջանում: Վրացական բանակը վերջնականապես ջախջախելու մտադրությամբ «*Շուլավեր - Սադախլուի շրջանում գործող վրաց ուժերի մի մասը մի կողմ քաշելու նպատակով՝ Դրոյին հրամայեց գնդ. Տեր-Նիկողոսյանին, դեկտեմբերի 21-ին 1 գումարտակ ու 2 թնդանոթ թողնել Մեծ Դումանիսում, իսկ մնացած ուժերով շարժվել Արախլուի վրա: Սկսվեց տաք կռիվ: Մերոնք հարձակվում էին անվերջ, վրացիները հուսահատական դիմադրություն էին ցույց տալիս: Գլխ. Մնացականյանի Շուլավերի զորամասը կռվի բռնվեց Թիֆլիսից նոր հասած վրացական թարմ ուժերի հետ: Մերոնք քանդեցին Սադախլու - Սամայ երկաթուղագիծը՝ կտրելով վրաց զրահապատի նահանջի ճանապարհը: Կուռո Թարխանյանը հանդուգն հարձակումներ գործելով Աշաղա-Սարայլի ուղղությամբ՝ գրավեց մի թնդանոթ և մի գնդացիր*»[51]:

Սակայն կռիվները շատ համառ էին և շարունակվեցին անընդմեջ: «*Դեկտեմբերի 22-ին, հակառակ թշնամու հրացանի ու գնդացիրների մրրկահույզ կրակի, Ճոճկանի զորախումբը փոխգլխ. Պետրոսյանի գլխավորությամբ,արհամարհելով գնդակների*

*տեղատարափը, շարժվեց Սաղախլուի վրա և համառ ու երկարատև կռվից հետո գրավեց կայարանն ու գյուղի հարավային մասը, բայց օգնական ուժեր չստանալով՝ վրացիների հակահարձակման ու թևից սպառնացող վտանգի տակ՝ քաշվեց նախկին դիրքերը՝ տալով մոտ 40 զոհեր»*[52]:

Վրացիները շարունակում էին նորանոր ուժեր կենտրոնացնել Բոլնիս - Խաչենի մոտ:

Այդ ընթացքում Հայաստանի կառավարությունը քնած չէր: Զինվորական նախարարությունը համապատասխան միջոցներ էր ձեռնարկել զորահավաքային խնդիրները լուծելու համար: Հրապարակվեց ՀՀ զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանի հրամանը, որը մեջբերում ենք ամբողջությամբ վերցրած.

*«Հրաման*

*Համաձայն «Զինվորական դաշտային վարչության օրենքի» 418 հոդվածի՝ Հայաստանում իմ հետևյալ հրամանը անպայման ի կատար ածելու համար.*

*1. Զինվորականներ ու քաղաքացիներ,Հայկական Բորչալվի գավառի հայկական բաժնի բնակիչ մեր հարազատ եղբայրները գտնվելով օտար իշխանության տակ ապստամբել են իրենց կեղեքիչների դեմ ու դիմել Հայաստանի կառավարության օգնությանը: Մեր քաջարի զորքը՝ աչքի չառնելով սառնամանիքն ու կռվի դժվար պայմանները հառաջ շարժվելով ազատել է մեր եղբայրներին ճնշողներից ու ստրկացնողներից: Բայց մեր հարազատ իր կյանքն ու առողջությունը իր եղբոր համար զոհող զինվորին օգնություն է հարկավոր: Թանկ է րոպեն, նրանից է կախված Բորչալվի մեր եղբայրների ու խիզախ զինվորների կյանքը: Դուք, որ մինչև հիմա խուսափել եք զինվորական ծառայությունից ու թողել եք Ձեր զորամասերը՝ շտապեցե՛ք մտնելու զորքի շարքը, այդ է պահանջում Ձեզանից հայրենիքն ու ազնիվ քաղաքացու պարտքը.*

*2. Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության տերիտորիան բաժանվում է ութ շրջանների համապատասխան գավառներով՝ Դիլիջանի (Ղազախի հարավային մասը), Նոր Բայազետի, Երևանի, Սուրմալվի, էջմիածնի, Ալեքսանդրապոլ - Ախալքալաքի, Լոռի - Ղարաքիլիսայի (Բորչալվի հարավային մասը) և Շարուր-Դարալագյազի:*

*3. Բոլոր Հայաստանում ապրող արական սեռի հայերն ու ասորիները 20-25 տարեկան, որոնք չեն գտնվում զինվորական ծառայության մեջ (զորամասերում կամ զինվորական հիմնարկություններում ու վարչատներում) պարտավոր են 3 օրվա ընթացքում, սույն հրամանն արձակելու օրից ներկայանալ համապատասխան հավաքական կենտրոնները (սբորնիյե պունկտի), որտեղից կուղարկվեն զորամասերը կամ էլ կարձակվեն զինվորական ծառայությունից՝ ըստ օրենքի՝ համապատասխան վկայականներով: Հարկ եղած դեպքում սրանից հետո կհայտարարվի նոր զորահավաք 26-32 տարեկան քաղաքացիներին ժողովելու.*

*4. Ես կարգադրություն էի արել բոլոր նրանց, որոնք չեն գտնվում զորամասերում, կատարեն իրենց պարտքը զինվորական ծառայության, բայց քչերը կատարեցին իրենց պարտքը, այդ պատճառով ներկա հրամանով նորից կոչ եմ անում ու հայտարարում, որ բոլոր նրանք, որոնք ըստ սույն հրամանի 4 կետի ժամանակամիջոցին չեն ներկայանա հավաքական կենտրոնները ու չեն ստանա այնտեղից համապատասխան վկայականներ՝ կհամարվեն կռվի մասնակցելու հրամանից խուսափողներ և համաձայն հոդ. 245-ի Հ. զ-ն № 1969 թ. գ. 20 4-րդ հրամանի և ժամանակավոր կառավարության հրամանի նո. 44 հուլիսի12-ի 1917թ. կենթարկվեն մահվան պատժի՝ զրկվելով իր բոլոր ստացվածքի իրավունքից:*

*ՀՀ զինվորական նախարար*
*գեներալ-մայոր Հախվերդյան»*[53]:

Հայկական հրամանատարությունը կատարելով ուժերի խելամիտ վերախմբավորումներ, դեկտեմբերի 23-ին ձեռնարկեց հայկական զորքի նոր հարձակում, և 4-րդ գնդի 12 վաշտերը, փոխգնդապետ Ասլանյանի հրամանատարությամբ գրավեցին Սադախլուն[54]: Արդյունքում, վրացիներից գերի վերցվեց 35 սպա, մոտ 500 զինվոր, 3 շոգեքարշ, հարյուր վագոն և մթերքներ, և այլն[55], չնայած Ս. Վրացյանի մոտ հանդիպում ենք ավելի համեստ տվյալների. ըստ դրանց՝ *հայերի ձեռքը գերի ընկան 6 սպա, 126 զինվոր, 2 «Կոլտ»-ի գնդացիր, ավելի քան 100 վագոն պարեն, ռազմամթերք ու փամփուշտ, 3 շոգեքարշ և ուրիշ պաշարեղեն*[56]:

Այնուհանդերձ, այդ տարակարծությունը էական չի: Կարևորն այն է, որ հայերը հաղթանակ տարան, և մեր զորքի քարոյա-

կան ոգին շատ բարձրացավ: Դրանից բացի, Խրամ գետի վրայի կամուրջը, Շուլավերի ուղղությամբ, մեր զորքերի հսկողության տակ հայտնվեց, տալով ընդամենը կորուստ՝ 150 հոգի (ըստ «Կայծ»-ի տվյալների), իսկ ըստ Ս. Վրացյանի՝ փոխգլխապետ Ալեքսանդրովը, 7 զինվոր սպանված և 11 վիրավոր: Հայկական բանակը տարավ կարևոր և վճռական հաղթանակ. «*Դեկտեմբերի 13-ին, մեր զօրքերը, ի պատասխան Ուզունթալայի դէպքերով, յարձակման դիմեցին եւ, դէն շպրտեցին յոխորտացող վրացիներին, մեծամեծ կորուստներ պատճառելով նրանց: Տասն օրուայ ընթացքում ամբողջ Լոռին հայկական բանակի ձեռքին էր: Վրացական զօրքը ջախջախուեց, թողնելով 2000-ից աւելի գերիներ, որոնցից 100-ի չափ սպաներ, մեծ թւով վագոններ, շոգեմեքենաներ, ռազմամթերք եւ երեք զրահապատ գնացք*», - գրում է Արտ. Բաբալյանը[57]:

Ռազմական գործողությունները շարունակվում էին, վրացիները տենդագին զորահավաք էին անցկացնում, մոբիլիզացնելով զենքի ընդունակ ողջ տղամարդ բնակչությանը,Ցուլուկիձեին (Ծուլուկիձե) փոխարինում է նոր հրամանատար Մազնիևը:

Պատերազմական գործողությունները սաստկացան Շուլավերի շրջանում: Վրացիները դեկտեմբերի 24-ին համալրվեցին Թիֆլիսից նոր եկած մոտ 1500 մարդով, ուժեղ հրետանու ընկերակցությամբ, և դիմեցին հարձակման Շուլավերի խճուղու շրջանում: Վրացական կողմն օգտագործում էր նաև սավառնակներ, որոնք ռմբակոծում էին հայկական դիրքերը: Այդ կռիվներն ու հակագրոհները շարունակվեցին մինչև դեկտեմբերի 28-ը, և օրեցօր նոսրացող հայկական բանակը հարկադրված էր շարունակ համալրվող վրացական բանակի դեմ մարտնչելու նորանոր հնարքներ որոնել և կիրառել: Դրա արդյունքն այն եղավ, որ դեկտեմբերի 22-ի վիճակով հայերը գերեցին վրացիներից 825 զինվոր, 3 բժիշկ, 48 սպա և վերցրեցին 17 թնդանոթ, 39 գնդացիր, 600 հրացան, 12 շոգեմեքենա, 250 վագոն, 2 զրահագնացք, 49 հեռախոսային ապարատ և 48 արկղ ռումբ[58]: Իսկ արդեն դեկտեմբերի 26-ի վիճակով հայկական զորքերի կողմից գերի են վերցվել 1000 մարդ, որոնցից սպա՝ 40 հոգի, բռնագրավվել է 300 վագոն, 15 շոգեքարշ, 39 գնդացիր, 3 զրահագնացք,որոնցից 2-ը՝ առանց որևիցե վնասվածքի և դրանցից 1-ը՝ անմիջապես օգտագործվել է ռազմական գործողություններում: Հայկական զորքերի կողմից

վերցվել է տարբեր տեսակի ռազմական հանդերձանք, հեռախոսային, երկաթուղային և այլ ունեցվածք: Երկու կողմերն էլ տվել են զոհեր, հայերը՝ համեմատաբար փոքր քանակով, որոնց մի մասին թե՛ վրացական, և թե՛ հայկական կողմից կարելի էր փրկել, եթե բժիշկներ և ֆելդշերներ լինեին, որոնք անհրաժեշտ քանակությամբ չկային ռազմաճակատում[59]:

Հարկ է ասել, որ որոշ տվյալներում հակասություն կա, չընայած կարևորը դա չի,այլ իրավիճակների ընդհանուր արդյունքները: Այսպես, նշվում է, որ Սադախլու կայարանի և Շուլավեր բընակավայրի մոտի մարտերում հայկական զորքերի կողմից (դեկտեմբերի 25-ի վիճակով) գերվել են 3000 վրացի, շատ սպաներ և 2 գեներալ, 40 գնդացիր և այլն[60]: Հակասություն կա, սակայն կարևոր է ընդգծել մի այլ հանգամանքի մասին, որ վկայում է հայ զինվորի և սպայի բարձր բարոյական հատկությունների, հոգու վեհության մասին: Հայաստանում գտնվող օտարերկրյա քաղաքացիները վկայում էին, որ գերված վրացիները Հայաստանում օգտվում էին մեծ ազատությունից և լավ էին պահվում, չնայած այն հանգամանքին, որ հայկական ռազմագերիները Վրաստանում ուղարկվում էին սևագործ աշխատանքի Քութաիսի նահանգի մարգանեցի ծեռնարկությունները և ենթարկվում ամենազանազան զրկանքների, սովահարության և վիրավորանքների: Ի դեպ, պետք է նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ հենց մարգանեցի այդ հանքերի նկատմամբ որոշակի հետաքըրքըրություն ունեին ֆրանսիացիները: Դրանից բացի, նշվում էր, որ հայկական զորքերին խիստ հրաման էր տրված ռազմական գործողությունների ընթացքում խնայել մուսուլմանական գյուղերը, որը և ինչպես ցույց տվեց կյանքը, կիրարկվեց ամենայն լըրջությամբ: Հարկ է ասել, որ այն ժամանակ, երբ Շուլավերի և Սադախլուի բնակչությունը որոշակի նկատառումներով հայերի կողմից դատարկվել էին, այդ բնակավայրերը զբաղեցվեցին վրացիների կողմից, և զանազան այլանդակություններ կատարվեցին: Շուլավերը ենթարկվեց կողոպուտի, վրաց զինվորները կանանց բռնաբարություններով լիովին վարկաբեկեցին իրենց, գյուղի վըրա դրվեց 1 մլն ռուբլու ռազմատուգանք, և մեծ քանակությամբ պարենամթերք պահանջվեց[61]:

Վրաստանի զինվորական հրամանատարությանն ուղղըված հեռագրում Ղազախ - Բորչալուի ջոկատի պետը շեշտում էր,

որ գերակշռող մեծամասնությամբ հայերով բնակեցված Բորչալուի գավառի մի մասի և Ախալքալաքի ողջ գավառի գրավումը Վրաստանի Հանրապետության զորամասերի կողմից և այդ շրջաններում վրացական վարչակարգի անպատասխանատու և անթույլատրելի վարքագիծը առաջացրել են բնակչության արդարացի բողոքը: Այդ իսկ պատճառով, նշվում էր հեռագրում, այժմ զենքի ուժով Վրաստանի Հանրապետության զորամասերը շպրտված են Խրամ գետից այն կողմ, և Բորչալուի գավառի տարածքը, որ բնակեցված է եղել հայերով, ազատագրվել է: Հեռագրի վերջնամասում հայկական հրամանատարությունը պահանջում էր անհապաղ վրացական զորքերից մաքրել Ախալքալաքի գավառի տարածքը, եթե հետագա արյունահեղությունը ձեռնտու չի վրացական կողմին, հակառակ դեպքում՝ ռազմական գործողությունները կշարունակվեն, և կզարգացվեն Խրամ գետից դեպի հյուսիս[62]:

Սակայն թե՛ հայկական, և թե՛ վրացական կողմը այդ հակամարտությունում «*միայնակ չէին*»: Պատերազմի այդ թոհ ու բոհի օրերին դաշնակիցները Անդրկովկասում ամրապնդվելու իրենց գեոպոլիտիկ նկատառումները և հետաքրքրությունն ունեին, և փորձում էին փոփոխություններ մտցնել թե՛ Հայաստանի և թե՛ Վրաստանի իշխանությունների քաղաքական գործելակերպում: Հայտնի է, օրինակ, որ ֆրանսիական կապիտալը մենշևիկյան Վրաստանի մետալուրգիական արդյունաբերությունում ուներ շահեր, որոնք ներկայացվում էին ակցիոներական «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» միջոցով: Սակայն ընկերության վիճակը վատթարացել էր՝ կապված այն բանի հետ, որ այդ ձեռնարկությունները գտնվում էին Բորչալուի գավառում, որը դարձել էր հակամարտության, սահմանավեճի օբյեկտ: Վրաստանի արտաքին գործերի նախարարությանը 1918 թ. դեկտեմբերին ուղարկված նոտաներից մեկում Թիֆլիսում գտնվող ֆրանսիական հյուպատոս Դյուրուան պահանջում էր վրացական զորամասերի կողմից ֆրանսիական ֆիրմաներին հասցված վնասների փոխհատուցում: Այնուհետև Դյուրուան հիշեցնում էր այն մասին, որ «*օտարերկրյա կապիտալի ձեռնարկությունը չպետք է տուժի քաղաքական կոնֆլիկտներից, որ ծընվում են այն տերիտորիայում, ուր դրանք գտնվում են*»: Ֆրանսիական հյուպատոսը պահանջում էր« *"Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերությանը" հատուցել վնա-*

*սը*»[63]: Հարկ է ասել նաև, որ ըստ երևույթին Անդրկովկասը Ռուսաստանից անջատվելուց հետո որոշ ոչ պակաս կարևոր փոփոխություններ էին տեղի ունեցել այդ ֆրանսիական ֆիրմայի ստատուսում: Այսպես, եթե 1899 թ. «Պայմանները» արգելում էին այդ ընկերությանը զբաղվել ոսկու արդյունահանմամբ, ապա 1919 թ. Ալավերդու գործարանի արտադրանքի ցուցակում հայտնվում են ոսկի և արծաթ, որը ֆրանսիական այդ ընկերության հետաքրքրության ոլորտում էր: Այդ մետաղները ֆրանսիական ֆիրման ստանում էր Հայաստանի տարածքում ձեռք բերված հանքաքարից: Ավելին, մենշևիկյան կառավարությունը պայմանագիր ուներ այդ ընկերության հետ, ըստ որի Ալավերդու գործարանը նրան էր մատակարարում արտադրվող թանկարժեք մետաղների զգալի մասը: Հետևաբար, ակնհայտ էր ֆրանսիական տնտեսական-քաղաքական հետաքրքրությունը տարածաշրջանային իրադարձությունների, և այդ թվում հայ - վրացական սահմանավեճի նկատմամբ: Ֆրանսիացիներից ետ չէին մնում անգլիացիները, որոնք ըստ էության ավելի ակտիվ գտնվեցին, և ձեռնամուխ եղան Անդրկովկասի քաղաքական օկուպացմանը[64]: Բաքվի գրավումից հետո նրանք ձեռնամուխ եղան զորքերի տեղափոխմանը Վրաստան: Երկու ամսվա ընթացքում (նոյեմբեր - դեկտեմբեր) հետախուզական բնույթի անգլիական միսիաներ են ժամանում Թիֆլիս և Բաքում: Այնուհետև անգլիական նավերը խարիսխ են գցում Վրաստանի նավահանգիստներում: Վերջապես, հմտորեն օգտվելով վրաց-հայկական սահմանային կոնֆլիկտից(վրաց հեղինակ Ա. Չոխելին գտնում է, որ *դրա սանձազերծման մեջ մեղավոր են անգլիացիները*), և երկու հանրապետությունների միջև ռազմական գործողությունների սկսվելուց քիչ անց, 1918 թ. դեկտեմբերի 21-ին անգլիացիները անաղմուկ իրենց զորքերը մտցրին Վրաստան և զբաղեցրին երկրի կարևորագույն ստրատեգիական կետերը, ինչը էապես նպաստեց նրանց «վրացամոլությանը» և կրավորականությանը Հայաստանի նկատմամբ: 1918 թվականի դեկտեմբերի 22-ին անգլիացիների 15 հազարանոց զինվորական միավորումը ափ իջավ Բաթումում, իսկ դեկտեմբերի 25-ին անգլիական գունդը արդեն Թիֆլիսում էր գտնվում[65]: Այդ ընթացքում վրացական զորքերն արդեն ձգված էին դեպի վրացական սահմանը, իսկ վրացիներն ամենևին էլ չխոչընդոտեցին անգլիացիների մուտքին, չնայած Ա. Չոխելին հակառակն է

պնդում: Իսկ դեկտեմբերի վերջին արդեն 25 հազար անգլիական զորք էր կուտակվել Վրաստանում (մի այլ աղբյուրի համաձայն՝ մոտ 30 հազար զորք)[66], իսկ ամբողջ Անդրկովկասում դրանց թիվը հասնում էր 60 հազարի (կյանքը ցույց տվեց, որ վերջին հանգամանքը հայերի օգտին չէր, և բացասական դեր խաղաց հայ-վրացական հակամարտությունում - Վ.Վ.):Վրաստանում անգլիացիները զբաղեցրին Թիֆլիսը, Քութաիսը, Բաթումը, Սուխումին, Փոթին, Քոբուլեթին, Սամտրեդիան, Խաշուրին, Բորժոմին, Նաթաներին, Ացխեթը, Դուշեթը, Կազբեկը և, <u>իհարկե, Բորչալուն</u>[67]:

Անգլիացիները Վրաստանի, և այդ թվում Վրաստանին հարող հայկական տարածքների օկուպացիայի ժամանակաշրջանում ձեռքերը ծալած չնստեցին, նրանք չէին եկել զուտ խաղաղասիրական լոզունգներով և նպատակներով: Ինչպես պնդում է վրաց հեղինակ Վ. Ի. Ադամիան, օկուպացիայի ընթացքում անգլիացիների կողմից Վրաստանից գլխավորապես դուրս բերվեցին մրգեր, ծխախոտ, անտառանյութ, թեյ և այլ արժեքներ: Օկուպացիայի ողջ ընթացքում Վրաստանից դուրս բերվեց 26 մլն փութ մարգանեց (Ադրբեջանից՝ 30 մլն փութ նավթ)[68]:

Հենց այդ տնտեսական շահերն էլ պայմանավորեցին որոշակի քաղաքականություն Անդրկովկասում: Ըստ երևույթին, որոշակի ճշմարտություն կա վրաց հեղինակ Վ. Ի. Ադամիայի խոսքերում, երբ գրում է, որ մենշևիկյան Վրաստանի և նրա նկատմամբ հակառակորդ ուժերի միջև կոնֆլիկտները, որոնք տեղի էին ունենում ինտերվենտների «պրովոկացիոն» մասնակցությամբ, որպես օրինակ,ավարտվում էին նրանով,որ գործի մեջ որպես «միջնորդներ» մասնակցում էին անգլիական ինտերվենտները, որոնք պատերազմող ուժերին պարտադրում էին «կոնֆլիկտի» կարգավորման իրենց պայմանները: Ընդ որում, ընդգծում է Վ. Ի. Ադամիան, և դրա մեջ որոշակի իմաստ կա, անգլիացիների կողմից թելադրված պայմանները երբեք հաշվի չէին առնում կողմերի իրական շահերը, չէին հանգեցնում նրանց հաշտեցմանը, և կողմերի միջև հարաբերությունները մնում էին լարված, և «կարգավորումը» երբեմն ավարտվում էր պատերազմող կողմերի միջև այսպես կոչված «չեզոք զոնայի» առաջացմամբ, որը սովորաբար զբաղեցնում էին անգլիական օկուպացիոն զորքերը, վերջին

---

[9] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

հաշվով տարածաշրջանի ժողովուրդներին պահելով մշտական լարվածության և հսկողության տակ[69]:

Վրաստանում գտնվող դաշնակիցների զինվորական-քաղաքական և դիվանագիտական միսիաները խոսքով կողմնակից լինելով կոնֆլիկտային իրավիճակների մարմանը (ինչպես դա կատարվեց և կատարվում է 90-ական թվականներին - 21-րդ դարի մատույցներում - Վ.Վ.), գործնականում երբեմն պարզապես մի ազգին մյուսի դեմ էին թունավորում: Այսպես, ինչպես վկայում է Վ. Ի. Ադամիան իր գրքում, անգլիական միսիայի ղեկավար Վեբստերը 1918 թ. դեկտեմբերին (1918 թ. դեկտեմբերի 6-ին առաջին անգամ անգլիական միսիան Վեբստերի գլխավորությամբ ժամանեց Բաքում, որը Կովկասում Բրիտանական զորքերի գըլխավոր հրամանատար Թոմպսոնի (Տոմպսոն) ներկայացուցիչն էր) բազմիցս ներշնչում էր մենշևիկյան կառավարության ներկայացուցիչներին հայերի դեմ պայքարելու անհրաժեշտության մասին: Մասնավորապես, նա խորհուրդ էր տալիս հայերին վռնդել Վրաստանից և դա պատճառաբանում և փաստարկում էր նրանով, որ հայկական բուրժուազիան Վրաստանում իբր թե ձգտում է իր ձեռքը վերցնել երկրի ողջ էկոնոմիկան (տնտեսությունը)[70]: Արդեն ասել ենք, որ այդ հանգամանքը լավ է նկատել ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը, որը հայերի նկատմամբ վրացիների ոտընձըգությունների գլխավոր պատճառներից մեկը տեսնում էր նրանում, որ հայերը Վրաստանում «***հսկում էին տնտեսության մեծ մասին***», ինչը մշտական տագնապի մեջ էր պահում մենշևիկյան Վրաստանի ղեկավարներին[71]:

Այդ կապակցությամբ Բաքումում մենշևիկյան Վրաստանի կառավարության ներկայացուցիչ Դ. Թոփուրիձեն, կառավարությանը տեղյակ պահելով Վեբստերի հետ իր զրույցի մասին,գրում էր. «***Նա դրանց դերը*** (խոսքը գնում է հայերի մասին - Վ.Վ.) ***համեմատում է հրեաների դերի հետ և ձգտում է հիծ ներշնչել, որ հատկապես վրացիները պետք է զգուշանան հայերի տնտեսական տիրապետությունից,որոնք ցանկալի են համարում, ըստ իր կարծիքի, վրացիներին լիովին վռնդել Թիֆլիսից և նրանց իրենց ենթարկել: Նա գալիս է այն եզրակացության, որ մենք չպետք է օգտըվենք հայկական կապիտալներից, որ մեզ համար անհամեմատ շահավետ են անգլիական կապիտալները: Ինչպես պարզ է դառնում, <u>հայերի նկատմամբ անգլիացիները լավ չեն տրամա-</u>***

*դրրված, քանի որ հայկական կապիտալում նրանք տեսնում են իրենց մրցակցին*»[72]: Ամեն դեպքում շատ ուշագրավ տեսակետ է, չնայած ամեն ինչի հետ չի կարելի միանշանակ համաձայնվել:

Ըստ էության վրացիներն այդպես էլ վարվեցին, լցվելով թշնամությամբ Վրաստանի հայերի նկատմամբ ինչին մենք արդեն վերը մասամբ անդրադարձել ենք: Մյուս կողմից, չնայած վերոհիշյալ Վ. Ադամիան պնդում է, որ նույն բանն անում էին Հայաստանում ևս (ինչը չի համապատասխանում իրականությանը), քանի որ անգլիացիները հայերին խոստացել են տալ Բաքումը[73], այնուամենայնիվ հայկական կողմն էլ ավելորդ հավատարմություն և նվիրվածություն դրսևորեց անգլիացիների նկատմամբ (երբեմն նաև ստրկամտության հասնող),կորցնելով նորմալ զգուշավորությունը, բոլոր հաշվարկները կառուցելով Անգլիայի վրա: Իսկ երբ պատերազմը Վրաստանի և Հայաստանի միջև սկսեց ձգձգված բնույթ ստանալ, անգլիական հրամանատարությունը հանդես եկավ որպես միջնորդ և երկու կողմերին էլ սկսեց թելադրել կոնֆլիկտի լիկվիդացման իր պայմանները:

Այդ հանգամանքը լավ է ըմբռնել նույնիսկ մենշևիկյան կառավարության ղեկավար Նոյ Ժորդանիան, որը հայտնի է իր արևմտամետ տրամադրություններով և հակաբոլշևիկյան դիրքորոշմամբ: Վերջինս սակայն հարկադրված մի անգամ հայտարարում է օկուպացիոն զորքերի հրամանատարին այն մասին, որ «*մինչև դաշնակիցների ժամանելը իրենց մոտ, մենք ոչ մեկի հետ չենք կռվել և ոչ մի տեղ չունեինք թշնամիներ: Դաշնակիցների գալով պատկերը փոխվեց. մենք ամբողջ ժամանակ պատերազմում ենք*»[74]: Նմանատիպ միտք է արծարծվում վրաց հեղինակ Գաիոզ Դեվդարիանու կողմից. «*Խոսքը գնում է նախկին Թիֆլիսի նահանգի Բորչալուի և Ախալքալաքի գավառների վիճելի տարածքների զավթման մասին:*

*Անգիջում պայքարը մի կողմից՝ դաշնակցական Հայաստանի, և մյուս կողմից՝ մենշևիկյան Վրաստանի կողմից, ուժեղ չափով գրգռվում էր նաև անգլիացիների և ընդհանրապես անտանտյան զավթիչների կողմից, որոնք 1918 թ. վերջին մտել էին Անդրկովկաս, զբաղեցնելով այնտեղ գերմանա-թուրքական օկուպանտների տեղը*»: 1918 թ. վերջին բռնկված պատերազմի մեջ հավասարապես մեղադրելով թե՛ դաշնակցական Հայաստանին, և թե՛ մենշևիկյան Վրաստանին Գ. Դեվդարիանին նաև ընդգծում

էր հետևյալը. «*Ընդ որում անգլիացիները, ժամանակին նկատելով, որ հայ - վրացական արյունահեղության հետագա շարունակումը կարող է և հենց իմպերիալիստների համար ընդունել անցանկալի շրջադարձ, ձգտում էին ինչքան հնարավոր է շուտ այն լիկվիդացնել: Սակայն գարշելի գործն արված էր, երկու կողմերից էլ եղբայրական արյունը հեղված էր և ազգային չարացածությունը մեկը մյուսի դեմ ուժեղացավ: Հենց Վրաստանում պատերազմի ժամանակ ողջ հայկական բնակչությունը ընկավ կասկածանքի տակ և մեղադրվեց հայրենիքի դավաճանության մեջ: Ամբողջ Վրաստանով մեկ գվարդիականների,միլիցիոներների և հատուկ ջոկատի պաշտոնյաների կողմից հայերը ենթարկվում էին չլսված վիրավորանքների,ծեծբակալությունների,աքսորի և այլն, առանց վերջիններիս կողմից պատրվակի: Հայերի հետ ամեն ոք կարող էր անել այն ամենը, ինչ որ ցանկանում էր*»[75]:

Յուրովի, իրենց աշխարհաքաղաքական ընկալմամբ դաշնակիցները փորձեցին կանխել արյունահեղությունը: Ինչպես վըկայում է Հայկական պատվիրակության ղեկավար Հարությունյանի դեկտեմբերի 22-ի հեռագիրը ՀՀ Նախարարների խորհրդի նախագահին, կապիտան Գրինի հայտնի առաջարկները ուղարկվել են (բացի Հայաստանի կառավարությունից)՝ երկու ռազմագերիների միջոցով Վրաստանի կառավարությանը, սակայն նշելով, որ դեռ պատասխան չի ստացվել[76]:

Դեկտեմբերի 22-ին Դաշնակիցների ներկայացուցիչներ գնդապետ Ժորդանը և Շարդինյին ներկայացնում են զինադադարի մասին առաջարկ, ըստ որի անհապաղ ամեն մի անօգուտ արյունահեղության վերջ տրվի,և հայկական ու վրացական ժողովուրդների ընդհանուր շահերից ելնելով, դաշնակիցների ներկայացուցիչները Թիֆլիսում, խորհրդակցելով երկու շահագրգռված պետությունների կառավարությունների ներկայացուցիչների հետ, հրամայում են վերջ տալ թշնամական գործողություններին ամսվա 23-ին ժամը 3-ին, ճաշից հետո: Դաշնակիցների ներկայացուցիչները առաջարկության տեքստի վերջնամասում այն մասին էին հայտնում, որ Հայկական կառավարությունը նշանակի երկու ներկայացուցիչների ներկայումս Թիֆլիսում գտնվող երկու զինվորական խորհրդականների հետ միասին՝ խառը հանձնաժողովում մասնակցության համար, կազմված հայկական և վրացական ժողովուրդների ներկայացուցիչներից, որը պետք է

հաստատեր modus vivendi (կենսաձև) կոնֆլիկտի ընդհատման համար՝ սպասելով միջազգային խաղաղության կոնգրեսի որոշմանը[77]:

Դրան զուգահեռ, Վրաստանի ներկայացուցիչներն իրենց հակաառաջարկն (կոնտրառաջարկ) են անում գնդապետ Ժորդանի և Շարդինյիի առաջարկի վերաբերյալ և այն ներկայացնում դեկտեմբերի 23-ին: Վրացական կոնտրառաջարկում արձանագրվում էր հետևյալը.

1. *Վրացական կառավարությունը գոհունակությամբ է ընդունում դաշնակիցների նախաձեռնությունը արյունահեղության դադարեցման գործում.*
2. *Ռազմական գործողությունների դադարեցման մասին հրամանը վրացական կառավարությունը տալիս է իր գլխավոր հրամանատարին.*
3. *Ռազմական գործողությունների դադարեցման պահից երկու կողմերից էլ, Բորչալուի գավառում պետք է տեղի ունենա հայկական զորքերի նահանջը այն դիրքերից, որոնք նրանք գրավում են ներկայումս, պայմանով, որ ժամանակամիջոցը, որ պետք է որոշվի, այդ զորքերը պետք է զբաղեցնեն այն դիրքերը, որ նրանք զբաղեցրել են թշնամական գործողություններից առաջ, դրանով իսկ վերջ դնելով երկու պատերազմող կողմերի համար «status quo ante bellum»-ին, դրա հետ միաժամանակ վրացական կառավարությունը իր վրա պարտավորություն է վերցնում երաշխավորելու ողջ բնակչության անձնական և գույքային անվտանգությունը.*
4. *Պետք է ստեղծել հանձնաժողով,որը մյուս հարցերի հետ միաժամանակ պետք է պարզի թե ո՞վ է առաջինը սկսել պատերազմը, որպեսզի մեղավոր կողմի վրա դրվի ծախսերի և վընասների փոխհատուցումը*[78]:

Ակնհայտ է այստեղ հակահայկական ուղղվածությունը, ամեն կերպ վեհապետական Վրաստանի գերակայությունը և չընմեղությունը ապացուցելու համար Հայկական Բորչալուի և Ախալքալաքի խնդրում:

Ըստ երևույթին վրացիները կարողացել էին շփոթության մեջ գցել անգամ մեծագույն հայ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, իրավիճակը ներկայացնելով այնպես, կարծես թե վերը նշված առաջարկով Դաշնակիցները անընդունելի և Վրաստա-

նի համար ծանր պայմաններ են ներկայացրել:Այդ է վկայում Հովհաննես Թումանյանի 1918 թ. դեկտեմբերի 22-ի նամակը Եվգենի Գեգեչկորուն. «*…այսօր իմացա, որ դաշնակիցների ներկայացուցիչները Վրաց կառավարության համար հաշտության անընդունելի առաջարկ են արել: Արդյոք նպատակահարմար չ՞եք գտնում հայ - վրացական ինտելիգենցիայի ներկայացուցիչներից հրավիրել արտակարգ խորհրդակցություն՝ կազմելու հաշտության նոր նախագիծ՝ այն պայմանների հիման վրա, որ դուք առաջարկեցիք, երբ ես և Զուրաբովը Ձեզ մոտ էինք: Այսպես, խիստ անհրաժեշտ է երկու կողմերի համար էլ կործանարար այդ արյունահեղությունը դադարեցնել, որը մենք պետք է գլուխ բերենք բոլոր ուժերով՝ ինչ էլ լինի*»[79]: Ավա՞ղ, Հովհ. Թումանյանի «տագնապները» վրացիներին անընդունելի առաջարկ ներկայացնելու կապակցությամբ պարզապես անհիմն դուրս եկան: Վրացական կողմը ակնհայտորեն խաղի ավելի հարմար պայմաններում էր գտնվում, որը շուտով բացահայտվեց:

Դա շատ պարզ երևում է ՀՀ Նախարարների խորհրդի 1918 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի օրագրի վերլուծությունից, որում տագնապ էր արտահայտվում հայ-վրացական հարաբերությունների հետագա բարդացման հնարավոր հետևանքներից: 1918 թ. դեկտեմբերի 24-ի նիստում Հովհ. Քաջազնունին զեկուցում է այն մասին, որ *հայկական զորքերը Բորչալուի գավառում հասել են արդեն այն գծին, որ հայկական կողմը համարում է հայկական տարածքի սահման, որը մաքրվել է վրացական զորքերից: Քաջազնունին նշում էր, որ այդ պայմաններում պատերազմը շարունակելու այլևս պատճառ չկա*. Սակայն մինիստր նախագահը հենց այս նիստում ունեցած իր զեկուցման մեջ ուշագրավ շեշտադրում էր անում այն մասին, որ *թե՛ երկրի ներքին տնտեսական դրությունը և թե՛ զուտ զինվորական դժվարությունները անհրաժեշտ են դարձնում օր առաջ վերջացնելու պատերազմը և վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը:* Զեկուցագրում նշվում էր, որ անհրաժեշտ է բանակցությունների մեջ մտնել Վրաստանի հետ, միաժամանակ դիմելով Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներին Թիֆլիսում, որպեսզի վերջիններս էլ իրենց կողմից ճնշում գործադրեն Վրաց կառավարության վրա՝ բանակցությունների ընթացքն արագացնելու համար, դրա հետ մեկտեղ պարզաբանելով, որ վրացիների մերժման դեպքում հարկ է դիմել արբիտրաժի՝ ապավինելով Անգլիայի և Ֆրանսիա-

յի ներկայացուցիչների միջնորդության վրա: Կառավարության այս նիստում Քաջազնունին ակնհայտորեն ցույց տվեց խաղաղությունը շուտափույթ վերականգնելու անհրաժեշտությունը՝ նկատի ունենալով Հայաստանի ծանր կացությունը, դրա հետ մեկտեղ պարզություն մտցնելով այն հարցում, թե ինչպիսի որոշ զիջումներ կարելի է անել հակառակորդի հետ բանակցություններում, ինչի մասին անհրաժեշտ է հրահանգավորել ՀՀ պատվիրակությանը, որի մասին համապատասխան որոշում պետք է կայացվի նաև Հայաստանի խորհրդի (պառլամենտի) կողմից: Լսելով Նախարարների խորհրդի նախագահի զեկուցագիրը, նիստը ընդունում է աղեկվատ որոշում: Դրանում արձանագրվում էր, որ նկատի ունենալով երկրի թե՛ ներքին և թե՛ արտաքին կացությունը, խնդիր է բարձրացվում՝ որքան հնարավոր է շուտ վերջացնել պատերազմը: Ըստ այդմ, որոշվում է նորից դիմում անել Վրաց կառավարությանը, 1) առաջարկելով նրան ուղարկել լիազոր պատվիրակություն՝ համաձայնության գալու համար զինադադարի պայմանների շուրջ, տեղեկացնելով նաև, որ հայկական զորքերին հրաման է տրված չանցնել Բորչալու գավառում այն գիծը, ուր վերջանում է Հայաստանին պատկանող տերիտորիայի սահմանը, 2) միջոցներ ձեռք առնել, որ Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչներն իրենց կողմից ճնշում գործադրեն Վրաց կառավարության վրա՝ բանակցություններն արագացնելու համար, 3) եթե վրացիք չհամաձայնվեն անմիջական բանակցություններ սկսել, առաջարկել նրանց հարցը հանձնել վճիռ՝ արբիտրաժի: Նախարարների խորհրդի որոշման վերջնամասում այն միտքն էր արտահայտվում, որ նկատի ունենալով Հայաստանի համար ծանրագույն գեոքաղաքական և ռազմական իրավիճակը, հարկավոր է որոշել զիջումների այն շրջանակը, որով կարելի է գնալ բանակցությունների վրացիների հետ: Պարզաբանվում էր, թե ինչ զիջումներ կարող են արվել վրացիներին՝ համաձայն Հայաստանի պառլամենտի որոշման, եթե պարզվի նաև, որ վրացիները չեն ընդունում Հայաստանի առաջարկած պայմանները: Բացի այդ, Նախարարների խորհրդի որոշման մեջ մասնավորապես պարզաբանում էր տրվում, թե կոնկրետ ինչ զիջումների մասին կարող է խոսք գնալ, և առաջարկվում էր զիջումների ներքոհիշյալ տարբերակը. Բորչալուի գավառի այն մասը, որ հայկական կողմը արդեն գրավել է զենքով, մնում է Հայաստանի տրամադրության տակ, այնտեղ հաստատվում է հայկական վարչակարգ,

հայկական զորքերը մնում են տեղում: Դրա հետ մեկտեղ ՀՀ Նախարարների խորհուրդը Ախալքալաքի կապակցությամբ համաձայնվում էր, որ վրացական զորքերը և քաղաքացիական վարչությունը ժամանակավորապես մնան այնտեղ, պայմանով, որ գաղթականության մասին հոգացող հայկական ընկերակցությունները անարգել գործելու իրավունք ստանային գավառում: ՀՀ Նախարարների խորհրդի նիստը տեղեկացնում է, որ սույնի վերաբերյալ համապատասխան հրահանգներ են տրվելու Հայաստանի պատվիրակությանը և Թիֆլիսում Հայոց դիվանագիտական հավատարմատարին, հենց որ ստացվի Հայաստանի պառլամենտի, նրա ֆրակցիաների կամ ավագների խորհրդակցության համաձայնությունը[80]:

Շուտով սակայն իրավիճակն ավելի պարզվեց, և հասկանալի դարձավ, որ Դաշնակիցները կարծես թե հակված են բավարարելու վրացական պահանջատիրությունը, ինչն ուղղումներ պետք է մտցներ հայկական կողմի դիրքորոշումներում, և որոշակի շփոթ առաջ բերեր: Դրա արդյունքը եղավ դեկտեմբերի 26-ի համաձայնագիրը, որը ստորագրվեց Մեծ Բրիտանիայի գեներալ-մայոր Ռայկրոֆտի, ֆրանսիական գնդապետ Շարդինյիի և Վրաստանի Հանրապետության նախագահի Ժորդանիայի կողմից. «*...պատերազմական գործողությունները պետք է անհապաղ դադարեցվեն... չնայած պարոն Ջամալյանի բողոքներին, գեներալ Ռայկրոֆտը, գնդապետ Շարդինյին և Վրաստանի Հանրապետության կառավարության նախագահ պարոն Ժորդանիան որոշել են, որ խառը հանձնաժողովը՝ բաղկացած անգլիական, ֆրանսիական, վրացական և հայկական ներկայացուցիչներից պետք է հնարավորին չափով շուտ մեկնի ռազմաճակատ, որպեսզի կյանքում կենսագործի համաձայնության հետևյալ պայմանները. հանձնախումբը որոշում է այն պահակազորերի քանակը, որոնք պետք է թողնվեն վրացիների կողմից հյուսիսային մասում, իսկ հայկական կողմից՝ Բորչալուի գավառի հարավային մասում, ինչպես նաև վրացիների կողմից՝ Ախալքալաքի գավառում: Պահակազորերը պետք է լինեն սակավաթիվ: Վրացական զորքերը պետք է մնան իրենց գրաված այժմյան գծի վրա, հայկական զորքերը պետք է նահանջեն դեպի թուրքական գիծը՝ Դսեղ - Ջալալօղլի: Մեծ բրիտանական ուղեկալները (պիկետները) պետք է գտնվեն վրացական և հայկական զորքերի միջև ընկած տարածությունում գտնվող երկաթուղային ճանապարհի վրա: Արմի-*

*նիստրացիան (վարչակազմը) այդ վիճելի մասում պետք է լինի խառը:*

*Ախալքալաքի գավառի վրացական վարչության վրա վերահսկողությունը իրականացնելու խնդիրը դրվում է դաշնակիցների հանձնախմբի վրա, որի կազմում ընդգրկվում են նաև տեղական հայկական և մուսուլմանական բնակչության ներկայացուցիչները:*

*Երկու պետության՝ Վրաստանի ու Հայաստանի ներկայացուցիչները շուտով կուղարկվեն Եվրոպա, որտեղ սահմանների վերաբերյալ բոլոր հարցերը կվճռվեն մեծ տերությունների կողմից*»[81]:

Հետաքրքիր է այս ամենին ավելացնել նաև, որ Ա. Ջամալյանը կտրուկ հրաժարվեց ստորագրել այդ համաձայնագիրը՝ առարկելով Ախալքալաքի վերաբերյալ ձևակերպման շուրջ: Անգլիացիները համաձայնագրի տակ ավելացրին հետևյալը.«*պ. Ջամալյանը համաձայն չէ Ախալքալաքի գավառը Վրաստանի կողմից գրավելու կետի հետ*»[82]: Փաստորեն դաշնակիցները հաշվի չնստելով հայկական կողմի տեսակետի հետ, այդ միակողմանի, պրովրացական բնույթի համաձայնագիրը փորձեցին դնել գործողության մեջ, և դա ավաղ վերջիններիս հաջողվեց, ինչպես դա երևում է իրադարձությունների զարգացման հետագա ընթացքից: Հարկ է նշել այս կարևոր փաստաթղթի ծանոթության մեջ նշված կարևոր վերապահումների մասին: Դրանում ընդգծվում է, որ Դաշնակիցների վերը նշված հեռագիրը Երևան է ուղարկվել ռուսերեն թարգմանությամբ, որը կատարվել է վրացական կառավարության կարգադրությամբ, և միանգամայն չի համապատասխանում անգլիական տեքստին: Այսպես, վերջինից բխում է, որ.

1. Դաշնակիցների ներկայացուցիչները վրացական կառավարության նախագահի ժորդանիայի հետ կայացրել են իրենց որոշումը զինադադարի մասին ոչ համատեղ, այլ ընդամենը՝ նրա ներկայությամբ,
2. Պահակազոր Ախալքալաքում պետք է լինի, թե՞ ոչ, «փոքրաթիվ», թե՞ «շատ փոքրաթիվ» և այլն:

Իսկական վրացական խորամանկություն և խարդավանք:

Հենց այս ամենը նկատի ուներ Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը, երբ բողոքում էր համաձայնագրի մեղմ ասած ոչ բարյացակամ տրամադրվածության

մասին հայերի նկատմամբ: Գեներալ-մայոր Վիլյամ Ռայկրոֆտին ուղղված նոտայում Ա. Ջամալյանը ընգծում է հետևյալը. «*Նկատի ունենալով, որ ընդունվել է որոշում ներկա կոնֆլիկտի վերաբերյալ վրացական և հայկական կառավարությունների միջև, և որ այդ որոշումը հիմք է ունեցել ընդամենը այն տեսակետը, որոնք Ձեզ շարադրվել են Վրաստանի Հանրապետության կառավարության կողմից, առանց նրա, որպեսզի ուշադրություն դարձվի Հայաստանի Հանրապետության կառավարության նկատառումներին, ես պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ որպես Վրաստանի կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության գործերում հավատարմատար,բողոքում եմ այդ որոշման դեմ*»[83]:

Ջամալյանը իր վրդովմունքն էր արտահայտում այն կապակցությամբ, որ վրացական կառավարության կողմից միտումնավոր թաքցվել են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դեկտեմբերի 19-ից սկսված և արված խաղաղասիրական առաջարկները, որոնք որոշակի նպատակ են հետապնդել:

Սակայն այս միջամտությունը միանգամից չկանխեց ռազմական գործողությունները, դրանք շարունակվում էին, չնայած Հայաստանի խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 26-ին (դրա մասին կասվի առանձին՝ 4-րդ գլխում) որոշում էր կայացրել պատերազմի դադարեցման և հայ-վրացական բախումը հանգուցալուծելու մասին, միաժամանակ բողոքելով, որ այն չի համապատասխանում Հայաստանի իրավունքներին և արդարացի պահանջներին[84]: Միևնույն ժամանակ պատերազմը երկու կողմերին էլ կանգնեցրեց պրոբլեմների առաջ, որոնք յուրաքանչյուր կողմ ըստիպված էր լուծել յուրովի: Չնայած հաղթական ճակատամարտներին, հայկական բանակը ևս կանգնել էր դժվարությունների առաջ: Այդ մասին հաղորդում է Թիֆլիսում հայկական պատվիրակության ղեկավար Հարությունյանը: Վերջինիս դեռ 1918 թ. դեկտեմբերի 24-ի հեռագրում՝ հասցեագրված Հայաստանի Հանրապետության մինիստր - նախագահին և զինվորական նախարարին, շեշտվում էր Դրոյի կողմից ներկայացված հետևյալ պահանջների մասին, այն է՝ 1) չնախատեսված ծախսերի համար իր տրամադրության տակ դնել 50.000 ռուբլի, 2) ուղարկել 1500 Լեբելի և 800 թուրքական հրացաններ, ոչ պակաս 1000 զինվոր,ընդ որում Դրոն պահանջում էր հրացաններն ուղարկել անհապաղ:

Հաղորդագրության մեջ տեղեկացվում էր, որ բժիշկների և ֆելդ-շերների սուր կարիք է զգացվում,որի բացակայությունը Սադախլուի մոտի վերջին մարտերում մինչև 70 հոգու կյանք է արժեցել երկու կողմերի համար էլ: Հաղորդագրության վերջում ընդգծվում էր, որ հայկական բանակի ձեռք բերած մարտական հաջողությունները կարելի է ամրապնդել և հասնել կոնֆլիկտի արդարացի լուծմանը՝միայն այդ պահանջները բավարարելու դեպքում[85]:

1918 թ. դեկտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավարը ուղիղ հեռագրաթելով հաղորդում էր կառավարությանը, որ զրահագնացքների համար Ալավերդու գործարանում Շարաֆյանը գնել է 1250 փութ մազութ: Բացի այդ, վերջինս հաղորդում էր, որ Լոռու գյուղացիները հայտարարել են, որ Սադախլուի գրավումից հետո հեշտացել է ցորենի ձեռք բերումը մուսուլմաններից, միևնույն ժամանակ տեղեկացնելով այն մասին, որ (անկասկած, բանակի ամրապնդման նպատակով) Դրոն անհրաժեշտ է համարում ձեռք բերել զինամսեր Կարսի պաշարներից, որի համար նույն օրն ուղևորվել է Պուադեբարը[86]:

Դեկտեմբերի 25-26-ի դաշնակիցների միջամտությունը ևս որոշակի տագնապի առաջ է կանգնեցնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը և ստիպում լրջորեն մտորել իր հետագա անելիքների մասին: Դա երևում է կառավարության ղեկավար Հովհ. Քաջազնունու ուղիղ հեռախոսագծով խոսակցությունից հայկական պատվիրակության հետ: Ընդգծելով, որ ըստ էության ռազմական գործողություններն ընդհատելու մասին պահանջագիրը պետք է ընդունել, սակայն միաժամանակ Քաջազնունին գտնում էր, որ պայմանները բացահայտորեն հակված են վրացիների կողմը, որի դեմ իրենք եռանդուն բողոքելու են: Քաջազնունին հույս էր հայտնում, որ կհաջողվի որոշակի չափով փոխել պայմանները հօգուտ Հայաստանի, օրինակ, որպեսզի Լոռիում լինի ոչ թե խառը, այլ միայն հայկական վարչակարգ[87]:

Սակայն իրադարձություններն իրենց երկար սպասեցնել չեն տալիս, որովհետև աշխարհաքաղաքական կացությունը փոփոխվում էր սրընթացորեն և նոր իրավիճակներ ստեղծում: Հայկական կողմը ձգտում էր կոնֆլիկտի հնարավորին շուտ հանգուցալուծման, չնայած վրացիները անարդարացիորեն Հայաստա-

նին մեղադրում էին ոչ միայն ագրեսիվության, այլև պատերազմի անհարկի ծգծգման մեջ:

Հայաստանի վարչապետ Հովհ. Քաջազնունին 1918 թ. դեկտեմբերի 26-ին կապվելով հայկական պատվիրակության հետ (Ղարաքիլիսայի միջոցով) նշում էր, որ երկրի ներքին իրավիճակը և արտաքին քաղաքական իրադրությունը անհրաժեշտ են դարձնում կոնֆլիկտի անհապաղ լուծումը: Քաջազնունու կողմից նշվում էր, որ Հայկական զորքերը Բորչալուի գավառում հասել են Հայաստանի Հանրապետության սահմանին, հրաման է տրվել չանցնել այդ սահմանը, եթե միայն վրացական զորքերի թշնամական գործողություններով առաջ չբերվի բանակցություններ դանդաղեցում կոնֆլիկտի դադարեցման համար:Հովհ. Քաջազնունին հիշեցնում էր,որ ծագած կոնֆլիկտի խաղաղ ավարտման նպատակով դեռևս դեկտեմբերի 19-ին Սանահին է ուղարկվել պատվիրակություն վրացիների հետ հանդիպելու համար, որի մասին Վրաստանի կառավարությունը երկու անգամ տեղեկացվել է, սակայն վերջինս չի արձագանքել: *Նկատելով, որ նըշված հեռագիրը ստացվել է հասցեատիրոջ կողմից*, - նշում է Քաջազնունին, - ***Հայաստանի կառավարությունը ևս մի անգամ հրավիրում է Վրաստանի կառավարությանը ուղարկել լիազորված անձանց ռազմական գործողությունների դադարեցման պայմանները հաստատելու համար***[88]:

Հարկ է սակայն ընդգծել, որ Հայաստանի վարչապետի եզրափակիչ խոսքում՝ որոշակի անհանգստություն կար արդեն, որի մասին ստորև կնշենք:

Խոսքը վերաբերում է հետևյալին. նշելով ռազմական գործողությունների դադարեցման անհրաժեշտության մասին, Հովհ. Քաջազնունին նկատի ուներ այն հանգամանքը ևս, որ հնարավորին չափով շուտ երկաթուղային հաղորդակցության բացումը Թիֆլիսի հետ ծայրահեղորեն անհրաժեշտ է[89]: Հենց սա է այն հիմնական պատճառներից մեկը, որը Հայաստանի կառավարությունը հաշվի առնելով, չնայած պատերազմի փաստական հաղթական ելքին, հակված էր և գնաց որոշակի, նույնիսկ լուրջ զիջումների Վրաստանին, որը բացատրվում էր այն աշխարհաքաղաքական խեղդուկ իրավիճակի առանձնահատկություններով, որում գտնվում էր Հայաստանն այդ օրերին:

Ըստ երևույթին, վրացիների հետ բանակցելու մեկնած հայկական պատվիրակության ղեկավար Մ.Հարությունյանը դեկտեմբերի 26-ի վիճակով դեռ որոշակի հույսեր էր փայփայում, երբ Հայաստանի մինիստր - նախագահին ուղղված հեռախոսագրում ասում էր ներքոհիշյալը. *Վրաստանը մտադրություն չունի շուտ ուղարկելու իր ներկայացուցիչներին, իսկ դիվանագիտական միջամտությունը կարող է ուշանալ: Այդ իսկ պատճառով*,- ընդգծում էր Հարությունյանը,- *միայն հայկական զորքերի թվական* (հետևաբար նաև՝ ռազմական - Վ.Վ.) *գերակշռությունը կարող է արագացնել վրացիների կողմից արվելիք զիջումը, և այդպիսով, զոհերի թիվը երկու կողմերի համար էլ կարող է քիչ լինել: Հարկավոր է*,- պնդում էր նա այդ հեռախոսագրում,- *շուտափույթ Դրոյին հասցնել 2000 լավ վարժված զինվոր՝ զինված ֆրանսիական հրացաններով: Պայքարը, ըստ երևույթին, դեռևս շարունակվելու է, դիմադրությունը լուրջ է, չնայած մենք համոզված ենք, որ հաղթանակը մերն է լինելու: Հետևաբար*,- եզրափակում էր Հարությունյանը,- *անհրաժեշտ է Դրոյին ուղարկել համալրում մարդկանցով և ֆրանսիական հրացաններով*[90]:

Հաջորդ մի քանի օրերին ևս նման վիճակ է իշխում: Հովհ. Քաջազնունին դեկտեմբերի 26 - 27-ի արանքում (գիշերվա ժամը 2-ին) Հայաստանի պատվիրակության ղեկավար Հարությունյանին ուղիղ հեռագրագծով հաղորդում էր ՀՀ պառլամենտի հայտնի որոշման մասին, որը կայանում էր հետևյալում. 1) մեծ տերությունների ներկայացուցիչների կողմից ներկայացված համաձայնագրի և ռազմական գործողությունների դադարեցման մասին առաջարկն ընդունել, 2) նկատի ունենալով, որ առաջարկված պայմանները խախտում են Հայաստանի իրավունքները, առաջարկել կառավարությանը փոփոխել դրանք՝ կոնֆլիկտի վերացման պայմանների մասին պառլամենտի նախորդ որոշման համաձայն: Այնուհետև իր անունից Հովհ. Քաջազնունին հետաքրքրքիր հարցադրումներ էր անում, որոնց մեջ որոշակի անհանգստություն էր զգացվում իրադարձությունների զարգացման հետագա ընթացքի վերաբերյալ: Հովհ. Քաջազնունին հայկական պատվիրակությունից պահանջում էր աշխատել հասնել համաձայնագրի պայմանների փոփոխմանը. 1) եթե հանձնաժողովը լիազորված չէ փոփոխություններ ներկայացնելու, ապա հարկ է գնալ Թիֆլիս և ձգտել հասնել փոփոխության այնտեղ, 2) ցույց տալ, որ Զամալյանը լիազորված չի եղել մտնել այդ հարցի վե-

ռաքերյալ որևիցե համաձայնության, մինչդեռ Վրաստանի կողմից կոնֆերանսին մասնակցում էր կառավարության ղեկավարը, 3) բողոքել Լոռուց հայկական զորքերի դուրս բերման դեմ այն ժամանակ, երբ վրացիները մնում են Ախալքալաքում, գլխավորապես ընդդեմ խառը հանձնաժողովի ստեղծման Լոռիում, այն ժամանակ, երբ Ախալքալաքում մնում է վրացականը: Յովի. Քաջազնունին ընդգծում էր, որ եթե Ախալքալաքից դուրս չեն բերվելու վրացական զորքերը, անհրաժեշտ է, որպեսզի Լոռիում մնան հայկական զորքերն այնտեղ, որտեղ նրանք կանգնած են: Այնուհետև Յովի. Քաջազնունին հայտնում էր, որ եթե Ախալքալաքում ադմինիստրացիան վրացական է, անհրաժեշտ է, որպեսզի Լոռիում այն լինի հայկականը, 4) փորձել հասնելու, որպեսզի երկաթուղային ճանապարհը բացվի ազատ երթևեկության համար Յայաստանից դուրս և դեպի Յայաստան՝ ապահովելով անհրաժեշտ շարժակազմը և վառելիքը, 5) պահանջելով, որ վրացիները տան Յայաստանին պատկանող ունեցվածքը,որը գտնվում էր Թիֆլիսում, ինչպես նաև Յայաստանին պատկանող բռները[91]:

Արդեն ասացինք, որ ակնհայտ էր տագնապը Յայաստանի կառավարության դիվանագիտական և ռազմաքաղաքական քայլերում, որն ըստ երևույթին, զգում էր նաև վրացական կողմը, և օգտվելով ստեղծված բարենպաստ հանգամանքներից, ինչպես նաև մեծ տերությունների որոշակիորեն պրովոկացիոն և պրովրացական տրամադրվածությունից, ձգձգում էին հայ - վրացական բանակցությունները: Այդ անհանգստությունը հստակորեն երևում է Յովի. Քաջազնունու վերը նշված խոսակցության վերջնամասում արտահայտված հետևյալ մտքից. Յովի. Քաջազնունին, որպես ընդհանուր հրահանգ հաղորդում էր, որ *պատվիրակությունը ձգտի հասնել իրենց համար հնարավորին չափով առավելագույն արդյունքների, <u>սակայն Յայաստանի դեմ չհանելով դաշնակիցներին</u>* (այ սա արդեն հետաքրքիր է - ընդգծումը մերն է՝Վ.Վ.),*և որևիցե փոփոխության հասնելու անհնարինության դեպքում ընդունել պայմանները, սեփական իրավունքների պաշտպանությունը եվրոպական կոնգրեսում թողնելով հայերին*[92],- եզրակացնում էր Քաջազնունին:

Սակայն իրադարձությունները հայկական սցենարով չեն ընթանում: Մեծ տերությունների հանձնախումբը (2 անգլիացի, 1 ֆրանսիացի և 1 վրացի սպա) անգլիական կապիտան Դուգլաս

Վիծերսի գլխավորությամբ դեկտեմբերի 28-ին հասավ Ղարաքիլիսա և հայկական զորքերի հրամանատարությանը ներկայացրեց մեծ տերությունների կողմից մշակված համաձայնագիրը: Սակայն հենց այդ նույն օրը վրացիներն անցան լայնածավալ ռազմական գործողությունների: Վրացական բանակը զգալի չափով համալրվել էր զենք ու զինամթերքի պաշարներով, սննդեղենի մատակարարումը ավելի բարվոք վիճակում էր: Ավելին, վրացիներին յուրահատուկ դաշնակից էր հայտնվել, նրանց էին միացել Բորչալուի թուրքերը, որոնք ռազմադաշտ էին դուրս բերել կամավորական խմբեր: Վրաստանը լրիվ մոբիլիզացվել էր: Մի տեղեկության համաձայն, Հայաստանի դեմ գործող զորքերի թիվը 12.000 սվին է եղել[93]:

Ընդհականակը, հայկական զգալիորեն ավելի սակավաթիվ բանակը դժվարությունների առաջ էր կանգնել: Զորքը վատ էր պարենավորված, կոմունիկացիաները վատ էին զարգացած, պահեստային ուժերի կարիք էր զգացվում, իրական թիկունքը զգալիորեն հեռու էր, Հայաստանի կառավարությունը զբաղված էր բազմաթիվ ներքին ու արտաքին պրոբլեմներով: Ինչպես նշում է Ս. Վրացյանը, դրությունը դժվարացնում էր և մի ուրիշ հանգամանք. «*քանի դեռ կռիվները տեղի էին ունենում հայկական շրջաններում, լոռեցիները զենքը ձեռներին մասնակցում էին պատերազմական գործողություններին՝ միշտ բանակի առաջին շարքերում: Հենց որ ամբողջ Լոռին գրավվեց և պատերազմը սկսեց տեղափոխվել հայկական շրջաններից դուրս, լոռեցիները, մեծ մասով, հեռացան իրենց տները և կռվի դաշտում մնացին գլխավորապես կանոնավոր զորամասերը: Այս պարագան, իհարկե, վատ անդրադարձավ և մնացած զինվորների հոգեկան վիճակի վրա: Հայկական բանակը աստիճանաբար փոքրանում էր, վրացիներինը, ընդհակառակը, ավելանում էր արագորեն: Ուժերի համեմատությունը փոխվում էր ի նպաստ թշնամու*»[94]:

Հայկական կառավարությունը փորձում էր և՛ զինադադար կնքել, և՛ պատերազմն ավարտել ոչ վատ արդյունքներով՝ ապավինելով Դաշնակից երկրների բարեսիրտ վերաբերմունքի վրա: Հայաստանի կառավարության դիրքորոշումը լի էր տագնապով թե՛ դեկտեմբերի 27-ի, և թե՛ դեկտեմբերի 28-ի նիստի ժամանակ: Տագնապելու բոլոր հիմքերը կային, բայց և հակազդելու հնարավորությունները փոքր էին, ոչ իրական: Հայաստանի Հանրապե-

տության Նախարարների խորհրդի 1918 թվականի դեկտեմբերի 28-ի նիստում լսվեց արտաքին գործերի նախարարի զեկուցումը այն հեռագրական խոսակցության մասին, որ ինքն ունեցել է անգլո - ֆրանսիական ներկայացուցիչների ու վրաց պատվիրակության, ինչպես նաև Դիլիջան ժամանած ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի հետ: Արտաքին գործերի նախարարի զեկուցագրում հարց էր բարձրացվում՝ կապված խառը հանձնաժողով ստեղծելու հանգամանքների, նրա ֆունկցիաների և իրավասությունների մասին: Միաժամանակ հարցապնդում էր արվում այն մասին,թե ինչու՞ դաշնակից պետությունների ներկայացուցիչները հայ - վրացական կոնֆերանս վերաբացելու միտված բանակցություններին հրավիրել են Վրաստանի ներկայացուցչին, իսկ Հայաստանի ներկայացուցչին՝ ոչ: Բացի այդ, արտաքին գործերի նախարարը սույն նիստում ընդգծում էր Վրաստանի դեպի հայերը բռնած դիրքի և Թիֆլիսում հայերի դեմ ձեռնարկած միջոցների մասին(հակահայկական հիստերիայի - Վ.Վ.): Այս ամենի կապակցությամբ Նախարարների խորհուրդը որոշում է ընդունում իսկույն ևեթ ուղիղ հեռագրագծով կապվել Ղարաքիլիսայում գտնվող հայկական պատվիրակության հետ, և պայմանավորվել զինադադար կնքելու առթիվ առաջ եկած նոր պայմանների մասին: Նույն նիստում վարչապետը նաև տեղյակ է պահում արդեն այն մասին, որ իբրև հետևանք դաշնակիցների միջնորդության՝ Ղարաքիլիսայում գտնվող հայկական պատվիրակության և վրաց ներկայացուցիչների միջև համաձայնություն է կայացել զինադադարը գործողության մեջ դնել դեկտեմբերի 31-ին ժամը 24-ից սկսած[95]:

Սակայն մինչև զինադադարի գնալը կողմերը փամփուշտների տեղատարափ ուղղեցին միմյանց դեմ: Դեկտեմբերի 27-ից սկսված, վրացական զորքերի գլխավոր խմբերը սկսեցին կենտրոնանալ Շուլավերի շրջանում, փորձելով ուժերի գերակշռություն ապահովելով, ձեռք բերել ռազմավարական առավելություն: Դեկտեմբերի 29-ին Շուլավերի շրջանում Մազնիևի գլխավորած վրացական զորամասը 3500 հետևակով, 12 թնդանոթով հայկական դիրքերը մրրկային թնդանոթային կրակի ենթարկելուց հետո հարձակում սկսեց գնդապետ Կորոլկովի ամբողջ ճակատի վրա: Չնայած հակառակորդի մարդկանց և թնդանոթների գերազանց ուժերին, հայկական զորքերը դեկտեմբերի 26-ից ընկրկած չորս օր շարունակ ետ մղեցին վրացիների գրոհները մեծ

վնաս հասցնելով թշնամուն, մինչդեռ ձախ թևը համառ կերպով պաշտպանում էր հայկական դիրքերը, կենտրոնը չդիմանալով վրացիների գրոհներին,ստիպված եղավ անցնել Շուլավերի հյուսիսային կողմը և դրանով իսկ լուրջ դիմադրություն ստեղծեց երկու թևերի համար: Կորոլկովը սկսեց նահանջել ավելի հարմար դիրքեր, մինչև թարմ ուժերի հասնելը: Միևնույն ժամանակ աջ թևում, երկաթուղագծի շրջանում վրացիները թվով 800 - 900 հոգի <u>նրանց միացած թուրքերի հետ</u>, հարձակում սկսեցին գնդապետ Իշխանյանի զորամասի վրա Կասսուլլը և Ախմաղլու գյուղերի կողմից և անցան հայկական զորքերի աջ թևի թիկունքը: Հայկական զորքերը շարունակելով կռվել, դուրս են գալիս այդ վիճակից, փոխելով կռվի ճակատը, և օգնական ուժեր չստանալով՝ նահանջում են[96]: Հայկական կողմը տալիս է մոտ 200 հոգի ըսպանված ու վիրավոր[97]: Դեկտեմբերի 29-ին օգնության է հասնում գնդապետ Տիմչենկոն: Որոշակի չափով վիճակը դեռ կայուն էր, սակայն կային արդեն ռեալ տագնապներ և հոգեբանական դժվարություններ:

Դա լավ է երևում դեկտեմբերի 29-ի երեկոյան Հայաստանի Հանրապետության պատվիրակության և կառավարության նախագահ Հովհ. Քաջազնունու միջև ուղիղ հեռագրագծով կայացած խոսակցությունից. *ապարատի մոտ է պատգամավորությունը և գեներալ Սիլիկովը.*

<u>Հովհաննես Քաջազնունին՝ Սիլիկովին</u>.- *Եթե բանակցությունները մի քանի օր ձգձգվեն, հույս ունենք, որ դուք որոշ ժամանակ հաջողությամբ կդիմանաք, կկարողանաք առաջ տեղաշարժվել կամ էլ գոնե պահպանել ներկա դիրքերը, նկատի ունենալով դրությունը ռազմաճակատում, զորքերի ռազմամթերքի վիճակը, դիրքերի տակտիկական վիճակը, 3-րդ մարտկոցի մոտենալու հնարավորությունը, ինչպես նաև՝ հայտնի՞ է Ձեզ արդյոք երկրի վիճակը դրամական և պարենային առումով:*

<u>Սիլիկով</u>.- *Զորքերը անընդմեջ երկու շաբաթ մարտական աշխատանքում են և Դրոյի զեկույցի համաձայն հոգնած են՝ փոխարինում չունենալով: Ռազմամթերքի պաշարները հրետանունը զգալի է կամ բավականին, հրացանայինը՝ 280.000: Համալրում գալիս է, բայց ոչ ուժեղ: Որոշ գնդերի դիրքեր բավականին ամուր կանգնած են: Օգնական ուժերի մոտեցումով կարող ենք հույս ունենալ, որ մոտակա օրերին գնդերը կպահպանեն այդ դիրքերը,*

*սակայն այս վիճակը երկար շարունակվել չի կարող, այդ իսկ պատճառով կարծում եմ առաջին իսկ հնարավորության դեպքում՝ ակտիվություն զարգացնել մինչև Խրամ: Պարենամթերքը միայն հաց և 50 ֆունտ շաքար է, որն ուղարկված է եղել հատուկ առաջապահ զորամասերի համար, ջոկատին տրված դրամները՝ 600.000 ռուբլի գումարը, արդեն վերջանալու վրա է... Հագնված են մարդիկ, ինչպես ծեզ հայտնի է՝ վատ: Վագոններից վերցված հանդերձանքը, շինելները և կոշիկները ողջ ջոկատի համար բավարար չի:*

Քաջազնունի.- *Ինչպիսին է Ձեր կարծիքը՝ հարկ կա արդյո՞ք ըշտապել զինադադարի կնքման հարցում, թե ավելի լավ է ձգձգել գործը մի քանի օր:*

Սիլիկով.- *Ես ներկա եմ եղել զինադադարի կնքման հարցի քըննարկման ժամանակ, և չնայած այն բանին, որ փամփուշտները քիչ են, ակամայից կարծես թե ստիպված ես մի քանի օր ձգձգել: Ես կխնդրեի բնակչությունից հավաքել փամփուշտները: Ալեքսանդրապոլում հավաքված է մոտ 80.000 փամփուշտ, որոնց մի մասը՝ ես կվերցնեմ ինձ հետ:*

Քաջազնունի.- *Ես չհասկացա, շահավե՞տ է արդյոք մեզ ձգձգել բանակցությունները, թե մենք ստիպված ենք դա անել մեզանից չկախված հանգամանքներից դրդված:*

Սիլիկով.- *Մենք հարկադրված ենք գնալ դրան, ի հետևանք այն բանի, որ մեր մոտ ժամանած անձինք լիազորված են միայն ըստանալ որոշակի պատասխան պատգամավորությունից, որից հետո կուղևորվեն Թիֆլիս, որտեղից կհետևի վերջնական որոշումը գործողությունների դադարեցման մասին... Ես խնդրում եմ ինձ ուղարկել համալրում և պարեն: Ուրիշ ոչինչ չունեմ: Դրությունը ռազմաճակատում շատ լուրջ է:*

Քաջազնունին հարցնում է Հարությունյանին.- *Պատգամավորությունը ոչինչ չունի՞ ավելացնելու Զամալյանի կողմից ասվածին.*

Հարությունյան.- *Զամալյանի հեռանալուց հետո պարզվեց, որ անգլո - ֆրանսիական հանձնաժողովը լիազորված չէ մտցնելու որևիցե փոփոխություն... Միակ բանը, որ նա կարող է անել, դա հեռագիր ուղարկելն է Թիֆլիս և հաղորդելը, որ Հայկական կառավարությունը համաձայն է անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և վրացական ներկայացուցիչների հետ միասին Թիֆլիսում հաստատելու զորքերի ետ քաշման օրը՝ համաձայն դաշնակցային հրամանատարության որոշման և խնդրել*

*այդ որոշման որոշ կետերի պարզաբանումը, այն է՝ խառը ադմինիստրացիայի և Ախալքալաքի գավառում ստեղծված վիճակին վերաբերող: Վերջին հեռագրում մանրամասները չեն հիշատակվում: Այսպիսով, եթե մենք համաձայնվենք այդպիսի հեռագրի ուղարկման հետ, ապա դրանով իսկ մենք ընդունում ենք բոլոր դրված պայմանները: Սակայն դեռևս պատգամավորությունում միակարծություն չկա այդ հարցերի վերաբերյալ: Հետաքրքիր է իմանալ Ձեր կարծիքը, որից հետո պատգամավորությունը իրեն իրավունք է վերապահում ընդունել այս կամ այն վճիռը:*

<u>Քաջազնունի</u>.- *Մեր պատասխանը կտանք քիչ անց: Եթե համաձայնվենք հենց այսօր ընդունել դաշնակիցների պայմանները, ապա այդ ժամանակ և ի՞նչ կարգով է ենթադրվում իրականացնել ռազմական գործողությունների ավարտը:*

<u>Հարությունյան</u>.- *Նրանք ենթադրում են, որ անհապաղ կդադարեցվեն ռազմական գործողությունները, սակայն ինչպես արդեն ասել է Սիլիկովը, կարգադրությունը պետք է հետևի Թիֆլիսից, որի վրա <u>կգնա</u> երեք օր: Մենք մի քանի անգամ ընդգծել ենք, որ խնդրում ենք դաշնակցային հրամանատարությանը մեզ անձամբ ունկնդրել, որից հետո մենք, անկասկած, կենթարկվենք իրենց որոշմանը նույնիսկ այն դեպքում, եթե նա չի ցանկանա որևիցե փոփոխության գնալ: Սակայն այս բոլորին հանձնաժողովի նախագահը համառորեն պատասխանում է, որ մենք պետք է կա՛մ ամբողջությամբ ընդունենք այդ առաջարկը, կա՛մ առաջադրենք մեր կոնտրառաջարկը: Նրանք նույնիսկ ոչ լիովին են համոզված, որ վրացիները կթողնեն մեր պատգամավորությանը Թիֆլիս*[98]:

Մեկ ժամ անց ըստ պայմանավորվածության, զրույցը շարունակվում է.

<u>Քաջազնունի</u>.- *Թելադրում եմ Նախարարների խորհրդի որոշումը. ներկա են Հախվերդովը, Խատիսովը, Տիգրանյանը, Հարությունյանը, Մելիք-Կարակոզյանը, Արամը հիվանդ պառկած է, Էնֆիաջյանը առողջության պատճառով բացակայում է: Որոշումը ընդունված է միաձայն. «Ելնելով այն հանգամանքից, որ պատերազմի հետագա շարունակումը կարող է մեզ սպառնալ դրության վատթարացմամբ, Նախարարների խորհուրդը միաձայն որոշում է Հարությունյանի գլխավորությամբ գործող պատգամավորությանը առաջարկել կապիտան Դուգլասի գլխավորությամբ գործող պատվիրակությանը տալ հետևյալ պատասխանը. Չցանկանալով հետագա արյունահեղություն, ընդառաջ գնալով տերու-*

*թյունների ցանկությանը, համաձայնություն ենք տալիս պատերազմի շուտափույթ ավարտին և երկաթուղային հաղորդակցության վերականգնմանը, Հայաստանի կառավարությունը արտահայտում է իր համաձայնությունը անգլո-ֆրանսիական հանձնաժողովի առաջարկին՝ դադարեցնել ռազմական գործողությունները այն պայմաններով, որ այդ հանձնաժողովը որոշել է: Դրա հետ մեկտեղ Հայաստանի կառավարությունը գտնելով, որ այդ պայմանները մշակված են առանց իր կողմից լիազորված ներկայացուցիչների մասնակցության, ցանկություն է արտահայտում, որպեսզի այդ պայմանները վերանայվեն Հայաստանի կառավարության կողմից լիազորված անձանց մասնակցությամբ: Սակայն այդ ցանկության իրագործումը չպետք է կասեցնի անգլո-ֆրանսիական հանձնաժողովի առաջարկած պայմանների իրագործումը»*[99]: *Այնուհետև՝ «անհրաժեշտ է, որպեսզի անգլո - ֆրանսիացիները գնան ռազմաճակատ՝ ռազմական գործողությունների կանգնեցման նպատակով»*:

Հարությունյան.- *Կառավարության որոշումը հարցը լուծում է վերջնականապես և պատգամավորությանը զրկում հնարավորությունից մեզ առաջարկված բանաձևի հիման վրա Թիֆլիս մեկնել՝ նպատակ ունենալով հասնելու ուղղումների, թեկուզև այդ հեռագրում առաջարկված սահմաններում:*

Քաջազնունի.- *Կառավարության որոշումը վերջին զիջումն է, եթե այսօր Ձեզ չհաջողվի հասնել համաձայնության լավագույն պայմանների հիման վրա: Եթե Ձեզ հենց այժմ հաջողվի դադարեցնել պատերազմը, իսկ մնացած պայմանները՝ Թիֆլիս տեղափոխման դեպքում դրվեն նոր քննարկման համար, ապա դա կլինի ամենալավագույնը: Սակայն եթե պայմանների վերանայման պահանջը կհանգեցնի դրանով իսկ ռազմական գործողությունների ավարտի դանդաղեցմանը, ապա դա մեզ համար օգուտ չի, քանի որ մենք զգուշանում ենք, որ մեր վիճակը կվատթարանա, այդ իսկ պատճառով անհրաժեշտ ենք գտնում հենց այժմ իսկ հասնել զինադադարի, թեկուզև դաշնակիցների բոլոր պայմանների ընդունումով: Եթե այսօրվա խորհրդակցության ընթացքում կպարզվի լավագույն հնարավորության կոմբինացիաներ և կտրվեն կառավարության նոր ցուցումներ, ապա կանչեցե՛ք մեզ ապարատի մոտ: Համենայն դեպս նիստի ավարտի դեպքում հաղորդեցե՛ք մեզ արդյունքը*[100]:

Ահա այսպես, ասվածից պարզ է, որ պատերազմը թևակոխում էր իր վճռական փուլը, և հակամարտող երկու կողմերն էլ ունեին թե՛ իրենց անելիքները, և թե՛ սպասելիքները:

Դեկտեմբերի 30-ին ռազմական գործողությունները շարունակվում էին, չնայած այդ նույն օրը Ղարաքիլիսայում գտնըվող Դաշնակցային տերությունների հանձնաժողովի նախագահ կապիտան Դուգլաս Վիծերսը հեռագիր ուղարկեց Դաշնակից տերությունների հրամանատարությանը, հայտնելով այն մասին, որ Հայկական կառավարությունը համաձայն է ռազմական գործողությունների անհապաղ դադարեցմանը և զորքերի ետ քաշմանը, ինչպես դա որոշվել է գեներալ Ռայկրոֆտի կողմից: Վիծերսը հայտնում էր, որ պատերազմող կողմերի ներկայացուցիչների հետ համաձայնությամբ ռազմական գործողությունները պետք է ընդհատվեն 1918 թ. դեկտեմբերի 31-ին ժամը 24-ին: Վիծերսը հայտնում էր նաև այն մասին, որ Հայաստանի կառավարությանը ոչ բոլորովին են պարզ գեներալ Ռայկրոֆտի կողմից առաջարկված համաձայնագրի որոշ կետեր, սակայն վերջինս սկզբունքորեն համաձայնվել է ստորագրել պայմանները, ցանկանալով ստանալ ավելի ճշգրիտ պարզաբանումներ, այդ իսկ պատճառով էլ 2 պատգամավորների լիազորել է գնալու Թիֆլիս: Վիծերսը հայտնում էր, որ ինքը համաձայն է Հայկական կառավարության հետ, որ այդ հարցերի որոշ մանրամասներ պետք է ավելի ճշգրիտ բացատրվեն՝ բավարար և խաղաղ աշխատանքի համար, գեներալ Ռայկրոֆտի կողմից առաջարկված պայմանների հիման վրա[101]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանը այդ չարաբաստիկ պատերազմը շարունակելու դեռ տեսական որոշ աղոտ հնարավորություններ և ժամանակ ուներ, և կողմերը պատերազմում էին, ով ինչպես կարողանում էր: Դեկտեմբերի 30-ին առավոտյան վրացիները փորձեցին մոտենալ Սադախլու կայարանին ու Լամբալու գյուղին, բայց հայկական հրետանին կրակով ետ շպրտեց: Վրացիները նորից անցան հարձակման,սակայն հայկական զրահապատը գնդակոծում է Սադախլուն, որի հետևանքով վրացիներն ու նրանց միացած թուրքերը այրում են Դամիա գյուղը, կատաղի կռիվներից հետո գրավելով Բոլնիս - Խաչեն գյուղը[102]:

---

[10] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

Ռազմական գործողությունները շարունակվում են փոփոխական հաջողություններով,չնայած ընդհանուր առմամբ գերակշռությունը ակնհայտորեն դեռ հայկական զորքերի օգտին էր: Այն բանից հետո, երբ Դրոն վերջապես ստացավ փոքրիկ օժանդակություն (600 թարմ զինվորներ 4-րդ և 6-րդ գնդերի համար), նախապատրաստություններ սկսեցին տեսնվել դեկտեմբերի 31-ին թշնամու նկատմամբ վճռական հարձակման անցնելու համար, <u>որի դրական արդյունքը հայկական կողմի համար կարող էր խիստ էական լինել</u>:

Վրացիները դեկտեմբերի 31-ին, առավոտյան Սադախլույում հավաքել էին մոտ 3,5 հազար կռվող (զորավար Մազնիևի հետագա հայտարարությունների համաձայն,վրացիներն ամբողջ հայկական ճակատի վրա ունեին 8000 կռվող), Դամիա-Սադախլույում 12 թնդանոթ և մոտ 800 հոգի էլ Քասումլու թրքական շրջանում[103]:

Հայկական հրամանատարության նպատակն էր գրավել Սադախլուն և վերջ տալ վրաց զորավար Մազնիևի բանակին: Ճակատամարտը Սադախլուի մոտ պետք է վճռականը լիներ: Այն ընթացավ փոփոխակի հաջողություններով: Հեռախոսային կապի անկատարության հետևանքով հայկական զորամասերի միջև որոշ անհամաձայնողական գործողություններ առաջացան: Կատաղի կռիվները վրացիների և հայերի միջև շարունակվեցին մինչև ժամը 12-ը՝ Դաշնակիցների կողմից որոշված ժամկետը: Չնայած հայկական զորքը գրավեց նաև վերջին 4-րդ զրահագնացքը, այնուհանդերձ դա վերջին ճակատամարտն էր, <u>և այն չավարտվեց</u>: Շատ պատկերավոր է նշում Ս. Վրացյանը այդ պահը. «*...ճակատամարտը դեռ չէր լրացած, բայց արդեն ժամը 12-ն էր, և կռվող կողմերը կանգ առան իրենց գրաված տեղերում: Պատերազմը վերջանում էր*»[104]: Այդ պատերազմին և մասնավորապես ավարտական փուլին Ս. Վրացյանը նորից անդրադառնում է իր «Կյանքի ուղիներով» գրքաշարի Դ. հատորում, որում այդ մասին հատուկ նշում է. «*Խորհուրդը միաձայն հաւանութեամբ,հարցի լուծումը յանձնեց հայկական բանակին՝ Դրօյի գլխաւորութեամբ, եւ Դրօն հայ տրեխաւոր զինուորութեան գլուխ անցած, յաղթանակից յաղթանակ, առաջ արշավեց դեպի Թիֆլիս: Եւ միայն անգլիական միջամտութիւնը փրկեց վրաց մայրաքաղաքը հայերի գրաւումից*»[105]:

Որոշակի գրականության մեջ այն համոզմունքն է իշխում, որ Դրոն «*անպայմանորեն կջախջախեր գեներալ Մազնիևի բանակն ու կգրավեր Վրաստանի մայրաքաղաքը, եթե չլինեին անգլիացիների ու ֆրանսիացիների միջնորդությունները*»[106]:

Սակայն հարկ է իրատեսորեն նկատել, որ կան մի շարք «բայց»-եր, որոնք ըստ էության վկայում են, որ այո, անգլո-ֆրանսիական կողմի երկդիմի, իսկ երբեմն էլ բացահայտորեն պրովոկացիոն (այս առումով հատկանշական է անգլիացիների վերաբերմունքը) կողմնորոշումները հայտնի ռազմաքաղաքական իրավիճակում իրենց արջի ծառայությունն են մատուցել հայերին: Սակայն ինչպես ցույց է տալիս Հայաստանում և նրա շուրջ ստեղծված ռազմաքաղաքական և տնտեսական իրավիճակի անկողմնակալ վերլուծությունը, պատերազմը հայերը երկար ի վիճակի չէին շարունակելու, թեկուզև մի կարևոր ճակատամարտ ևս շահեին: Հայաստանի կոմունիկացիաների շրջափակումը, սովը, և տնտեսական փլուզումը, ռազմական մատակարարումների կախվածությունն անմիջական հարևանի ողորմածությունից ի չիք էին դարձնում Վրաստանի մայրաքաղաքը գրավելու հույսերը և Հայաստանին կանգնեցնում ծանր խնդրի առաջ՝ ինչպե՞ս շարունակել պատերազմը, ի՞նչ միջոցներով և ինչի՞ հաշվին, իսկ եթե ոչ՝ ապա գնալ դեպի հաշտություն, որը ևս առանձնապես մեծ հույսեր չէր ներշնչում, որը պրակտիկայում այդպես էլ ստացվեց, իսկ արդյունքում՝ Լոռու «չեզոք» գոտին, իսկ դա արդեն ամենևին էլ հաղթանակ չէր, կամ լավագույն դեպքում կիսահաղթանակ էր:

Այս կապակցությամբ հարկ է ևս մի կարևոր եզրահանգում անել, ճշգրտումներ մտցնել ընդհանուր գնահատականներում: Դա կապված է վրաց - հայկական պատերազմում վարչապետ Հովհ. Քաջազնունու ունեցած կեցվածքի հետ, որի հետ համակարծիք է նաև «Դրո» գրքի հեղինակը՝ Հ. Գևորգյանը, որն այդ կապակցությամբ գրում է, որ «*դեկտեմբերի վերջերին ծավալված կռիվներում հաջողությամբ հետ մղելով վրաց զորքերի հարձակումները, որ նա* (Դրոն - Վ.Վ.) *մտածում էր նոր հարձակում ձեռնարկելու մասին: Հարկ է խոստովանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը բավարար ուշադրություն չի դարձրել Դրոյի զորախումբը ժամանակին օգնական ուժերով համալրելու, զենքով ու զինամթերքով, հանդերձանքով ու պարենով ապահովելու գործում*»: Անհրաժեշտ է ընդգծել, որ դա չի համա-

պատասխանում իրականությանը, քանի որ Հայաստանի Հանրապետության իրական հնարավորությունները շատ սահմանափակ էին, առավել ևս հեղինակն ընդգծում է, որ «*Վրաց կառավարության որոշումով շրջափակվեց Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող Բաթում - Ալեքսանդրապոլ երկաթուղին*»[107], որով տարբեր կարգի օգնություն էր գալիս դեպի Հայաստան, այդ թվում և զենք, ընդ որում որոշակի քանակությամբ զենք ու հանդերձանք առգրավված վիճակում պահվում էր Թիֆլիսում: Հ. Գևորգյանը համերաշխվում է նաև Ա. Բաբալյանի հետևյալ կարծիքի հետ. «*մեղավոր էին և մասնավորապես վարչապետ Յ. Քաջազնունին, որ հւրայատուկ կեցուածքով չուզեց պատերազմին ժողովրդական բնոյթ տալ և չօգտագործեց մեր մաքսիմում կարողութիւնը: Ճիշտ է, մեր ժողովուրդը սոսկալի վիճակի մեջ էր, բայց թե՛ Խորհուրդում, թե՛ երկրում կառաւարութիւնը ջանք չթափեց օգնական ուժեր ուղարկելու կռուող բանակին եւ մեծ «խոհեմութիւն» արեց՝ լռութեան տալով փայլուն հաղթանակները պատերազմի դաշտում*»[108]:

Դժվար է համաձայնվել այս տեսակետի հետ, մեղադրելով Հովհ. Քաջազնունուն. բերելով ինչպես վերը նշված փաստարկները, այնպես էլ այն, որ Հայաստանի թիկունքն անչափ թույլ էր, ռեսուրսներ չկային (թե՛ մարդկային, և թե՛ նյութական), իսկ միայն բարոյական-հոգեբանական հատկանիշներով պատերազմում չէր կարելի «անվերջ հաղթանակներ» տանել, առավել ևս եթե նկատի ունենանք մեծ տերությունների ամենևին էլ ոչ հայանպաստ քաղաքականությունը (գերմանացիների վրացամոլությունը,անգլիացիների պրոմուսուլմանական և երկդիմի չեզոք դիրքորոշումը, ամերիկացիների կրավորականությունը և սենատյան մանդատախաղը, Ռուսաստանի բոլշևիկացումն ու օտարվածությունը Կովկասից և Անդրկովկասից, և այլն):

Այնպես որ, համաձայնվելով Արտ. Բաբալյանի հետ նրանում, որ «*դժբախտաբար անգլիական նորեկ իշխանութեան միջամտությամբ, դեկտեմբերի 31-ին վերջ տրուեց պատերազմին մեզ համար ոչ ծեռնտու պայմաններով*», միաժամանակ չի կարելի նրա հետ համակարծիք լինել այն եզրակացությունում, ըստ որի «*յոխորտացող թշնամուն վերջնականապես պատժելու համար ի վիճակի էին գրաւել Թիֆլիսը, եթե կառավարութեան գլուխը անշարժ եւ վեհերոտ չլինէր*»[109]: Այնպես, որ դժվար է, կամ ա-

մեննին էլ չի կարելի համաձայնվել այն մտքի հետ, թե ևս հաղթական մի ճակատամարտաշարքով կարելի էր պատերազմը շահել և Վրաստանին ստիպել անձնատուր լինել: Իրականությունը ընդրանում էր,որ Հայաստանը դրա համար չուներ անհրաժեշտ տընտեսական, կադրային, մարդկային ռեսուրսները, նրա կոմունիկացիաները գտնվում էին չափազանց անմխիթար վիճակում, և փաստորեն Հայաստանը իսկական բլոկադայի մեջ էր, և գումարած դրան մեծ տերությունների Հայաստանի համար ոչ նպաստավոր դիրքորոշումը աշխարհաքաղաքական տվյալ իրավիճակում, ինչն էլ ստիպեց Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության նախագահի Հովի. Քաջազնունուն գնալ պատերազմի դադարեցմանը: Հայկական զորքերը ետ քաշվեցին Դսեղ, Ջալալ-օղլի (Ստեփանավան) գիծը:

Պատերազմը ունեցավ կատաստրոֆիկ հետևանքներ հատկապես Հայաստանի համար: Պատերազմի ընթացքում վրացական իշխանությունները իսկական մարդաորս կազմակերպեցին հայերի նկատմամբ Թիֆլիսում և ամբողջ Վրաստանով մեկ: Այդ մասին նշում է նաև ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը, ըստ որի պատերազմը բարդացրեց հայերի ազգակիցների դրությունը Վրաստանում, ուժեղացրեց մեկուսացումը տարածաշրջանում և խանգարեց Դաշնակիցների թվից Հայաստանի կողմնակիցների միջամտությունը[110]:

Այդ հանգամանքի մասին անուղղակիորեն նշել են նաև վրաց հեղինակները դեռևս մռայլ 1937 թվականին: Այսպես,վրաց հեղինակ Գ. Խաչապուրիձեն գրում է. «*Վրաստանի և Հայաստանի ամոթալի եղբայրասպան պատերազմի ժամանակ մենշևիկները մեղադրեցին Վրաստանի տարածքում ապրող բոլոր հայերին՝ հայրենիքին դավաճանության մեջ: Հալածանքը վերաբերել է միայն աշխատավոր հայերին, և առաջին հերթին բանվորներին, որոնց մենշևիկները մեղադրեցին բոլշևիզմի և մենշևիկյան պետությունը ոչնչացնելու ձգտման մեջ: Քաղաքների բեռնաթափման քողի տակ և աշխատավորների օտարերկրյա հպատակության պատրվակով հայկական բնակչությունը սիստեմատիկ արտաքսվում էր Վրաստանի սահմաններից*»[111]:Ոչ ավել,ոչ պակաս: Մի շարք վերապահումներով հանդերձ (հաշվի առնելով ժամանակին բնորոշ արտահայտությունները - Վ.Վ.), գնահատականը բնութագրական է:

Թիֆլիսում ձերբակալվեց մոտ 10 հազար մարդ: Այս և այլ երևույթների դեմ բողոք արտահայտեցին նաև Դաշնակիցների ներկայացուցիչները[112]: Հայ - վրացական պատերազմի օրերին Վրաստանում և նրա մայրաքաղաք Թիֆլիսում հայերի դեմ սկըսված անոթալի վայրագությունների և հաշվեհարդարի մասին շատ պատկերավոր է գրում մեծագույն հայ բանաստեղծ Հովհ. Թումանյանը (1919 թ., հունիսի 7) Հայաստանի Հանրապետության նախարարապետին հասցեագրված նամակում. «*...շուտով բռնկվեց հայ - վրացական պատերազմը, և Վրաց կառավարությունը հայտարարեց, թե ամեն մի հայ, որ որևէ կերպ աջակցություն ցույց կտա Հայաստանի կառավարությանը, կհամարվի պետական դավաճան և գույքը կգրավվի հարքունիս:*

*Միևնույն ժամանակ վրաց միլիցիան խուզարկության ենթարկեց մեր գրասենյակը, որ երկու շաբաթ փակ պահեցինք, մինչև որ իմն հաջողեց Վրաց կառավարությունից գրավոր թույլտըվություն ստանալ հանձնաժողովի գործունեությունը ազատ շարունակելու*» (նկատի ունի «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովը»-Վ.Վ.)[113]: Այդ կապակցությամբ նաև «Զանգ» թերթը 1918 թ. դեկտեմբերի 30-ի համարում գրում է հետևյալը. «*Ամբողջ Վրաստանում կատաղի հալածանք է ստեղծվել հայերի դեմ: Թիֆլիսում վրացական կամայականություննու բռնությունները հայերի դեմ հասել են ծայրահեղ աստիճանների: Ամեն օր տեղի են ունենում բազմաթիվ խուզարկություններ: Խուզարկված են Վիրահայոց Ազգային խորհուրդը, Կովկ. Հայոց բարեգործական ընկերությունը և ուրիշ շատ հիմնարկություններ: Բանտարկված են Վիրահայոց Ազգ. խորհրդի անդամները, վրաց պառլամենտի անդամներ Տ. Ավետիսյանը, Դ. Դավիթխանյանը և ուրիշներ: Համարյա բոլոր հայտնի Դաշնակցականները բանտարկված են: Բանտարկված են նաև Հայաստանի Հանրապետության պաշտոնյաները, ինչպես օրինակ Հայաստանի կառավարության գործերի վարիչ Գ. Խատիսյանը: Բանտարկվածներին լցնում են ապրանքատար վագոններ և տանում են Քութաիս: Ճանապարհներին նրանք ծաղրի և անպատվության են ենթարկվում: Տները խուզարկելիս թալանվում ու գողացվում են հայերի ստացվածքները և ոսկեղենը:*

*Փակված են «Նոր Հորիզոն», «Աշխատավոր», «Ձնամյա Նարոդով», «Կավկազսկոյե սլովո» թերթերը: Խմբագիրները ծեծբակալված են: Թիֆլիսի բոլոր հայ միլիցիոներները՝ 476 հոգի զինաթափ են արված և հեռացված են պաշտոնից: Վրաստանը պատերազմ է հայտարարել փաստորեն ոչ թե Հայաստանի կառավարությանը, այլ ամբողջ հայ ազգին»*[114]: Ոտնձգություններ կատարվեցին նախկին Հայկական կորպուսի ունեցվածքի նկատմամբ[115]:

Այս մասին շատ փաստերի ենք հանդիպում Ս. Վրացյանի մոտ: Այսպես, Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» գրքում ասվում է. «*Այս բոլորի հետևանքով վրաց իշխանության տակ ապրող կես միլիոն հայ ազգաբնակչությունը զրկվեց ամեն իրավունքից,նրա պատիվը, ունեցվածքը, ազատությունն ու գույքերը դարձան միլիցիայի և հատուկ զորամասի պաշտոնյաների ազատ քմահաճույքի առարկա*»[116]: Ս. Վրացյանն այնուհետև ավելացնում է. «*Վրացական իշխանությունների և պաշտոնյաների այլասերման աստիճանի մասին կարելի է գաղափար կազմել նրանով, որ միլիցիոներները և հատուկ զորամասի պաշտոնյաները, հաստատել են փրկագնի որոշ սակ՝ 50-ից սկսած մինչև 50.000 ռուբլի... և այս բոլորի թագն ու պսակը եղավ հունվ. 5-ի այլանդակ դեպքը, երբ կնքված զինադադարից հետո արդեն, Թիֆլիսում տեղի ունեցան հայերի զանգվածային ձերբակալություններ*»: «*Միլիցիայի գործակալները*, - գրում է Վ. Ազգ. խորհուրդը, - *վայրենիների պես, բառիս բուն նշանակությամբ, որսի ելան հայերի դեմ. մի քանի ժամվա մեջ ձերբակալեցին 6000 հոգի և ազատ թողին այն մի քանի հարյուր բախտավորներին, որոնք տեղն ու տեղը, մարդկանց աչքի առջև, կարողանում էին վճարել պահանջված գումարը կամ, հնարավորություն էին ստանում, միլիցիոներների ուղեկցությամբ գնալ տուն և ավելի մեծ գումար վճարելով՝ ազատվել բռնակալների ձեռքից*»[117]:

Վրացիները չեն խորշում նաև արգահատելի ուրիշ արարքներ ևս անել: Հայ - վրացական ընդհարումների բարդացման կապակցությամբ դադարեցվում է նաև Հովհ. Թումանյանի գլխավորությամբ գործող Համաշխարհային պատերազմում հայերի կրած վնասները որոշող բյուրոյի գործունեությունը, որին արդեն մասամբ վերն անդրադարձել ենք[118]: Այս հակահայկական գազանային ոճրագործությունների մասին կարելի է բերել

բազմաթիվ փաստեր: Սակայն այն, ինչ այդ օրերին կատարվում էր գավառներում ու առհասարակ Թիֆլիսից հեռու գտնվող վայրերում, պարզապես սարսափելի էր ու զարհուրելի. «*Թիֆլիսի շրջակա գյուղերը Դաղեթ - Խաչէն, Սամտրեդ, Վայխուն,Շամշուղլա, Բէլըի Կըլիւչ, Շուլավեր եւն. յանձնված էին վրաց զորամասերի եւ «Կարմիր գւարդիա» կոչուած բաշիբոզուկների կամայականութիւններին: Կազմակերպուած բռնագրաւումը, աւազակային թալանը, ծեծը, բռնութիւնը, բանտարկութիւնը եւ կանանց բռնաբարութիւնը համատարած երեւոյթներ էին այդ գիւղերում: Գազանացած եւ գինարբու սրիկաների լրբութիւնները հասան մինչև որբանոցները, մինչեւ 10-12 տարեկան, դեռատի աղջիկները (Բէլըի Կըլիւչ...)*»[119]: Հայերը Վրաստանում պարզապես օրենքից դուրս հայտարարվեցին, և նրանց նկատմամբ ամեն տեսակի անարգանքներ և սադիզմի երևույթներ դրսևորվեցին, ինչի մասին մանրամասն անդրադառնում է վերոհիշյալ Արշակ Ջամալյանը՝ Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը այդ դժվարին օրերին[120]:

Փաստաթղթերը վկայում են, որ բոլոր հայերի դեմ ռեպրեսիաների համար ազդանշան հանդիսացավ ներքին գործերի նախարար Ռամիշվիլու շրջաբերականը, որից հետո հատուկ ջոկատի աստիճանավորները ձեռնամուխ եղան հայերի դեմ որսին, որի հետևանքով հայերը հայտնվում էին Քութաիսի նահանգի մարզանեցի հանքերում: Դրան ավելացավ գեներալ - նահանգապետ Մակլակելիձեի որոշումը, ըստ որի հայկական զորքերի կողմից գրաված Բորչալուի գավառի հայտնի տարածքների բոլոր քաղաքացիները և Հայաստանի Հանրապետության հպատակները հայտարարվում են ռազմագերիներ, ընդ որում օրվա ընթացքում միլիցիա չներկայանալու դեպքում, նրանց սպառնում էին Վրաստանի պառլամենտի օրենքով, որով վերջիններս մեղադրվում էին դավաճանության մեջ և դատապարտվում բանտարկության և աքսորների[121]:

Ավելին, դրան գումարվեց Հայաստանի դաշնակիցների անտարբեր վերաբերմունքը այդ չարաբաստիկ դեպքերի ու անցքերի նկատմամբ: Պատճառաբանելով, որ Անդրկովկասյան հանրապետությունները ճանաչված չեն Դաշնակիցների կողմից, իհարկե, նպատակահարմար չգտնվեց միջամտել իրադարձությունների հետագա ընթացքին: Արդյունքում Դաշնակիցները մա-

տը մատին չխփեցին կանխելու համար վրացիների կողմից Թիֆլիսում և ողջ Վրաստանով մեկ հայերի նկատմամբ կիրառվող ծաղրուծանակը, ծերբակալությունները, գույքի բռնագրավումները, և երբեմն էլ պարզապես սպանությունները: Մեծ տերություններն այդ ծանր օրերին իրենց հովանավորության տակ չվերցրին հայերին, և դա ավելի լկտի դարձրեց վրացիներին: Ուշագրավ է, և հատուկ արժե այդ մասին նշել, որ հայերի նկատմամբ այդ նեղ ու զարհուրելի օրերին բարյացկամ վերաբերմունք դրսևորեց միայն Թիֆլիսում գտնվող պարսկական հյուպատոսը, որը ռեալ օգնություն և աջակցություն ցույց տվեց, գոնե ծայրահեղ դեպքում տեր կանգնելով պարսկահպատակներին: Մնացածները նետվեցին Ռուսական Ազգային խորհուրդ ռուսական հպատակության մասին վկայականներ ստանալու, սակայն ինչպես վկայում են Ռուսական Ազգային խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 26-31-ի բողոքագրերը՝ ուղղված Վրաստանի արտաքին գործերի նախարարին (№ 8314, № 8380, № 8384 և այլն), վրացական միլիցիան ներխուժել է Ռուսական Ազգային խորհրդի շենք, այդտեղից բռնությամբ դուրս քաշելով հայերին և չնայած Ռուսական Ազգային խորհրդի նախագահ O. Լեբեդևի բողոքներին, կալանվածներին աքսորում էին Քութաիսի մարգանեցի հանքերը կամ էլ անհելի տուգանքներ, փրկագներ դնելով վերջիններիս վրա, որը վերջնական երաշխիք չէր անօրինականություններից ազատվելու համար: Ավելին, շուտով գեներալ - նահանգապետի կողմից անօրինական ճանաչվեցին Ռուսական Ազգային խորհրդի կողմից հպատակության մասին տրվող բոլոր վկայագրերը, որը միջազգային պրակտիկայում չտեսնված այլանդակ երևույթ էր: Արդյունքում, չնայած Անդրկովկասյան Ռուսական Ազգային խորհրդի կողմից բազմիցս արված բողոքներին, հայերը ենթարկվում էին դաժան հալածանքների[122]: Վրացիները ծերբակալեցին նաև Թիֆլիսի քաղաքային դումայի դաշնակցականների ողջ ֆրակցիան, բռնագրավելով նաև Հայոց Ազգային խորհրդին պատկանող մոտ 15 միլիոն ռուբլին, արգելակալանք դնելով հայկական ձեռնարկությունների միջոցների, այդ թվում և ՀՀ ֆինանսների նախարար Էնֆիաջյանի ֆաբրիկայի վրա և այլն[123]:

Վերջապես Թիֆլիսում բռնազավթվեցին նախկին Հայկական կորպուսին պատկանող պահեստները, արգելակալանք դրվեց այնտեղ գտնվող ռազմական ունեցվածքի նկատմամբ, ինչ-

պես նաև ոտնձգություններ կատարվեցին փախստականների և այն ռազմագերիների նկատմամբ, որոնք նոր էին վերադարձել գերմանական գերությունից և եկել էին թոշակների ետևից[124]:

Հարկ է սակայն հատուկ ընդգծել, որ այդ ամենի հակապատկերն էր իշխում Հայաստանում, ուր վրաց քաղաքացիների և ռազմագերիների հետ մասնավորապես վարվում էին մարդավարի, ամենևին էլ չվիրավորելով վերջիններիս արժանապատվությունը: Այդ մասին գրում է ժամանակակիցը՝ Արշակ Ջամալյանը. «*Հայաստանում քիչ թուով վրացիներ կային պատերազմից առաջ: Ընդամենը մի քանի հարիւր հոգի, որոնց մի մասը մնացել էր Հայկական Բորչալուում, իսկ մնացածները ցրուած ապրում էին Երեւան, Ալեքսանդրապոլ, Դիլիջան եւ այլ վայրերում: Հասկանալի պատճառով առաջիններին հրահանգուեց-ամենայն քաղաքավարութեամբ եւ նրբանկատութեամբ - որ հեռանան ռազմական գործողութիւնների շրջանից... աւելի եւս ուշագրաւ է այն վերաբերմունքը, որ գտան Հայաստանում վրացի ռազմագերիները: Այդ վերաբերմունքը բառի իսկական իմաստով եղբայրական էր թէ՛ իշխանութիւնների եւ թէ՛ ժողովրդի կողմից: Նոյնիսկ այն ռազմագերիները, որոնք Հայկական Բորչալուի զօրամասերից էին առնուած, նոյնիսկ սրանք չենթարկուեցին որեւէ թշնամանքի, թէեւ այդ զօրամասերի կատարած բռնութիւնների դէմ անհունօրէն կատաղած էին թէ՛ հայ ժողովուրդը եւ թէ՛ զինուորները...*[125]*: Անգլիայի կապիտան Դագլէզ Վիծերսը, որ հայ-վրացական զինադադարի պայմանները կնքել տալու համար Հայաստան գալով՝ մօտիկից ծանօթացել էր Դիլիջանում եւ Ղարաքիլիսէում գտնուած վրացի ռազմագերիների վիճակին՝ ասում էր մեզ. "Որ այս պատերազմը թյուրիմացութիւն է. դրա պերճախօս ապացոյցն է այն փոխյարաբերութիւնը, որ գոյութիւն ունի վրացի ռազմագերիների եւ հայ ժողովրդի միջեւ: Այսպիսի մի բան անհնարին է երեւակայել եւրոպական ռազմաճակատներում"*»[126]: Պերճախոս է ասված:

Ինչևիցե, պատերազմն ավարտվեց: Զինվորներն ավարտեցին իրենց գործը: Պատերազմը շարունակվեց դիվանագիտական բեմահարթակում:

Անդրկովկասում Դաշնակիցների ռազմական միսիային ուղարկված 1919 թ. հունվարի 2-ի հաղորդագրության մեջ Դիլիջան - Լոռու ջոկատի պետ Դրոն և Գլխավոր շտաբի պետ փոխ-

գնդապետ Շնեուրը տեղեկացնում էին զորքերի ետ քաշման կարգի մասին, նշելով, որ մնում է միայն սպաների անձնակազմը, որոնք անհրաժեշտ են այստեղ կենտրոնացած ունեցվածքի դուրս բերման համար, որոնք պետք է հանվեն Այրում - Ախթալա և Սանահին կայարաններից՝ տեղափոխությունների ավարտից հետո[127]:

1919 թ. հունվարի 4-ին Թիֆլիսից հայկական պատվիրակության ղեկավար Մ. Հարությունյանը հեռագրում է. «*Ընկ. Քաջազնունի, իմ հեռագրից, որ ուղարկել եմ (Տիֆլիս, 29-30 դեկտեմբերի) Ղարաքիլիսայից, դուք արդեն գիտեիք, որ մենք հարկադրված եղանք ստորագրել անգլո - ֆրանսիական ներկայացուցիչների որոշումը խաղաղության պայմանների մասին*»[128]:

Ագապի Նասիպյանը իր «Բրիտանիա և Հայկական հարցը» գրքում այդ մասին գրում է. «*բրիտանացիները հրաւադատեցին, աւելի ի նպաստ վրացիներուն էր, որոնց ջոկատները պիտի մնային Ախալքալաքի մեջ: Պորչալուն պիտի ըլլար չեզոք, բրիտանական հսկողության տակ*»[129]:

Առհասարակ պետք է նկատել, որ կան որոշ ուշագրավ փաստեր այն մասին, որ Դաշնակիցների ներկայացուցիչներն Անդրկովկասում և Հայաստանում իրենց պաշտոնեության քողածածկույթից օգտվում,նույնիսկ ժամանակ էին հատկացնում անձնական բնույթի խնդիրներ լուծելու և հարստանալու համար, ինչը հասարակայնության վրա չափազանց ճնշող տպավորություն էր թողնում: Այդ առումով մի դեպք է արձանագրված Ս. Վրացյանի մոտ՝ կապված գնդապետ Հասկելի Անդրկովկասից հեռանալու հետ. «*Հասկելի գործունեության շուրջ աղմուկ շատ էր բարձրանում, բայց ստացուած արդիւնքը աննշան էր... ճանապարհին, Տրապիզոնի մոտ, Հասկելի նավի վրա (Հասկելը Երևան եկավ 1919 թ. օգ. 21-ին) յարձակուեցին մի խումբ քողածածուկ ավազակներ եւ Հասկելի կնօջից խլեցին մի տոպրակ ադամանդ եւ ուրիշ թանկագին քարեր, որ տիկին Հասկելը հաւաքել էր իր ամուսնոյն ուղեկցելիս եւ այժմ տանում էր Ամերիկա: Ասում էին, որ վրացիներն էին կազմակերպել այդ գործը, ինչը որ շատ հեռու չէր իրականութիւնից*»[130]:

Հարկ է ընդգծել, որ ամերիկյան այդ սպայի անձնավորությանը չի կարելի միանշանակ գնահատական տալ: Վերջինս ընդգծում էր իր անկողմնակալության և երբեմն էլ պրոհայկական

դիրքորոշման մասին, սակայն իրականության մեջ նրա դիրքորոշումը կայունություն չուներ, որոշակի ստանդարտների չէր ենթարկվում և վերջին հաշվով իր երկրի քաղաքականության նման երկդիմի, ոչ հաստատուն էր և մեծ քաղաքական շահի վրա կառուցված, հետևաբար՝ ենթակա փոփոխությունների: Այդ մասին է վկայում գնդապետ Հասկելի հետևյալ շատ ուշագրավ արտահայտությունը (1919 թ. նոյեմբեր - դեկտեմբեր). «*Երևանյան քաղաքագետները ամեն ինչ անում են, որպեսզի առաջ բերեն կոտորած, և նման է այն բանին, որ նրանք այն իրապես ցանկանում են, որպեսզի այդ մասին ազդարարեն ողջ աշխարհին և նոր աղմուկի հասնեն այդ ոլորտներում: Իզուր են նրանք դրա վրա շահարկում, եթե դա շարունակվի անվերջ, ապա ամբողջ աշխարհը կիմանա ճշմարտության մասին և կդադարի հավատալուց: Ինձ համար միևնույն են թաթարները և ինձ համար թանկ են հայերի շահերը, որպես Հայաստանի Գերագույն կոմիսարի, և ինձ համար ցավալի կլիներ, եթե այդ իրերի մասին իմանային*»[131]: Ինչպիսի հրաշալի դեմագոգիա, որին երբեմն հավատում էին, երբեմն էլ լռջորեն ընդունում,ինչը վնասում էր հայկական շահերին:

Սակայն այդ ամենը չխոչընդոտեց, որպեսզի հայկական կողմը որոշակի անողնաշարավորություն դրսևորեր, նվեր մատուցելով Հասկելին, մտածելով, որ այդ ամերիկացուն արդեն կարող են իրենց կողմը գրաված համարել: Եվ այսպես, Գլխավոր շտաբի պետ Բաղդասարովի կողմից 1920 թ. օգոստոսի 4-ի գրության մեջ (№ 0289)՝ ուղղված Թիֆլիսում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական կցորդ գեներալ Քիշմիշևին, հարց էր բարձրացվում, որպեսզի *դիվանագիտական հավատարմատարը Բեկզադյանի միջոցով ձեռնարկեր գնդապետ Հասկելի համար Կովկասյան սուր գնելու գործը՝ ի հիշատակ և շնորհակալություն ժողովրդի փրկության գործում նրա կողմից ցուցաբերված օգնության:* Գրության մեջ խնդրվում էր *գնել ամենալավ սուրը՝ չնեղվելով գնից, անելով նաև դրա վրա մակագրություն*[132]:

Բնականաբար, նման մեծ տերությունների նմանատիպ գործիչների գործելակերպը ձեռնտու էր վրացական կողմին, որը և անկասկած դրանից շահում էր, օգտվելով վերջիններիս երկերեսանիությունից:

Վրացիների հոխորտանքը չափ ու սահման չուներ: Պատերազմի արդյունքները նրանց առավել ևս, քան երբևիցե բավարարում էին, և Վրաստանի պառլամենտում 1919 թ. հունվարի 3-ին հետևեցին ճոռոմագին, մեծամիտ ճառեր: Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Պ. Գեգեչկորին փաստերն ու իրականությունը կեղծելով, փարիսեցիորեն ճոռոմաբանում էր, որ Վրաստանի կառավարության պետական էներգիան երկու շաբաթ նպատակաուղղված է եղել պատերազմի վարմանը, որում հասել է դրական արդյունքների: Խեղաթյուրելով պատերազմի արդյունքները և իրական վիճակը, Գեգեչկորին հայտարարում էր, որ *«<u>առաջին հերթին</u>, Վրաստանի կառավարությունը կարողացել է ճնշել Երիվանի կառավարության ավանտյուրան և նրանք, ովքեր ծգտում էին Վրաստանի Հանրապետության քայքայմանը, այժմ իրենք են ջախջախված: <u>Երկրորդ</u>, Վրացական կառավարությունը հասավ նրան, որ հայկական զորքերը պետք է ետ քաշվեն իրենց սահմանները: <u>Երրորդ</u>, Վրաստանի կառավարությունը ապացուցեց բոլորին, ով դրան չի հավատացել կամ չի ցանկացել հավատալ, որ ինքը չի առաջ բերել այդ պատերազմը և արյունահեղությունը: Ձեր համար այսօր պետք է պարզ լինի, որ Վրաստանի կառավարությունը, որ թշնամուն պարտության է մատնել, մեծահոգի է այնտեղ, որտեղ չեն խախտվում ժողովրդի շահերը: Կառավարությունը փնտրում է խաղաղություն, թողնելով սուրը»*[133]:

Ակնհայտ է փաստերի խեղաթյուրումը վրացական կողմից: Հայկական զորքը հաղթեց այդ պատերազմում, սակայն անգլիական օժանդակությամբ և առհասարակ Դաշնակիցների կրավորական դիրքի շնորհիվ Վրաստանը հավասարակշռեց ռազմաքաղաքական իր համար աննպաստ իրավիճակը, չեզոքացրեց հայկական զորքի հաղթանակի արդյունքները և ողջ ջանքերը նպատակամղեց պատերազմի իրական արդյունքների վերանայմանը: Ըստ երևույթին, այս հանգամանքը նկատի ուներ ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը, երբ գրում էր, որ «*պատերազմ սկսելու որոշումը թուլացրեց հայկական անվտանգությունը: Այն խթանեց վրացական թշնամությունը, <u>զրկվ տվեց ռեսուրսները տնտեսական պահանջներից դեպի ռազմական կարիքները</u>, վատթարացրեց Վրաստանում իրենց սեփական հայրենակիցների վիճակը, մեծացրեց նրանց մեկուսացումը տարածաշրջանում, և ի չիք դարձրեց ինտերվենցիայի կողմնակիցներին՝ պրոհայկական*

*աջակիցների, դաշնակիցների շարքերում*»: Ստ. Զոնսը ընդգծում էր, որ *Հայկական կախվածությունը վրացական տարանցիկ ճանապարհներից, ուտելիքի և էներգիայի խնդրում բախման շարունակական աղբյուր էր*[134]:

Ըստ էության, ասվածի մեջ որոշակի ճշմարտություն կա, և այն արտահայտում է գոյություն ունեցող աշխարհաքաղաքական ռեալությունները հայտնի տարածաշրջանում: Ավելին, ինչպես նշում է Ս. Վրացյանը դրանից առաջ (1918 թ. հուլիսից առաջ), անգլիացիները «*ստիպեցին հետաձգել հայերի մուտքը Կարս եւ իրենք գրավեցին Կարսի ռազմապահեստներում դիզված ռազմամթերքը՝ թնդանոթներ, հրացաններ և փամփուշտ, և ուղարկեցին ռուս Կամավորական բանակին...*»[135]:

Անգլիացիների այդ քաղաքականությունը զգալիորեն խարխլեց հայերի դիրքերը ռազմական առումով, էական ազդեցություն ունենալով նաև վրաց-հայկական պատերազմի ռազմական մատակարարումների և այլ խնդրի վրա: Ոչնչով լավ չէր և մյուս դաշնակիցների դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ: Երևի հենց այդ հանգամանքը նկատի ուներ Ալ. Խատիսյանը, երբ խորաթափանցորեն նկատում է. «*Պատմական վերլուծութիւնէն պարզ կերեւայ, որ Դաշնակիցները եկան Կովկաս ոչ թե Կովկասեան ժողովուրդներու սիրոյն համար եւ հեռացան այնտեղէն, ոչ թե թշնամութենէ դրդուած: Հաշիւը չարդարացաւ, եւ անոնք հեռացան՝ թողելով մեզ ամենադժուարին րոպէին, միանգամայն անօգնական եւ մինակ: Այդ եղաւ անոնց դերը*»[136]:

Հետևաբար,անշուշտ հասկանալի է միանգամայն,որ մենք չենք կարող համաձայնվել որոշ հեղինակների կողմից արտահայտված այն տեսակետների հետ, որ իբր թե Հայաստանը կարող էր խուսափել տարածքային վեճի հարցերը միջազգայնացնելու և միջնորդների միջոցով լուծելու ավանդույթից: Ըստ էության լրջմիտ մոտեցման դեպքում ակնհայտ է դառնում, որ նման մոտեցումը իրատեսական չի, կեղծ է լիովին, և իր վրա կրում է կուսակցական նեղմիտ և ոչ լիարժեք մոտեցման, փաստերի գնահատման ու արժեքավորման կաղապարադրոշմը, և միակողմանիորեն է մոտենում աշխարհաքաղաքական գործընթացների խորքային բացահայտումներին,արդյունքում՝ ոչ սթափ և ոչ ճիշտ գնահատականներ: Մեր կարծիքով, երկու ճշմարտություն չի կարող լինել, իսկ ճիշտն այն է, որ գուցե և տեսական առումով հնա-

րավոր է բացառել միջնորդների գործոնը, սակայն քաղաքական պրոցեսների պրակտիկայում այդ գործոնի լրջությունը բացառվում է: Այսպես, 1918 - 1920 թվականների փորձը ցույց է տալիս, որ Անտանտյան գծով Հայաստանի բարեկամները կամ «եղբայրակիցները» չէին կարող չմիջամտել, չխառնվել Անդրկովկասի ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի գործերին, քանի որ ունեին իրական տնտեսա - քաղաքական շահեր տարածաշրջանում: Իսկ դա արդեն նշանակում է, որ գուցե Անդրկովկասյան ժողովուրդները ցանկություն ունենային և փորձեին խուսափել միջնորդների առաքելությունից (ինչը ակնհայտորեն պատրանքների բնագավառից է - Վ.Վ.), սակայն դժվար թե մեծ տերությունները թույլատրեին վերջիններիս ինքնուրույն կերպով տնօրինելու իրենց ճակատագիրը, ինչի մասին ցայտունորեն վկայում են ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների 1990-2000-ական թվականների իրադարձությունները, երբ մեծ տերությունները զանազան խարդախ և արտաքուստ «ոչ խարդախ թվացող» եղանակներով ու գործողություններով փորձում և ակնհայտորեն ներխուժում են հայտնի տարածաշրջաններ (Իրան, Իրաք, Սիրիա, Իսրայել և այլն), օգտագործելով ինչպես խաղաղ ու մեղմ միջոցները (ՄԱԿ, Համաշխարհային Բանկ, Միջազգային Վալյուտային հիմնադրամ,Կարմիր և այլ «Խաչեր»), այնպես էլ տրադիցիոն հնարավորությունները և միջոցները, որն ավարտվում էր վերջին հաշվով ռազմական ուժի գործադրումով:

Հարկ է նշել, որ հայ - վրացական պատերազմի գնահատման շուրջ կան իրարամերժ այլ տեսակետներ ևս, մասնավորապես դրա արդյունքների գնահատման խնդրում, և դա էլ ուշադրության արժանի է, անկախ որևիցե բանից: Պատերազմն ավարտվեց, իսկ թե դա ի՞նչ օգուտներ տվեց Հայաստանին, դեռևս հարկ է այդ խնդրի շուրջ երկար մտորել և անհրաժեշտ հետևությունների գալ, որը դյուրին հարց չէ: Ոմանց կարծիքով մնացին շատ հարցականներ և չլուծված խնդիրներ, որոնք հետագայում էլ ավելի մթագնեցին երկու հարևան ժողովուրդների փոխհարաբերությունները: Հայաստանի պառլամենտի անդամ Սիրաք Գրիգորյանը 1921 թ. նոյեմբերի 22-ին Հայ Հեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) 10-րդ ընդհանուր ժողովին (բյուրոյի միջոցով) հասցեագրված իր դիմումագրում նշում է հետևյալը, որը չի կարելի միանշանակ ընդունել, և այնուամենայնիվ. «*Դեռ տաճկական զորքերը 1918 թվի վերջերին Երևանի պատերի տակն էին,*

*երբ ծագեց հայ - վրացական պատերազմը, որը Հայաստանի ժողովրդի վրա շատ ծանր նստեց... Կռիվներից յետո վրացիք փակեցին Հայաստանի բոլոր ճանապարհները և հաղորդակցությունը արտաքին աշխարհի հետ... մեզանում երբեք չքննեցին այդ պատերազմի դրդապատճառները, երևան չբերեցին նրա հերոսները և չկանչվեցին պատասխանատվության: Հայ - վրացական սահմանը մնաց անլուծելի, Լոռին չմիացվեց Հայաստանին, Ախալքալակը իր գավառով մնաց Վրաստանին և հաշտությունից շատ ամիսներ հետո էլ շարունակվեց վրացիների քմահաճույքին ենթակա մնալ: Այդ պատերազմը Թբիլիսիի և Վրաստանի հայության վիճակը վատթարացրեց և մենք մեկընդմիշտ կորցրինք վրացիների բարեկամությունը և ծգեցինք նրանց Ադրբեջանի գիրկը»*[137]:

Անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ հեղինակի որոշ մոտեցումներ ծայրահեղական բովանդակություն ունեն և մեծ քաղաքականության բոլոր շերտանստվածքներն ու նրբերանգները չեն արտացոլում: Ակնհայտ է, որ միայն հայ - վրացական հարաբերությունների վատթարացումով և ռազմական առճակատումով չէր պայմանավորված Վրաստանի մերձեցումը Ադրբեջանի հետ, այլև այն աշխարհաքաղաքական միջավայրի քաղաքական ուժերի դասավորվածությամբ, որ կար տարածաշրջանում և դրա շուրջ մեծ տերությունների քաղաքականությամբ, որն իր կնիքն էր թողնում անդրկովկասյան պետություններից յուրաքանչյուրի ռազմավարության վրա առանձին - առանձին վերցրած:

Ինչևիցե, պատերազմն ավարտվեց, և կողմերն զբաղվեցին իրենց հարցերի կարգավորմամբ դիվանագիտական բեմահարթակում: 1919 թ. հունվարի կեսերին բացված հայ - վրացական խորհրդաժողովը Թիֆլիսում զբաղվեց պատերազմի արդյունքների ամփոփմամբ, և ապագայի որոշ խնդիրների կարգավորմամբ: Հայկական կողմից խորհրդաժողովին մասնակցում էր Ղարաքիլիսա ուղարկված պատվիրակության ողջ կազմը Մ. Հարությունյանի գլխավորությամբ, ինչպես նաև որպես զինվորական մասնագետ գեներալ Ղորղանյանը, իսկ վրացական կողմից՝ Ե. Պ. Գեգեչկորին, Ն. Վ. Ռամիշվիլին, Սաբախտարաշվիլին և զորավար Գեդևանովը:

Խորհրդաժողովի օրակարգն ուներ հետևյալ հարցերը.

1. Փոխադարձ անկախության ճանաչումը և դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը,

2. Հաղորդակցության և երթևեկության պայմանների կարգավորումը,
3. Տրանզիտ,
4. Փոստ - հեռագրական համաձայնություն,
5. Հայկական կորպուսի գրավված գույքերի վերադարձնելու հարցը,
6. Հայկական կառավարությանը պատկանող և վրացիների կողմից գրավված 13 միլիոն ռուբլի գումարը վերադարձնելու խնդիրը[138]:

Հայաստանի պատվիրակության ղեկավար Մ.Հարությունյանը ելույթ ունենալով հունվարի 9-ի նիստում, անհրաժեշտ գըտավ, որ մինչև երկու հանրապետությունների ճանաչումը եվրոպական տերությունների կողմից հարկավոր է հաստատել՝ 1) ազատ երկաթուղային երթևեկություն, 2) ազատ փոստային հաղորդակցություն, 3) ամենազանազան ապրանքների և մթերքների ազատ ներմուծում և արտահանում երկու կողմերից, 4) մաքսերի, անձնագրային ռեժիմի և հպատակության վերացում, 5) Վրաստանից դեպի Հայաստան Հայկական կորպուսին և Ազգային խորհրդին պատկանող ունեցվածքի բացթողում, 6) Հայաստանին պատկանող Անդրկովկասյան բոների վճարում, 7) այն հաստատություններից ազատ օգտվելու իրավունք, որոնք ունեն ողջ Անդրկովկասի համար ընդհանուր նշանակություն և գտնվում են Վրաստանի, Հայաստանի կամ Ադրբեջանի տարածքում, 8) ռազմագերիների փոխանակում և ներկալված անձանց ու ձերբակալվածների անհապաղ ազատագրում, 9) Վրաստանում և Հյուսիսային Կովկասում գտնվող հայ փախստականների ազատ բաց թողում Վրաստանից և Վրաստանով մեկ, 10) Վրաստանում մնացած ընդհանուր ռուսական ունեցվածքի բաժանում երեք անդրկովկասյան հանրապետությունների միջև, 11) վերջին ձերբակալությունների ժամանակ եղել են և սպանությունների դեպքեր, այդ սպանվածների ընտանիքների ապահովում: Հայաստանի պատվիրակության ղեկավարը եզրահանգեց, որ այդ հարցերի լուծումից է միայն կախված խաղաղ գոյակցությունը Վրաստանի և Հայաստանի միջև[139]: Պատասխանում Ե. Գեգեչկորին շեշտեց, որ Վրաստանի ներկայացուցիչները լիազորված չեն այդ հարցերի լուծման համար (վրացիների այս կեցվածքն իհարկե ծիծաղելի է, քանզի վրաց ներկայացուցչությունը բաղկացած էր հենց

կառավարության անդամներից: Ակնհայտ է պարզապես, որ վրացիները իրենց ոչ ձեռնտու մոտեցումները մերժելու համար դիմում էին ցանկացած միջոցի չխուսափելով անգամ «ծիծաղելի երևալուց», որն ինչ խոսք, վրաց ժողովրդին ծառայելու տեսանկյունից պատվաբեր է - Վ.Վ.), քանի որ տնտեսական հարցերը ենթակա չեն քննարկման, ինչի մասին խորհրդաժողովի սկզբին ասել էր նաև դաշնակիցների ներկայացուցիչ Ստյուարտը: Գեգեչկորին գտնում էր, որ իրենք այդ պատճառով դիմել են հարևաններին, առաջադրվել և հավաքվել են խորհրդաժողովի հարցերի լուծման համար, սակայն իրենց կոչը մնացել է անպատասխան: Ըստ Գեգեչկորու, սակայն կա արմատական բնույթի մի հարց, որը իրենք անհրաժեշտ են համարում լուծել իսկույնևեթ. դա քննչական հանձնաժողովի նշանակումն է՝ բախման մեղավորների բացահայտման և նրանց վրա պատասխանատվություն դնելու նպատակով[140]: Հասկանալի է,թե ուր էր ծռում Վրաստանի պատվիրակության ղեկավարը, ողջ մեղքը փորձելով ջարդել ու բարդել Հայաստանի վրա: Դրան ի պատասխան Մ. Հարությունյանը հայտնում է, որ իրենք համաձայն են խորհրդաժողովի հրավիրմանը, եթե միայն հնարավոր լինի Վրաստանի հետ միասին նախօրոք քննարկել որոշ հարցեր, և գլխավորապես՝ սահմանների մասին հարցը, և իրենց կողմից ևս խնդրում են նշանակել հետաքննչական հանձնաժողով՝ բախման մեղավորներին բացահայտելու համար[141]:

Խորհրդաժողովը տևեց երեք ամիս, և այդ ընթացքում վրացիները ձգտում էին հնարավորին չափով այն ձգձգել՝ Հայաստանի վրա ճնշում գործադրելու նպատակադրումով՝ հարկադրելով վերջինիս սահմանների հարցում գնալ էական զիջումների:

1919 թ. հունվարի 14-ին Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների ներկայացուցիչները կնքեցին պայմանագիր ռազմագերիների փոխանակման վերաբերյալ, ինչպես նաև պայմանավորվեցին ազատել ռազմական գործողությունների կապակցությամբ ձերբակալվածներին: Կողմերը, որպես ռազմագերիների փոխանակման վայր ընդունեցին «Ղարաքիլիսա» կայարանը: Վրաստանը և Հայաստանը պայմանավորվեցին առաջին հերթին անհապաղ ազատել և երկաթուղով ծրի հասցնել իրենց ձերբակալման վայրերն այն անձանց, ովքեր զորակոչային տարիք ունեին, և անմիջական մասնակցություն չէին ցուցաբերել

ռազմական գործողություններին, սակայն հայտարարվել էին ռազմագերիներ: Այնուհետև, ըստ պայմանագրի, պետք է ազատագրվեին երկու հանրապետություններում պետական ծառայության մեջ գտնվող անձինք, ովքեր ռազմական կոնֆլիկտի սկըզբին ձերբակալվել էին հակառակ կողմի տարածքում: Պայմանագիրը ստորագրել էին Վրաստանի կողմից Վրաստանի զորքերի հրամանատար Գեդևանովը և զինվորական նախարարությանը կից հանձնարարությունների գծով շտաբի սպա Ջափարիձեն, իսկ հայկական կողմից՝ գեներալ Ղորղանովը[142]: Դաշնակիցների հրամանատարության ներկայացուցիչների մասնակցությամբ բրիտանական ծառայության գնդապետ Ստյուարտի գլխավորությամբ Վրաստանի և Հայաստանի կառավարությունների ներկայացուցիչների 1919 թ. հունվարի 9 - 17-ը տևած խորհրդաժողովն ընդունեց որոշում Բորչալվի գավառում «չեզոք գոտու» սահմանների մասին, որով կողմերը պայմանավորվեցին Բորչալվի գավառի շուրջ և այնտեղ տեղակայվող պահակազորի մասին: Ի դեպ, հարկ է նշել, որ Ալավերդու պղնձահանքերը հայտնվեցին հենց այդ «չեզոք գոնայում»՝ վարչական առումով ենթարկվելով դաշնակիցներին: Կողմերը պայմանավորվեցին, որ վրացական կայազորները տեղավորվեն Բորչալուի գավառի հյուսիսային մասում և Ախալքալաքի գավառում, իսկ հայկական կայազորները՝ Բորչալուի գավառի հարավային մասում: Վրաստանը և Հայաստանը պայմանավորվեցին նաև դեմոբիլիզացիայի (զորացըրման) ժամկետների, ինչպես նաև ռազմագերիների փոխանակման և ներկալվածների ազատագրման մասին: Վրացական և հայկական կողմերը պայմանավորվեցին նաև «չեզոք գոտու» խառը ադմինիստրացիայի մասին, որը պետք է գործեր Դաշնակիցների գլխավորությամբ և հսկողությամբ,իսկ վեճերի դեպքում՝ արբիտրաժը (միջնորդություն, իրավարարություն) հանձնվում էր Դաշնակցային հրամանատարության ներկայացուցիչներին: Ղեկավարման հետ կապված ծախսերն իր վրա էր կրում Բրիտանական հրամանատարությունը, որոնք հետագայում պետք է դրվեին այն պետության վրա, ում բաժին կհասներ վիճելի տարածքը: Երկու կողմերի միջև տարաձայնություններ առաջացան՝ կապված «չեզոք գոտում» երկաթուղային հաղորդակցության կարգավորման հետ[143]:

Հայկական պատգամավորության անունից ելույթ ունեցած Ս. Խաչատրյանը այդ կապակցությամբ անում է համապատասխան հայտարարություն: Հայաստանի ներկայացուցիչը ընդգծեց, որ Անդրկովկասյան երկաթուղագծի ունեցվածքը կազմում է համակովկասյան ունեցվածք, սեփականություն, և ոչ մի պետություն իրավասու չէ այն վերածել իր բացառիկ սեփականության, և որ Վրաստանի կառավարության պահանջն իրեն հանձնել երկաթգծերի վարչությունը «չեզոք գոտում», որպես տվյալ զոնայում երկաթուղային ճանապարհանգույցի ղեկավարման ապարատի ճիշտ ֆունկցիավորման թույլտվության միակ պայման, որը արմատապես հակասում էր դեկտեմբերի 25-ին դաշնակիցների կողմից կայացրած որոշման բուն իմաստին: Ս. Խաչատրյանը ընդգծեց, որ հարցի այդպիսի լուծումը հակասում է հայ ժողովրդի կենսական շահերին և չի պատնեշում պետությունը նմանատիպ ոչ իրավասու և ոչ արդարացի նկրտումներից ապագայում, և այդ իսկ պատճառով հայկական պատվիրակությունը իրեն իրավունք չի վերապահում ընդունել այդպիսի պայմանները, և այդ հարցի լուծումը հանձնում է Դաշնակցային հրամանատարությանը: Ի պատասխան Դաշնակցային ներկայացուցիչ Ստյուարտը նկատի ունենալով, որ հայկական ներկայացուցչի կողմից «չեզոք գոտում» երկաթուղագծի սպասարկման հարցի լուծումը հանձնվել է Դաշնակցային հրամանատարության քննարկմանը, հայտարարում է, որ ստացված հրահանգների համաձայն ինքը որոշում է, որ «չեզոք գոտում» երկաթուղագիծը պետք է սպասարկվի Վրաստանի կառավարության կողմից նշանակված ծառայողների կողմից, առաջարկելով հայերին փոխարինել վրացիներով: Ստյուարտը նաև առաջարկում է հայկական պատվիրակությանը տեղեկացնել այդ մասին սեփական կառավարությանը, որից հայկական պատվիրակությունը հրաժարվում է, պատճառաբանելով, որ հարցի այդպիսի լուծման հետ իրենք չեն համաձայնվել, և թող Դաշնակցային հրամանատարությունն ինքը անձամբ տեղեկացնի այդ մասին Հայկական կառավարությանը[144]:

Եվ այդպես, ոչ առանց բրիտանական աջակցության որոշվեց «չեզոք գոտում» երկաթուղագիծը հանձնել Վրաստանին:

Վրաստանի և Հայաստանի միջև հարաբերությունների նորմալացման համար ժամանակավորապես հաստատվեցին դիվանագիտական գործակալություններ՝ գործարար բնույթի հատուկ հարցերի համար, որը գլխավորվում էր մեկ անձի կողմից, և

որի լիազորությունների ծավալը պետք է որոշվեր երկու կողմերի կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ: Մնացած բոլոր հարցերը, որոնք չէին քննարկվել համաժողովում, պետք է որոշվեին երկու կողմերի կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ, իսկ անհամաձայնության դեպքում՝ Դաշնակցային հրամանատարության արբիտրաժի միջոցով[145]:

Անշուշտ, հայերը միայն ստեղծված իրադրության պայմանների թելադրանքից ելնելով էր, որ ժամանակավորապես համակերպվում են հայ-վրացական պատերազմից հետո ստեղծված իրավիճակի հետ, որն ամենևին էլ բարենպաստ չէր Հայաստանի Հանրապետության համար: Հետաքրքիր է նշել, որ հայերն այդ մտքի հետ այդպես էլ հաշտվել չկարողացան: Այդ կապակցությամբ ուշագրավ է արձանագրել, որ արդեն 1919 թ. հոկտեմբերի վիճակով, ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության հատուկ պատվիրակության նախագահ Հովհաննես Քաջազնունու կողմից ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Լոգին ներկայացված հուշագրում 67 հազար քառակուսի կիլոմետրը ընդգրկող Հայաստանի Հանրապետության տարածքի մեջ ներառնված էին համարվում նաև Թիֆլիսի նահանգի հարավային մասը, ներառյալ Ախալքալաքի ողջ գավառը և Բորչալուի գավառի հարավային մասը[146], չնայած այն հանգամանքին, որ արդեն ավարտվել էր վրաց - հայկական պատերազմը (1918 թ. դեկտեմբերի 31), և առաջացել էր չարաբաստիկ «չեզոք գոտին» հայկական հողի սրտում (1919 թ. հունվար - փետրվար), և նոր ուղիներ էին որոնվում հարցի վերջնական լուծման և ՀՀ տարածքում այն մեկընդմիշտ ամրագրելու համար: Ռազմական գործողությունները ավարտվել էին, տարածքային հիմնախնդիրները մնացել, որոնք կազմում են նաև մեր օրերի աշխարհաքաղաքական իրավիճակի ռեալությունը: Այդ միտքը ցայտուն է արտահայտել Հայաստանի Առաջին Հանրապետության երկրորդ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը. «*...Ախալքալաքի վերաբերմամբ, որու բնակչութիւնը մօտ 80.000 զուտ հայկական էր, ինչպէս նաեւ Լոռիի գաւառի վերաբերմամբ,որ իր 60.000 բնակչութեամբ նոյնպէս զուտ հայկական էր, մեր դիրքը շատ պարզ էր: <u>Մենք չէինք կրնար հաշտուիլ Ախալքալաքի կորուստին հետ</u>. թէեւ վրացինե-*

---

[11] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

*րը դեռ 1918 թ. դեկտեմբերին գրաւած էին զայն եւ մինչև վերջ գրաւած պահերին: Իսկ Լոռին պատերազմի հետեւանքով վերջ ի վերջոյ անցաւ Հայաստանի ձեռքը»*[147]:

## Գլուխ Երրորդ
## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Տես՝ Յովի. Քաջազնունի. Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923, էջ 34-35:
2. Տես՝ Հայկական Սովետական Հանրագիտարան (ՀՍՀ). «Սովետական Հայաստան». Եր., 1987, էջ 162:
3. Տես՝ Գ. Կ. Օրջոնիկիձե. Ընտիր հոդվածներ և ճառեր. 1918-1937. Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 74-75:
4. Տես՝ Յովի. Քաջազնունի, նշված աշխատությունը, էջ 34-35:
5. Տես՝ Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, հ. VII, (1917-1941), էջ 63-64:
6. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն. Երևան, Հայաստան, 1993, էջ 227:
7. Տես՝ Համլետ Գևորգյան. Դրո. - Եր.: Զանգակ 97, 1999, էջ 290:
8. Տես՝ Աշոտ Մելքոնյան. Ջավախք.Պատմության Ուրվագծեր. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999, էջ 33: Տես նաև՝ Աշոտ Մելքոնյան. Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին. - Եր.: «Զանգակ - 97», 2003, էջ 301:
9. Տես՝ Ռուբեն Կարապետյան. Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920). Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 87:
10. Տես՝ **Великая Октябрьская Социалистическая революция. Энциклопедия. Издание третье, дополнение. Москва, «Советская энциклопедия»**, 1987, стр. 45:
11. Տես՝ Ռուբեն Կարապետյան, նշված աշխատությունը, էջ 87-88:
12. Տես՝ Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 230:
13. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, ց.1, գ. 32, թ. 8:
14. Տես՝ Յովհաննես Քաջազնունի. Հայաստանի Հանրապետութիւն. Երեւան. «Մ. Վարանդեան» հրատարակչութիւն», 1993, էջ 17:
15. Տես՝ Կայծ, 22 հուլիսի, 1919 թ., N° 22:
16. Տես՝ Սիմոն Վրացյան. Կյանքի ուղիներով. Ե. հատոր, էջ 42:
17. Հովի. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Եր.: ՀՀ ԳԱԱ, 1999, (նամակներ) էջ 299:

18. Տես՝ Ալ. Խատիսեան. Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բ. տպագրութիին, 1968, տպարան Համազգային, էջ 127-128:
19. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն,էջ 230-231:
20. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 23:
21. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 96, թ. 72:
22. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 231:
23. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 150, մաս I, թ. 15:
24. Տես՝ Նույն տեղում, թ. 16:
25. Տես՝ **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии**, стр. 469-470; Տես նաև՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.2, գ. 22, թ. 5: Զանգ, N° 83, 1918 թ.:
26. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.2, գ. 22, թ. 6:
27. Տես՝ Նույն տեղում, թ. 8:
28. Տես՝ Նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 78-79:
29. Տես՝ Նույն տեղում, ֆ. 202, ց.1, գ. 13, թ. 130:
30. Տես՝ Նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 150, մաս I, թ. 34; գ. 16, թ. 17:
31. Տես՝ Նույն տեղում, ֆ. 199, ց.1, գ. 6, թ. 21:
32. Տես՝ Բանբեր Հայաստանի Արխիվների. 1991, N° 3, էջ 83-84:
33. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց.1, գ. 6, թ. 29:
34. Տես՝ Բանբեր Հայաստանի Արխիվների. N° 3, էջ 84:
35. Տես՝ Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ. Երևան, ՀՊՃՀ, 1999, էջ 6:
36. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց.1, գ. 6, թ. 30:
37. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 16:
38. Տես՝ Նույն տեղում:
39. Տես՝ Նույն տեղում:
40. Տես՝ Նույն տեղում:
41. Տես՝ Նույն տեղում, ֆ. 276, ց.1, գ. 96, թ. 43:
42. Տես՝ Նույն տեղում:
43. Տես՝ Նույն տեղում, թ. 58:
44. Տես՝ **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии**, стр. 473-476:
45. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 149, թ. 76:
46. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 231:
47. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 96, թ. 60:
48. Տես՝ Նույն տեղում, թ. 83:
49. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 232:
50. Տես՝ Սիմոն Վրացյան, Նշված աշխատությունը, էջ 232:
51. Տես՝ Նշված աշխատությունը, էջ 233:
52. Տես՝ Նույն տեղում:
53. Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 22, թ. 9:

54. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 234:
55. Տես՝ Կայծ. № 15, դեկտեմբերի 26, 1918 թ.
56. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 234:
57. Տես՝ Արտ. Բաբալեան. Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից. Գահիրէ, 1957, էջ 26:
58. Տես՝ Կայծ. 29 դեկտեմբերի, № 16, 1918 թ.; Տես նաև՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 373:
59. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 373:
60. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 96, թ. 91:
61. Տես՝ Նույն տեղում:
62. Տես՝ Նույն տեղում, թ. 44:
63. Տես՝ Чохели А. И. Политика Франции в отношении Грузии в 1917-1921 годах. Тбилиси, «Мецниереба», 1980, стр. 58, 59:
64. Տես՝ Ագապի Նասիպեան. Բրիտանիա և Հայկական հարցը. 1915-1923. հրատարակութիւն Հ.Բ.Ը. Միության Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի, Պէյրութ, 1994:
65. Տես՝ Чохели А. И. Политика Франции в отношении Грузии в 1917-1921 годах, стр. 112:
66. Տես՝ Великая Октябрьская Социалистическая революция. Энциклопедия. стр. 192:
67. Տես՝ А. И. Чохели, նշված աշխատությունը, էջ 112-113:
68. Տես՝ В. И. Адамия. Из истории английской интервенции в Грузии (1918-1921 гг.). Сухуми, Абгосиздат, 1961, стр. 64:
69. Տես՝ В. И. Адамия, նշված աշխատությունը, էջ 73:
70. Տես՝ В. И. Адамия, նշված աշխատությունը, էջ 73-74:
71. Տես՝ Stephen F. Jones. Georgian - Armenian Relations in 1918-20 and 1991-94: A comparison. - Armenian review. vol. 46, no 1-4 (181-184), pp. 57-77:
72. Տես՝ В. И. Адамия, նշված աշխատությունը, էջ 74:
73. Տես՝ В. И. Адамия, նշված աշխատությունը, էջ 74:
74. Տես՝ В. И. Адамия, նշված աշխատությունը, էջ 76:
75. Տես՝ Гаиоз Девдариани. Дни господства меньшевиков в Грузии (документы и материалы). Госиздат Грузии, 1931, стр. 245:
76. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 27, 345:
77. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 150, մաս I, թ. 19:
78. Տես՝ Նույն տեղում, թ. 19:
79. Տես՝ Հովհաննես Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, էջ 301, 655 (նամակներ):
80. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց.1, գ. 6, թ. 36:
81. Տես՝ Նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 150, մաս I, թ. 37:
82. Տես՝ Աշոտ Մելքոնյան. Ջավախք. Պատմության ուրվագծեր, էջ 33-34:

83. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 150, մաս I, թ. 20:
84. Տես՝ Նույն տեղում, ֆ. 199, ց.1, գ. 6, թ. 38:
85. Տես՝ Նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 348:
86. Տես՝ Նույն տեղում, թ. 353:
87. Տես՝ Նույն տեղում, թ. 357:
88. Տես՝ Նույն տեղում, թ. 361-363:
89. Տես՝ Նույն տեղում, թ. 16:
90. Տես՝ Նույն տեղում, թ. 365:
91. Տես՝ Նույն տեղում, թ. 378:
92. Տես՝ Նույն տեղում:
93. Տես՝ Կայծ. № 22, 22 փետրվարի, 1919 թ.:
94. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն,էջ 236-237:
95. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց.1, գ. 6, թ. 41:
96. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.2, գ. 38, թ. 1; Տես նաև՝ Խոսք, 1919, № 1, շաբաթ, 4 հունվարի, էջ 4:
97. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 237:
98. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 404-405:
99. Տես՝ Նույն տեղում:
100. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 408; Տես նաև՝ Խոսք, 1919, № 1, 4 հունվարի:
101. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 150, մաս I, թ. 20:
102. Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 238:
103. Տես՝ Նույն տեղում, էջ 239:
104. Տես՝ Նույն տեղում, էջ 240:
105. Տես՝ Ս. Վրացեան. Կեանքի ուղիներով. հ. Դ., տպարան «Մշակ», Բեյրութ. 1965, էջ 186:
106. Տես՝ Դրո, էջ 303-304:
107. Տես՝ Նույն տեղում, էջ 288:
108. Տես՝ բժ. Արտ. Բաբալեան. Հայաստանի անկախութեան պատմութիւնից. Գահիրե, 1959, էջ 26:
109. Տես՝ բժ. Արտ. Բաբալեան. Նշված աշխատությունը, էջ 26:
110. Տես՝ Stephen F. Jones. Georgian - Armenian Relations in 1918-20 and 1991-94: A comparison. - Armenian review. vol. 46, no 1-4 (181-184), p. 64:
111. Տես՝ Г. В. Хачапуридзе. Борьба за пролетарскую революцию в Грузии. очерки. 1917-1921, Тбилиси, издательство ЦК КП(б) Грузии, 1937, стр. 290:
112. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 96, թ. 9:
113. Տես՝ Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, էջ 322:

114.Տես՝ Զանգ. 30 դեկտեմբերի, 1918, № 9; Տես նաև՝ А. Б. Кадишев. Интервенция и гражданская война в Закавказье. М. Военное издательство, Мо СССР, 1960, стр. 173:
115.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 96, թ. 91:
116.Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 243:
117.Տես՝ Սիմոն Վրացյան, նշված աշխատությունը, էջ243-244:
118.Տես՝ Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, էջ 203, 656:
119.Տես՝ Արշակ Ջամալյան. Հայ - վրացական կնճիռը.-«Հայրենիք» ամսագիր. - 1929. - № 6, ապրիլ. Է տարի, էջ 136-137:
120.Տես՝ նույն տեղում, էջ 135-148:
121.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 223, ց.1, գ. 60, թ. 1-2:
122.Տես՝ նույն տեղում, ֆ. 223, ց.1, գ. 60, թ. 3, 10, 11, 13, 30, 32:
123.Տես՝ նույն տեղում:
124.Տես՝ նույն տեղում, թ. 7:
125.Տես՝ Արշակ Ջամալյան. Հայ - վրացական կնճիռը.-«Հայրենիք» ամսագիր. - № 6, ապրիլ. Է տարի, էջ 141:
126.Տես՝ նույն տեղում:
127.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 53:
128.Տես՝ նույն տեղում, թ. 54:
129.Տես՝ Ազապի Նասիպեան, նշված աշխատությունը, էջ 165:
130.Տես՝ Ս. Վրացեան. Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 63, 65:
131.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 183, թ. 146:
132.Տես՝ նույն տեղում, գ. 154, թ. 195:
133.Տես՝ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, стр. 489-490:
134.Տես՝ Stephen F. Jones. Georgian - Armenian Relations in 1918-20 and 1991-94: A comparison. - Armenian review. vol. 46, no 1-4 (181-184), p. 64:
135.Տես՝ Ս. Վրացեան. Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 60:
136.Տես՝ Ալ. Խատիսյան. Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 193:
137.Տես՝ ՀՀ Նորագույն Պետական Կենտրոնական Պատմական Արխիվ (այսուհետ՝ ՀՀ ՆՊԿՊԱ), ֆ. 113, ց.3, գ. 37, թ. 54:
138.Տես՝ Սիմոն Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, էջ 249:
139.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 104, թ. 46-47:
140.Տես՝ նույն տեղում, թ. 47:
141.Տես՝ նույն տեղում, թ. 48:
142.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 71; ֆ. 276, ց.1, գ. 104, թ. 87:

143.Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 73; Տես նաև՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 82-84:
144.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 104, թ. 74:
145.Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 73:
146.Տես՝ նույն տեղում, ֆ. 450, ց.2, գ. 8, թ. 7 (անգլ.):
147.Տես՝ Ալ. Խատիսյան. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 169:

## Գլուխ Չորրորդ

# 1918 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՎՐԱՑ - ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Արդեն մանրամասն, հանգամանալից անդրադարձել ենք, որ 1918 թ. դեկտեմբերին Լոռի - Փամբակի սահմանային վեճի պատճառով երկշաբաթյա ռազմական բախում տեղի ունեցավ Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև: Դրա հետևանքով Հայկական Լոռին ճանաչվեց «չեզոք գոտի» մինչև հարցի վերջնական լուծումը, իսկ Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական առճակատումը ավելի երկար տևեց, հիմքում գործնական առումով լինելով անլուծելի: Հայաստանում գործող բոլոր քաղաքական կուսակցությունները,բացի բոլշևիկներից (որոշ վերապահումներով հանդերձ), այսպես թե այնպես կանգնեցին ազգային անկախության և պետականության պաշտպանության դիրքերում:

Այստեղ մենք նպատակահարմար չենք գտնում անդրադառնալ պատերազմական անցուդարձին, որին արդեն անդրադարձել ենք վերը: Սակայն հարկ է ընդգծել, որ հայ - վրացական հարաբերությունների կարգավորման, պատերազմական կնճռի հաղթահարման հարցը պառլամենտական բուռն քննարկման նյութ է հանդիսացել՝ առաջ բերելով իրարամերժ տեսակետներ: Մասնավորապես այն հանգամանալից քննարկման նյութ է դարձել ՀՀ խորհրդարանի 1918 թ. հոկտեմբեր - դեկտեմբերի նիստերում: Առհասարակ Հայաստանի խորհրդի (պառլամենտի) ֆրակցիաները, չնայած որոշ տարակարծություններին, միակարծիք էին հայ - վրացական 1918 թ. պատերազմի նկատմամբ ունեցած իրենց դիրքորոշման մեջ:

Այս առումով, սկզբունքորեն դժվար է լիովին համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք ելնելով նեղ կուսակցականքաղաքական, անձնական - էգոիստական շահերից, շահարկում են այն հարցը, ըստ որի իբր թե կուսակցությունները հստակ և աներկբայորեն բաժանվում են ազգային և ոչ ազգային կուսակցությունների տիպերի, որն ըստ էության որոշակի առումով և ո-

րոշ տեսանկյունից արհեստական, էկլետիկ մոտեցում է: Այն համահարթում է համակողմանի պատմական մոտեցումը կուսակցությունների գործունեության նկատմամբ, կտրելով այն աշխարհաքաղաքական իրավիճակի ռեալ պրոբլեմներից, որոնցում նրանք գտնվել են և գործել, ինչը լավ երևում է ստորև ներկայացված շարադրանքից:

Հարկ է ընդգծել, որ հոկտեմբերի 22-ի նիստից սկսած ՀՀ կառավարությունը, պառլամենտական ֆրակցիաները և կուսակցությունները ձգտում էին հայ - վրացական սահմանավեճը հարթել խաղաղ ճանապարհով, և այդ ոգով էլ հանդես էին գալիս խորհրդարանում, և միայն ծայրահեղ դեպքում կառավարությունից պահանջում էին դիմել արտակարգ՝ ռազմական ուժի օգնությանը, որի մասին ստորև կանդրադառնանք և այդ մասին արդեն որոշակիորեն, ընդհանուր գծերով անդրադարձել ենք մեր կողմից հրատարակված գրքույկում[1]:

Հայաստանի պառլամենտի հոկտեմբերի 22-ի նիստում վարչապետ Քաջազնունին պատգամավորներին ներկայացնելով առկա ինֆորմացիան, ինչպես նաև Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցչի հաղորդագրությունն այն մասին, որ ինքը տեսակցություն է ունեցել Վրաստանի արտաքին գործերի նախարարի հետ ու վերջինս «*առաջարկել է թողնել գրավված շրջանները և ապա բանակցություններ սկսել հարցը խաղաղությամբ վերջացնելու համար, կառավարությունը կանգնած է այն տեսակետի վրա, որ հարցը պետք է լուծել խաղաղ ճանապարհով և պահել բարի դրացիական հարաբերությունները*»[2]: Այդ ոգով են արտահայտվում մի շարք պատգամավորական ֆրակցիաների ներկայացուցիչներ,որոնք ընդհանուր առմամբ շեշտում են, որ կարևոր է կոնֆլիկտը խաղաղությամբ վերջացնել, իսկ եթե վրացիք զինված ուժի կդիմեն՝ դիմադրություն ցույց տալ[3]: Վերջ ի վերջո հավանության են տալիս ՀՀ կառավարության վարած արտաքին խաղաղասիրական քաղաքական կուրսին, որն անշուշտ, բխում էր հայ ժողովրդի քաղաքական - պետական շահերից (սով,գաղթականներ,պատերազմական վերքեր, ներքին մահմեդական խժդժություններ, տարափոխիկ հիվանդություններ և այլն), ինչին «եղբայրական» վրացական կողմը, Անդրկովկասյան Սեյմի մեր եղբայրակիցները և դարավոր բարեկամները (դեռ Թամար թագուհու և Դավիթ Շինարարի ժամանակներից սկսած) հա-

կադրում էին իրենց զորագլուխները և գերմանական սվինները: Եվ այնուամենայնիվ, վերջին փորձերից մեկը խաղաղեցնելու ագրեսորին, արտահայտվեց Յովի. Քաջազնունու խաղաղասիրական հեռագրով՝ ուղղված Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցիչ Ջամալյանին, որում ասվում էր,թե «*"Յայաստանի խորհուրդը լսելով" վարչապետի զեկուցումը Շահալին պարպելու մասին արված վերջնագիր - պահանջի, ինչպես նաև կառավարության ձեռք առած միջոցների մասին, որոշեց՝ 1) հավանության տալ կառավարության գործողություններին և առաջարկեց նրան հետագայում էլ հետևել ընդունած ուղղությանը, 2) պարտք դնել կառավարության վրա, ամեն ջանք թափել բախումը խաղաղ ճանապարհով լուծելու համար՝ այն հույսով, որ Վրաստանն էլ հետ կկենա հարձակողական քայլերից և չի անցնի իր գրաված գիծը: Խնդրում եմ հաղորդել այդ մասին Վրաց կառավարությանը*»[4]:

1918թ. հոկտեմբերի 26-ի Յայաստանի խորհրդի նիստում, երբ քննարկվում է հայ - վրացական կոնֆլիկտի խնդիրը, ելույթ են ունենում տարբեր ֆրակցիաների ներկայացուցիչները՝ Յայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Եր. Յարությունյանը, սոցիալ - դեմոկրատ Յ. Ազատյանը և ուրիշներ:

Էականն այն է, որ որոշ տարակարծություններով հանդերձ, վերջ ի վերջո նրանք բոլորն էլ համերաշխվում են, և 27 ձայնով անցնում է Յ. Յ. Դաշնակցության բանաձևը,որում ասվում էր հետևյալը. «*Յայ - վրացական խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով Յայաստանի խորհուրդը հանձնարարում է կառավարությանը բանակցություններ սկսել Վրաց կառավարության հետ՝ կոնֆերանս գումարելու սահմանագիծն որոշելու համար*»[5]: Պատգամավոր Յայկ Ազատյանի առաջարկով որոշվում է այդ մասին տեղեկացնել նաև Վրաստանի պառլամենտի նախագահությանը, որն ընդունվում է պայմանով, որ այն ունի ագիտացիայի բնույթ և նպատակ: Յետագա շրջանում հարցի քննարկումը, կապված հայ - վրացական կնճռի հաղթահարման հետ, շարունակվում է:

Յոկտեմբերի 28-ի նիստում շարունակվում է քննարկումը՝ կապված հայ-վրացական վեհաժողովի հրավիրման հարցի հետ: Կառավարության նախագահը տեղեկացնելով, որ Վրաց կառավարությունն արդեն պաշտոնյաներ է նշանակում հայտնի տա-

ռածքներում, այնուամենայնիվ գտնում էր, որ պետք է փոխադարձ համաձայնությամբ ու հաշտությամբ վերջացնել կոնֆլիկտը[6]: Հարցի կապակցությամբ ելույթ ունեցած խորհրդարանի անկուսակցական պատգամավոր Ստ. Մամիկոնյանը գտնում էր, որ սահմանագծումները արբիտրաժով լուծել չի կարելի, որովհետև Վրաստանը կանգնած է պատմական տեսակետի վրա, իսկ Հայաստանը՝ էթնիկական:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունից ելույթ ունեցած պատգամավոր Հովհ. Բուդաղյանը գտնում էր, որ հայ - վրացական կոնֆերանսի մասին հարցը հասունացած չի և կոնֆերանսի մասին չի կարելի խոսել, և իրենք տեղեկություն չունեն Վրաց կառավարության մտադրության մասին: Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիայի անունից վերջինս առաջարկում էր կառավարությանը բանակցություններ վարել և աշխատել խաղաղ ճանապարհով հարթել այդ խնդիրը[7]:

Սոցիալ - դեմոկրատ Հայկ Ազատյանը առաջարկում է Հայաստանի պառլամենտի կողմից «*Վրաց պառլամենտին ուղարկել մի հեռագիր այն մասին, որ Հայաստանի խորհուրդը ընդառաջ է գնում կոնֆերանսի գումարմանը և կուղարկի յուր ներկայացուցչությունը՝ բաղկացած բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչներից*»:

Ի վերջո բանավեճից հետո քվեարկվում է Հայ Հեղափոխական Դաշնակցության առաջարկությունը՝ «*Հայ - վրացական խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով, Հայաստանի խորհուրդը հանձնարարում է կառավարությանը բանակցություններ սկսել Վրաց կառավարության հետ կոնֆերանս գումարելու սահմանագիծն որոշելու համար*»: Սույն բանաձևը քվեարկվում է՝ ստանալով 27 ձայն կողմ[8]:

Ինչպես երևում է Հայաստանի Հանրապետության պառլամենտի 1918 թ. հոկտեմբերի 29-ի նիստի արձանագրությունից, կուսակցական ֆրակցիաները դարձյալ որոշակի վերաբերմունք ունեցան այդ խնդրին: Եթե սոցիալ - դեմոկրատական ֆրակցիան ի դեմս Ա. Խոնդկարյանի առաջարկում էր Վրաստանի հետ ունեցած վեճը լուծել խաղաղ ճանապարհով, ապա դաշնակցական ֆրակցիան և նույնիսկ մեծամասնական Ա. Մելիքյանը հավանություն տալով կառավարության ձեռնարկած քայլերին՝ամեն ջանք գործադրել խաղաղ ճանապարհով լուծելու սահմանավեճը, ա-

ռաջարկում էին, անհրաժեշտության դեպքում, զենքի ուժով պաշտպանել Հայաստանի իրավունքները: Անցնում է, սակայն, դաշնակցական ֆրակցիայի առաջարկը[9]: Արդյունքում, հոկտեմբերի 29-ի նիստում Հայաստանի խորհուրդը լսելով մինիստր-նախագահի զեկույցը, ընդունում է համապատասխան որոշում, որի մասին հեռագիր է ուղարկվում Վրաստանի պառլամենտի նախագահին (պատճենը՝ Ա. Ջամալյանին): Դրանում ընդգծվում էր, որ հանրապետությունների սահմանապահ զորամասերի միջև ծագած կոնֆլիկտը պետք է լուծել փոխադարձ համաձայնության ճանապարհով: Հայաստանի խորհուրդը որոշում է ընդունում՝ դիմել Վրաստանի պառլամենտին խոր վստահություն արտահայտելով այն բանում, որ ոչ մի թյուրիմացություն չպետք է սասանի դարավոր կապերը երկու եղբայրական ժողովուրդների միջև: *Հայաստանի խորհուրդը*, - ասվում էր այդ փաստաթղթում, - ***հավատում է, որ և Վրաստանի Կառավարությունը և Պառլամենտը բոլոր միջոցները կձեռնարկեն սպասվող բանակցությունների խաղաղ լուծման համար***[10]:

Հայ - վրացական պատերազմի, ռազմական գործողությունները դադարեցնելու և սահմանակնճիռը հարթելու նպատակով Լոռի մեկնեց խորհրդարանական հանձնաժողով, ուր ընդգրկված էին Գ. Տեր - Խաչատրյանը (ՀԺԿ), Ս. Հարությունյանը (ՀՅԴ), Ս. Խաչատրյանը (ՀՅԴ), Ա. Խոնդկարյանը (էսէռ), Ա. Մամիկոնյանը (անկուս.) և զորավար Ղորղանյանը[11]: Բացի այդ, Հայ սոցիալ - դեմոկրատիան կոչով դիմեց Վրաստանի սոցիալ - դեմոկրատիային՝ հայ - վրացական միջադեպին վերջ տալու անհրաժեշտության մասին: Կոչը հասցեագրված էր սոցիալ - դեմոկրատիայի մարզային կոմիտեին, Ազգային խորհրդի նախագահին[12]: Սակայն այն էական արդյունքներ չտվեց:

Հայաստանի խորհրդի նոյեմբերի 8-ի նիստում քննվեց Վրաստանի վարչապետ Ռամիշվիլիի դիմումագիրը, և առաջին անգամ Հայաստանի Հանրապետության կյանքում Խորհրդի բոլոր կուսակցությունները, առանց բացառության կանգնեցին միևնույն տեսակետի վրա՝ ցասումով դատապարտելով Վրաստանի կառավարության մենատիրական ձգտումները: Եվ որ շատ ավելի կարևոր և հետաքրքրական է, ամենաուժգին քննադատողներն ու դատափետողները եղան հայ սոցիալ-դեմոկրատները, որոնք դեռ շարունակում էին կազմակերպական կապեր պահպանել վրաց

սոցիալ - դեմոկրատների հետ: Սոցիալ - դեմոկրատ պատգամավոր Ա. Մալխասյանը խիստ բողոքեց հայ - վրացական տարածքային սահմանավեճը հարթելու նպատակադրումով խորհրդաժողով հրավիրելու վրացական կողմի տարօրինակ ձևի դեմ (վրացական կողմը հաշվի չէր առել հակառակ կողմի ցանկությունները, նրա հետ հավասար դիրքերից հանդես գալու ելակետային պահանջները և այլն), որն այս դեպքում համազոր էր բովանդակության, իր քայլով Վրաստանի «դեմոկրատական» կառավարությունը խախտում էր հավասարության սկզբունքները,ցանկանում էր ուրիշների վզին փաթաթել իր կամքը: Վրաստանի կառավարությունը ինքնագլուխ կերպով առանց դիմացինի կարծիքը հաշվի առնելու, որոշել էր վեհաժողովի վայրն ու ժամանակը, օրակարգն ու կազմը: Հայկական կողմը, քաղաքական կուսակցությունները անհանդուրժելի գտան նման վարքագիծը, և դատափետեցին այն: Անհանդուրժելի գտավ և ինչպես վկայում է Ս. Վրացյանը, *"ըստ ձևի ու ըստ էության դեմ" արտահայտվեց նաև սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան:Նմանատիպ պատճառաբանություններից ելնելով՝ բացասական վերաբերմունք դրսևորեցին և՛ դաշնակցական, և՛ ժողովրդական ֆրակցիաները: Եվ գրեթե միաձայն խորհրդարանը որոշեց չմասնակցել նոյեմբերի 10-ի խորհրդաժողովին և հանձնարարեց կառավարությանը, որ աշխատի "հող պատրաստել մասնակցելու խորհրդաժողովին՝ նախօրոք համաձայն գալով նրա կազմի, օրակարգի, տեղի ու ժամանակի նկատմամբ": Միաժամանակ խորհուրդը որոշեց, որ հայ - վրացական սահմանային վեճը առնչություն չունի այդ խորհրդաժողովի հետ և "պետք է վճռվի միայն երկու հանրապետությունների ներկայացուցիչների միջոցով, փոխադարձ համաձայնությամբ"*[13]:

Ախալքալաքի ու Լոռիի դեպքերը մեծ հուզում առաջ բերեցին Երևանում: Քաղաքական կուսակցությունները, Հայաստանի խորհրդարանը, կառավարությունը, հանրային կարծիքը միաբերան դատապարտում էին վրացիների հակահայկական դիրքորոշումը: Հայաստանի խորհրդարանը մի շարք դռնփակ նիստերում քննելով դրությունը՝ կառավարությանը տվեց գործելու ազատություն՝ պարտավորեցնելով նրան դիմել ամեն միջոցի՝ պաշտպանելու համար Հայաստանի իրավունքը Ախալքալաքի, և մանավանդ, Լոռիի վերաբերմամբ: Այս հարցում տարակարծություն չկար. բոլոր կուսակցությունները Լոռին համարում էին Հա-

յաստանի անբաժանելի մաս: Հայ ժողովրդի բոլոր խավերի միտքըն էր արտահայտում պատմաբան Լեոն, երբ սահմանավեճի առթիվ գրում էր. «*Երկու հազար տարվա պատմությունը տանում հասցնում է այն եզրակացության, որ առանց Լոռու երկար դարաշրջաններում չէր կարելի երևակայել Հայաստան: Ներկայումս այս բանն ավելի ևս աներևակայելի պետք է համարել, քանի որ կտրել Լոռին Հայաստանի մարմնից կնշանակե հոշոտել նրա ամբողջ անցյալը և նրա կուլտուրական գանձերը՝ դարերի և հարյուրավոր սերունդների մեծագործությունը քալանել տալ*»[14]:

Հետաքրքրական է այս առումով նաև Հայաստանի խորհրդի ֆրակցիաների 1918 թ. նոյեմբերի 21-ի խառը նիստի որոշ արձանագրությունների վերլուծությունը: Դրանք բացահայտում են տարբեր հայ քաղաքական կուսակցությունների համերաշխությունը ազգային մեծ կարևորություն ներկայացնող հարցերում, և ցույց տալիս, որ նրանց բաժանող տարակարծությունները էական չեն եղել, և ռազմավարական վտանգ չեն ներկայացրել: Ֆրակցիաները 1-ին կետով պայմանավորվում են (22 ձայնով ընդդեմ 3-ի) հրահանգել կառավարությանը, որպեսզի վերջինս պայմանավորվի թուրքական հրամանատարության հետ, թե ինչ կարգով, հնարավորին ամենակարճ ժամանակամիջոցում թուրքական զորքերը պիտի դուրս բերվեն Ախալքալաքի գավառից և փոխարինվեն հայկական զորամասերով: 1-ին կետի քվեարկության ժամանակ սոցիալ - դեմոկրատական ֆրակցիայի առաջարկած բանաձևի առաջին մասը ստանում է կողմ 5 ձայն, մնացածը՝ դեմ: Երկրորդ մասը հօգուտ ստանում է 4 ձայն: Այնուհետև քվեարկվում է Հայ ժողովրդական կուսակցության առաջարկության 1-ին կետը և անցնում է ձայների մեծամասնությամբ, ընդդեմ են արտահայտվում սոցիալ - դեմոկրատները և անկուսակցական պատգամավոր Ստ. Մամիկոնյանը, ձեռնպահությամբ սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիայի[15]: Միևնույն ժամանակ որոշվում է սույն պայմանագրի պատճենը տալ Ախալցխայի մուսուլմանական կոմիտեի ներկայացուցչին, եթե վերջինս պահանջի այն (12 կողմ, 10 դեմ, 4 ձեռնպահ)[16]: Այդ մասի քվեարկության ժամանակ հօգուտ ձայն են տալիս 11 հոգի (սոցիալիստ-հեղափոխականների, սոցիալ - դեմոկրատական և Հայ ժողովրդական կուսակցությունների ֆրակցիաները և Վարոս Բաբայանցը), ընդդեմ՝ դաշնակցականները՝ թվով 15 հոգի: Հայաստանի Խորհրդի

ֆրակցիաների կողմից ընդունված այդ փաստաթղթի 2-րդ կետում ասվում էր, որ Ախալցխա քաղաքի և Ախալցխայի գավառի հայ ազգաբնակչության իրավունքները և շահերը պաշտպանելու համար հարկ է նշանակել Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ախալցխա քաղաքում (այն, սակայն, ձայների մեծամասնություն չստացավ՝ 15 կողմ, 10 դեմ, 1 ձեռնպահ): Ինչպես ասացինք, այս կետի քվեարկության ժամանակ հօգուտ տրվում են 15 ձայն ընդդեմ 10-ի (սոցիալիստ - հեղափոխականներ, սոցիալ - դեմոկրատներ և Հայ ժողովրդական կուսակցություն), և ձեռնպահ՝ 1 հոգի:

Ըստ այդ փաստաթղթի երրորդ կետի, կառավարությանը լիազորություն էր տրվում համաձայնության գալ տաճկական հրամանատարության հետ, որ Ախալքալաքի գավառում հայկական գյուղերի միջև ընկած փոքրաթիվ թուրքական գյուղերի ազգաբնակչությունը փոխադրվի այն թուրքական գյուղերը, որոնք գտնվում են Ախալքալաքի և Ախալցխայի սահմանագծի վրա, գետի աջ ափին (հարցի այդ մասը ստանում է 25 կողմ ընդդեմ 4-ի), և որ այդ փոքրիկ հողամասը ժամանակավորապես կառավարվի Ախալցխայում գոյություն ունեցող կառավարության կողմից (այս տեսակետի այս մասն էլ ստացավ 15 կողմ ընդդեմ 12-ի), դրա փոխարեն Ախալցխայի գավառում գտնվող հայաբնակ Տամալա գյուղը կցելով Ախալքալաքի գավառին (18 կողմ ընդդեմ 8-ի, 1-ը՝ ձեռնպահ): Սույն կետի առաջին մասին ձայն են տալիս 25 հոգի կողմ, դեմ՝ 4 (սոցիալ - դեմոկրատներ): Երկրորդ կետի մասին հօգուտ ձայն են տալիս 15 հոգի, դեմ՝ 12 (սոցիալ - դեմոկրատներ, սոցիալիստ - հեղափոխականներ և Հայ ժողովրդական կուսակցություն): Եվ վերջապես, երրորդ կետի երրորդ մասին հօգուտ ձայն են տալիս 18 հոգի, դեմ՝ 8 (սոցիալ - դեմոկրատներ, սոցիալիստ հեղափոխականներ), 1-ը՝ ձեռնպահ[17]:

Եվ վերջապես 4-րդ կետն առաջարկվեց Ս. Տիգրանյանի կողմից: Դրանով նախատեսվում էր. ա) Ախալքալաքի գավառը համարել Հայաստանի անբաժան մաս (միաձայն), բ) գաղթականությանը տեղավորել Ախալքալաքի գավառում(միաձայն), գ) գրավել Ախալքալաքի գավառը հայկական զորամասերով և հաստատել այնտեղ վարչակազմ (21 կողմ ընդդեմ 6-ի)[18]:

Ուշագրավ է նաև ֆրակցիաների առանձին-առանձին դիրքորոշումը: Բերենք մի օրինակ: Հայ ժողովրդական կուսակցու-

թյան (ՀժԿ) պառլամենտական ֆրակցիայի առաջարկությունը Ախալքալաքի գավառի և վրաց - հայկական տերիտորիայի սահմանների մասին, ներկայացվում է 1918 թ. նոյեմբերի 21-ի նիստին: Դրանում մասնավորապես ասվում էր.

*1. «Ախալքալքի գավառի ընդունելության մասին. տաճկական զորքերի հետ մտնել պաշտոնական հարաբերությունների մեջ տաճկական հրամանատարության հետ և կայացնիլ համաձայնություն, որ այժմս և իր սահմանագլխի տաճկական զորքերը անարգել վիճակով թույլ տան Ախալքալաքի գաղթականներին Վրաստանից ներս մտնիլ Ախալքալաքի գավառը և տեղավորվին իրենց գյուղերում:*

*Միաժամանակ տաճկական զորքերը սկսին տեղ տալով Հայկական զորամասերից և այդ գործողությունները ծևակերպել այնպես, ինչպես կատարվեց Ղարաքիլիսայի հանձնումը հայերին.*

*2. Համարելով պատերազմը վրաց և հայերի մեջ կորստաբեր երկու կողմերի համար և անհանդուրժելի, անմիջապես բանակցության մեջ մտնիլ Վրաստանի կառավարության հետ սահմանների խնդիրը լուծելու խաղաղ ճանապարհով, այդ նպատակի համար բանակցություններ կայացնել երկու կողմերի կառավարությունների ներկայացուցիչների և հատուկ պառլամենտական պատվիրակությունների միջոցով.*

*3. Ախալցխայից և Ախալքալաքից եկած թուրք գաղթականների հետ հարաբերությունները և համաձայնությունը վերոհիշյալ խնդրի մասին համարիլ անընդունելի, նույնպես անհանդուրժելի համարիլ ներկայացուցիչ ուղարկել Ախալցխա մեր կառավարության կողմից»*[19]:

Ակնհայտ է, որ ազգային խնդիրներում բոլոր կուսակցությունները համերաշխվում էին, տարաձայնություններ ունենալով որոշ նրբերանգներում, տակտիկական նկատառումներով, մի խոսքով՝ ոչ էական հարցերում: Այս առումով նաև որոշակիորեն պարզ է, որ մեղմ ասած ոչ ճիշտ են արտահայտվում այն հեղինակները, որոնք արհեստականորեն, գաղափարախոսական նրկատառումներից ելնելով հայ իրականության մեջ գործած կուսակցությունները «խստորեն» բաժանում են ազգայինի և ոչ ազգայինի, և հակադրելով միմյանց ստեղծում մի նոր հակագիտություն, ինչը մերժելի է իրատեսության դիրքերից:

Դա է վկայում Հայաստանի խորհրդարանի ֆրակցիաների խորհրդակցության կողմից 1918 թ. նոյեմբերի 29-ին ընդունված փաստաթուղթը (19 կողմ, 8 դեմ, 6 ձեռնպահ)՝ հասցեագրված Հայաստանի Հանրապետության կառավարությանը, մինիստր-նախագահին՝ վարչապետին, որում ասվում էր հետևյալը. «*...Հայաստանի Հանրապետության խորհրդի հայ ֆրակցիաների խորհրդակցության ամսույս 29-ի նիստում ընդունել է հետևյալ որոշումը Ախալքալաքի գավառի մասին, որ հայտնում է Ձեզ. "Հայաստանի խորհրդի հայ ֆրակցիաների խորհրդակցությունը լսելով կառավարության հաղորդած տեղեկությունները Ախալքալաքի գավառի մասին, գտնում են, որ առաջ բերած նոր հանգամանքները բավարար չեն փոխելու իր որոշումները այդ գավառի վերաբերմամբ և հրահանգում է արագացնել բանակցությունները Վրաց կառավարության հետ մեր սահմանների ճշտման մասին"*»[20]:

Հատկանշական է, որ հայ - վրացական վեճի առանցքը հանդիսացող տարածքների հայկական պատկանելության հարցում Հայաստանի կուսակցությունների և խորհրդարանական պատվիրակությունների գերակշռող մեծամասնությունը էական տարակարծություններ չունեին: Այս առումով հետաքրքրական է Հայաստանի խորհրդարանի 1918 թ. դեկտեմբերի 12-ի նիստի ընթացքի ամբողջական վերլուծումը: Պատգամավորները լսում են մինիստր - նախագահի հաղորդագրությունը Լոռվա շրջանում վրաց զորքի և տեղական հայ ազգաբնակչության միջև սկսված ընդհարումների մասին: Իր ելույթում Հովհ. Քաջազնունին մասնավորապես ընդգծում է հետևյալը. «*...հայտնի է, որ Վրաց կառավարությունը մարդ է ուղարկել Ուզունլար և ուրիշ հարևան գյուղեր որոշ պահանջներով. տեղացիները չեն հպատակվել և Վրաց կառավարության պահանջները չեն կատարել, որի հետեվանքով վրաց զորքը զենք է բարձրացրել հանդեպ տեղացի հայ ազգաբնակչության և դրանով ինցիդենտը մեծ ծավալ է ստացել: Այսօր Լոռվա հայկական գյուղերն ապստամբական դրության մեջ են: Վրաց կառավարությունը պահանջներ է դնում այդ տերիտորիայի վրա բնակեցված ժողովրդի վրա, համարելով այս տերիտորիան իրենը: Իսկ տեղացիները, որ ամբողջովին հայեր են, չճանաչելով այդ անհարազատ իշխանությունը, հակված լինելով և գիտակցելով, որ տերիտորիայի մասն է Լոռին, ապստամբել են: Այդ բոլորի հետևանքն այն է եղել, որ վրաց զորքը գործ է ածում*

*թնդանոթներ և գնդացիրներ հայ խաղաղ բնակչության վրա: Լոռվա ազգաբնակչությունը խնդրում է մեր կառավարությունից, որ վերջինս օգնի իրան վայրագություններից ու կործանումից: Մենք երբեք չենք հաշտվել այն մտքի հետ, որ հայաբնակ Լոռին Վրաստանի տերիտորիայի մաս կարող է համարվել: Սահմաններ գծելիս Անդրկովկասյան ժողովուրդների մեջ առաջնորդվել ենք էտնոգրաֆիկ սկզբունքով: Դեպքերն այնպես էին դասավորված, որ մեր տերիտորիայի մի մասը գերմանացիների աջակցությամբ վրացիները գրավեցին իրենց զորքերով: Մենք կարծում էինք, որ Վրաստանն այնքան տակտ կունենա, որ ծայրահեղությունների չի հասցնի հայկական շրջաններով, և խնդրի լուծումը խաղաղ ճանապարհով կվերջանա: Մեզ ստիպել են լռությամբ տանել այդ հանգամանքը, լռությամբ ոչ խոսքի, այլ գործի: Սակայն պարզըվեց, որ վրացիներն ուզում են իրենց դիրքն հիշյալ գավառներում ամրապնդել և նույնիսկ առաջ շարժվել, նախօրոք գրաված ունենալով բարձրավանդակները: Տեղական ժողովուրդը բացարձակապես չի հանդուրժում օտարի իշխանությունը, տեսնելով բռնի ուժի ենթարկվելը, զենքի է դիմում և դիմադրում վրաց զորքերին: Հայաստանի կառավարությունը չի կարող հաշտվել, որ իր ժողովուրդը, իր հարազատներն իր երկրում վայրագությունների ենթարկվեն ապօրինաբար իշխողների կողմից, որ Վրաստանն իրանն համարելով և թնդանոթային ու գնդացրային կրակով լռեցնեն ժողովրդի ծգտումներն ու ցանկությունները: Հայաստանի կառավարությունը պարտք համարեց դիմել Վրաց կառավարությանը, որ վրացական զորքերը հեռացվեն այդ շրջանից: Կառավարությունը կարծում էր, որ խելահասությունը պիտի թելադրեր ընդառաջել մեր դիմումին, առաջնորդվելով ազգերի ինքնորոշման սկզբունքներով,որ Վրաց կառավարության անդամները շատ հաճախ շեշտել են: Բայց եթե դժբախտաբար Վրաց կառավարությունը չկանգնի իր տեսակետի վրա, եթե ժողովրդի կամքը չուզենա ի նկատի առնել, Հայաստանի կառավարությունը ստիպված կլինի ուժով ստիպել թողնել մեր երկրամասը: Ահավասիկ կացությունը և կառավարության տեսակետը, զեկուցելով խորհրդին, կառավարությունը կուզեր լսել խորհրդի կարծիքը որքան նպատակահարմար և հարգելի է գտնում կառավարության բռնած դիրքը և իր որոշումը, հետագայում Վրաց կառավարության անհամաձայնության դեպքում»*[21]:

Լսվում է Լոռվա բնակչության դիմումի մասին Հայաստանի կառավարությանը, ընթերցվում է ուզունլարցիների դեկտեմբերի 7-ի դիմում - հեռագիրը: Հարցի կապակցությամբ ելույթ են ունենում տարբեր խմբակցությունների ներկայացուցիչներ: Չնայած արտահայտման որոշ տարակարծություններին, հիմնականում կուսակցական խմբավորումները միակարծիք էին: Այսպես, Հայ Հեղափոխական Դաշնակցության ներկայացուցիչ Ն. Աղբալյանը ելույթ ունենալով ընդգծում է, որ «*հայկական կառավարությունը պետք է լինի զգույշ, բայց և կտրուկ. Լոռին մերն է և ժողովուրդն իրավունք ունի ինքնորոշվելու, և պետք է նրա ձայնը որոշիչ լինի*»[22],քանի որ այդ բնակավայրերի «*ազգաբնակչության 80 տոկոսը հայեր են*»[23]: Ն. Աղբալյանը եզրափակելով ասելիքը, ընդգծում է. «*Ուրեմն կա մի հողամաս, որի բնակչության խոշորագույն տոկոսը հայերն են. այդ հողամասի ազգաբնակչությունը չի ուզում օտարի հետ լինել... Կառավարությունը շատ զուսպ, չափավոր դիրք է բռնել, նա առաջարկել է կամովին ետ քաշվել: Մեզ մնում է միայն հաշտվել կառավարության արած քայլերի հետ: ...Մեր կառավարությունը պետք է լինի զգույշ, բայց և կըտրուկ: Լոռին մերն է, և ժողովուրդը իրավունք ունի ինքնորոշվելու և պետք է նրա ձայնը որոշող լինի: Պետք է վերջ տալ այս կատակերգությանը, պետք է պարզել Վրաստանի և Հայաստանի հարաբերությունները. պետք է ասել, որ մեզ է պատկանում այդ երկիրը անվիճելիորեն: Հավանության ենք տալիս կառավարության քայլերին և պահանջում ենք պատրաստ լինել հարկ եղածին պաշտպանել մեր ժողովրդին և Հայաստանի Հանրապետության արդարացի իրավունքները*»[24]:

Ըստ էության սոցիալ - դեմոկրատ Ա. Մալխասյանը ևս կանգնած էր Լոռու պաշտպանության դիրքում, չնայած գունեղանգների տարբերությանը: Ա. Մալխասյանը հայտարարեց, որ իրենց ֆրակցիան «*պատգամավոր Աղբալյանի և կառավարության հայտնած տեսակետի վրա է կանգնած. դա ազգերի ինքնորոշման տեսակետն է*»: Ա. Մալխասյանի ելույթն ուներ նաև միամիտ երանգներ, որոնց իմաստը նրանում էր, որ իբր թե Վրաց կառավարությունը հայ ժողովրդի վրա իշխելու տրամադրություն չունի, և պնդում էր, որ միշտ էլ կարելի է երկու կողմի համար էլ ընդունելի տարբերակ գտնել և խուսափել պատերազմից, գըտնելով փոխադարձ համաձայնության ընդհանուր սկզբունքներ,

որն հնարավոր է միայն արբիտրաժի միջոցով, ստեղծելով խառն ադմինիստրացիա: Դեմ արտահայտվելով պատերազմին, գտնելով, որ կարելի է կոնֆերանս հրավիրել, որը ձախողվեց կենտրոնի և կառավարության բռնած դիրքի շնորհիվ (ինչը չէր համապատասխանում իրականությանը, քանի որ կոնֆերանսը ձախողվեց Վրաստանի կառավարության բռնած դիրքի շնորհիվ, և այս առումով չի կարելի համաձայնվել Ա. Մալխասյանի տեսակետի հետ - Վ.Վ.), այնուամենայնիվ սոցիալ - դեմոկրատ պատգամավոր Ա. Մալխասյանը ուշագրավ միտք է արտահայտում, որն էլ մեջբերում ենք. «*...եթե նույնիսկ մենք երկու դեմոկրատիաների արյան գծով տիրանանք մեր երկրին, համենայն դեպս ոչ մի երաշխիք չունենք, որ վաղը համաձայնության պետության ներկայացուցիչները մեզ համար հակառակ որոշում չեն տա... իսկ եթե խաղաղ ճանապարհով հարցը լուծենք, այն ժամանակ մի երրորդ պետության թույլ տված չէինք լինի մեր ներքին գործերին խառնվելու*»: Ա. Մալխասյանը տագնապում էր շրջափակման և միայնակ մնալու վտանգից, վկայակոչելով արդեն երկաթուղային հաղորդակցության ընդհատման մասին փաստը, որը կյանքի երակ էր: Ա. Մալխասյանը, ամփոփելով իր ելույթը, ընդգծում է, որ «*վիճելի գավառները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը*», միաժամանակ ընդգծելով, որ իրենք խաղաղասերներ են և պետք է «*այդ վեճը պատերազմի միջոցով լուծելն համարել անթույլատրելի, միակ ելք ընդունում ենք արբիտրաժը: Առաջարկել Վրաց կառավարությանը զորքերը քաշել այդ շրջաններից՝ ցավալի դեպքերը կանխելու համար, խոստանալով, որ հայ զորքը չի մտնի այդ շրջանները, մինչև արբիտրաժի որոշումները: Կազմել մինչև այդ խառն ադմինիստրացիա: Բանակցություններ վարել պարլամենտական հատուկ հանձնաժողովների միջոցով, որոնք մեկնելու են դեպքերի վայրը, այդ բոլոր առաջարկները Վրաց կառավարությանը հայտնել ի գիտություն, դաշնակից պետության ներկայացուցիչներին խնդրելով, իրենց ազդեցությունը գործ դնեն այս խնդրի խաղաղ լուծման համար*»[25]:

Ուշագրավ է Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Կոնստանտին Գյուլնազարյանի ելույթը, որում ասվում էր. «*Թուրքը մեզ ջարդեց, ռուսը ջարդեց, վրացի՞ն էլ ջարդի: Նա իր բռնած դիրքով երկու հարևան երկրների խաղաղ կենակցությունն ուզում է խանգարել՝ թշնամանք և ատելություն սերմանելով նրանց մեջ: Սոցիալ - դեմոկրատները Հովբի համբերությունն*

*են ուզում պատվաստել մեզանում. հապա այդ խոհեմության և համբերության 1/100-երորդական մասը ինչու՞ սոցիալ - դեմոկրատների լիդեր Ծերեթելու մեջ մենք չենք տեսնում: Այն նույն մարդն, չգիտեմ ինչու՞, միշտ Հայաստանի Հանրապետության վրա խեթ աչքով է նայում: Տփղիսում ասել է մի անգամ. «Ի՞նչ Հայաստանի մասին եք մտածում: Ավելի լավ չէ՞ր լինի, որ մի մեծ Վրաստան ստեղծվեր և հայերը նրա թևի տակ ապրեին»: Դա ասում է այն Ծերեթելին, որ ինքնորոշման քարոզիչն է: Այժմ նրանց բռնած նման դիրքից հետո այլևս կիսամիջոցներն ավելորդ են: ...Վերջացնելով իմ խոսքը, պետք է ասեմ, որ Հայ ժողովրդական կուսակցությունը տրամադիր է այս հարցը միանգամայն խաղաղ ճանապարհով լուծել, բայց ոչ ծայրաստիճան զիջումներ անելով. այստեղ կա նաև պատվազգացության խնդիր, որը մենք պարտավոր ենք հարգելու»*[26]:

Հետաքրքրություն է ներկայացնում սոցիալիստ-հեղափոխական Վ. Մինախորյանի ելույթը, որում նա ընդգծում է հետևյալը. «*Ստեղծված պայմաններում կամ պետք է զոհել ամեն ինչ վըրացիների հետ պատերազմ չունենալու նպատակով, կամ անել այդ ժողովրդին փրկելու համար: Եթե ես համոզված լինեի, որ սոցիալ-դեմոկրատների առաջարկը գործնական հետևանքներ կունենա, ես մեծ ուրախությամբ համաձայն կլինեի դրա հետ: Ժողովըրդական կուսակցությունը ասում է, որ մենք պետք է բանակցենք վրացիների հետ, որովհետև մենք կորցրել ենք մեր ժողովըրդի կեսը: Սա բացատրություն չի. մենք կորցրել ենք մեր ժողովըրդի կեսը, այո՛, բայց ոչ վրացիներից, այլ անհավասար ուժի դեմ ենք կռվել: Գալով նրան, որ վրացիները իրենց զորքը հանեն Լոռուց, մեր զորքերը պետք է գնան, քանի որ առանց զորքի Լոռին չի կարելի կառավարել: Այն առաջարկը, թե վրաց զորքը հանելուց հետո այնտեղ ստեղծել մի ադմինիստրացիա վրացիներից և հայերից, դա ավելի վատթար վիճակ կստեղծի, քան հիմա է... եթե Լոռին հանձնենք վրացիներին, հայ - վրացական հարաբերությունը ավելի կփչանա: Ապագա հայ - վրացական խաղաղ հարաբերության տեսակետից, մեր ֆրակցիայի կարծիքով, Լոռին պետք է կցել Հայաստանին: Սակայն դրանով հանդերձ, մեր ֆը-*

[12] Վանիկ Վիրաբյան. - 1918 թ. վրաց - հայկական պատերազմը

*րակցիան առաջարկում է բոլոր խաղաղ միջոցները սպառել, եթե էլ ուրիշ միջոց չլինի, նոր միայն ընդհարման տեղիք տալ»*[27]:

Յուրօրինակ ելույթ ունեցավ անկուսակցական պատգամավոր Ստ. Մամիկոնյանը, որն ընդգծեց հետևյալը. «*Ինչու՞ համար է վրաց իշխանությունը Լոռվում օրինական, երբ այնտեղ ոչ մի վրացի չկա և երբ Լոռին Հայաստանի մի մասն է կազմում: Ուրեմն, չգիտեմ, ինչու՞ Լոռում ապրող հայը չպետք է ապստամբի Վրաստանի դեմ և պահանջի, որ ինքը միանում է Հայաստանին և վերջինիս մի մասն է կազմում: Դա շատ հասկանալի է. այդ ժողովուրդը իր բնական իրավունքներն է պաշտպանում... մեր այս բոլոր դժբախտությունների պատճառը վրացին է... վաղուց մեր երկիրը ոչ ոք չի գալիս, և բոլորը խուսափում են: Ո՞վ է մեղավոր, իհարկե Վրաստանը... երբ ասացին ինձ, թե Վրաստանը իրեն անկախ է հայտարարել, իսկույն ես մտածեցի, թե ինչպես պետք է նա վարվի Ռուսաստանի թողած ժառանգության հետ, չէ՞ որ դրանից մեզ էլ բաժին է հասնում... վրաց մտավորականները թնդանոթները ժառանգեցին Ռուսաստանից հայ անմեղ ազգաբնակչության վրա գործադրելու համար: Վրաց բարձր խավը ամեն միջոց գործադրեց, որ մեր ժողովուրդը հյուծվի... վրացիները իրենց գործը լավ գիտեն: Թող ամեն մի պարլամենտ և կառավարություն իր ժողովրդի ճարը տեսնի: Ուրիշ տեսակետ այսպիսի պայմաններում չի կարող լինել... Ասում են, որ հայ ժողովուրդը ծանր դրության մեջ է և նա չի կարող պատերազմել. հային դուք դրանով չեք զարմացնի, այո՛, հայը գիտե անարդարության դեպքում պատերազմել: Մի՛ք սպասի անգլիացոց, որովհետև նրանց համար միևնույն է թե ում կպատկանի Լոռին, վրացուն, թե՞ հային... Այժմ քեռիներ գտնելու ժամանակ չէ: Ճիշտ է ասել սոցիալիստ - հեղափոխականների կուսակցությունը՝ «В борьбе обретёшь ты право своё»: Այս խնդրում չպետք է տատանվել և ճիշտ այնպես պետք է վարվել, ինչպես Սողոմոն իմաստունը, երբ նրա մոտ երկու կին եկան և բերեցին մի երեխա ու երկուսն էլ կռվում էին ու ասում, թե երեխան իմն է: Սողոմոնը ասեց, որ երեխային երկու կես կանեմ և ամեն կեսը մեկիդ կտամ: Այն ժամանակ իսկական մայրը գրկեց երեխային և ասաց. սա իմն է, ես չեմ տա: Այդպես էլ պետք է վարվի Լոռվա խնդրում Հայաստանի կառավարությունը*»[28]:

Կարևոր է նաև ընդգծել, որ էական տարբերություններ չըկային տարբեր խմբակցությունների բանաձևերում, որոնք մենք կշարադրենք ստորև, չնայած այն հանգամանքին, որ դրանք ձայների մեծամասնություն չստացան և անցավ Հայ Հեղափոխական Դաշնակցության առաջարկը[29]: Խորհրդարանի սոցիալ - դեմոկրատներն անում են հետևյալ առաջարկը, որն ստանում է 6 կողմ ձայն. «*Հայաստանի խորհուրդը լսելով կառավարության զեկուցումը Լոռվա դեպքերի մասին, որոշեց.*

1. *Վիճելի գավառները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը.*
2. *Համարելով հայ - վրացական վեճի պատերազմով լուծելն անթույլատրելի, իսկ կոնֆերանսի միջոցով՝ անհնարին, ինչպես այդ ցույց տվեցին մինչև այժմ վարված բանակցությունները, միակ ելքը ընդունվում է արբիտրաժը.*
3. *Առաջարկում է Վրաց կառավարությանը ցավալի դեպքերի զարգացման առաջքն առնելու համար հետ քաշել զորքերը Լոռվա սահմաններից, խոստանալով, որ հայոց զորքերը չեն մտնի այս գավառն, սպասիլով անմիջապես կազմվող արբիտրաժի վճռին.*
4. *Մինչև արբիտրաժի վճիռը՝ գավառում խառն հանձնաժողովի ձեռքով կազմել խառն ադմինիստրացիա.*
5. *Բանակցությունները վարել ոչ թե կառավարության ներկայացուցիչների, այլ պառլամենտական հատուկ հանձնաժողովների միջոցով, որոնք երկու կողմերից էլ դիմում են դեպքերի վայրը, և Վրաստանին արած այս բոլոր առաջարկություններն հայտնիլ ի գիտություն դաշնակից պետությունների ներկայացուցիչներին, խնդրելով նրանց գործադրել իրենց ազդեցությունը, այս հարցին խաղաղ լուծում տալու համար*»[30]:

Հայ ժողովրդական կուսակցության բանաձևը, որն աննըշան թվով ձայներ է ստանում, արձանագրում էր հետևյալը. «*Լսելով մինիստր - նախագահի հաղորդագրությունը Լոռվա դեպքերի մասին, խորհուրդը որոշում է հավանություն տալ կառավարության ձեռնարկած բոլոր միջոցներին այդ միջադեպը հարթելու համար իրավունքի և արդարության հիմունքների վրա*»[31]: Վերջնական տարբերակում ՀԺԿ-ն վերջին բառերը հանում է բանաձեվից: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև սոցիալիստ - հեղափոխականների բանաձևը. «*1) Նկատելով, որ Լոռվա*

*շրջանը հայկական է և դեմոկրատիայի սկզբունքները պահանջում են այդ հարցի լուծումը ազգագրական տեսակետով,2) նկատելով, որ ուրիշ որևէ լուծում մշտական կերպարանք կտա հայ-վրացական արդի հարաբերությանը՝ ազգային հարց ստեղծելով ապագայի համար երկու ժողովուրդների միջև վնասիլով նրանց համերաշխությունը, սոցիալիստ - հեղափոխականների ֆրակցիան առաջարկում է կառավարությանը բոլոր հնարավոր միջոցներով աշխատիլ խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով, հակառակ պարագային պաշտպանիլ հայ ժողովրդի շահերը այդ շրջանում*»: Բանաձևը քվեարկվում է և ստանում 5 ձայն կողմ[32]:

Վերջապես, պառլամենտի նիստում ընթերցվում է Հայ Հեղափոխական Դաշնակցության ֆրակցիայի բանաձևը. «*Լսելով կառավարության զեկուցումը Լոռվա դրության և այն միջոցների մասին, որ նա ձեռք է առիլ այդ շրջանի հայ ժողովուրդը վրաց զորքերի դեմ պաշտպանիլու համար՝ Հայաստանի խորհուրդը հավանություն է տալիս կառավարության տեսակետին և ձեռնարկած միջոցներին*»[33]:

Ի մի բերելով վերն ասվածը, կարելի է գալ այն հետևության, որ էական տարակարծություններ ֆրակցիաների տեսակետում, կապված հայ - վրացական կնճռի հաղթահարման և այդ առումով կառավարության ու պետության ձեռնարկած ռազմաքաղաքական գործունեության հետ՝ չկար, և դա էր էականը: Այսինքն, ակնհայտ էր, որ այդ կուսակցությունների մեծամասնությունը, չնայած ծրագրային որոշ տարակարծություններին, ազգային կարևորագույն հիմնահարցերի լուծման բնագավառում միակարծիք էին, և վեր էին կանգնած կուսակցական նեղ հարցադրումների ու նկատառումների շրջանակներից:

Այս բոլորը վերաբերում է 1918 թ. դեկտեմբերի 12-ի նիստին, իսկ դեկտեմբերի 16-ի նիստում եղավ շարունակությունը, որտեղ խմբակցությունները դարձյալ փաստեցին իրենց զորակցությանը կառավարությանը: Այս պատմական վավերաթղթերի արժեքն անվիճարկելի է: Գեներալ Թոմպսոնի (Տոմպսոն) կողմից դեպի գործողությունների վայրն ուղարկված կապիտան Գրինի զինադադարի մասին միջնորդության, և արված առաջարկության վերաբերյալ կուսակցական խմբակցություններն անում են իրենց առաջարկները և դիտողություններն Ախալքալաքի և Բորչալուի գավառների պատկանելիության, ժողովրդի՝ հարազատ բնակու-

թյան վայրերը վերադարձի, երկաթուղային հաղորդակցության վերականգնման և պարենավորման ու տնտեսական այլ խնդիրների վերաբերյալ:

Հ. Հ. Դաշնակցության ներկայացուցիչ Ն. Աղբալյանը ընդհանուր առմամբ ընդունելով խաղաղության առաջարկված տարբերակը, այնուամենայնիվ իր անհամաձայնությունն էր հայտնում զորքերի հետ քաշելու պահանջի հետ, գտնելով, որ անգլիական կապիտանը բնավ ծանոթ չէ այն պայմաններին և երկրին, ուր նա գտնվում է: Եվ այնուհետև նա խիստ տրամաբանական մի հարցադրում է անում այն մասին, թե ինչու՞ համար իրենք սահմանակից ժողովրդին զենքով են դուրս քշում հայկական հողերից: Ն. Աղբալյանը ի մի բերելով ասվածը, եզրահանգում էր. «*...երբ որ հասնենք այս սահմաններին, մենք կանգ կառնենք և այնուհետև թույլ չենք տա, որ որևիցե մեկը մեր իրավունքները ոտնակոխի: Մենք առանց այն էլ բավականաչափ հող և ժողովուրդ ենք թողել նրանց: Մենք հեռու ենք օտարի հող գրավելու մտքից, բայց չենք էլ կարող օտարին թողնել մեր հողի վրա*»: Հարկ է ընդգծել, որ այդ մտքից հետո Ն. Աղբալյանը արտահայտում է ևս մի տեսակետ, որը սակայն հեռու էր իրականությունից կամ ճշմարտանըման չէր, և ապացուցվեց հետագա աշխարհաքաղաքական փոփոխություններով Անդրկովկասում: Խոսքը վերաբերում է այն բանին, որ Ն. Աղբալյանը ըստ էության ոչ իրական հույսեր ուներ, երբ ասում էր. եթե «*այդ հողը* (Լոռին) *գրավեր մի հզոր ուժ (ասել է թե Դաշնակցության ուժերը),դա կլիներ նպատակահարմար լուծում, որ դաշնակիցները, որոնց համար իրենք այդքան արյուն են թափել և տառապել, անտես չեն առնի հայերի իրավունքները*(դա պատրանք էր, սակայն այն ժամանակ ո՛չ Ն. Աղբալյանը, և ո՛չ էլ ուրիշները դա չըմբռնեցին - Վ.Վ.)»: Եզրահանգելով, իր միտքը Ն. Աղբալյանը խաղաղասիրական եզրահանգում էր անում. *«Մենք երբեք չենք ցանկացել կռվի դիմել, մեզ ստիպել են այդպես վարվել, և այսօր, ինչպես էլ միշտ պատրաստ ենք բանակցությունների դիմել և լիազորություն տալ մեր պատգամավորներին, որ նըրանք բանակցություն վարեն և վրացիների հետ: Մեր պայմանն այն է, որ մենք մեր զորքերը հետ չենք քաշի մեր հողերից, որովհետև մենք չենք կարող թույլ տալ, որ ուրիշները ոտնահարեն մեր իրավունքները*»[34]:

Խորհրդարանի դեկտեմբերի 16-ի նիստում ելույթ ունենալով Հայ Ժողովրդական կուսակցության անունից պատգամավոր

Ս. Ստեփանյանը (նախկինում անկուսակցական), ընդգծեց, որ իրենց ֆրակցիան կապիտան Գրինի առաջարկի հետ համաձայն է, բացի երկրորդ կետից, որ վերաբերում է Բորչալվի և Ախալքալաքի շրջաններից հայկական զորքերը ետ քաշելուն: Ս. Ստեփանյանը իր ելույթում ընդգծում է, որ Դաշնակից պետությունների ներկայացուցչությունն այդ խնդիրը պետք է հօգուտ Հայաստանի լուծեն, որովհետև Լոռին և Ախալքալաքը թե՛ ազգագրական, և թե՛ պատմական տեսակետից հայկական են:Նկատի ունենալով վերն ասվածը, ֆրակցիան իր առաջարկությունն է անում, որում ասվում էր հետևյալը. «*Հայաստանի խորհուրդը լսելով մինիստր-նախագահի հայտարարությունը վրաց - հայկական կոնֆլիկտի մասին, և այդ առթիվ կապիտան Գրինի արած առաջարկությունը, որոշեց՝*

1) *սկզբունքով ընդունելի համարել այդ առաջարկությունը,*
2) *հավանության տալ կառավարության գործելակերպին,*
3) *հանձնարարել կառավարությանը միջոցներ ձեռք առնել ապահովելու զինադադարի պայմանները և լուծելու Վրաստանի կողմից հարուցած վեճերը*»[35]:

Սոցիալիստ-հեղափոխական Ա. Խոնդկարյանը խորհրդարանի դեկտեմբերի 16-ի նիստում ունեցած ելույթում ընդգծում է, որ «*Լոռին և Ախալքալաքը Հայաստանի անբաժան մասն են*», որ այն պաշտպանվել է սոցիալիստ - հեղափոխականների կոնֆերանսին, և ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում «*Հայաստանի խորհուրդը պետք է աշխատի առանց արյունահեղության, խաղաղ ճանապարհով լուծել ստեղծված անախորժությունը*»[36]: Վերջում նա ներկայացնում է իրենց ֆրակցիայի հետևյալ բանաձևը. «*Հայաստանի խորհուրդը սկզբից կանգնած լինելով հայ - վրացական տարաձայնությունը խաղաղ կերպով լուծելու տեսակետի վրա, ընդառաջ է գնում այն առաջարկին, որ կապիտան Գրինը անում է Հայաստանի կառավարությանը ու գտնում է, որ առաջադրված կետերը կարող են ծառայել իբրև հիմք, որի շուրջը բանակցելով կարելի կլինի գալ ցանկալի համաձայնության և այդ պատճառով հրահանգում է ուղարկել Սանահին իր ներկայացուցիչներին՝ բանակցելու Վրաստանի ներկայացուցիչների հետ*»[37]: Սոցիալ - դեմոկրատ Հայկ Ազատյանը, ելույթ ունենալով, գտնում է, որ եթե իրենք հետևեն Ն. Աղբալյանի ճառին, ապա ըստ իր տեսակետի ոչ մի համաձայնություն չի կարող կայա-

նալ հայերի և վրացիների միջև, ուստի և ինքը գտնում է, որ չըպետք էր այդքան սպասել, որ անգլիացիները միջամտեին, քանի որ այսօր այդ երրորդ ուժի, «*Անգլիայի միջամտությունը կարող է լավ լինել, բայց չէ՞ որ վաղը մենք նորից կռվելու ենք, որովհետև ամբողջովին շրջապատված ենք լինելու շովինիստներով: Ուստի պիտի կարողանանք ապացուցել Եվրոպային, որ մենք էլ կարող ենք հաշտ ապրել և ամեն միջոցով խաղաղության ձգտել... այժմ փոխանակ ընդհառաջ գնալու կապիտան Գրինի առաջարկին, մենք ծուռ ճանապարհով փորձում ենք խույս տալ նրանից: Եթե վրացիները հանում են իրենց զորքը, մենք էլ պիտի հանենք, և եթե կենտրոնը համաձայն չէ այս առաջարկին, նշանակում է նա հետին միտք ունի*»[38]:

Պետք է խոստովանել, որ այս բառերում ճշմարտություն կար և ուշագրավը դա է: Եվ այդ տեսանկյունից էլ ելնելով՝ Հայկ Ազատյանը ներկայացնում է սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի հետևյալ առաջարկը. «*Լսելով կառավարության հայտարարությունը կապիտան Գրինի արած առաջարկների մասին, Հայաստանի խորհուրդը որոշում է ընդունել առաջարկած պայմանները և հանձնարարում է կառավարությանը ի կատար ածել դրանք, եթե այդ որոշումները կընդունվեն և Վրաց կառավարության կողմից*»: Խորհրդարանում հարցի քննարկման ամբողջականությունը վերհանելու տեսանկյունից ուշագրավ է նաև անկուսակցական Ստ. Մամիկոնյանի ելույթը, որում նա ընդգծեց հետևյալը. «*...այն ժամանակ, երբ հայը կռվում էր Ղարաքիլիսայում տաճիկների դեմ* (ըստ երևույթին նկատի ունի հերոսական սարդարապատյան ճակատամարտաշարքը - ընդգծումը մերն է՝ Վ.Վ.), *Վրաց կառավարությունը գերմանական զորքեր բերեց, որոնց աջակցությամբ գրավեց Լոռին, որովհետև Գերմանիայի հետ դաշն էր կնքել: Գերմանական ներկայացուցիչ Շուլեմբերգը հայտնեց հայերին, թե մոռացե՛ք Լոռու մասին, ձեր սահմանը Ղարաքիլիսան է: Իսկ երբ Ահարոնյանը ասաց, թե Լոռում վրացիներ չկան, բոլորը հայեր են, Շուլեմբերգը պատասխանեց, թե այնտեղ վրաց կալվածատերեր կան*»: Իր ելույթի վերջում Ստ. Մամիկոնյանը նշելով, որ ինքը չի կասկածում, որ Գրինը բարի մտադրություն ունի, սակայն համակարծիք չէ, թե հայկական զորքը պետք է թողնի գրավված վայրերը և ետ քաշվի մի որոշ սահման[39]: Ստ. Մամիկոնյանը գտնում էր, որ «*ընդհարումը հայերի և վրացիների*

*մեջ եղել է ոչ թե սահմանաբաժանման համար, այլ այն մի շարք խնդիրների և հարաբերությունների համար, որ ստեղծվել էին հայերի և վրացիների միջև»*: Ստ. Մամիկոնյանը այդ խնդիրներն էր համարում տրանզիտը, այն մթերքները, պարենը, որոնք պատկանում էին հայերին և գտնվում էին Վրաստանում: Ստ. Մամիկոնյանը գտնում էր, որ «*Վրաստանն ապօրինի կերպով տիրապետեց Ռուսաստանի ժառանգությանը, մասն չհանելով Հայաստանին*»: Ստ. Մամիկոնյանը եզրահանգում էր, որ հենց այդ խնդիրներն էլ պիտի դնել կոնֆերանսում և որոնց համար նախապես Վրաց կառավարության համաձայնությունը պետք է առնել պայմանով, որ հայկական զորքերը մնան այնտեղ, որտեղ գտնըվում են[40]: Սակայն ի վերջո այս տեսակետները չեն անցնում, և այն բանից հետո, երբ սոցիալ - դեմոկրատ Հ. Ազատյանը գտնում է, որ մյուս բանաձևերը չարժե քվեարկել, ձայների գերակշռող մեծամասնությամբ ընդունվում է Հ. Հ. Դաշնակցության ճշգըրտված և բարելավված բանաձևը. «*Լսելով կառավարության ձեռք արած միջոցները Ախալքալակի և Բորչալվի շրջաններից վրաց զորքերը հեռացնելու և Բորչալվի հայ ազգաբնակչությանը վրաց զորքերի բռնություններից ազատելու մասին՝ Խորհրդարանը հավանություն է տալիս կատարված քայլերին: Միշտ կողմնակից լինելով հայ - վրացական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու և սկզբունքով համաձայն լինելով կապիտան Գրինի առաջարկին, Հայաստանի խորհրդարանը անհնարին է համարում մեր զորքերի հեռացումը, մինչև որ չերաշխավորվի Հայաստանի անվիճելի մասը կազմող Բորչալվի հայկական բաժնի և Ախալքալաքի գավառի ապահովությունը վրաց զորքերից: Խորհրդարանը հրահանգում է կառավարությանը այս հիմքերի վրա հատուկ պատվիրակության միջոցով բանակցություններ վարել կապիտան Գրինի հետ և եթե հարկ լինի՝ նաև Վրաստանի հետ*»: Բանաձևը 18 ձայնով ընդդեմ 4-ի ընդունվում է, 13-ը՝ ձեռնպահ են մնում[41]:

Մի շարք փաստաթղթերից ևս ակնհայտ է դառնում հայկական կողմի անհանգստությունը ընթացող իրադարձությունների հետևանքների առումով: 1918 թ. դեկտեմբերի 27-ին Երևանից ֆրանսիական բանակի ներկայացուցիչ կապիտան Պուադեբարին ուղղված (պատճենը՝ հայկական պատվիրակության ղեկավար Հարությունյանին) հեռագրում ընդգծվում էր այն մասին, որ

Հայաստանի խորհրդի որոշ թվով անդամներ (Վրացյան, Բաբալյան, Ռաղմաջյան, Տեր - Թորոսյան, Տեր - Հակոբյան, Մինախորյան, Ղազարյան, Զաքարյան, Տեր-Մարտիրոսով, Հարությունյան, Թեյմարով, Տեր - Գևորգով) առանց կուսակցությունների տարբերության լսելով կառավարության հաղորդումը Թիֆլիսում Դաշնակից պետությունների ներկայացուցիչների կողմից առաջարկված զինադադարի պայմանների մասին, իրենց բողոքն են արտահայտում ընդդեմ Բորչալուի և Ախալքալաքի նահանգներին վերաբերող հարցերի անարդարացի լուծման, որ բնակեցված են գերակշռող մեծամասնությամբ հայերով: Հեռագրում շեշտվում էր Թիֆլիսից առաջարկված պայմանների անընդունելիության մասին իրենց համար, որն ընդունվել է առանց տեղյակ պահելու և հայկական կառավարության կողմից նախօրոք քննարկման: Հեռագրում հույս էր հայտնվում, որ բարձրաստիճան ֆրանսիական սպայի ջանքերով այդ պայմանները կվերանայվեն և կլուծվեն իրավունքի և արդարության ոգով[42]: Սակայն ավա՜ղ, այդ հույսերն իրականանալու ոչ մի հիմք չունեին և չիրականացան, իսկ «Ֆրանսիացի սպան» այդպես էլ մատը մատին չխփեց, վերջին հաշվով այդպիսի մտադրություն և դրա իրականացման ցանկություն չդրսևորվեց և Անտանտի ոչ մի երկրի կողմից:

Զինադադարի առաջարկված պայմանները դժգոհություն են առաջ բերում նաև լայն կուսակցական շրջաններում: Իր խոր վրդովմունքն է արտահայտում այդ կապակցությամբ Հ. Հ. Դաշնակցություն կուսակցության քաղաքային և Կենտրոնական կոմիտեն (ԿԿ), 1918 թ. դեկտեմբերի 28-ին հեռագիր ուղարկելով Ղարաքիլիսա՝ Հայկական պատվիրակության նախագահ Հարությունյանի անունով: Հեռագրում ընդգծվում էր, որ արտակարգ նիստում լսելով զինադադարի պայմանների մասին հաղորդումը, ԿԿ-ն համառորեն խորհուրդ էր տալիս պատվիրակության ղեկավարին անխախտ պահել այն գիծը, որը պահանջում է Բորչալուի և Ախալքալաքի գավառների միացումը Հայաստանին, որտեղ բնակչությունը գերակշռող մեծամասնությամբ հայկական է, որն զգում է իր կապը Հայաստանի հետ և համառորեն ձգտում է նրա հետ միացման: Հեռագրում ասվում էր, որ ոչ մի դեպքում Հայկական զորքերը չեն կարող ետ քաշվել դեպի հին դիրքերը, և հույս էր հայտնում, որ դաշնակիցները կպաշտպանեն իրենց[43]:

Նույն միտքն է ընդգծվում Ս. Վրացյանի նախագահությամբ 1918 թ. դեկտեմբերի 28-ին տեղի ունեցած Երևանի քաղաքացիների ժողովում, որին ներկա են եղել 650 մարդ: Հայաստանի պատվիրակության նախագահին հասցեագրված դիմումագրում ժողովի մասնակիցների անունից պահանջվում էր պաշտպանել Բորչալուի և Ախալքալաքի գավառների հայկական բնակչության շահերը Լոռիի խաղաղ հայկական բնակչության նկատմամբ վրացական զորամասերի արյունոտ հաշվեհարդարից,պահանջելով հայկական զորքերի մնալը Բորչալուի գավառում և գրավված բոլոր դիրքերում: Ժողովի մասնակիցները խնդրում էին ցույց տալ Դաշնակիցներին, որ իրենց գործն արդար է, և իրավունքն ակնհայտորեն իրենց կողմն է, գտնելով, որ անջատված մասերը պետք է միանան մայր հայրենիքին[44]:

Ըստ էության, գրեթե ոչ մի կուսակցություն անտարբեր չգտնվեց այն ամենի նկատմամբ, ինչ կատարվում էր Հայաստանի շուրջ և հայ ժողովրդի հետ: Այսպես, 1918 թ. վերջի - 1919 թ. սկզբի մի գրությամբ սոցիալ - դեմոկրատական ֆրակցիան ևս համերաշխվում էր Ախալքալաքի և Բորչալուի հայ բնակչության վիճակի վատթարացման հետ կապված բողոքի շուրջ: Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված դիմումագրում ասվում էր, որ *Ախալքալաքի գաղթականությունը Բակուրիանում և Ծալկայում մահացման և բնաջնջման է ենթարկվում: Դիմումագրում առաջարկվում էր՝*

1) *Հայտնել տաճիկ և վրաց կառավարությանը, որ Հայաստանի Հանրապետությունն այլևս չի կարող հանդիսատես լինել Ախալքալաքի բնակչության բնաջնջման հարցում,*
2) *Պահանջել անմիջապես և ամենակարճ ժամանակամիջոցում տաճիկ և վրաց կառավարություններից, և տվյալ դեպքում առաջինից՝ որ թույլ տան անվտանգ կերպով գաղթականությանը վերադառնալ իրենց բնակավայրը, երկրորդից՝ որ խոչընդոտներ չդնի այդ վերադարձի առաջ և հնարավորություն տա այդ գաղթականությանը պատսպարվել և ժամանակավորապես տեղավորվել Վրաստանի և Բորչալվի գյուղերում, վերջ տալով կենտրոնացման սպանիչ քաղաքականությանը,*
3) *Պահանջել վրաց կառավարությունից թույլ տալ անարգել կերպով գաղթականներին ընդհանրապես տեղավորվելու Թիֆլիսի գավառի և Բորչալուի հայ գյուղերում,*

*4) Ընդունել, որ թե՛ տաճիկ և թե՛ վրաց կառավարությունների քաղաքականությունը գաղթականության հետ հայ ժողովրդի վերաբերմամբ ունի նպատակ գաղթականների բնաջնջումով ամայացնել հայաբնակ վայրերը և համարել այդ թշնամական գործողություն հանդեպ հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության,*

*5) Պահանջել կառավարությանը յոթն օրվա ընթացքում կարգադրել ներկա խնդիրը բանակցությունների միջոցով, հակառակ պարագային դիմել համապատասխան կտրուկ միջոցների փրկելու գաղթական հայ ժողովուրդը վերջնական բնաջնջումից*[45]:

Ակնհայտ է, որ կեղծ է այն մոտեցումը, երբ կուսակցությունները արհեստականորեն բաժանվում են ազգայինի և ոչ ազգայինի, հիմք ընդունելով ոչ իրական չափանիշներ: Արխիվային և այլ փաստաթղթերը անվիճելիորեն վկայում են, որ թե՛ ընդդիմադիր, և թե՛ մնացյալ կուսակցական խմբավորումներն ու կազմակերպությունները,ներքուստ ունենալով զանազան տեսակետներ, այնուամենայնիվ, ազգային տարածքային հարցերի լուծման խնդրում միասնական են եղել: Այլ բան է, որ գործնականում ներկայացվող առաջարկները իրագործելի լինեին, բխեին գոյություն ունեցող իրավիճակի իրատեսական հաշվառումից: Նման հարցերը պարզաբանելիս պետք է նկատի ունենալ այն իրական աշխարհաքաղաքական իրավիճակը, որում գտնվում էին թե՛ կուսակցությունները,և թե՛ Հայաստանը ընդհանուր առմամբ, ինչպես նաև այն հնարավորությունները, որ կյանքում կարող էին գործադրել կուսակցություններից և խմբավորումներից յուրաքանչյուրը: Թե՛ պատերազմի ընթացքին, և թե՛ մյուս մանրամասներին մենք չենք անդրադառնում, որովհետև դա հատուկ քննարկման նյութ է, և որին արդեն որոշակիորեն անդրադարձել ենք: Ընդամենը նպատակահարմար ենք գտնում նշել, որ հայ - վրացական պատերազմը, որին վրացական կողմից մասնակցել է 12 հազարանոց զորք[46], իսկ հայկական կողմից` կանոնավոր բանակի 6000 զինվոր և 2000 աշխարհազորային, և ընդ որում կողմերը կորցրել են զգալի թվով մարդիկ, 1919 թ. սկզբին ավարտվում է խորհրդաժողովով, որը որոշում է հետպատերազմյան իրադրության խնդիրները: Այդ փաստն արձանագրվեց նաև Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 25-ի նիստում, որտեղ լսվեց կառա-

վարության զեկուցումը, ընդունվեց համապատասխան որոշում: Տեղեկացվեց հայ - վրացական կոնֆերանսի կողմից ընդունված և կառավարության լիազոր - ներկայացուցիչների կողմից զինադադարի պայմանների՝ Բորչալվի սահմանների, գերիների փոխանակման կարգի, երկաթուղային հաղորդակցության կազմակերպման և «չեզոք գոտու» ղեկավարման մասին: Հաստատագըրվում է երկու երկրների միջև ժամանակավոր դիվանագիտական գործողությունների վերսկսման կարգը և հատուկ հարցերի գծով հարաբերությունների բնույթը: Այս հարցի կապակցությամբ բանավեճ չի ծավալվում, պարզապես կուսակցական խմբավորումներն արձանագրում են իրողությունը և հավանություն տալիս կառավարության ռազմաքաղաքական գործունեությանը[47]: Հարցերի քննարկումը ավարտուն դարձնելու նպատակով, վերջապես, անհետաքրքիր չէ նշել միջազգային կազմակերպությունների վերաբերմունքը հայ-վրացական պատերազմի նկատմամբ: Այդ մասին արժանահիշատակ վկայակոչումներ ունի Ա. Ջամալյանը: Հայ-վրացական պատերազմի հաջորդ շաբաթներին՝ 1919 թվականի փետրվարին, Բեռնում տեղի է ունենում Երկրորդ ինտերնացիոնալի խորհրդաժողովը: Գագաթնաժողովին մասնակցած Հ. Հ. Դաշնակցության և վրաց սոցիալ - դեմոկրատիայի ներկայացուցիչները (Ա. Չխենկելի և ուրիշներ) համաձայնության են գալիս հայ - վրացական տարածքավեճը դնելու խորհրդաժողովի քննությանը: Խորհրդաժողովը վճռում է, որ այդ սահմանավեճը պետք է լուծվի համաձայն ազգերի ինքնորոշման իրավունքի ճշգրիտ գործադրության: Վիճաբանող կողմերն իրենց պատրաստակամությունն են հայտնում ենթարկվելու այս պայմանին, չնայած այս հանգամանքը ակնհայտորեն չէր բավարարում հայկական կողմին, ինչի մասին բազմանշանակ նկատում է Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը.«*Սա, անկասկած խոշոր զիջում էր հայերի կողմից. որովհետեւ այն ամենից յետոյ, ինչ անցել - դարձել էր երկու կուսակցութիւնների միջեւ Հայկ. Բորչալուի եւ Ախալքալակի շուրջը, այն բոլոր հանդիսաւոր յայտարարութիւններից յետոյ, որ արել էին վրաց սոցիալ-դեմոկրատները անցեալում՝ այս գաւառները Հայաստանի սեփականութիւն ճանաչելով՝ մենք իրաւունք ունէինք պահանջելու, որ ոչ թէ նոր հանրաքուէարկութիւն կատարուի նրանց մէջ, այլ գոյութիւն ունեցող վիճակագրութիւնների եւ վրաց Սոցիալ-Դեմոկրատիայի նախկին յայտարարութիւնների հիման վը-*

*րայ, այդ գաւառները պարզապէս կցուեն Հայաստանին*»: Ավե-
լին, հայ պատվիրակները համակերպվելով կատարվածի հետ, մտահոգություն են արտահայտում այն մասին, որպեսզի «*որոշ-ուած հանրաքուէարկութիւնը կատարուի կանոնաւոր ձեւերով, առանց կողմնակի ճնշումների եւ մեքենայութիւնների*»[48]:

Սակայն դա արմատական փոփոխություններ չմտցրեց ազգամիջյան փոխհարաբերություններում: Վրացիները շարունակեցին նախկին քաղաքականությունը հողային-տարածքային խնդրում: Այդ մասին քննարկումները միակողմանիորեն, առանց հայերի մասնակցության շարունակվեցին Ամստերդամում, ինչի մասին Ա. Ջամալյանը գրում է. «*Ամստերդամում տեղի ունեցած ընկերավարական միջազգային խորհրդաժողովին վրաց Սոցիալ-Դեմոկրատիայի ներկայացուցիչները, օգտուելով Դաշնակցութեան ներկայացուցիչների բացակայութիւնից, յայտարարել են, թէ հողային խնդիրների վերաբերմամբ, այլեւս որ եւ է վէճ չըկայ հայերի եւ վրացիների միջեւ: Ընկ. Վարանդեանը հաղորդում է Բ. Ինտերնասիոնալի Գործադիր Սարմնին, որ վերոյիշեալ յայտարարութիւնը չէ համապատասխանում իրականութեան եւ դրա հետ միասին խնդրում է, որ Գործադիր Սարմինը միջոցներ ձեռք առնի Բեռնի խորհրդաժողովի որոշումը իրականացնելու համար*»[49]: Խորհրդաժողովները մնացին թղթային մակարդակում: Այդ հարցով 1919 թ. մայիսին Փարիզում զբաղվում է Երկրորդ Ինտերնացիոնալի Գործադիր Մարմինը, որին Վրաստանի սոցիալ-դեմոկրատներն առաջարկում են տարածքավեճը լուծել ոչ թե հանրաքվեով, ինչպես իրենց իսկ համաձայնությամբ որոշել էր Բեռնի խորհրդաժողովը, այլ միջնորդ դատարանի միջոցով: Սակայն դարձյալ ապարդյուն: Երկու ամիս անց Լյուցեռնի խորհրդաժողովը նորից քննարկում է այդ չարաբաստիկ հարցը: Այստեղ էլ որոշվում է, որ ինչպես բոլոր հողային վեճերը, այնպես էլ հայ - վրացական սահմանավեճը պետք է լուծվեն ժողովրդական հանրաքվեով՝ կազմակերպված Ազգերի Դաշնակցության կողմից և նրա անմիջական հակակշռով: Ի վերջո այդ ամենը ավարտվում է վերոհիշյալ հայ-վրացական խորհրդաժողովով 1919 թվականի օգոստոսի 29 - 30-ին Թիֆլիսում, և կնքված համաձայնությամբ, որով վիճելի հարցերի վերջնական հանգուցալուծումը հետաձգվում է մինչև Թուրքահայաստանի հարցի լուծումը Ազգերի Դաշնակցության կողմից:

Հայաստանի խորհրդայնացումը փոքր ինչ ժամանակ տըվեց Վրաստանին մանևրելու, չնայած դա վերջին հաշվով դատապարտված մանևր էր, և ոչ մի առումով չէր տեղավորվում աշխարհաքաղաքական նոր ռեալությունների մեջ: Թուրք - հայկական պատերազմի օրերին (1920 թ. սեպտեմբեր - դեկտեմբեր), ասենք դրանից առաջ էլ վրացիները փորձեցին իրենց հսկողության տակ վերցնել ռազմաքաղաքական մեծ նշանակություն ունեցող Կարսի և Արդահանի մարզերի զգալի մասը,օգտվելով Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական թուլությունից (թեկուզ էլ պատմականորեն ժամանակավոր բնույթ կրող): Իսկ արդեն 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի ամոթալի և քայքայիչ պայմանագրից և Երևանի համաձայնագրից հետո, որոնք վավերացրին Հայաստանի Առաջին Հանրապետության անկումը և ոչ կամովին հրաժարումը իր հիմնական տարածքներից և Սևրյան երազներից, հայ - վրացական հողային - տարածքային սահմանավեճը թևակոխեց իր վճռական փուլը: Հայկական Բորչալուի հարավային մասը, որ կոչվում է Լոռի և որտեղ 1918 թվականի դեկտեմբերին բռնկվեց հայ գյուղացիության ապստամբությունը վրացական իշխանությունների դեմ, իր հյուսիսային սահմանագծի մի փոքր շտկումով Հայաստանի կոմունիստական իշխանությունը միացրեց Հայաստանին, փոխարենը ամենևին էլ ոչ կամովին, Կրեմլյան քաղաքագետների քողածածկված ջանքերով արդեն բոլշևիկյան զգեստավորման անցած Վրաստանին «զիջեց» Հայկական Բորչալուի հյուսիսային մասը՝ Լոռիից մինչև Խրամ գետ՝3000 քառակուսի կիլոմետրից ավելի տարածություն, և ամբողջ Ախալքալաքի (Ջավախք) գավառը:

## Գլուխ Չորրորդ
## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տես՝ Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Հանրապետությունը 1918 - 20 թթ. Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները. Երևան, ՀՊՄՀ, 1999, էջ 11-22:
2. Տես՝ Բանբեր Հայաստանի Արխիվների. 1991, № 3, էջ 43; Ս. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, Երևան, Հայաստան, 1993, էջ 219:
3. Տես՝ Կառավարության լրաբեր. 08.11.1918 . № 17:

4. Տես՝ Բանբեր Հայաստանի Արխիվների. 1991, N° 3, էջ 43-44:
5. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ. 15, թ. 2, 11, 13:
6. Տես՝ Բանբեր Հայաստանի Արխիվների, 1990, N° 3, էջ 128:
7. Տես՝ նույն տեղում:
8. Տես՝ նույն տեղում, էջ 129:
9. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ. 16, թ. 4; Տես նաև՝ «Զանգ», թիվ 65, հոկտեմբերի 27, 1918 թ.:
10. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց.1, գ. 52, թ. 53; գ. 17, թ. 115, 116:
11. Տես՝ «Ժողովուրդ», 22 դեկտեմբերի, 1918 թ.:
12. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց.1, գ. 5, թ. 1:
13. Տես՝ Վրացյան Սիմոն. Հայաստանի Հանրապետություն: Եր.: Հայաստան, 1993, էջ 222:
14. Տես՝ Լեո. Սահմանավեճեր. 1919. Թիֆլիս, էջ 24:
15. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 28:
16. Տես՝ նույն տեղում:
17. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 99, թ. 28:
18. Տես՝ նույն տեղում:
19. Տես՝ նույն տեղում, թ. 31:
20. Տես՝ նույն տեղում, թ. 33:
21. Տես՝ Բանբեր Հայաստանի Արխիվների. 1991, N° 3, էջ 70:
22. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ. 15, թ. 40:
23. Տես՝ նույն տեղում, թ. 39:
24. Տես՝ Բանբեր Հայաստանի Արխիվների. 1991, N° 3, էջ 45-76:
25. Տես՝ նույն տեղում, էջ 78:
26. Տես՝ նույն տեղում, էջ 77-79:
27. Տես՝ նույն տեղում, էջ 79-80:
28. Տես՝ նույն տեղում, էջ 80-81:
29. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ. 15, թ. 45:
30. Տես՝ նույն տեղում, թ. 46:
31. Տես՝ նույն տեղում, թ. 45-46:
32. Տես՝ նույն տեղում, թ. 46:
33. Տես՝ նույն տեղում:
34. Տես՝ Բանբեր Հայաստանի Արխիվների. 1991, N° 3, էջ 86-87:
35. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ. 17, թ. 48:
36. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ. 17, թ. 48-49:
37. Տես՝ նույն տեղում, թ. 49:
38. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ. 17, թ. 50:
39. Տես՝ նույն տեղում, թ. 50-51:
40. Տես՝ Բանբեր Հայաստանի Արխիվների, 1991, N° 3, էջ 90-91:
41. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ. 17, թ. 52:
42. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 16, թ. 382:
43. Տես՝ նույն տեղում, թ. 389:

44. Տես՝ նույն տեղում, թ. 383, 384, 387, 391:
45. Տես՝ նույն տեղում, ֆ. 404, ց.1, գ. 19, թ. 4:
46. Տես՝ «Կայծ», 22 հունվարի, 1919 թ., թիվ 22; Տես նաև՝ Կարապետյան Մ. Լ. Հայաստանի Հանրապետության բանակը (1918 - 1920). - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 88:
47. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց.1, գ. 15, թ. 83-88:
48. Տես՝ Ջամալյան Արշակ. Հայ - վրացական կնճիռը. - «Հայրենիք» (հասարակական - քաղաքական ամսագիր). - 1928, թիվ 6, էջ 98:
49. Տես՝ նույն տեղում:

## ՎԻՐԱԲՅԱՆ ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ

### 1918 թ. վրաց - հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները

### ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ (ԱՄՓՈՓՈՒՄ)

1918 թ. դեկտեմբերի 13-ին բռնկված վրաց հայկական պատերազմը աղետալի ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի Առաջին Հանրապետության համար: Թիֆլիսյան քաղաքագետների կողմից մինչև անկախության հռչակումը իրենց հայ գործընկերներին տրված խոստումները հօդս ցնդեցին, երբ անդրկովկասյան Սեյմը փլուզվեց և ժողովուրդները կանգնեցին անկախության ճանապարհին, սկսելով ինքնուրույնաբար տնօրինել իրենց սեփական ճակատագիրը, հետևաբար արմատապես փոխելով իրենց նախկին պայմանավորվածությունները և ռազմավարությունը տարածքային սահմանազատումների մասին, ձըգտելով դառնալ Կովկասյան տան ամենամեծ փայատերը Ադրբեջանի հետ միասին, ինչն էլ կարճատև դիվանագիտական փոխհրաձգությունից հետո հանգեցրեց 1918 թվականի դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմին՝ Հայկական Լոռու և Ախալքալաքի համար: Եվ չնայած Դրոյի (Դրաստամատ Կանայան) գլխավորությամբ գործող հայկական փոքրաթիվ, մոտ 6 - 8 հազարանոց զորքի փայլուն հաղթանակներին վրացական լավ զինված, կուշտ ու կուռ, ավելի քան 12 հազարանոց բանակի դեմ, որին ուղեկցում էին 4 զրահագնացքներ, որոնք գրավվեցին հայերի կողմից, Հայաստանում չօգտվեցին այդ հաղթանակի ցանկալի արդյունքներից, և չէին էլ կարող, քանզի ընթացող աշխարհաքաղաքական բարդ և ոչ միանշանակ գործընթացները խոչընդոտեցին դրան:

Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի Անտանտյան դաշնակիցների շահամետ միջամտությամբ՝ Մեծ Բրիտանիայի միջնորդությամբ, մասամբ էլ Ֆրանսիայի ջանքերով, որոնք տնտեսա - քաղաքական լուրջ շահեր ունեին Անդրկովկասյան տարածաշրջանում, Կովկասյան տան քաղաքական քարտեզում կատարվեցին լուրջ վերաձեվումներ, և Հայաստանից խլված մի հողակտորի վրա ստեղծվեց այսպես կոչված «Լոռու չեզոք գոտին»: Անտեսվեցին հայկական կողմից առաջադրված թե՛ ազգերի ինքնորոշման, թե՛ առհասարակ ազգային հարցի լուծման էթնոգրաֆիկ սկզբունքները, ավելի շուտ տուրք տալով Վրաստանի կողմից ներկայացված, նրանց համար ընդունելի պատմական սկզբունքին: Այն ըստ էության պարզապես չէր արտահայտում հայ ժողովրդի իրական շահերը, սակայն համապատասխանում էր տվյալ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակի խորքային բո-

վանդակային էությունից բխող տարածքային հարցի նպատակահարմար շահամետ հանգուցալուծման տարբերակին: Վերջին հաշվով, հետագայում հայ ժողովրդի համար քաղաքական դեպքերի ու իրադարձությունների ամենևին էլ ոչ նպաստավոր փոխակերպման, և 1920 թըվականի աշնանը թուրք - հայկական աղետաբեր պատերազմում Հայաստանի Հանրապետության պարտության հետևանքով, որի ժամանակ Հայաստանը և հայ ժողովուրդը լքվեց անտանտյան պետություններ և Ազգերի Լիգայի դաշնակից պետությունների կողմից, իսկ ԱՄՆ-ն էլ մերժեց Հայաստանի նկատմամբ մանդատը, հայաբնակ որոշ շրջաններ, և առաջին հերթին, Լոռին ու Ախալքալաքը (Ջավախք) հայտնվեցին Վրաստանի ազդեցության տակ, որն էլ բոլորովին չհապաղեց օգտըվել Հայաստանի համար պատմաքաղաքական առումով ժամանակավոր թուլությունից: Միաժամանակ, Վրաստանի Հանրապետությունն այդ օրերին, օգտվելով Հայաստանի համար 1920 թվականի սեպտեմբերից դեկտեմբեր ամիսներին ստեղծված ծանրագույն իրավիճակից, ինչը հաստատվում է նաև Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական Բաժանմունքի և այլ հատուկ ծառայությունների կողմից հայթայթված տեղեկատվությամբ, սկսեց հավակնություններ ներկայացնել նաև Կարսի ու Արդահանի մարզերի նկատմամբ, ապօրինի կերպով զորամասեր մտցնելով այդ շրջանները և պղտորելով տեղական ազգաբնակչության տրամադրությունները, խարխլելով այդ գավառների քրդական, թաթարական և այլ ազգությունների բնակչության լոյալ վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության իշխանությունների նկատմամբ: Այդ ապօրինի, հայ ժողովրդի նկատմամբ թշնամական ռազմաքաղաքական գործողությունների և այլևայլ ձեռնարկումների ընթացքում վրացական զորամասերի պետերը համագործակցության մեջ մտան Կարսի և Արդահանի, ինչպես նաև հարակից որոշ շրջանների թաթարա - քրդական բնակչության, ինչպես նաև տարաբնույթ ավազակախմբերի և դրանց քաղաքական լիդերների հետ, խարխլելով ՀՀ ազգային անվտանգության հիմքերը:

Իսկ արդեն 1921 թվականի փետրվարից հետո Կրեմլյան որոշ քաղաքագետների ջանքերով և ճարպիկ մեքենայություններով հապճեպորեն «բոլշևիկյան» զգեստավորման անցած «եղբայրական» Վրաստանը բռնազավթեց հայկական Ախալքալաքն ու Ախալցխան և հարակից որոշ այլ տարածքներ, չկամությամբ «զիջելով» միայն Հայկական Լոռու ոչ ամբողջական մի կտորը:

Պատերազմը նաև բացահայտեց Հայաստանի Հանրապետության դժվարությունները, որոնք զգալի չափով պայմանավորված էին նրա ունեցած կախվածությամբ Վրաստանի կոմունիկացիաներից, որոնք իրենց բլոկադային գործողությունները ձեռնարկեցին նաև մեր օրերում՝ Արցախյան իրադարձությունների փոթորկալից օրերին,1980-ա-

կան թվականների վերջերին - 90-ական թվականներին, կաշկանդելով Հայաստանի Երրորդ Հանրապետության բնականոն զարգացումը:Միաժամանակ պարզորոշվեց Հայաստանի Հանրապետության պրոեվրոպական և պրոամերիկյան կողմնորոշման «ողջ արժեքը», դրանց իրական միտումները և հետևանքները, ակնկալվող հնարավոր քաղաքական սպասելիքները և արդյունքները, ինչպես նաև հիասթափությունները:


## ВИРАБЯН ВАНИК ГРАНТОВИЧ


## Грузино - армянская война 1918 г., военно - политическая деятельность правительства РА и партии

### ВМЕСТО ЗАКЛЮЧЕНИЯ (РЕЗЮМЕ)


**Вспыхнувшая 13 декабря 1918 г. грузино-армянская война имела пагубные последствия для Первой Республики Армении. Все обещания, данные грузинскими социал - демократами своим армянским коллегам перед провозглошением независимости, взлетели в воздух, когда Закавказский Сейм разрушился и народы встали на путь независимости, начиная самостоятельно распоряжаться своей собственной судьбой и, следовательно, коренным образом изменяя свои прежние договоренности и тактику относительно территориальных разграничений, стремясь стать самым большим пайщиком Закавказского дома, что после короткой дипломатической перестрелки привело к двухнедельной декабрьской войне 1918 года за Армянские территории Лори и Ахалкалаки (Джавахк). Несмотря на блестящую победу Армянских войск, имевших в своем составе приблизительно 6 - 8 тысяч человек во главе с Дро (Драстамат Канаян), над хорошо вооруженной, сытной грузинской 12-тысячной армией, которую сопровождали 4 бронепоезда, захваченные армянами, в Армении не смогли воспользоваться желанными результатами этих побед, да и не могло быть иначе, так как происходящие геополитические сложные и неоднозначные процессы препятствовали этому.**

**Небескорыстным участием антантовских союзников Республики Армении и армянского народа при посредничестве Великобритании и частично Франции, которые имели серьёзные экономико - политические интересы в Закавказском регионе, в**

политической карте Закавказского дома были внесены серьёзные изменения и переделки, в результате которого на отобранном от Армении одном куске земли была создана так называемая «нейтральная зона Лори». Всерьёз не были учтены предложения армянской стороны в соблюдении принципа самоопределения нации, так и этнографического принципа разрешения национального вопроса, более всего склоняясь в сторону Грузии относительно предложенного ей и приемлего для неё исторического принципа. В сущности, это не выражало истинных интересов армянсого народа, однако тем не менее такое разрешение проблемы соответствовало варианту корыстного разрешения территориального вопроса, вытекающего из глубинной содержательной сущности геополитической ситуации того времени. В конце концов, по логике невыгодной трансформации политических происшествий и событий для армянского народа и впоследствии в результате поражения Республики Армения в пагубной турецко - армянской войне осенью 1920 года, во время которой Армения и армянский народ были «выкинуты» антантовскими государствами и союзниками из Лигии Нации, а США отклонила мандат на Армению, некоторые армянонаселенные области, и в первую очередь Лори и Ахалкалаки (Джавахк), оказались в сфере влияния Грузии, которая нисколько не погнушалась воспользоваться временной слабостью Армении с историко-политической точки зрения. Одновременно, Республика Грузия, воспользовавшись создавшейся с сентября по декабрь месяцы 1920 года тяжелейшей ситуацией для Армении, что подтверждается информацией, добытой Разведывательным Отделением Генерального штаба Военного Министерства Республики Армении и другими спецслужбами, начала представлять претензии также на Карсую и Ардаганскую армянские области, противозаконно вводя свои воинские части в эти районы и внося смуту в настроения местного населения,тем самым расшатывал лояльное отношение курдского, татарского и других национальностей этих уездов в отношении властей Республики Армения.

Во время этих противозаконных враждебных военно-политических и иных действий начальники грузинских воинских формирований стали тесно сотрудничать с татаро-курдским населением Карса и Ардагана и других сопредельных некоторых районов, а также вошли в контакт с лидерами разнообразных разбойничивших групп, тем самым рассчитывая ослабить основы государственной безопасности Республики Армении.

**Уже после февраля 1921 г. стараниями определённых кремлёвских политиков и ловкими манипуляциями спешно перешедшими в «большевистское одевание», «братская» Грузия насильственно захватила армянские территории Ахалкалаки и Ахалцых и сопредельные некоторые другие территории, с неохотой «уступая» только нецельный кусок Армянсого Лори.**

**Война также выявила трудности Республики Армении, обусловленные в значительной степени зависимостью от коммуникации Грузии, которая вновь предприняла свои блокадные мероприятия в наши дни - в период бури Арцаховских событий- в конце 1980 - в начале 90-х годов, тормозя естественное развитие Третьей Республики Армения. Одновременно стали ясными вся ценность проевропейской и проамериканской ориентации Республики Армения, её истинные тенденции и последствия, возможные политические ожидания и результаты, а также разочарования.**

VIRABYAN VANIK HRANT

## Georgian - Armenian War of 1918. The Political and Military Activity of the Armenian Government and Parties

### INSTEAD OF EPILOGUE (RESUME)

**Georgian-Armenian war, taking place on the 13th of December had extremely severe results for the First Republic of Armenia. Armenian politicians were shocked of the promise made by their Tiflis colleagues before the declaration of independence. At that time Transcaucasian Seed had been destroyed and peoples took a course toward the independence by means of managing their own fate and correspondingly, fundamental reforming their previous agreements and strategies about the territorial sharing, trying to become the greatest shareholder of the Transcaucasian area together with Azerbaijan. This, after short diplomatic skirmish, resulted to two-week war, held in December 1918 for Armenian Lori and Akhalckalac. Despite the splendid victory of the small, approximately 6-8 thousand Armenian army led by Dro (Drastamat Kanayan) over the 12 thousand well-armed Georgian army accompanied by 4 war-trains and occupied by the Armenians, the desirable results of the victory weren't taken advantage in Armenia and couldn't be done, as functioning world political compound and none homogeneous actions prevented it. By means of profitable interference of Repub-**

lic of Armenia and the Armenians Ant-anta federal leaders, with the help of Britain intermediacy, and particularly, with the help of France, that had rather serious intentions in Transcaucasian region, serious reformations took place on the political map of the Transcaucasian home and on the piece of occupied Armenian land was created so called "Lori neutral zone". Such items as nation self-definition or ethnographic principles of the solution of national issue suggested by Armenian side were neglected in favor of Georgian side and applicable for their "Georgian" historical principles. As a matter of fact, it didn't express real interests of the Armenians, although it corresponded to the optimal option made in accordance with the world political situation of that period. After all, none profitable for the Armenian people transformation of political cases and events and because of the lose of the Republic of Armenia in the Turkish - Armenian ruined war held in autumn, 1920, when Armenia and Armenian people were left alone by the Ant-anta states and the federal states of League of Nations and being refused in the mandatory by the USA, some armenian-inhabited regions and at first Lori and Akhalckalac turned out to be powered by Georgia, that didn't lose a chance to take advantage of the historical political temporal weakness of Armenia. In 1920 Armenia, for the period from September to December was in difficult conditions. And taking this fact into account, at the same time Georgian Republic began to claim Kars and Ardahan regions bringing the troops in these regions illicitly, upsetting the mood of local inhabitants and disturbing the loyal attitude of the tartars and representatives of the other nations of these provinces to the authorities of Armenian Republic. During the political hostilities against the Armenian nation the commanders of Georgian army began to co-operate with the tartar inhabitants as well as political leaders of various robbers of Kars, Ardahan and other closest regions. In 1921, after February, due to some efforts and manoeuvres of Kremlin politicians "bolshevik" - dressed people of "friendly" Georgia occupied Armenian Akhalckalac, Akhaltskha and some neighbour territories, ceding only a part of Armenian Lori. The war cleared out the difficulties of Republic of Armenia. The difficulties, which were mostly the reason of Armenia dependence on the Georgian communications. These blockade operations were applied nowadays - during the terrible days of Artsakh events, the end of 1980ths-90ths, preventing the natural development of the Third Republic of Armenia. At the same time it cleared out the value of proeuropean and proamerican orientation of the Republic of Armenia,their real intentions and consequences, possible political expectations, results and disappointments as well.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան……………………………………………………….3

Գլուխ Առաջին
Սոցիալ - տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակը: Հասարակական խմբերի կողմնորոշումը: Ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը…………………………………......7

Գլուխ Երկրորդ
Հայաստանը և Վրաստանը պատերազմի նախօրեին: Դիվանագիտական հակամարտությունը………………………….23

Գլուխ Երրորդ
Պատերազմի սկիզբը, ռազմական գործողությունները և տնտեսական - քաղաքական հետևանքները……………..137

Գլուխ Չորրորդ
1918 թ. դեկտեմբերյան վրաց - հայկական պատերազմը և կուսակցությունների դիրքորոշումը……………………….214

Վերջաբանի փոխարեն (Ամփոփում)……...……………....243
**Вместо Заключения (Резюме)**…….…….……………...245
Instead of Epilogue (Resume)…………………………....247

# ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ

**1918 թ. վրաց - հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները**

# ВАНИК ГРАНТОВИЧ ВИРАБЯН

**Грузино - армянская война 1918 г., военно - политическая деятельность правительства РА и партии**

# VANIK HRANT VIRABYAN

**Georgian - Armenian War of 1918. The Political and Military Activity of the Armenian Government and Parties**

*Մասն. խմբագիր՝ պ. գ. դ., պրոֆ.* **Կ. Ղ. Թառոյան**
*Համակարգչային ձևավորումը և շարվածքը՝* **Կ. Պ. Ներսիսյանի**